
Մկրտիչ Կորյուն



Կապարտ

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ

891.99-93
Կ-78

Հ[illegible]ԳԱԿԱՆ Է 1961 Թ.

ԿԱՄՈ

(ՊԱՏՄԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԻՊԱԿ)

Ա 28199



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԱՅԿԱԿ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿ. ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1947

М. КОРЮН

КАМО

Историко-биографическая повесть
(на армянском языке)
Армгиз, Ереван, 1947 г.



ԳՈՐԿՈՒ ՄՈՏ

ՈՐՊԵՍ ԱՌԱՋԱԲԱՆ

Իր կյանքի վերջին տարիներին, Մոսկվայում եղած ժամանակ, Կամոյին լուր են տալիս, թե՝

— Գորկին ցանկանում է քեզ տեսնել։

Կամոն մեծ մարդկանց հետ շատ հանդիպումներ էր ունեցել, սակայն Գորկու հետ ունենալիք այս հանդիպումը մեծ հուզմունք և հետաքրքրություն առաջացրեց նրա մեջ։ Առանց նախօրոք ժամադրություն խնդրելու՝ Կամոն վեր է կենում և գնում Գորկու մոտ։ Այդ ժամանակ Գորկին ապրում էր Կոզդվիժենկա և Մխովայա փողոցների անկյունում գտնվող մի մեծ շենքում։ Գորկին ընդունում է սիրալիր և սրտաբաց։

— Ձեր մասին ես շատ վաղուց էի լսել, դեռևս 1905 թվականին։ Լեոնիդ Կրասինը և ուրիշ ընկերներ ձեր մասին բաղմաթիվ լեգենդներ են պատմել ինձ, և այժմ չափազանց ուրախ եմ ձեզ հանդիպելուս համար, — ասում է Գորկին՝ Կամոյին ջերմությամբ բարեվիճելուց և աթոռ առաջարկելուց հետո։

Կամոն Գորկու ներկայությամբ ճնշվում է մի տեսակ ու բառեր չի գտնում այդ հանդիպման առթիվ իր զոհունակությունն արտահայտելու։ Նստել է Կամոն Գորկու դիմաց, դինվորական համազգեստով, զրքերը թևի տակ, լլկանող, ուշադիր հայացքը հառած Գորկուն։ Գորկին էլ իր հերթին խորաթափանց և ուշադիր հայացքով զննում է նրան։

— Ես ավելի քան ուրախ եմ ձեզ հանդիպելուս համար, Ալեքսեյ Մաքսիմովիչ, — շոշոփում է Կամոն, զրքերը սեղանին դնելով։

— Դուք կատարյալ կովկասցի եք, ամուր և ուժեղ կազմվածքով, — ասաց Գորկին, ապա նկատելով Կամոյի գրքերը՝ բացականչեց.

— Ա՜, արդեն դպրոց, դասագրքեր, այդ շատ լավ է։

— Այո, Ալեքսեյ Մաքսիմովիչ, Իլիչն խնդրեցի՝ ինձ արտասահման ուղարկել այնտեղ գործելու համար։ Նա ձեռքը դրեց ուսիս, ժպտաց և ասաց—ո՛չ, Կամո, մտեք ռազմական ակադեմիա, սովորեցեք, ձեզ՝ անհրաժեշտ է այդ։ — Դեհ, եթե Իլիչն է ասում, ուրեմն անհրաժեշտ է։

— Ուրախալի է, որ դուք այնքան սոսկալի տանջանքներ կրելուց հետո էլ պահպանել եք ձեր հոգու կայտառությունը, ուժն ու թարմությունը, սովորելու տենչը։

Տեսնելով, որ այդ գովեստներից Կամոն կարմրում ու շփոթվում է՝ Գորկին փոխեց խոսակցության նյութը։

— Իսկ ամուսնանալ չե՞ք ցանկանում...

Կամոն լուռ մտածում է։ Գորկին սպասում է պատասխանի։

— Ի՞նչ պատասխանեմ, Ալեքսեյ Մաքսիմովիչ, գուցե և պետք չէ ամուսնանալ։

— Ինչու՞

— Գիտե՞ք, ռևոլուցիան հաղթեց, բայց դեռ շատ թշնամիներ ունենք, կռվել է պետք, սովորել է պետք.—հարեց Կամոն։

— Հասկանում եմ ձեզ, ձեզ անհրաժեշտ է սովորելը, Իլիչը ճիշտ է ասել։ Դրան զուգընթաց ես պահանջում եմ ձեզանից՝ գիտե՞ք ինչը։

— Ի՞նչը։

— Գրեք ձեր հուշերը։

— Ի՞նչ եք ասում, Ալեքսեյ Մաքսիմովիչ, ես ի՞նչ հուշեր գրող եմ, կամ ու՞մն են պետք իմ հուշերը։

— Բոլո՛րին, առավել ևս երիտասարդությանը։ Նրանց համար խիստ դաստիարակիչ և չափազանց օգտավետ կլինի ձեր կյանքի պատմությունը, — ասաց Գորկին։

— Գրելն ինձ համար դժվար է, Ալեքսեյ Մաքսիմովիչ։

— Դժվա՞ր է, հապա ձեր կրած տառապանքները բանտերում և աքսորներում, անքուն գիշերները, տանջալից ուղեվորությունները, և վերջապես, հոգեկան հիվանդ ձեվանալը, որով մոլորեցրիք Բեռլինի նույնիսկ առաջնակարգ դիտնականներին։ Այդ բոլորը դժվար չէի՞ն միթե։

— Դե՛, իհարկե, դժվար էր, բայց չէ՞ որ այդ էր պահանջում մեր գործը։

— Հավատացեք, որ ձեր կյանքի պատմությունը ևս անհրաժեշտ է հենց նույն այդ գործի համար։ Այ, տեսնո՞ւմ եք, ձեր հոդվածի մեջ միշտ հնչում է «մերը», «մեր նպատակը», և ոչ նեղ—անձնական «ես»։ Իմ համոզմունքով դուք մի մարդ եք, որը կարողացել է միաձուլել իր մեջ գրելու հեղաբնային համարձակությունն ու անձնուրացությունը, հնարագիտությունն ու արտասովոր կամքի ուժը։ Գրեք ձեր կյանքի պատմությունը, Կամո։

Կամոն աչքերը հատակին հառած՝ լուռ լսում էր Գորկուն։ Այդ պահին նրա հիշողության երկնակամարով սպիտակ կարապների երամի նման գալիս անցնում էին իր կյանքի դեպքերը, մեկը մյուսից ուշագրավ, մեկը մյուսից հետաքրքրաշարժ։ Նկատելով, որ կարողանում է արդեն ազդել Կամոյի վրա, կարողանում է համոզել նրան ձեռնամուխ լինել այդ աշխատանքին, Գորկին շարունակում է.

— Լսելով ձեր կյանքի դեպքերը, իմ մեջ հաճախ միտք է ծագել գրի առնել դրանք, սակայն ենթադրելով, որ ընթերցողն այդ բոլորն իմ երևակայությանը կվերագրի, թողել եմ այդ միտքը։ Լավ կանեք ինքներդ գրեք ձեր կյանքի պատմությունը։

Կամոն մեծ ուշադրությամբ լսում էր Գորկուն և վերջապես նա ասաց.

— Եթե այդքան մեծ կարևորություն եք տալիս իմ կյանքի դեպքերին, կմտածեմ, Ալեքսեյ Մաքսիմովիչ.

— Ո՛չ, ո՛չ, ուղղակի ասացեք՝ կգրեմ,—պնդեց Գորկին։

— Լավ, կգրեմ...

— Ես դիտեմ, եթե որոշեցիք՝ կկատարեք։

— Անպայման կկատարեմ։

Գորկին ամուր սեղմեց Կամոյի ձեռքը։

Կամոն իրոք կատարում է իր խոստումը։ Նա գրում է ինքնակենսագրական բնույթի մի գործ և ներկայացնում Գորկուն։ Բայց Գորկին դրի չի մնում Կամոյի գրածից։ Ահա թե ինչպես է արտահայտվել Գորկին այդ առթիվ—«...Գրել է նա ոչ շատ գրագետ և ակնհայտորեն ջանացել է իր ընկերների մասին խոսել շատ, իր մասին՝ քիչ»։

***

Ներշնչված Գորկու բուռն ցանկությունից Կամոյի դաստիարակիչ կյանքի պատմությունը սերունդներին հասկելու՝ ես նույնպես փորձում են իմ ուժերը։ Իմ այս երկում օգտագործել եմ երեք կարգի աղբյուրներ. — ա. Հրապարակված գրքեր, կենսագրականներ, մեմուարներ. բ. Արխիվային նյութեր (Երևանի, Թբիլիսիի, Բաքվի, Բաթումիի, Գորիի թանգարաններում), չհրապարակված ձեռագրեր. գ. Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և այլ վայրերում ապրող Կամոյի ժամանակակիցների բանավոր զրույցները՝ նրա հետ ունեցած հանդիպումների կամ լսածների մասին։

Իմ գրքում առանց որևէ միջադեպ հնարելու ջանացել եմ ընդգրկել Կամոյի հետաքրքրաշարժ և հարուստ կյանքի կարևորը, բնորոշ և ուսանելի դեպքերը։

Կամոն հայրենասեր, խիզախ, հնարամիտ, անձնազոհ հերոսի կերպար է։ Իրերի անբարեհաջող դասավորմամբ նա չի կարողացել ստանալ բարձրագույն կրթություն, սակայն նրա սերը դեպի գիրն ու գրականությունը երբեք չի նվազել։

Կամոն փոթորկալից ժամանակների անձնուրաց մարտիկ էր։ Նա մեծ հերոսների նախանձելի ժամանակակիցն է եղել, Լենինի, Ստալինի, Օրջոնիկիձեի, Գորկու, Լիտվինովի, Վորոշիլովի, Ֆրունզեի, Շահումյանի, Սպանդարյանի անձնվեր գինակիցը։ Մարդկային ինչպիսի՜ ջերմ սիրով է սիրել նրան Լենինը։ Լենինի ու Ստալինի ցուցաբերած լիակատար վստահությունը շատ բան է ասում մեզ ու պարտավորեցնում Հոկտեմբերյան բաղխումները չտեսած, սակայն սոցիալիստական պետության հրաշալիքները վայելող մեր սերունդներին՝ իրենց երախտապիտության ջերմ խոսքն ասել Կամոյի հիշատակին։

Խորապես գիտակցելով Կամոյի կյանքի դեպքերը վերապատմելու դժվարությունները, անհրաժեշտ չափով ուսումնասիրությունների բացակայության պատճառով, այնուամենայնիվ, կատարել եմ այս աշխատանքը։ Թե ինչ չափով է հաջողված իմ գործը, թողնում եմ դատելու ընթերցողին։

ԳՈՐԻՒՅ ԹԻՓԼԻՍ

Ծաղկեպսակների մէջ, մամռի բեկբեկուն լոյսի տակ հանգստանում էր Մարոյի դիակը:

Մարոյի ամուսին որդին, պատանի Սիմոնը, լուռ ու վշտահար, կարմրատակած աչքերով նստել էր մոր դիակի մոտ, հայեացքը հառած նրա անհունորեն սիրելի դէմքին, նրա հալկեան փակված աչքերին: Սենեակը, ուր դրված էր դագաղը, այցելուներով լիքն էր: Գորեջևարոյան լեռների վանքից մինչև Լիախվայի և Քուռի ափերը, Ջուզանովի, Դոնդարովի հարուստ տէրերից մինչև աղնվական Ամիլախվարների գեղատեսիլ ապարանքն ու քերդը,— ամէն էլ հարցնելիք, մեծ դավեստով կիսաձեր համբոյր ու առաքինի Մարոյի մասին: Եվ ահա բոլորը եկել են լրելոց վերջին հրաժեշտը տալու նրան, որ այնքա՜ն բարի հիշատակ է թողել լրենց սրտերում: Այցելուների զգալի մասը, սենյակներում տեղ չլինելու պատճառով, մնացել էր բակում, սպասելով դագաղի դուրս բերելուն: Մարոյի միակ քույրը, Լիզան, բարձրահասակ, նիհար, սակայն ժիր ու դրծունյա մի կին, Մարոյի երեք փոքրիկ աղջիկներին հեռացրել էր տանից, նրանց մատաղ հոգին դեռ վազ մանկութ յունից մահվան երկյուղով չպատերազմելու համար; տանը թողնելով միայն մեծին— Ջավահիրին: Ջավահիրն էլ սակայն մորաքույր Լիզայի փեսից բռնած ներս ու դուրս էր անում: Նա ամէնի այցելուների հանդիսատեսն էր, քան իր եղբոր ու մորքրոջ մահու մասնակիցը: Մորաքույր Լիզայի հոգսն այժմ

ոչ այնքան վախճանված քույրն էր, որքան նրա թողած հինգ որբերը, որոնցից ամենամեծը Սիմոնն էր, հոգատար ձեռքը ու խնամքի կարոտ դառնալու պատանին: Սակայն բարեկամներից և ոչ մեկը երեխաներին պահելու հոգսը չէր կապում նրանց հոր, բառակի մատակարար կալալառու Աբշակի հետ: Աբշակը որքան հոգատար էր դեպի իր անձնական կյանքն ու տնօրքները ընտանիքից դուրս, նույնքան անզուլջ էր ու անտարբեր դեպի ընտանիքը՝ կինն ու երեխաները: Այժմ էլ, սույն նեակ վոջ զագաղի առաջ, Աբշակը մի անլուն քաշված՝ նստել էր Լիզայի ամուսնու՝ Գևորգ Խաչիկյանի մոտ, և չարունակ ծխում էր:

Հանկարծ իրարանցում ընկավ այցելուների մեջ: Բոլորը պատկառանքով ոտքի կանգնեցին ու տեղ տվին սենյակ մտնող հոգևորականներին: Վանականներից մեկը «Հոգով» ասաց և մխիթարական խոսքեր ուղղեց սգավորներին: Սենյակում սիրեց խորհրդավոր լռություն: Աստ՝ ոչ ոք չէր ուզում խանգարել վաղաժամ թառամած Մարոյի ննջը:

Երբ հոգևորականները նստեցին, մարաքույր Լիզան մոտեցավ Սիմոնին, ձեռքը մեղմությամբ դրեց նրա ուսին և ինչ որ բան չընկաց ականջին: Սիմոնն իր ղողղոջուն չուրթերով համբուրեց մոր ձեռքը և զգույշ, ասես մորը չարթնացնելու համար, ոտքի կանգնեց: Մարաքույր Լիզան քնքշությամբ գրկեց նրան ու տարավ հանեան սենյակը, պառկեցրեց թախտին, քունքերը չփեց քացախով ու սառը ջրով թրջած քաթան դրեց ճակատին: Հետո տախից մի դղալ յուղ կուլ տալ, և ապա չալով ծածկեց ու հորդորեց.

— Սիկո՛ ջան, քեզ մատաղ, դարդ մի՛ անի, քեզ անառեր չեմ թողնի, ինձ հետ Թիֆլիս կառնեմ, ուսումի կտամ...

Սիմոնը սառը քաթանի վրայից չփելով այրվող ճակատը՝ խորը հառաչեց: Այդ պահին նրան թվում էր, թե իր կրծքի տակ բաբախող սրտի փոխարեն մի խոշոր կճ է վառվում, որի կրակին անտես լեզվակներով ղե-

պի ճակատն է բարձրանում, այրում դեմքն ու մազերը: Ծացավը, սառը քամիները և յուղը մի պահ հանգստացրին նրա բորբոքված ջղերը: Տորաքույր Լիզան Ջավահիրեն պատվիրեց նստել Սիմոնի կողքին, իսկ ինքն անցավ մյուս սենյակը:

Նստել էր Ջավահիրը Սիմոնի կողքին ու մտազբաղ խաղում էր վզին վաթսթած պարսկական նուրբ չալի ծոպերի հետ, որ նվիրել էր նրան մայրը մահվանից մի քանի օր առաջ: Հարևան սենյակում բարեկամներն ու հարևանները չշուխով զրուցում էին Մարոյի կրած տառապանքների մասին ու ցավում, որ անկատար մնաց իր միակ տղային ուսման տալու, կրթված մարդ դարձնելու երազը:

Նույն այդ պահին Գորիի հայտնի գրավաճառ Աբաեն Խալանթաճեի գրախանութում հավաքված զրուցում էին քաղաքի հասակավոր մարդիկ: Նրանց հետ էր նաև մի սևահեր երիտասարդ Գորիի քաղաքային ուսումնարանից: Նա դվռարաց էր, հազին ուներ սև ճըտկավոր կոշիկներ, վզին բրդե ծոպավոր չարֆ: Երիտասարդը գնում էր նոր ստացված գրքերը և առանձնացնում իր ընտրածները, մինչդեռ ժամանակ ուշադրությամբ ունկնդրում ծերերի խոսակցությանը: Այդ օրվա զրույցի նյութը Մարոյի մահն էր և նրա թողած որբերի վիճակը: Բոլորը հատկապես ցավում էին Սիմոնի համար:

— Իսկի՛ էլ մեղք չի, թող կորչի գնա նրա նման հանդուգն հոգին,— խոսեց Գորիի ծխական դպրոցի քահանան և պատմեց, թե ինչպես Սիմոնը համարձակվել է կրոնի դասին անթույլատրելի հարցեր տալ, որի պատճառով ինքը ստիպված է եղել հարց հարուցել դպրոցի տնօրենության առաջ՝ նրան դպրոցից հեռացնել տալու համար:

— Դպրոցից վտարվելուց հետո էլ Սիմոնն ամենևին չփոխեց իր վարքը,— լրացրեց իր խոսքը քահանան:

Քահանայի հաղորդածը Սիմոնի այդ արարքի մա-

պին՝ վատ տպավորություն թողեց ներկանների վրա։ Սեահերը երեխատարեցը մի պահ թողեց դրքերը։

— Իսկ դուք, տե՛ր հայր, լավ կանեիք, եթե Սիմոնին դպրոցից հեռացնելու փոխարեն դոհացուցիչ պատասխան տայիք նրա հարցերին,— ասաց նա և առանց սպասելու պատասխանի՝ իր ընտրած դրքերը ձեռքն առած, մոտեցավ Քալանթաճեին՝ արժեքը վճարելու համար։

Երեխատարեցն այս խոսքերով իր վրա բևեռեց ծերերի ուշադրությունը։

— Աստղին էլ լսող է պետք, որ քառակողմի մեկն է, ի՞նչ կարող ես անել,— դժդոհ պատասխանեց քահանան և ապա, օգտվելով նրա լռությունից՝ վրա բերեց։

— Ասենք թե դպրոցում այդպես է, հապա ընտանեքո՞մ, հապա հոր հետ ի՞նչպես է վարվում։

— Է՛հ, տե՛ր հայր ում պաշտպանում եք, պաշտպանեցեք, Սիկոյի հորը պաշտպանելու հիմք չունեք,— ուսանողի փոխարեն պատասխանեց Քալանթաճեն։

Քահանան չարունակում էր ոգևորված։

— Մեծին չլսողի ոտքը քարին կկպչի։ Մի անգամ Սիկոն չլսելով հորը՝ գնում է Լիախլայում լողանալու և հազիվ է ազատվում խեղդվելուց։

Ուսինդիրների հետաքրքրությունը լարվեց այդ պատմությունից, որ լսել էին նրանք վաղուց, սակայն մանրամասնությունները չգիտեին։

— Այդ դեպքին ես ծանոթ եմ,— տե՛ր հայր,— հարցեց Քալանթաճեն,— ա՛յ, լսեցեք պատմեմ, տեսնենք արանք կմեղադրե՞ն Սիմոնին, թե չէ։

Երեխատարեցը վճարելով դրքերի արժեքը՝ սկսեց ուշադրությամբ լսել Քալանթաճեին։

— Դեպքն այսպես է պատահել,— սկսեց Քալանթաճեն,— մի խումբ տղաներ, նրանց հետ նաև Սիմոնը, Լիախլայում լողանալուց հետո պառկում են դետափի տաք ավազներին ու դրուցում։ Նրանց ոտքերի տակ դեռ խեղճաբար թափով դալիս, լցվում է Քուռը։ Ջասարթափին, Լիախլայի և Քուի միացման այդ կետը, լողա-

նավու համար ամենավտանգավոր տեղն է: Տղաները մեջ վեճ է ծագում, թե ո՞վ կարող է լողալ այդ ջրապտույտի մեջ: Ոչ մեկը չի համարձակվում: Սիմոնը վեր է կենում պատված տեղից, մոտենում է ջրապտույտին, նայում ջրի խելահեղ պարին, փրփրած ալիքների կատաղի թավալումին:

— Ե՛ս կարող եմ,— բացականչում է նա ու նետում փրփրադեղ ալիքների դիրկը: Նետվելն ու տուզվելը մեկ է լինում: Տղաները վախեցած իրար են նայում: Ոչ ոք օգնության հասնել չի համարձակվում. իսկ Սիմոնը պղտոր ալիքներին զարնվելով մեկ երեվում է, մեկ դարձյալ անհետանում ջրի տակ: Բարեբախտաբար ձկնորսները մոտ են լինում. վրա են հասնում, փրկում նրան: Եվ ի՞նչ, ազատվելուց հետո կարծում եք Սիմոնը ձե՞ռք է քաշում ջրապտույտից: Ամենևին, փոքր առ փոքր նա այնքան է վարժվում խելագար ալիքներին, որ դառնում է ջրապտույտի ամենաքաջ լողորդը: Ի՞նչպես կբացատրեք դուք այս, հը՞,— դիմեց նա քահանային:

Երիտասարդը սպասում է քահանայի պատասխանին, իսկ նա քմծիծաղ տալով պատասխանում է.

— Անմտությո՛ւն է, ուրիշ ոչինչ...

— Ներեցե՛ք,— հուզված, բայց զուսպ մեջ է մրտնում երիտասարդը,— այդ, ոչ թե անմտությո՛ւն է, այլ սե՛ր դեպի բնության ահեղ տարերքը, կա՛մք և ուժ հաղթահարելու այդ տարերքը: Տեր-Հայրը զուցե հանդիպած լինի ռուս բանաստեղծ Լերմոնտովի այս տողերին.—

«А он мятежный просит бури,
Как будто в бурях есть покой».

— Ահա Սիմոնի հոգին:

Քահանան ոչինչ չպատասխանեց, իսկ երիտասարդը դրքերը թևի տակ՝ դուրս եկավ դրախանոցից:

— Սոսոն միանգամայն արդարացի է,— բացականչեց Քալանթաձեն:

***

Սիմոնի ականջն ընկավ մորաքույր Լիզայի ձայնը: Աբրհանաալով նա մի պահ չուրջը նայեց ու վեր կացավ: Զավահիրը քնած էր մյուս թախտին: Սիմոնը նոր միայն հիշեց ծանր իրականությունը: Մոտեցավ քրոջը, խնամքով ծածկեց նրան չալով ու դուրս եկավ մյուս սենյակը: Մորաքույր Լիզան հենված դազաղին՝ լաց էր լինում սրտամորմոք: Հարևան կանայք ձայնակցում էին նրան: Սիմոնին տեսնելով՝ մորաքույրը լացը դադեց, նա չէր ուզում ավելի վշտացնել նրան:

Կեսօրից անց, Մարոյի դազաղը դուրս բերին տանից: Ֆայլում էր Սիմոնը դազաղի հետևից՝ մորաքույր Լիզայի թևը բռած: Մինչև հայկական Նոր-Նիդեցին, ուր պիտի կատարվեր սգո պատարագը, Սիմոնը գնում էր հանդիստ ու դուսպ: Սակայն այն պահին, երբ պատարագից հետո նիդեցու բակից դուրս եկավ հուղարկավորների թափորը և չարժվեց դեպի գերեզմանատուն, Սիմոնն այլևս անկարող եղավ զսպել իրեն: Ոտքերը ծալվեցին, աչքերը մթնեցին և նա ուշակորույս վայր ընկավ: Նա սթափվեց միայն այն ժամանակ, երբ արդեն մի թարմ հողաթումբ էր ավելացել գերեզմանատանը և մայրը հավիտյան չկար...

Հուղարկավորները Աբշալի և Գևորգի հետ տուն վերադարձան Մարոյի ողորմածաը խմելու: Մորաքույր Լիզան Սիմոնին առած տուն չտապեց, հուղարկավորներին հոգու հաց բաժանեց, չահեց, զոհացրեց ու ճանապարհ դրեց:

Իսկ Սիմոնը...

Երբ բոլորը ցրվեցին իրենց տները և մութն իր սև քողն տակ առավ քաղաքը, Աբշալն առանձնացավ իր սենյակը, իսկ Սիմոնը բոլորից աննկատելի դուրս եկավ տանից ու չտապեց գերեզմանատուն: Նա որոշել էր այդ գիշեր մնալ մոր չիրիմի մոտ: Տեղ հասնելով, նա անեզյուղ անցավ գերեզմանների միջով, մոտեցավ մոր թարմ հողաթմբին ու պառկեց մոտը: Համբուրելով խո-

նավ հողը՝ նա ազատություն ավեց իր արցունքներին: Վշտահար սրտից բխող դառն տխկեկանքը փոքր ինչ հանդստացրեց տանտուրա եղած նրա հոգին:

Մոր հիվանդության պատճառով անցրած տանջանքից և անքուն գիշերները, դեղերի և բժիշկների համար վազվզելն այնքան էին հոգնեցրել և թուլացրել Սիմոնին, որ նա կամաց-կամաց սկսեց նիրհել և տուզվել բազկերի աշխարհը... Ահա նա տեսնում է, թե լուսիս մայրը լվացք է անում, ինքն օգնում է նրան, ջուր է բերում, լվացքն է փռում... Մայրն ավարտում է աշխատանքը... Գալիս են հարևանուհիները... որը նամակ է դրել տալիս, որը խնդրագիր, որը փոխարինարար ինչ որ բան է խնդրում... Մայրն համբերանքով ու սիրով կատարում է բոլորի խնդիրը... Հալևա ուշները Մարոյի մոտից հեռանում են դոհ դեմքերով, օրհնանքի խոսքեր չչնջալով նրա հասցեին: Սիմոնին դուր է գալիս, որ նրանք սիրում են իր մորը... Ահա ի վեր նորոգում է հավաքումը... Տան կտուրին նստած է Ջավահիրը և հայ է ուտում: Ֆրոլ կողքին նստած է իր չուներ, Ռոմիան. Սիմոնին թվում է, թե չնիվը քաղցած է, ֆրոլը խնդրում է հայ տալ նրան, Ջավահիրը չի կատարում եղբոր խնդիրը: Սիմոնը բարկացած կտուրն է բարձրանում, բռնում է ֆրոլ թևից, ուզում է ցած դցել նրան, մայրը վրա է հասնում, իրան է Ջավահիրին նրա ձեռքից և նախատում: Սիմոնը կոպիտ պատասխաններ է տալիս մորը: Մայրը նրա վարմունքից ցաված, լցված աչքերով լուռ նայում է Սիմոնին: Մոր հայացքն այնքան է մեղմ, այնքան բարեդութ, որ Սիմոնի սիրտն էլ է լցվում, բայց ուզում է թաղցնել արցունքները մորից և թաղնում հեռանում է տնից... Դեմն է դուրս գալիս մորաքուր Լիդան, Սիմոնն ո՞ղջում է նրա վրա, հեռանում... Մորաքույրը նստած տուն է բերում. Սիմոնը չի հարոտանում նայել մոր աչքերին, հագիվհաղ կատարանում է նեղսրտությունն չչնջալ... Մայրը փաթաթում է նրան, դուրդուրում... Այդ միջոցին Սիմոնը հանդստանում է... Մայրը դիրքը ձեռքն առած

նստում է ձյան պես սպիտակ սփռոցով ծածկված սեղանի առջև, կարդում է, իսկ Սիմոնը գլուխը մոր ծնկանը՝ նիրհում է...

Երկնակամարը պատյան է տալիս իր անխիլը: Հալվում է գիշերը...

Գիշերային սառն օդը չոտտով սթափեցնում է Սիմոնին քնից: Մի վայրկյան նա տարակուսած և երկչոտած՝ շուրջն է նայում: Ապա վերհիշելով ծանր կորուստը, նորից փարվում է մոր չիրմին և սկսում մտաբերել մանկության վաղուց մոռացված տարիներն ու անցքերը... Ահա ինքը, ընկերների հետ դեռատի լողանալուց հետո՝ բարձրանում է Գորբի նշանավոր բերդը իրենց հետ է նաև ծերունի Վասիլը: Ամառյա քայլերով նա առաջնորդում է տղաներին, քիթ տակ կամացուկ մի երգ մրմնջալով.

Ցանգալադա, գոգոնադա,
Գոգոնադա, գոգոնադա...[1])

Մամբն արձագանքում է ծերունուն...

Եվ ահա վերջապես նրանք բերդի բարձունքի վրա են: Վասիլը տղաներին երկու խմբի է բաժանում, ու սկսում է բռունցքակռիվ խաղը: Դա Սիմոնի ամենասիրած խաղերից մեկն է: Նա անցնում է խմբերից մեկի գլուխը... Խաղը բորբոքվում է, երկու կողմերն էլ խաղում են մեծ վարպետությամբ, սակայն հաղթանակը վերջը մնում է Սիմոնի կողմը... Խաղն ավարտվում է, ընկերները հաչավում են, նստում նախաճաշի: Վասիլը հետաքրքրական զեպքեր է պատմում անցյալից: Նախաճաշից հետո գնում են ըրոսնելու: Բերդի պարիսպներից բացվում է Քարթալինյան կանաչազարդ հովտի հրաշալի տեսարանը: Ահա Կախարդական Ջաստրեբովին... Արագընթաց, չարաճճի Լիախվան ավազ ու քար երբ տալով նետվում է հանդիստ ընթացող Քուռ գետը, խանդարում նրա անդորրը, պղտորում, խառնում նրա դույները: Սակայն չոտտով Քուռը սանձում է

———

*) Վրացական ժողովրդական երգ:

ազմկարարին, կլանում նրան իր մեջ ու չարունակում խաղաղ առաջ սահել, արևի տակ փայլփլելով իր վառ կանաչավուն կոհակները... Իսկ վերևում Գորնջվարի հոյակապ լեռներն իրենց կրծքին թառած վանքով մի տեսակ չրջափակում ու գեղեցկացնում են տեսարանը: Քոխ սիզավետ ափերին ծաղկում են այգինները, վարթամ ծառերին ժպտում են քաղցրահամ մրգերը... Ահա և Գորին իր գեղանիստ եկեղեցիներով, սրբատաշ չենքերով, մրգերի հարուստ այգիներով...

Հանկարծ ինչ որ ոտնաձայն սթափեցրեց Սիմոնին իր մտքերից. նա վեր թռավ և իր դիմաց տեսավ մորաքրոջն ու նրա ամուսնուն:

Հուզարկավորներին ճանապարհ դնելուց հետո՝ նրանք երկար որոնել են Սիմոնին, ոչ մի տեղ չգտնելով՝ չատ անհանգստացել, հարց ու փորձ են արել բոլորին, ապա ենթադրել, թե գերեզմանատուն գնացած կլինի: Եվ ահա, կես գիշերին, եկել ու գտել են նրան: Մորաքույրը չալով փաթաթում է Սիմոնին, հանդիմանելով, խրատելով ու լաց լինելով տանն է բերում նրան:

Մոր մահից հետո այլևս ոչինչ չի կապում Սիմոնին ընտանիքի հետ: Մորաքույրը տանում է նրան հետը Թիֆլիս:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԻՄՈՆԸ ԿԱՄՈ ԿՈՉՎԵՑ

Մորաքույրը Լիխան ընակվում էր Թիֆլիսում, Աբաս-Աբադյան հրապարակին նայող մի մեծ բնակարանում: Նա իր սենյակներից մեկը ավել էր մի խումբ ուսանողների: Մորաքույր Լիխայի դրդմամբ Սիմոնը սկսեց այցելել ուսանողներին, լսել նրանց զրույցները: Քաչված մի անկյուն՝ Սիմոնը լսում էր նրանց և մտքում նախատում ինքն իրեն, որ այդ վեճերից չատ բան չի հասկանում:

Մի օր էլ Սիմոնը ուսանողների մոտից ընկած տրամադրությամբ վերադարձավ մորաքրոջ մոտ:

#28199

ՀԱՅԿ ԳԱՆՋԱՍԱՐԻ ԱՆՎ. ՀԱՅ
ՏԳՏ. ԴԱՍԵՆՏԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Երբ մորաքույր Լիզան իմացավ նրա ախորժելի պատճառը, թե նա սովորել է ուզում, դնաց գրեցի հայ ուսանողներից մեկի մոտ և խնդրեց պարապել Սիմոնի հետ՝ նրան գինվորական դպրոց ասլու համար: Ուսանողը սիրով հանձն առավ և սկսեց պարապել հետը:

Սիմոնին առաջին հերթին անհրաժեշտ էր լավ սովորել ռուսերեն: Գրեցի հայ ուսանողը հենց ռուսերեն լեզվից էլ սկսեց պարապմունքները: Դասերից հետո էլ Սիմոնը չէր հեռանում ուսանողների մեջտեղից, ունկընդրում էր նրանց վեճերին: Այդ ուսանողներից նա լսում էր գրեցի ուսանող Սոսոյի անունը, որը այն ժամանակ աշխատում էր Թիֆլիսի ատաղաձիսաբանում և մեծ հեղինակություն էր վայելում: Սիմոնը դիտեր Սոսոյին դեռևս Գորիից, թեև այնտեղ Սոսոն քիչ էր երևում իր հասակակիցների չըլճանում ու չարունակ զբաղված էր ընթերցանությամբ: Այժմ ուսանողների ջերմ վերաբերմունքը դեպի Սոսոն՝ մեծ ցանկություն առաջացրեց Սիմոնի մեջ՝ տեսնել նրան և անձամբ զրուցել նրա հետ երեն հուզող բազմաթիվ հարցերի մասին:

Մի օր էլ, երբ Սիմոնը դնաց իր ուսուցիչ հայ ուսանողի մոտ ռուսերեն պարապելու, տեսավ Սոսոյին, որ մահճակալին պառկած գիրք էր կարդում: Սոսոն աչքերն դիտեր Սիմոնի մասին, այժմ տեսնելով նրան հետաքրքրվեց նրա առողջությամբ, տրամադրությամբ և հարցրեց, թե ի՞նչ դպրոց է ուզում ընդունվել:

— Ցունկերական դպրոց. չատ եմ ուզում գինվորական դառնալ:

— Ցունկերական դպրո՞ց,— կրկնեց Սոսոն և չարունակեց ընթերցանությունը:

Ուսուցիչն սկսեց պարապմունքը Սիմոնի հետ:

Սիմոնի համար ամենից գժվարը ռուսաց լեզվի հոլովները յուրացնելն էր: Նա գլուխ էր չարդում այդ հոլովների վրա, անգիր անում, կրկնում, սակայն անպատճառ տրա՛ն հոլովը, որը պատասխանում է ո՞ւմ (кому) հարցին, Սիմոնի մոտ камо էր սառցվում...

Սիմոնի ուսուցիչ հայ ուսանողը սիրով ու համբերությամբ կրկնում էր ու բացատրում, սակայն Սիմոնը միևնույն բանն էր կրկնում— камо ха камо...

Սոսոն, որ աննկատելիորեն հետևում էր պարապմունքին և տեսնում նրա տանջանքները, մի օր էլ, չդիմանալով զսպել ծիծաղը բացականչում է.

— Ք'ՀՀ դու, կամո՛, կամո՛...

Ուսանողներով լեցուն սենյակը թնդում է ծիծաղից:

— Կամո՛, կամո՛,— բացականչում են ամեն կողմից:

Սիմոնը քրտնած, մինչև ականջները ծայրերը կարմրատակած ուսուցչի նախատինքից, գլուխը կախ էր դցել և վրիժառու հայացքով նայում էր անհնազանդ кому բառին: Այդ րոպեին նա պատրաստ էր պատառ-պատառ անել դասագիրքը՝ այդ դավաճան բառից ընդմիշտ ազատվելու համար:

Սոսոն վեր կացավ պատված տեղից, մոտեցավ Սիմոնին, ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.

— Լսի՛ր, կամո՛, ինչո՞ւ ես ուզում յունկերական դպրոց մտնել:

Սոսոյի այդքան պարզ ու ջերմ վերաբերմունքը սրտապնդեց Սիմոնին, որ սրտին հաշվելով իր նոր անվան հետ՝ պատասխանեց.

— Ուզում եմ դինվորական դառնալ:

Սոսոն իր խորաթափանց հայացքով նայեց կամոյի աչքերի խորքը և նույն ջերմ տոնով ասաց.

— Գիտե՞ս ինչ, կամո՛, դու քո այդ յունկերական դպրոցում սովորելով՝ ամենաշատը կարող ես սպա դառնալ և ուրիչ ոչինչ. լավ կանես, եթե— ա՛յ թե ինչ անես:

Այս ասելով՝ նա Սիմոնին տարավ հենց նույն սեղանի նկուղը, ուր բազմաթիվ իրերի հետ կային նաև բրոշյուրներ, դրքեր, թղթեր և այլն: Նկուղի մի անկյունում ձեռքի մի տպագրական մեքենա էր դրված:

— Ա՛յ, տե՛ս, կամո՛ ով փոքր դործ աննչ չի կա-

քող, նա մեծ գործի մեջ էլ անընդունակ կլինի: Հիմա քեզ մի փոքր գործ եմ հանձնարարելու: Մեզ անհրաժեշտ է ունենալ պողպատյա մի թիթեղ այս մեքենայի համար: Կարո՞ղ ես թիթեղ ճարել և բերել՝ առանց այդ գաղանիքն ուրիշին հայտնելու:

— Կարող եմ,— վստահ ու համոզված պատասխանեց Կամոն:

Դրանից հետո Սոսոն իր սենյակը վերադաձավ դրքի ընթերցանությունը շարունակելու, իսկ Կամոն դուրս եկավ փողոց: Նա զգում էր, որ իր համար կյանքի նոր և հետաքրքրական շրջան է սկսվում: Սոսոյից հանձնարարություն ստանալը հպարտության զգացմունքով էր լցնում նրա հոգին. նա ուրախությամբ կբաժաներ ընկերների հետ իր ապրումները, սակայն հիշելով Սոսոյի պատվերը գաղանապահ լինելու մասին, ոչ ոքի չհայտնեց, անգամ մորաքրոջը:

Կամոյին բավական դժվարությամբ հաջողվեց ինչ որ մի տեղից թիթեղ գտնել: Այժմ պետք էր այն գաղտնի կերպով պահեստ տեղափոխել:

«Ի՞նչ անել, չկանչե՞լ արդյոք մի մշակ, տալ շալակը և տեղափոխել»: Ո՛չ, այդպես հարմար չէ, պահեստի տեղը կիմացվի: Ամենից հարմարն այն է, որ ինքը տանի, բայց այդ էլ հարմար չէ: Ոստիկանները տեսնելով ատաղձական մեքենայի մասը՝ կսկսեն հարց ու փորձ անել: Ի՞նչպես վարվել ուրեմն: Նա հարմար դըտավ հետևյալ միջոցին դիմել: Կանչեց մի ծանոթ մշակի, վերցրեց մի քանի ժամով նրա համեռն ու պարանը: Կամոն իր մեջքին առավ թիթեղը, համեռը դրեց վրան, թաղիքե փոքրիկ դլխարկն էլ կոտրեց ճակատին և պարանը փաթաթեց մեջքով: Հագի սև ու լայն շալվարն էլ արդեն ապահով էր մշակի արտաքինին: Ու այդպես կերպարանափոխված՝ չտապչեց Սոսոյի մոտ: Երբ դուռը բաց արեց ու ներս մտավ՝ Սոսոն սեղանի առջև նստած պարապում էր. զարմացած հայացքով նայեց նրան մի վայրկյան, առանց ճանաչելու, թե դեմը ով է կանգնած: Կամոն մանկան բերկրանքով ծիծաղեց,

ապա հանելով համեստը՝ ցած բերեց թիթեղը: Սոսոն ևս ուրախ ծիծաղեց ու խփեց կամոյի ուսին: Սոսոն գոհ էր, որ կամոն հասկացել էր իր պահանջը, գաղտնի կերպով սեղ էր հասցրել թիթեղը: Կամոն էլ գոհ էր, որ ճիշտ էր հասկացել Սոսոյին: Դեռ նոր էին թիթեղը պահեստն իջեցրել և վերադարձել սենյակ, երբ եկավ Սոսոյի ընկերներից մեկը— բարձրահասակ, սևահեր, պարթևալանջ լադո կեցխովելին:

— Ծանոթացիր, լադո՛, կամոն է,— ասաց նրան,— ու պատմեց թիթեղը դանելու պատմությունը: Լադոն, որ ընկերներից լսել էր կամոյի մասին, զոհունակությամբ սեղմեց նրա ձեռքը և բարեկամաբար ժպտաց.

— Շա՛տ ապրես:

Կեցխովելին իր ձեռքում ուներ լեհ սոցիալիստ գրող Դիկշտեյնի «Մ'վ լինչոյ է ապրում» գրքույկը: Անընդհատ լինելով ուսանողների, գրքերի ու թղթերի աշխարհում՝ կամոյի մեջ սերը դեպի գիրն ու գրականությունը առավել ևս խորացել էր: Եվ նա, առանց քաշվելու, որ կեցխովելու հետ առաջին անգամն է հանդիպում՝ հարցրեց.

— Ի՞նչ գիրք է ձեր ձեռքինը:

Կեցխովելուն չափազանց դուր եկավ կամոյի պարզ հետաքրքրությունը ղեպի գիրքը: Ու նա մեծ սիրով և իրեն հատուկ հստակ ոճով բացատրեց Դիկշտեյնի գրքի բովանդակությունը, ապա անցավ այն մարքին, թե աշխատավոր ժողովրդին երջանկացնելու համար ինչպես պետք է խլել հողը կալվածատերերից և գործարանը՝ գործարանատերերից:

Հայտնեց նաև, որ ինքը Թիֆլիսում Խելաձեի տպարանում աշխատելիս վրացերեն թարգմանել և տպագրել է Դիկշտեյնի «Մի պատառ հացի պատմություն» գրքույկը:

Այդ գրույցի ժամանակ Սոսոն մի կողմից գիրք էր կարդում, մյուս կողմից հետևում նրանց գրույցին: Կեցխովելին Դիկշտեյնի մասին նոր գրույցն ավարտեց Պլեխանովի՝ Դիկշտեյնին տված հետևյալ գնահատականով. «Մինչեւ մարդիկ, ինչպիսին Դիկշտեյնն էր,

չեն ապրում իրենց համար, այլ ապրում են բանվոր դասակարգի երջանկության համար: Ահա թե ինչո՛ւ բանվորները սրբությամբ պիտի պահեն նրա հիշատակը»:

Այդ պահին ներս մտավ մորաքույրը Լիզան. տեսնելով, թե ինչպես Լազոն ջերմ զրուցում է Կամոյի հետ և Սոսոն եղբայրական, սիրալիր վերաբերմունք է ցուցաբերում դեպի նա, մորաքույրը խիստ հուզվեց ու գոհունակ փնջով ուրախությունից թրջված աչքերը սրբելով՝ չէնջաց.

— Փառքդ չատ լինի, տե՛ր, տղաս մարդամեջ է մտնում...


Սոսոն Կամոյին համառոտակի ծանոթացրեց Կեսխովելու կենսագրությանը և հայտնեց, որ նա մեծ հեղինակություն վայելող սոցիալ-դեմոկրատ է, լենինյան-իսկրայական: Կամոն ախեց մեծ ակնածանքով նայել Կեսխովելու վրա, երբ լսեց, որ ռևոլյուցիոն գործունեության համար վտարել են նրան Թիֆլիսի հոգևոր սեմինարիայից և նա ստիպված է եղել իր ուսման ընթացքը չարունակել Կիևում: Կիևի ռևոլյուցիոն-մարքսիստական խմբակներին մասնակցելու համար ձերբակալվել է և աքսորվել Վրաստան: Այստեղ նա մտել է «Մեսամե դասի»՝ վրացական առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ: Դրանից հետո Կամոն արդեն գիտեր, որ Սոսոյի ղեկավարությամբ այդ կազմակերպության ներսում ձևավորվել է սոցիալ-դեմոկրատների մարքսիստական թևը և ստեղծվել ռևոլյուցիոն անլեգալ մամուլ:

Սոսոն Կամոյին տեղեկացրեց նաև նրա մասին, որ Կեսխովելին ստեղծագործության խիստ հակողությամբ է դժվարանում:

— Այժմ Կեսխովելին պարտիական աշխատանքների համար մեկնում է Բաքու: Իհարկե նա մեկնում է ծրագրված, սակայն անհրաժեշտ է կայարանում ապահովել նրա անվտանգ մեկնումը,— ասաց Սոսոն:

— Թույլ կտաք այդ պարտականությունը ինձ վրա վերցնել,— հարցրեց Կամոն:

— Վստահում եմ,— եղավ Սոսոյի պատասխանը:



Աշունը նոր էր սկսվել Թիֆլիսում: Ծառերի տերևները երինեներանդ թիթեռների նման պարում էին օդում, նստում տանիքներին, և ապա քամուց հալածված լցվում փոսը:

Կեցխովելին, փոքրիկ ճամպրուկը ձեռքին, զգեստափոխված վաղուց եկել էր կայարան ու դահլիճի մի անկյունը քաշված՝ սպասում էր գնացքին: Թիֆլիսի կոմիտեի անդամներից մի քանիսը նույնպես գտնվում էին դահլիճում և հեռվից հետևում Լադոյին՝ ձեռքերին զանազան կապոցներ բռնած: Ներանք պիտի սպասեին այնքան, մինչև գնացքը չմեկներ: Դահլիճն ու կառամատույցը լեցուն էին ուղևորներով, սակայն կոմոն դեռ չէր երևում: Մի՞թե նա մոռացել էր Կեցխովելու անվտանգ մեկնումն ապահովելու իր խոստումը: Կեցխովելին ծայրահեղ պարտաճանաչ և խոստմանը տեր անձնավորություն լինելով տեսավ տասում էր անպարտաճանաչությունը: Կոմոյի խոստմնազանց լինելը նրան բոլորովին դուր չեկավ, ու նա, ներքին դժգոհությունը զսպած՝ սպասում էր գնացքին: Կոմիտեի անդամները նույնպես դիտեին, որ Կոմոն Կեցխովելու մեկնման առթիվ պարտավորություն էր վերցրել իր վրա՝ կայարան գալու. իսկ թե ինչո՛ւ չէր երևում, դժվար էր հասկանալ: Սակայն նրանք ուրախ էին, որ Լադոյի չուրջը կասկածելի մարդիկ չեն երևում: Գնացքի ժամանման պահը մոտենում էր: Կոմիտեի անդամները էնկատեցին, բայց Կեցխովելին տեսավ, թե ինչպես դահլիճ մտավ վրացական իշխանի տարազով մի երիտասարդ, բուխարայի մի բնտիր փափախ աչքերին քաշած: Վրացական իշխանը խուզարկու հայացքով ոտից գլուխ չափեց Լադոյին, ապա կոմիտեի անդամներին և անցավ բուֆետ, օղի պահանջեց ու նստեց այնպիսի տեղ, որ կարողանա հետևել Լադոյին:

Լադոյի մեջ յուրջ կասկած առաջացրեց վրացական իշխանն իր հետաքրքրությամբ: Այդ կասկածն ավե-

լի խորացավ նրա մեջ այն ժամանակ, երբ իշխանը նըստեց, և բուֆետի խնձորձ մատուցողները խառնվեցին իրար: Մեկը ծխախոտ էր հրամցնում, մյուսը լուցկի, երրորդը մոխրաման, մի ուրիշն էլ, հարևան սեղանի ծաղկամանը դրեց իշխանի սեղանին: Ծաղկամանը ծածկեց Լադոյին իշխանի տեսողությունից: Իշխանը ձգային չարժումով մի կողմ հրեց ծաղկամանը, և առանց ուշք դարձնելու իր շուրջը ստեղծված եռուզեռին՝ չարունակեց հետևել Լադոյին: Փոքր ինչ անց՝ սեղանը ծածկվեց համեղ խորտիկներով: Սեղանի վրա դրվեց նաև խաղողի ընտիր օղիով լի չիշը: Այդ ժամանակ մի ոստիկան մոտեցավ իշխանին և լուցկի խնդրեց: Իշխանն առանց նրան նայելու՝ նրա առջևը նետեց լուցկին: Հնչեց դանդը: Կոմիտեի անդամներն առավել ևս ուրախացան, որ կասկածելի մարդիկ չեն երևում Լադոյի շուրջը: Սակայն Լադոն ներքուստ անհանգիստ էր: Նախազգացումը Լադոյին լավ բան չէր թելադրում...

Լավ էր, որ շուտով գնացքը եկավ: Ուղևորները սկսեցին դահլիճից հերթով անցնել կառամատույց: Լադոն հանգիստ վեր կացավ, ակնարկով հասկացրեց կոմիտեի անդամներին՝ կառամատույց դուրս գալ, և առանց ցույց տալու, թե նկատել է իրեն հետապնդող իշխանին, թողեց դահլիճը: Իշխանը ոտքի ցատկեց և մատուցողին թղթադրամներ չալրտելով՝ հետևեց Լադոյին: Մատուցողը իշխանի առատ վարձատրությունից զոհ՝ հավաքեց սեղանից խորտիկները, որոնցից իշխանը ամենևին չէր ճաշակել, և չշուշ օղին, որից միայն երկու բաժակ էր խմել:

Կառամատույցում եռուզեռ էր: Մի կողմից նոր ժամանած գնացքից իջած ճանապարհորդներ, մյուս կողմից մեկնողներ ու նրանց ճանապարհ դնողներ: Աչեղ դցելին, դեռևս չէր ընկնի: Կոմիտեի անդամներին թվում էր, թե ժողովրդի խառնությունը իրենց գործի օգտին է խոսում: Հետապնդվելու դեպքում Լադոն հեշտությամբ կկարողանար կորցնել իր հետքը խիտ ամբոխի մեջ: Լադոն պատռելով ժողովրդի հոծ ալիքը՝

դանդաղ առաջանում էր դեպի վաղունաշրջքը և մի-ժամանակ նկատում, թե ինչպես իշխանն այժմ ոչ միայն իրեն, այլև կոմիտեի անդամներին էլ է հետևում: Ի՞նչ է լինելու սրա վերջը: Մի՞թե իշխանի տադրոջի տակ թաղնվածը լուռես է և պիտի խափանի[1] իր մեկնումը: Գոնե կամոն երևար, մտածում էր Լադոն և չարունակում մոտենալ վաղոններին: Կոմիտեի անդամներին թվում էր, թե ամեն ինչ լավ է ընթանում. ուր որ է՝ Լադոն վազոն կբարձրանա, և հարցը կլուծվի: Սակայն հենց այդ ժամանակ կատամաուրյի վրա երևացին մի խումբ ոսոխականներ՝ հետախուզ չան հետ: Ոսոխականներից մեկը գնում էր չան չղթան բռնած: Շունը, գետինը հոտոտելով, անցնում էր ուղևորների ետևից, մեկ մոտենում վագոններին, մեկ ետ դալիս, հոտոտում ուղևորներին ու առաջ վազում: Ոսոխականների և հետախուզ չան երևալը նկատեցին թե Լադոն և թե կոմիտեի անդամները: Այդ բանը նկատեց նաև իշխանը և ավելի մոտեցավ նրանց: Ոսոխականների և չան հայտնվելը կայարանում արտաքո կարգի երևույթ էին ժողովրդի համար: Հասկանալի էր, որ հետաքրքրում են որևէ մեկին, զրզռվեց մարդկանց հետաքրքրությունը: Նրանցից յուրաքանչյուրն ուզում էր տեսնել, թե ո՛վ է լինելու այն դժբախտը, որ ընկնելու էր ոսոխականների ճանկը: Շուտով երեվաց նաև կայարանապետը՝ երկաթուղայինի համազգեստով, կարմիր գլխարկը գլխին: Մոտենալով չանը մանր ածող ոսոխականին՝ կայարանապետը չընջաց նրա ականջին.

— Ձեք մոռացել արդյոք Լադոյից որևէ իր չանը հոտոտելու տալ:

— Ի՛հ, բարեկամ, դուք վատ հուշարար եք մեզ մեր գերը հիշեցնելու դործում:

Կայարանապետը հեռացավ: Ինչ ամբոխ մի քիչից նրա կարմիր գլխարկն էր երևում, որը գետի երեսին լողացող կարմիր կակաչի ծալվորությունն էր թողնում: Լադոն արտաքուստ հանգիստ ու անտարբեր դեպի իրեն մոտեցող ոսոխականներն ու չունը՝ առաջ էր

պնում՝ հետզհետե մոռենալով վագոններին: Նրան ուղեկցող ընկերները հարցական հայացքով միմյանց էին նայում.

— Ինչո՞վ է վերջանալու այս պատմությունը...

Լադոյին զարմացնում էր այն բանը, որ էշխանն առանց աչքից բաց թողնելու իրեն ու կոմիտեի անդամներին՝ այժմ սկսեց հետևել ոստիկաններին ու չանը: Շուտով հետախույզ չունը գտավ Լադոյի հետքը: Կանգնեց մի պահ, հոտոտեց գետինը և սկսեց դնալ ուղիղ նրա հետից: Ոստիկանները հետևեցին չանը: Լադոն նկատեց այս և արագացրեց քայլերը: Ընկերները չունչները պահած հետևում էին նրան ու սպասում վագոն բարձրանալուն: Կամոն դեռ չէր երևում: Մի քանի քայլ ևս՝ չունը հասած կլիներ Լադոյին: Հանկարծ էշխանը վրա պրծավ, բռնեց չան չղթայից և դեպի իրեն քաշելով՝ բացականչեց.

— Գենացվալե, չէ՞ որ սա իմ չունն է: Ես քանի տարի է որոնում եմ. վերջապես գտա: Ետ տվեք իմ չունը, գենացվալե...

Ոստիկանները հանկարծակի եկած՝ չեն իմանում ինչ անեն. իսկ էշխանը ամուր բռնել էր չղթան ու վրա է տալիս.

— Տեսե՛ք, թե ինչպես ճանաչեց իր տիրոջը. չուն է չէ՞, ես սրա հոդուն մատաղ: Ետ տվեք իմ չունը,— խնդրում է նա ու քիչ է մնում արտասվի:

Լադոն ազատվելով չան ու ոստիկանների հետապնդումից՝ խորամանկ հայացքով նայեց էշխանին ու թռավ առաջին իսկ պատահած վագոնը: Ասլա վագոնից վագոն անցնելով՝ կորցրեց իր հետքը:

Կոմիտեի անդամները նկատեցին այս և խիստ ուրախացան՝ դործի այսպիսի հաջող ընթացք ստանալու համար: Նրանք արագ բարձրացան Լադոյի հետից, գտան նրան, տվին կապոցները ու դուրս եկան վագոնից: Վրացի էշխանը դեռ չարունակում էր զրազեցնել ոստիկաններին՝ զանազան պատմություններ անելով իր չան կյանքից, որին իբր քիչ երկար ժամանակ է ինչ

կորցրել է: Վերջապես ոտիկաններից մեկը դլխի ընկավ անցագիրը պահանջելու իշխանից: Սա ներկայացրեց իր անցագիրը: Ոտիկանները ձեռքից ձեռք անցկացնելով գնեցին այն ահամոզվեցին, որ իրենց դեմ իրոք իշխան է կանգնած, պատվի առան, ներողություն խնդրեցին՝ խոստանալով նրան վերադարձնել չուռը՝ քաղաքի ոտիկանապետի հատուկ թույլտվությամբ: Մինչ այդ հնչեց երրորդ զանգը և գնացքը դուրս սողաց կայարանից: Ոտիկանները ձեռնունայն վերադարձան ոտիկանատուն, չնկատելով, թե ինչպես հեռացող գնացքի մի պատուհանից բարեկամական ժպիտով իշխանին են նայում և հրաժեշտի ողջույններ տալիս Լադոյի երամատուն աչքերը:

Երբ գնացքն իր պոչը քաշելով բոլորովին անհետացավ, կոմիտեի անդամները դուրս եկան կայարանից և չսպասելին քաղաք, զրուցելով իշխանի, ոտիկանների և հետախույզ չան տարօրինակ դիվածի մասին: Ուրախացած իրերի այսպիսի հաջող ընթացքից, Լադոյի անվտանգ մեկնումից, նրանց սիրտը մխիթարանակ կտրված էր՝ կամոյի խոստմնադանդ լինելու և կայան չգալու պատճառով: Նրանք երկար ժամանակ խորհրդածում էին, թե այդ մասին ինչպես հայտնեն Սոսոյին: Չէ՞ որ այդ դեպքը վատ համբավ կստեղծեր Կամոյի անվան չուրջը, իսկ թագցնել այդ դեպքը Սոսոյից՝ նրանք չէին կարող: Այսպես զրուցելով՝ նրանք հասան կոմիտե, ուր նրանց էին սպասում Սոսոն և կոմիտեի մյուս անդամները: Երբ Սոսոն ուշադրությամբ լսեց այդ դեպքի մանրամասնությունները՝ խրխմատ ոռնով հարցրեց.

— Իսկ ո՞ւր էր այդ ժամանակ Կամոն.

Ընկերները դլուխները կախ դցեցին:

Սոսոն վեր կացավ, բացեց կից սենյակի դուռը և դլարթ ծիծաղով բացականչեց.

— Իսկ ո՞ւր էր այդ ժամանակ Կամոն...

Դռների մեջ երևաց Կամոն՝ վրացի իշխանի տարազով, մանկական ժպիտը դեմքին:

Տղաների զարմանքին և ուրախությանը չափ ու սահման չկար: Նրանք նոր միայն գլխի ընկան, որ կայարանի իշխանը Կամոն է եղել:

Կամոն հաջողությամբ կազմակերպելով Լազո կեխովելու մեկնումը Թիֆլիսից Բաքու, արժանացավ կոմիտեի անդամների և Սոսոյի ջերմ գովասանքին:

Նրա հերթական հնարամտություններից մեկը եղավ այն, որ, խրախուսվելով Լազոյի՝ Բաքվում ունեցած հաջողություններից՝ կարողացավ հետապնդել մի լուրթեսի, որը նպատակ ուներ որսալ իրեն՝ Կամոյին:

Հենց այդպես էլ ստացվեց— որսը հետապնդեց որսորդին:

ՈՐՍԸ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՈՐՍՈՐԴԻՆ

Բավական ժամանակ էր անցել այն օրից, ինչ Լազոն Բաքու էր մեկնել: Մի անգամ Ստալինն իր մոտ կանչեց Կամոյին: Երբ Կամոն ներկայացավ, Ստալինը բարևեց ու ձեռքը նրա ուսին դնելով ասաց.

— Ահա թե ինչպե՛ս պետք է աշխատել:

Ու հաղորդեց Բաքվից ստացած լուրերը Լազոյի՝ վարպետորեն ապատան հիմնելու մասին: Ապա հանելով իր գրասեղանի արկղից «Բրձոլայի» առաջին համարը, սկսեց կարդալ ու բացատրել Լազոյի «Նամակ վրացի բանվորներին» հոդվածը՝ գրված Վլադատանը Ռուսաստանին միացնելու հարցը բամայակի առթիվ: Կամոյի վրա մեծ ապավորություն թողեցին Լազոյի մըտքերը: Նրա խնդրանքով Ստալինը երկրորդ անգամ կարդաց հետևյալ հատվածը. «Հիշեցե՛ք,— գիմում էր կեխովելին բանվորներին,— թե ինչպես սրանից մի քանի տարի առաջ անձնվեր կերպով ու եռանդուն պայքարի մեջ մտան մի խումբ բանվորներ Երևանյան հրապարակում կառավարության դինված ուժերի դեմ: Այստեղ ռուս, վրացի և հայ բանվորները տարբել էին մի ընդհանուր չահով: Ահա այս միասնության մեջ էր նրանց ուժը... Ուրեմն՝ միանանք, բարեկամնե՛ր, միանանք,

բոլոր երկրներին բանվորնե՛ր՝ այսօրվա նողկալի կառավարության դեմ հաղթանակ տանելու համար»:

Երբ Սառլինն ավարտեց ընթերցումը, նկատեց, որ Կամոն փոքր ինչ տխրեց:

— Ինչո՞ւ տխրեցիր,— հարցրեց Սառլինը լրագիրը մի կողմ դնելով:

Կամոն պատասխանեց.

— Ամեն անգամ, երբ մեր գործի օգտին մարդիկ մի լավ բան են անում, ես հարցնում եմ ինքս ինձ,— կարո՞ղ եմ արդյոք ես էլ նույն բանն անել, թե՞ ոչ: Ու երբ զգում եմ, որ ուժերիցս վեր է այդ, վշտանում եմ: Ես սրտանց կուզենայի լադոյի այդ հոդվածի պես հոդվածներ գրել, բայց կկարողանա՞մ, ուժերս կլսատե՞ն: Ախր, նա գիտնական է, թարգմանիչ, գրչի ու մտքի մարդ, իսկ ե՞ս...

Կամոյի ասածները դուր եկան Սառլինին:

— Ոչինչ, Կամո ջան էլ կարող ես օգտակար լինել մեր գործին, եթե ցանկանում ես և ձգտում: Ա՛յ, Թող լադոյի օրինակը քեզ թեև տա: Նա Բաքվում գլուխ բերեց տպարանի գործը, դու էլ Թիֆլիսում հիմնիր: Փոքրիկ մի տպահով տեղ և սկիզբ, կլինե՞ն:

— Կլինե՛ն,— վստահ պատասխանեց Կամոն:

— Դե՛, քեզ անանուն, չուտով ցույցի ենք դուրս դալու, այնպես անես, որ Թռուցիկները քո հիմնած տպարանում տպեն:

Ուրախությունից Թունդ առավ Կամոյի սիրտը: Ահա թե ինչպիսի գործ է վստահում նրան Սառլինը: Այդ օրվանից նա այլևս քուն ու դադար չուներ: Հազար ու մի հարդ կար, հազար ու մի դժվարություն, բայց ամենից դժվարը տպահով մի տեղ գտնելն էր տպարանի համար: Մի կողմից լադոյի օրինակն էր նրան թև տալիս, մյուս կողմից՝ Սառլինի խրախուսանքը: Ու նա չքնում, հարմար տեղ էր որոնում տպարանի համար: Վերջապես հաջողվեց նրան գտնել այդ տեղը և ահա թե ինչպես:

Տպարան հիմնելու և Թռուցիկներ տպելու հանձնա-

բարեբախտները սահանալուց հետո, երբ կամոն գիչերը ու ցերեկ մատռոզված էր այդ հարցով, նրան կոմիտեից լուր տվին, թե մեկը լրտեսում է նրան և ուղում է որսալ: Ընկերները նախնիկ ցույց տվին «որսորդին»: Սա բարձրահասակ, ճաղատ գլխով, դուրս ցցված աչքերով, ցանցառ մորուքով մի մարդ էր: Կամոն որոշեց իմանալ, թե որտեղ է ապրում իր «որսորդը», որպեսզի ինքը սկսի հետապնդել նրան: Հենց նույն օրն իսկ դղեստավորվելով նա դուրս եկավ տանից և գտավ «որսորդին» հենց այն պահին, երբ նա ձեռքերը մեջքին դրած, դանդաղ ըրոսնում էր Կալովինյան պողոտայում և չուրջը դիտում՝ Կամոյին դանելու հույսով: Այնինչ Կամոն Պեպոյի տարազը հագած, հեռվից հետևում էր նրան: Քիչ անց՝ «որսորդը» դուրս եկավ Կալովինյան պողոտայից, մտավ Երևանյան հրապարակը և անցնելով հայկական չուկայով, բռնեց Խարխուխի թաղամասը տանող ճանապարհը: Կամոն ուզեց իմանալ, թե արդյո՞ք Խարխուխումն է ապրում իր «որսորդը» թե՞ գործ ունի այնտեղ: Հասնելով քաղնիքների փողոցը, «որսորդը» սկսեց զառիվերով դանդաղ բարձրանալ, առանց նկատելու, որ «որսը» հետապնդում է «որսորդին»: Անցնելով նեղլիկ, քարքարոտ փողոցներով, իրար վրա հենված աղյուսաշեն, խարխուլ տնակների առջևով, «որսորդը» բարձրանում էր դեպի քարափը, ուր թառել էր Խարխուխի թաղամասը: Հին Թիֆլիսը սկիզբ է առնում այս թաղամասից: Միակ բանը, որ այս թաղամասին քաղաքի տեսք է տալիս՝ Միրզոյանի մանածագործարանն է, որն իր փոքրիկ չչակի առավոտյան կանչով եռուզեռ է առաջացնում թաղամասում: Խարխուլ խրճիթներից, ինչպես մրջնաբներից, դուրս են թափվում քաթաթախ մարդիկ, բանվորները չտապում են գործարան, արհեստավորները՝ դեպի իրենց գործատեղերը: Այս եռուզեռը տևում է մի պահ միայն, որից հետո թաղամասը նորից սուզվում է անդորրության մեջ:

Խարխուխում խրճիթների լուսամուտներին ապակի-

ների վոսկեգույն յուղած թղթեր են վակցրած։ Փոքրիկ քակերում փռված աղքատիկ լվացքը վկայում է բնակիչների սուղ պայմանների և անմխիթար վիճակի մասին։ Երեկոն իր մաշված վերմակի տակ առավ Ալթունախի քարափը։ Հոգնած արևը թաքնվեց Մթա-Ձմինդա սարի հետևում՝ իր վերջին շողերով ոսկեզօծելով Օրթաճալայի ծառերի կանաչ գագաթները։ Քուռ գետի ափերի քարաժայռերին թառած անառիկների ապակինները պեծին էին տալիս ու շողշողում արևի ճառագայթներից։ Առանց աչքից բաց թողնելու իր «որսորդին» կամուն Ալթունախի բարձունքից դիտում էր Թիֆլիսը։ Ահա նրա դիմաց արևմտյան կողմից երևույան կապույտ մշուշի մեջ ճգվում է Կովկասյան լեռնաշղթան, ամպերի բևեռ թիկնոցն ուսերին, իսկ ներքևում՝ հովտում թեթև սահում է։ Քուռը և աշխուժ վազքով գնում ու դալիս, օճասող տալիս ու դրկում Օրթաճալայի այգիների կանաչ մեջքը, ապա խենթ սիրահարի սիրատենչ շրթերով չընջում ծառերին.

— Գիտե՞ք, իմ ալիքները արևի շողերի տակ գեղեցիկ են, բայց լուսնի շողերով ավելի կգեղեցկանան...

Մյուս կողմից կամոյի հայացքի դեմ հանդիման Մեջլիթի և Վարոնցովի կամուրջները, ինչպես նաև Մեաելսի բերդ հսկան, պատվավոր հանդիսատեսների նման, հպարտորեն բարձած դիտում են գետի ծփանքը։ Օրթաճալայի հեքիաթային այգիներից գեփյուռի թևով թռչում են դուդուկի և թառի ախորժալուր մեղեդիները։ Շուռով արևը մայր մտավ ու խավարն իչխեց քարափին։ Կամոն նկատեց թե ինչպես Ալթունախի քարափին կուչ եկած անառիկներից արծաթ աչքերի նման սկսեցին նայել նավթի փոքրիկ լամպերը և հովն սկսեց ծածանել պատուհանների մխակալե վարագույրները։ Մութն ընկնելուն պես՝ թաղամասում անցուդարձը դադարեց։

«Որսորդն» առանց չռտալելու անցնում էր պատասխանեց խրճիթների առջևով։ Փոքրիկ լուսամուտներից մեկ-մեկ ներս էր նայում ու չարունակում ճանապարհը։

Ահա նա նեբա մտավ մանրավաճառ Իրինայի խանութը, գնեց քիմիատա, մի թաշկինակ միրգ ու դուրս գալով խանութից շարունակեց ճանապարհը։ Վերջապես նա հասավ Ս Սարգիս Հայկական եկեղեցուն ու մտավ բակը։ Բակի փոքրիկ տանկներից մեկից խմելուն դուրս թռան մի քանի երեխաներ և «հայրիկը եկավ, հայրիկը եկավ» ճչալով, նեավեցին դեպի նա, իրենց թաշկինակով միրգն ու ծլվլալով ներս վազեցին։

— Ասել է թե, «որսորդս» այստեղ է ապրում։ Այս հո իմ բարեկամ գործերի ուրացու Հովսեփ Վախտանգյանի բակն է,— խոսեց Կամոն ինքն իրեն, ու երբ «որսորդը» նեբա մտավ իր տանակը, շատախեց Հովսեփին մոտ։

Ս. Սարգիս եկեղեցու ուրացու Հովսեփ Վախտանգյանը մի ամշտա, միամիտ և մեծակյաց մարդ էր։ Նա իր ձեռքի տակ ուներ պատանի երգիչների երկսեռ մի խմբակ։ Իր խմբի հետ նա ամեն օր պարապում էր, ուսուցանում նրանց եկեղեցական երգեր ու պատարագի ժամանակ երգել տալիս։ Կամոն Հովսեփի սենյակը մտավ հենց այն ժամանակ, երբ նա պարապում էր իր խմբի հետ։ Տեսնելով իր հատերկրացի Կամոյին, որին ինքն անչափ սիրում էր՝ շատ ուրախացավ, մի պահ ընդհատեց պարապմունքն ու սկսեց զրուցել Կամոյի հետ։

Կամոն մի կողմից զրուցում էր Հովսեփի հետ, մյուս կողմից դիտում նրա բնակարանը։ Հովսեփը երկու սենյակ ուներ։ Առաջին սենյակում զրված էր դաշնամուրը, որտեղ նա պարապում էր երգեցիկ խմբի հետ, մյուս սենյակը նրա ննջարանն էր։ Կամոն որոշեց հենց ննջարանումն էլ հիմնել իր տպարանը։ Մնում էր համոզել Հովսեփին և օգտագործել նրա ննջարանը։ Հովսեփը մի փոքր տեղյակ էր Կամոյի գործունեությանը, գիտեր ինչ մարդկանց հետ է կապված, ինչ դպրոցներին է ծառայում և ներքուստ համակրանք էր տածում դեպի նա։

— Կամո, ծանո՞թ ես մեր բակի ճաղատ «որսորդին»,— ասաց Հովսեփը լուսամուտից ցույց տալով

կամոչկեն արդեն ծանոթ «որսորդի» անակը, պետք է զգուշանալ նրանից: Ահա ինքն էլ հենց գալիս է մեզ մոտ:

— Իսկ ի՞նչ գործ ունի նա քեզ մոտ,— հարցրեց Կամոն:

— Երգի մեծ սեր ունի, ամեն օր փորձերիս գալիս է լսելու: Դու քեզ ցույց կուտս իբրև լավ երգիչներից մեկը, այդպես հարմար է, հասկացա՞ր,— ասաց Հովսեփին ու ներս գանչեց երգիչներին, որոնց հետ ներս մտավ նաև «որսորդը», «բարի երեկո» ասաց ու նստեց մի անկյունում: Հովսեփը վերսկսեց իր պարապմունքը: Կամոն փոքր ուս փոքր կարողացավ գտնել երգերի տոնը ու հարմարվելով լավին սկսեց մի կերպ երգել, աչքուսերով չկտկտել ներդաշնակությունը: Փորձն ավարտվելուց հետո՝ «որսորդն» իր տունը գնաց: Երգիչները ցրվեցին: Կամոն առանձնացավ Հովսեփի հետ: Նրան հաջողվեց իր զրավիչ լեզվով, համոզիչ խոսքերով ամբողջովին իր կողմը զրավել առանց այդ էլ դիպի իրեն լավ արամադրված Հովսեփին նրա ննջարանում տեղավորելու ձևքի տպարանը:

Տպարանը կար, բայց տառեր և չարվածք չկային: Ի՞նչ տառերով և որտե՞ղ չարել Թռուցիկները, ահա մյուս ծանր հարցը: Սակայն չուտով Կամոն այդ հարցն էլ լուծեց: Նա Թիֆլիսի տպարաններից մեկում լաչքարյան ազդանունով մի հավատարիմ ընկեր ուներ: Կոմիտեից ստացած Թռուցիկները իր ընկերոջ միջոցով չարել էր տալիս տպարանում ու չարվածքները սկուտեղի վրա՝ մրգերի տակ զրած կամ զամբյուղի մեջ թարմ կանաչեղենի տակ թագցրած՝ տանում էր տպարան: Բայց ի՞նչ ձևով էր նա այդ չարվածքները իր տպարանը հասցնում:

Շոգ ու ծանր Թիֆլիսյան կեսօր է: Մարդիկ աշխատում են տներներից դուրս չգալ ու քայլում են զրեթե պատերին քսվելով: Միայն Թիֆլիսի չուխան է, որ չի վախենում շոգից: Թիֆլիսի չուխան... Լեհ-լեգուն բազմություն: Եռուզեռ: Մարդիկ տներն լեզվի ու հա-

դուսափ։ Մրգերի կույտեր, կանաչեղենի դեզեր։ Դըռսում սայլերի ճռինչ, ներսում գլխ ու գլխրթ աղմուկ...

Ահա կինոդայլ հագուստով մի երիտասարդ՝ իր արևահար ու մկանոտ ձեռքերով այս ու այն կողմ հրելով մարդկանց, ճանապարհ է բաց անում ու առանց հավասարակշռությունը կորցնելու դլխին դրած տանում է մրգերով լի սկուտեղը։

— Դեղձ, ա՛յ լավ դեղձ, կանչում է նա ու մոտենում չուկայի անկյուններից մեկում ամբոխով շրջապատված պաբ եկող աղջին։ Ոտքերի ծայրին բարձրացած, մարդկանց գլխավերևով դիտում է դափի ու դուռնայի նվագով չորրվող աղջին, չարաճճի ակնարկով աչքով անում աղջի չուրջը եռանդուն պարով գալարվող սևահեր դնչուհուն ու չարունակում ճանապարհը։ Թուխ մի խոպոպ ցած է իջել նրա թաղիքե թասակի տակից ճակատին։ Թեթև քամուց տատրեբվում է խոպոպը ու լայն ճակատից սրբում դեպի սև ու խիտ հոնքերը դլորվող քրտինքի թափանցիկ հատիկները։ Աչպես անցնում է նա սկուտեղը գլխին բռնած, ոստիկանի աչքի առջևով։

— Դե՛ղձ, ա՛յ լավ դեղձ,— ծոր է տալիս նա։

— Ի՞նչ արժե, տո՛,— քնկոտ աչքերը թարթելով հարցնում է ոստիկանը։

— Ուրիչի համա երկու դրվանքեն մի չահի, քիչ համա՝ ձրի...

Ոստիկանին էլ հենց այդ էր պետք։ Երկու դրվանը մրգով լցնելուց հետո ձայն է տալիս.

— Դե՛ չուտ, չքվի՛...

Ու կինոն թռչում է։

Ահա այսպես, մեկ կինոդայլի հագուստով, մեկ գիմնազիստի հագուստով Կամոն չարլաճքը Ս. Սարդսի բակին է հասցնում, տեղավորում իր տպարանում ու սկսում տալել հենց այն ժամանակ, երբ Հովսեփը երգի պարապմունքներով էր զբաղված, իսկ ճաղատ որսորդը ուսնկնդրում էր նրանց։

Ս. Սարդսի եկեղեցու բակում կամաց-կամաց աչ-

խաւում էր կամոյի ձեռքի ապարանը: Սուլինը հաճախ այցելութեան էր գալիս և առուդում գործը: Գործը հաջող, բայց դանդաղ էր առաջ գնում: Մոտենում էր մայիսի մեկը: Թիֆլիսի կոմիտեի անունից Սուլինի ձեռքով կազմված թռուցիկները ապրում էին Վախտանգյանի բնակարանում: Գործն արագ առաջ չէր գնում, իսկ դա անհանգստացնում էր Կամոյին: Նա սկսեց մտահոգվել նոր ապարան հիմնելու և գործն արագացնելու հարցով: Շուտով Հավլաբարում, գարգալ մի ապահով տեղ, վատահելի մարդու բնակարանի ներքնահարկում ավելի մեծ ու հարմար ապարան հիմնեց Կամոն՝ Սուլինի, Թիֆլիսի կոմիտեի անդամների և իր գրաշար ընկերների օգնությամբ: Ձեռք բերվեց «Ամերիկանկա» սիստեմի ապագրական մեքենա: Դրանից հետո գործն ավելի արագ ընթացք ստացավ: Մեծ քանակով և արագ կերպով կարողացան թռուցիկներ ու բրոշյուրներ տպագրել: Թռուցիկների տարածումը Կամոն իր վրա վերցրեց: Մի օր էլ, երբ թռուցիկները ցրած վերադառնում էր, մի ոստիկան բռնեց կինոյի տարազ մտած Կամոյին:

— Երեկ էն ի՞նչ էիր տանում տեսուրով:

— Մի՛րզդ, ձերդ մենճուբին:

— Ապա տակին ի՞նչ թղթեր էին:

— Ո՛չ մի թուղթ, ձերդ մենճուբին:

— Ես իմ աչքով տեսա, դուռա՛կ:

— Ապա ինչո՞ւ չէիք խուզարկում:

— Բաղնիսից էի գալիս, կմրսեի, ժամանակ չկար:

— Հա՛, դե վազ էտենց ա, էս էլ քիզ արագի փուղ,— ասաց Կամոն ու երեքանոցը ոստիկանին տալով հեռացավ:

Այդ օրը երեկոյան Կամոն գնաց Սուլինի մոտ: Այնտեղ էին Վանո Ստուրուան, Միշա Բոջորիձեն, Զաքարի Զոդրիչվիլին, և վրացի ու հայ մի քանի ուրիշ ընկերներ: Երբ Կամոն ոստիկանի հետ կատարված դեպքի և իր «որսորդին» հետապնդելու մասին պատմեց ընկերներին, նրանք ծիծաղեցին, իսկ Սուլինը պատվիրեց ավելի զգույշ գործել:

— Վաղն արդեն դուրս ենք գալիս ցույցի,— ասաց Ստալինը և կամոյին ու ընկերներին ծանոթացրեց մայիսի մեկի ցույցն անցկացնելու ծրագրին: Կամոն այստեղ իմացավ, որ այդ դեպքերից բավական ժամանակ առաջ Ստալինն և Լ. Կեցխովելու գլխավորությամբ անմոռանալի մի մայրվկա է կատարվել Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Աղի լճի մոտ, իսկ առաջիկա ցույցը տեղի է ունենալու Սոլդատսկի բազարում: Բանվորներն իրենց հետ պետք է ունենային ձեռնափայտեր, քանի որ ոստիկանությունը ցույցի հոտն առել էր և ընդհարումը հնարավոր էր: Ստանալով անհրաժեշտ մանրամասն ցուցմունքներ, ընկերները գրվեցին, իսկ կամոն դեռ երկար մնաց Ստալինի մոտ և հայտնեց, որ իր մոտ է դրեցի ծերունի Վասիլը, հայտնեց նաև թե ինչ ձևով ու եղանակով է ինքը ցանկանում գրել Ստալինի կապված թռուցիկները ժողովրդի և ուսանողության մեջ:

Ստալինը խորապես վստահելով կամոյի հմտությանը, սեղմեց նրա ձեռքը, կրկին անգամ պատվիրելով խիստ զգաստի պահել ցույցի պլանները:

Եվ այսպես, 1901 թվի մայիսի մեկին տեղի ունեցավ ընկեր Ստալինի ղեկավարած նշանավոր ցույցը:

ՍՏԱԼԻՆԻ ԴԵԿՈՎԸՐԱՑ ՑՈՒՑՑԸ

Գարնանային առավոտ էր: Ասես մի հնձվոր ոսկե մանգաղով հնձում է արևի ոսկե չողերը և ցորենի դեղին հասկերի պես լցնում քաղաքի վրա: Կյանքով և խնդությամբ էր բուրում օդը: Ծառերը զվիջերային խաղաղ քնից արթնացած, խաղի տրամադրիր մանուկների պես՝ դանդրահեր գլուխներով ողջունում են իրար և «բարի լույս» չշնջում: Տերևները ծափ են տալիս ծառերի վրա և աշխուժ թռչունները պահմտոցիկ խաղում: Բուռն իր հավերժահոս մրմունջով առաջ էր սահում: Այդ պահին մի կինոտ էր անցնում Թիֆլիսի փողոցներով, կանաչեղենով լի կողովն ուսին:

— Կանաչի՛, ա՛յ լավ կանաչի: Ձայն էր տալիս նա ու չարունակում ճանապարհը:

Բազաքի ատիկանական ատամխաը Լավրովն իբ արտգընթաց նժուշդով անցավ կինոտյի մոտով, վերջին-նես վրա թողնելով զիշատիչ թռչունի տպավորություն: Լավրովը մի քանի կազակներով չտապում էր դեպի Սոլդատսկի բազարը:

Այսպես անցնում էր կինոտն փողոցից-փողոց, նրբ մի բակից դուրս եկավ մի աշուղ, սազը ուսից կախած ու սկսեց հետևել կինոտյին: Կինոտն չարուսահում էր իր ճանապարհը և նրա ուշադրությունից չվրիպեց, որ աշուղը ուշադիր հետևում է իրեն: Մի քանի փողոց անցնելուց հետո, կինոտն կանգ առավ Ղրիլևսկի քազաքային դպրոցներից մեկի առջև: Դպրոցի լայնատարած բակը չրջափակված էր բարձր ցանկապատով: Կինոտն վայր դրեց իր կողովը բակի դռան առջև, մի անգամ էլ «Ա՛յ, լավ կանաչի» կանչելով: Աշուղը զգուշությամբ դիտեց չուրջը, արագ ներս մտավ դպրոցի բակը, նատեց մի հարմար տեղ, ապա ուսից ցած առնելով սազը լրեց ու սկսեց ծնկնկացնել: Օրը կիրակի էր: Դպրոցում պարապմունքները չկային, սակայն դպրոցի տեսուչ Սմիրնովը կանչել էր բարձր դասարանների աշակերտուհյանը առաջիկա քննությունների կապակցությամբ և բացի դրանից՝ ուրիչ մի հատուկ հանձնարարություն կատարելու նպատակով: Սմիրնովը դեռևս դպրոց չէր եկել և հավաքույթը չէր սկսվել: Բակում հավաքված բարձր դասարանների աշակերտները չրջապատելով աչուղին, խնդրեցին երգել ու հեքիաթ պատմել իրենց համար:

Այդ ժամանակ բակ մտավ կանաչի վաճառող կինոտն ու մյացավ աշակերտներին: Կինոտյի հայտնվելը առավել ևս աչխուժացրեց աշակերտներին և բարձրացրեց նրանց տրամադրությունը, մանավանդ որ կինոտն իր սրամիտ կատակներով և սիրալիր, վաղաչչական խոսքերով չատ չուտով չահեց աշակերտների համակրանքը: Աչուղն սկսեց իր հեքիաթը: Բոլորը կլանված չտում էին նրան և ոչ ոք չէր նկատում, թե ինչպես կինոտն կանաչեղենով լի իր կողովի տակից հանում է

ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով պրած թռուցիկները և դնում աշակերտների դրպանները: Հեքիաթի ամենահետաքրքրական մասում դպրոցի բակն է մտնում տեսուչ Սմիրնովը: Աշակերտները պետք է չտապալեին դահլիճ:

— Երեխանե՛ր, ուշո՞ւմ եք հեքիաթի շարունակությունը լսել, դիմեց կինոտն նրանց.

— Շատ ենք ուզում,— միաձայն պատասխանեցին նրանք:

— Ով ուզում է՝ թող քիչ հետո դա Սոլղատակի բազարը,— ասաց աչուղը:

Աշակերտները խոստացան դնալ և արագ բարձրացան դահլիճ, իսկ աչուղն ու կինոտն փողոց դուրս եկան:

Ինչպես Թիֆլիսի մի շարք դպրոցներում, այնպես էլ այդ դպրոցում տեսուչ Սմիրնովը ոստիկանական ուժամբ լավրովից դաղանի հրամանագիր էր ստացել հետևելու բարձր դասարանների աշակերտությանը: Աշակերտները դահլիճ մտան թե չէ, եկավ Սմիրնովը և քննությունների վերաբերյալ ընդհանուր կարգի հրահանգներ տալուց հետո՝ անցավ բուն նյութին:

— Քաղաքում լուրեր են շրջում, որ երբ թե տեղի բնակիչները կոտորելու են ռուսներին: Այդ մասին կոչեր են ցրված քաղաքում: Եթե ձեր ձեռքն անցնեն դրանք, չլինի թե կարդաք, կհավաքեք և կհանձնեք ինձ:

Մի մեծահասակ աշակերտ հենց այդ միջոցին դրպանից հանեց մի կոչ և ասաց.

— Ներեցե՛ք, պարոն տեսուչ, ձեր ասածի ճիշտ հակառակն է գրված կոչում: Այ, կարդամ, լսեցեք. «Ողջունում ենք ձեզ, մայիսի մեկի առթիվ...

Տեսուչը դունատված՝ պարզեց ձեռքը դեպի աշակերտը.

— Ի՛նձ տվեք այդ կոչը...

Աշակերտը չարունակեց.

— Ընկերնե՛ր, ցույց տանք համայն աշխարհին, որ մեզանում՝ Թիֆլիսում, բանվորների մոտ էլ կան մեր

կեղեքիչները և որ մենք նույնպես կարողանում ենք պայքարել նրանց դեմ:

Տեսուչը վրա հասավ և խլեց կոչը:

— Վայ մեզ, այս ո՞վ է զրպանս թղթերով լցրել,— ասաց մի աշակերտ և զրպանից այդ նույն կոչերից հանելով ցրիվ տվեց դահլիճում:

Մյուս աշակերտներն էլ իրենց զրպաններից հանեցին կոչերը և սկսեցին ցրել դահլիճով մեկ: Սմբռնովը բոլորովին կորցրեց իրեն: Նա եկել էր աշակերտների վանդալավոր արամադրությունները կանխելու, այնինչ հակառակ արդյունք ստացվեց: Նա աչ ու ձախ էր նետվում այդ վանդալավոր թղթերը հավաքելու, բայց զրանք դնալով չատանում էին: Առաջին աշակերտը, որ սկսել էր ընթերցումը, իր ընկերոջից մի նոր կոչ վերցրեց և չարունակեց բարձրաձայն կարդալ.

— Հայտարարե՛նք, որ մենք էլ ունենք կենսական պահանջներ, որ մենք էլ ենք ուզում ունենալ վայելուչ բնակարաններ, ուզում ենք մաքուր հագնվել, կերակրվել, դասախարակել երեխաներին, որ մեզ համար էլ անհրաժեշտ են դպրոցներ, զրքեր, թատրոններ:

Տեսուչն այլևս իրեն զսպել չկարողանալով գոչեց.

— Իսկույն ևեթ ցրվեք ձեր տները և չհամարձակվեք կարդալ այդ կոչերը: Դրանք դրված են ասածու և թաղավորի դեմ:

Աշակերտները կռահեցին, որ քիչ առաջ իրենց մոտ եղած աշուղն ու կինոան հատուկ դործիչներ էին, և կոչերը նրանց ձեռքով է իրենց զրպանը մտել: Նրանք մտաբերեցին նաև աշուղի՝ Սոլդատսկի բաղաքի հրապարակներում նաև աշխատել: Իսկ այն աշակերտները, որ զրանք տուն դնացին, իրենց հետ տարան կոչերը և անից տուն, թաղից թաղ հնչեց Սասլինի ձեռքով կազմած կոչերի՝ ժողովրդին ուղղած հոդեզրավ խոսքերը. «Ռուսաստանի բանվոր ժողովուրդն արդեն բարձրացրել է իր հզոր ձայնը այս ընդհանուր անարդարության դեմ: Նա արդեն մարտի դաշտ է դուրս եկել: Պարզենք

նրան մեր ձեռքը նաև մենք և կառավարությանը հայտարարենք մեր ընդհանուր բողոքը»:

Աչակերտներին տուն ուղարկելով՝ տեսուչը վակվեց իր առանձնասենյակում և սկսեց խորհել: Նա ըստուգ աղբյուրներից լսել էր, որ այդ օրը մեծ ցույց է տեղի ունենալու:

— Աստվա՛ծ իմ, ի՞նչ վիճակ է ապրում Թիֆլիսը վերջին ժամանակներս,— հառաչեց Սմիրնովն ու սկսեց մեկ առ մեկ հիշել քաղաքում կատարված քաղաքական իրադարձությունները: Ոստիկանությունը տաղնապահար նախապատրաստություն է տեսնում: Զինվորական մի քանի տարաբաժանումներ մեծ քանակով մարտական զամբուղներ են առացել:

Սմիրնովը խորապես զգում էր, որ դա լավ նշան չէ: Զորքի այն բոլոր տեսակները, որ կան Թիֆլիսում, հեռևակը, հրետանավորները, դրագունները, կազակները, իրար, անընդհատ զորախաղերով էին զբաղված: Բացի այդ, քաղաքի հրապարակներում զինվորական վաշտեր էին տեղավորվել:

— Կառավարչապետ Գալիցինն էլ կարծես հենց հիմա ժամանակ գտավ Ելիսավետոպոլի նահանգը որսի դնալու,— լինքն իրեն քրթմնջաց Սմիրնովը:

Մինչ Սմիրնովը ծանր մտքերից հոդնած տուն էր չտապում, կամոն ու վասիլը, որ ծպտված էին մեկը կլնոտյի, մյուսը՝ աշուղի հագուստով, դուրս գալով զբոսայի բակից, հանդիպեցին մի քանի վրացի ու հայ բանվորների: Նրանք Սոլդատսկի բաղար էին չտապում: Այդ խմբի մեջ էին բանվորներ Լեոնտի Միմրաձեն, Գեորգի Տատանաշվիլին և ուրիշները: Մոտենալով սրբանց, Միմրաձեն ասաց.

— Կամո՛, Վասի՛լ, եկեք ընդհարաբար նախաձեռնենք, չէ՞ որ կարող է պատահել՝ կենդանի չվերադառնանք...

Հասարակ, բայց անկեղծ ասված խոսքը հաճախ ավելի ազդեցիկ է լինում, քան դեղեցիկ փքուն ճառը: Բոլորը համաձայնեցին և մտան Ամմալյան փողոցում

դանված մի ճաշարան։ Նախաճաշի ընթացքում Կամոն և Վասիլը լսացան, որ նույն տարվա մարտի 22–ին կա–
նանավորվել է Վլիկտոր Կուտնատովսկին, որը մի շարք մարքսիստ ընկերների հետ Ռուսաստանից արտաքսվել էր Անդրկովկաս և ընդհատակյա, ռևոլյուցիոն աշխա–
տանք էր կատարում Թիֆլիսում։

— Կուտնատովսկին ձերբակալվել է, սակայն գրա–
նով ոստիկանությունը չի գոհացել,—ասաց Մամլաձեն։ Այժմ հետապնդում են նրա մյուս ընկերներին։ Մարտի 21–ի գիշերը խուզարկման է ենթարկվել նաև տպագ–
իտարանը...

— Տպագրիտարա՞նը,— զարմացավ Կամոն,— ասել է թե գտել են Սասլինի հետքերը։

— Այո՛, տպագրիտարանը։ Ոստիկանության նը–
պատակն է առաջին հերթին հենց Սասլինին ձերբակա–
լել։ Խուզարկությունը կատարվել է նրա բացակայու–
թյան ժամանակ, մեզ արդեն հայտնի է, որ այնտեղ ո–
չինչ չեն գտել, սակայն ոստիկանությունը չհրաժար–
կում է իր որոնումները։

Տատանիչվիլին, որ մինչ այդ լուռ լսում էր, ավե–
լացրեց.

— Մեզ հայտնի է, որ ոստիկանական ուժե–
ղիատոր լավրովը այս տարվա մարտին տեղեկացրել է Թիֆլիսի նահանգական ոստիկանապետին, որ քաղա–
քի բանվորական իմպրակները նախապատրաստում են առաջիկա մայիսմեկյան ցույցի համար։ Այնպես որ մեր այսօրվա ցույցի հետ ոստիկանությունը վազուց է առել։ Մենք տեղեկություն ունենք նաև, որ մեր այ–
սօրվա ցույցի առթիվ Թիֆլիսում եղած զորքերը զա–
ւավորվել են հետևյալ կերպ. Ռոպորյան հարյուրակից հիսուն զազակ լինելու են Յունկերյան հրապարակում, 44–րդ դրագունյան նիժեգորոդյան գնդից չորս հեծե–
լաչափ հսկելու է Հրեհանային հրապարակը։ Առաջին Կովկասյան հրաձիգ դիմադրակի մի վաշտ բռնելու է Վերայի կամուրջը։ Երկու հրաձիգ դիվիզիաներ խնդիր են ստացել ապտնչանի դեպքում, պահպանել Լազա–
րյան փողոցից դեպի Արսենալի ճաշտին տանող ելքը։

Մի վաչա էլ առանձնացված է Մեսեխի բերդի և Հավ-
լաբարի կամուրջների պահպանության համար:

Լսելով այս մանրամասնությունները, կամոն
ասաց.

— Լա՛ր, Գևորդի, չէ՞ որ քեզ, որպես բազմանդամ
ընտանիքի տեր բանվորի, նախապատվություն են տալիս
չմատնահանել: Ե՛կ, դու այսօր մի՛ գա ցույցի, ո՞վ կմա-
նա ի՞նչ կարող է պատահել:

Մյուս ընկերները նույնպես ջանացին համոզել Տա-
տանաչվիլուն, որ ցույցին չմասնակցի:

— Սրան տես, ես հազիվ եմ կնոջս համոզել, թե
չուկա եմ գնում մթերքներ գնելու, սա եկել ուզում է
համոզել ինձ, որ ցույցին չմասնակցեմ: Ախր մի մտա-
ծեցեք, ես ինչպես կարող եմ տանը հանդիստ նստել,
երբ ընկերներս այնտեղ են: Չէ՛, տղերք, այդ բանը
մոքներիցդ հանեցեք, որտեղ գնաք, այնտեղ էլ ես: Իմ
արյունը հո ձերինից կարմիր չէ՛,

— Իսկ եթե որևէ դժբախտ դեպք պատահի քեզ
հետ,— հարցրեց բանվորներից մեկը:

Տատանաչվիլու ճակատը կնճռոտվեց: Նա իր գլու-
խըն առավ գործի մեջ և հակվեց սեղանին: Ըն-
կերներն էլ մտատանջության մեջ էին: Տատանաչվիլին
վեր բարձրացրեց գլուխը, նայեց նրանց.

— Իսկ եթե ինձ որևէ դժբախտ դեպք պատահի,
ընտանիքիս օգնող ձեռքեր անչուշտ կգտնվեն...

Այդպես էլ անհնարին եղավ Տատանաչվիլուն համո-
զել, որ ցույցին չմասնակցի:

Երբ նախաճաշն ավարտեցին, Մամրաձեն գրպանից
հանեց ատրճանակը և ասաց.

— Կարծում եմ, որ սա մեզ այսօր վտանգավոր ծա-
ռայությունն պիտի մատուցի:

— Լա՛ր, Լեոնի՛, մեզ տուր այդ նագանը: Մի
մոռացիր, որ քո ոտքը ցավում է և եթե ոստիկանները
հարձակվեն, դու փախչել չես կարողանա և նագանը
կվերցնեն ձեռքիցդ,— ասաց բանվորներից մեկը:

— Ես մտածել եմ գնում և ո՛չ թե փախչելու: Ես

մարանչելու եմ մինչև արյանս վերջին կաթիլը,—վճռաբար պատասխանեց Մամլաձեն:

Նախաճաշելուց հետո, նրանք գնացին Սոլղատակի բազարը, իսկ Վասիլը չտապեց պայմանավորված այն քնահարանը, ուր նրան սպասում էր գորեցի մի ծերունի, մի մեծ կապոց հոնի ձեռնափայտերով: Վասիլը վերցրեց ձեռնափայտերը և առանց իր տարազը փոխելու ուղևորվեց Սոլղատակի բազար՝ ձեռնափայտերը «վաճառելու»: Իսկ Կամո՞ն...

Քաղաքում իր գործը վերջացնելուց հետո Կամոն չտապեց դեպի Վանքի բակը: Վանքի եռակի կղմինդրածածկած մեծ աղյուսաշեն պատը, մյուս կողմից՝ պատյար էր գործում Քուռ գետի մի թևը Մաղաձյան կղզու շուրջը, և գալիս դարձյալ գետին էր միանում: Երրորդ կողմից Վանքին էր նայում առաջնորդարանը: Վանքի բակը յցեսուն էր մարդկանցով: Կամոն դիտեր, որ վանքի բակը մի սեռակի հանդիսման վայր էր, ուր հավաքվում էին ամեն խավի պատկանող մարդիկ և զրուցում քաղաքի անցուդարձի մասին: Մանավանդ վիրակի օրերին բազմությունն այդտեղ կրկնապատկվում էր: Մանելով Վանքի բակը և պատռելով խիտ բազմությունը՝ Կամոն մոտեցավ Լոռիս-Մելիքովի գերեզմանին, որի ցանկապատի մոտ մի խումբ մարդիկ էին զրուցում. չճանչով նա հասկացրեց նրանց, որ դուրս գան բակից, իսկ ինքն առաջ անցավ:

Կամոյի հայտնվելը նկատեցին նրա մյուս ընկերները և ակնարկներով մի-մյանց հասկացրին, որ դուրս գան բակից ու չտապեն Սոլղատակի բազար: Հենց նույն այդ միջոցին Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներից, դեպոյից և բանվորական այլ վայրերից ու դարձառներից դեպի Սոլղատակի բազարն էին չտապում բանվորները:

Գարնանային արևը խաղում էր երկնքի կապույտում: Կեսօրը մոտենում էր:

Երբ տեղ հասան Վանքի բակից եկածները ու բարձր պատարանների աշակերտները, Սոլղատակի բազարն ար-

դեն լեցուն էր ժողովրդով։ Ոստիկանները խուզարկու հայացքով չրջում էին բազմության մեջ։ Շուտով երեվաց Ստալինը։ Չնայած նրա դեմոստափոխված լինելուն՝ բանվորներն իսկույն ճանաչեցին նրան։ Ոգևորության մի ալիք անցավ ժողովրդի միջով։ Ստալինը դնաց դեպի հոգևոր սեմինարիան՝ սեմինարիաններին ևս ցույցի դուրս բերելու համար։ Նրան տեղեկացրին, որ հոգևորականները սեմինարիաններին փակել են սեմինարիայի չենքում։ Պուշկինյան այգու մոտով անցնելն է՛լ անհնարին էր. ոստիկանները փակել էին ճանապարհը։

Ժամը 12-ն էր դառնում։ Սովորականի նման որոտաց Սբանենալի թնդանոթը։

Ստալինը ավեց ցույցի ազդանշանը։ Մի բանվոր կարմիր դնդիկ բաց թողեց օդում։ Կամոն վաղուց տեղ էր հասել և վասիլի հետ հոնի ճեռնափայտերը բանվորներին բաժանելուց հետո՝ սպասում էր հենց այդ ազդանշանին։ Տեսնելով կարմիր դնդիկը, Կամոն, Վասիլը, Մամյաձեն և Տատանաշվիլին չրջապատեցին մի բանվորի, որի մեջքին էր փաթաթված դրոշակի կարմիր մեռաքսը։

Ոստիկանները ժամանակ իսկ չունեցան նկատելու, թե ինչպիսի արագությամբ բանվորի մեջքից քանդվեց, ճոդին սմբացվեց և սկսեց ծածանվել օդում կարմիր մեռաքսը՝ զարդարված Մարքսի, Էնգելսի, Լասալի նկարներով և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգով։ Մարդկային ծովն ալեկոծվեց, եռաց, տակն ու վրա եղավ։ Ժողովուրդը խառնվավ, բազմապատկվեց։

— Կեցցե՛ մայիսի մեկը,

— Կորչի՛ ինքնակալությունը,

— Կեցցե՛ քաղաքական ազատություն,

— Ուրա՛ժամյա՛ բանվորական օր,— հնչում էին դեպոյի բանվորների հուժկու ձայները։ Ժողովուրդը լիակուրդ արձագանքում էր լոզունգներին։ Ոստիկանները արագորեն փակեցին խանութնե-

բը։ Խռովում էր ժողովուրդը։ Ոսոխականները մի ակնթարթում մերկացրին սրերը, որ հեռվից վարագի ժանիքների էին նմանվում։ Բանվորներն ու ժողովուրդը ոսոխականների սրերին դիմագրում էին հոնի ձեռնափայտերով ու քարերով։ Սկսվեց կատաղի ճակնամարտ։ Ոսոխականները սարճանակների կրակոցներով խլացնում էին օդը։ Ժողովրդի դիմաչերեւում սկսեցին փրփռալ թռուցիկները։ Կարմիր մեռաքրը չարունակում էր ծածանվել օդում։ Աննկարագրելի իրարանցում սկսվեց քաղաքում։ Փողոցներում ձիաքարշը դադարեց աշխատելուց։ Ձիաքարշի բանվորներն աշխատանքը թողած՝ վազում էին դեպի Սոլդատսկի բազար և միանում ցուցարարներին։ Չէ՞ որ այնտեղ էին նրանց լավագույն ընկերները ու հարազատները։

Լեռնաի Մամլաճեն ծոցից մի կապ թռուցիկներ հանելով՝ չպրտեց օդի մեջ։ Վասիլը դրանցից մեկը բռնելով՝ դիմեց ժողովրդին ու սկսեց կարդալ.

— «Բանվո՛ր եղբայրներ, չէ՞ որ դուք տեսնում եք, թե ի՛նչ ահեղութիւն, ի՛նչ սոսկալի բռնութիւն է տիրում մեր շուրջը։ Դուք տեսնում եք, թե ինչպիսի ուժով, բռնութով և սվիններով են մեզ պահում կարիքի մեջ՝ հարկադրելով հարստացնել ուրիշներին, իսկ ինքներս տանջվում, հալից ընկնում ենք»։

Նորից տեղաց «կեցցեներ» և «կորչիների» տարափը։ Մի ոսոխական սրով հարձակվեց կոչն ընթերցող Վասիլի վրա և այն է, պիտի հարվածեր, Կամոն կանաչեղեն դատարկ տոպրակով անցկացրեց ոսոխականի գլուխը և ուժգին թափով եռ քաշեց։ Ոսոխականը չնչաստաւ եռ ընկրկեց ու դեռ ուշքի չեկած, նա բռունցքի չհշտակի հարված ստացավ քունքին ու վայր ընկավ ուշակորույս... Բռունցքամարտը կատաղի բնույթ ստացավ։ Կամոն ու Վասիլը իրենց օրինակով խրախուսում էին մյուսներին։ Ոսոխականները համարյա նահանջում էին մարտադաշտից՝ ամբողջովին թողնելով ցուցարարներին։ Սակայն փոթորկի պես վրա հասան ոսոխականական ոստ-

մխաոը Լավրովը ոտաիկանապետ Դեղեանովի հետ, և կարմիր դուխից խրտնած ցուլերի պես հարձակվեցին դրոշակակիր բանվորի վրա, ջանալով դուրս կորզել նրա ձեռքից դրոշակը: Բայց այնքան էլ հեշտ չէր բանվորի հուժկու ձեռքերից դրոշակ խլելը: Դրոշակակիրը, որ կաշվե պինջակով լայնաթիկունք մի բանվոր էր, ճարպիկ ոտայուններով դուրս պրծավ Լավրովի և Դեղեանովի օղակումից ու դրոշակը հանձնելով ընկերներից մեկին նետվեց ոտիկանների մեջ և սկսեց ալ ու ձախ հարվածներ տեղալ բռունցքներով: Դպրոցականները ոգեւորված նրա խիզախ հարձակումից, ուռաներով թնդացրին օդը: Ոստիկանները դլուխները կորցրած զարկում էին անխնա, թրերով, նռգայիկաներով, չխնայելով նույնիսկ դպրոցականներին և կանանց:

Սաալինը հուզված, սակայն զուսպ, արագ անցնում էր ցուցարարների մոտով, ոգեկոչում, քաջալերում, իսկ երբ մարտն ավելի կատաղի բնույթ ստացավ, Տատանաշվիլին, Կամոն, Վասիլը և Մամլաձեն համարյա ստիպելով Սաալինին հեռացրին մարտադաշտից: Այդ նպատակով եկած կառքը Կամոյի ազդանշանով մոտեցավ և իր մեջ թագցնելով Սաալինին, անհետացավ փողոցների լաբիրինթոսում:

Դրանից հետո Կամոն, Վասիլն ու Տատանաշվիլին համոզված, որ Սաալինի կյանքին վտանգ չի սպառնում, նորից նետվեցին բռունցքամարտի մեջ: Մամլաձեն իր ատրճանակով վիրավորեց երկու ոտիկանի: Նրա վրա հարձակվեցին մի խումբ կազակներ: Ընդհանուր իրարանցման մեջ Կամոն այլևս ոչինչ տեսնել չկարողացավ: Մի պահ անց՝ բոլորը տեսան, թե ինչպես կազակները քարշ տալով տանում էին դաժանորեն ծեծված ու խոշտանգված Մամլաձեին:

— Բանվորնե՛ր, ժողովո՛ւրդ, ամուր պահեք ազատության կարմիր դրոշը: Կորչի՛ ստրկությունը, կեցցե՛ ազատությունը,—հնչեցին Մամլաձեի վերջին խոսքերը:

Կազակները դանակոծելով տարան նրան։

— Աահա սլբրոը վկայել էր, որ կարող է կենդանի չվերադառնալ,— հառաչելով ասաց Կամոն տեսնելով Մամլաձեի վիճակը։

Ոստիկանների ուժերը գնալով աճում էին։ Նրանց շարքերը համալրվում էին օժանդակ զորքերով։ Շուտով ցուցարարները շրջապատվեցին։ Կազակներին վերջապես հաջողվեց խլել դրոշակը բանվորների ձեռքից։ Մի քանի տասնյակ ցուցարարներ ծանր վիրավորվեցին, շատերը ձերբակալվեցին։ Մեռելի բերդը լցվեց բանտարկյալներով, իսկ բերդի հիվանդանոցը՝ ծանր վիրավորներով։ Գեորգի Տատանաշվիլուն էլ մեծ բաժին ընկավ այս ցույցից։ Այն պահին, երբ դրոշակը ձեռքից ձեռք անցնելով հասել էր նրան, և նա հաստատ որոշել էր մինչև վերջին շունչը այն չտալ ոստիկաններին, տակից մի կազակ ջարդեց նրա ճակատը հրացանի խլածոթով և դրոշիկը խլեց։

Ձերբակալվելուց հետո էլ չարունակվեցին Տատանաշվիլու, Մամլաձեի և մյուսների խոշտանգումները։ Սակայն այդ տանջանքները չկարողացան ծունկի բերել և մանավանդ տալ ցույցի կազմակերպիչներին։

Դեպքի վայրը ժամանեց նահանգապետի պաշտոնակատար դեղապետ Սվեչինը, քաղաքում կարգը վերահաստատելու։ Կովկասի կառավարչապետ Գոլիցինը և նրա օգնական Ֆրեդեն այդ ցույցի առթիվ «հանգստացնող» հեռագրեր տվին Պետերբուրգ՝ Ներքին գործոց մինիստրին, չանալով իրադրության չներկայացնել այնպես, ինչպես եղել էր։ Սակայնի դլխավորած այդ նշանավոր ցույցից հետո կառավարության և դեմս բանվորների, տեսավ իր լուրջ, կազմակերպված ախոյանին և ձեռք առավ խստագույն միջոցներ՝ ուժեղացրեց ոստիկանության քաղաքը ողողեց լրտեսներով։ Ոստիկանությանը մեծ իրավունքներ տրվեց։ Բայց այդ ամենը ոչ միայն չէին կասեցնում բանվորական շարժումների թափը, այլև ավելի ծավալեցին այն։

Ստալինի ղեկավարությամբ Թիֆլիսի կոմիտեն ցույցի հետևյալ օրն իսկ հատուկ թռուցիկներ հրապարակեց, որոնք ժողովրդին կոչ էր արվում չարունակելու պայքարը: Թիֆլիսի կոմիտեն իր բրոշյուրներով ու կոչերով ագիտացիոն աշխատանք էր ծավալում քաղաքի բոլոր գործարաններում և արհեստանոցներում:

Մայիսմեկյան ցույցից բավական ժամանակ անց՝ Ստալինը Ելիզավետինյան փողոցում գտնվող կոնսպիրատիվ մի բնակարանում դաղտնի խորհրդակցության հրավիրեց մի չորք ընկերների, որոնց թվումն էր նաև Կամոն: Այստեղ Ստալինը մի հայտարարիչ բերեց ցույցից հետո ծավալված բանվորական շարժման արդյունքները, պատմեց ներկա գտնվողներին թե ինչպես արտասահմանյան և ռուսական սոցիալ-դեմոկրատական մամուլում լայն արձագանք են գտել ցույցերը: Հավաքույթում Զոդրիչվիլին ընթերցեց Լենինյան «Իսկրայի» այն համարը, ուր նշված էր 1901 թվի մայիսմեկյան ցույցին հաջորդող մասսայական, ռևոլյուցիոն շարժման վերելքը Ռուսաստանում և Թիֆլիսում, ապա կարդաց հետևյալ հատվածը. «Նույնքան էլ հետաքրքրական է Թիֆլիսի կոմիտեի ագիտացիոն գործունեությունը: Կոմիտեն ստիպված է ագիտացիայի ղեկավարին աշխատանքը կատարել բազմազգի բանվոր բնակչության մեջ: Հունվարից մինչև հոկտեմբեր կոմիտեն հրատարակել է 16 պրոկլամացիա 19,800 օրինակով»:

Մայիսմեկյան ցույցից մի քանի ամիս անց՝ 1901 թվի նոյեմբերի սկզբներին, երբ Կեցխովելին բաքվումն էր, իսկ Սաչա Ծուլուկիձեն բուժվում էր Բաթումում, Թիֆլիսում հրավիրվեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առաջին կոնֆերենցիան, ուր ընտրվեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի առաջին կոմիտեն:

Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ նույն տարվա նոյեմբերի վերջերին Ստալինը տեղափոխվում է Բաթում:

Ցույցի ժամանակ ձերբակալումից մի կերպ ազատ-

ված Վասիլը, հետապնդումից խուսափելով մեկնում է Դոբի, իսկ Կամոն տեսնելով կառավարության ժամանելը պատրաստվում է ամեն մի պատահականության։

Կոմիտեի մի շարք լուրջ հանձնարարություններ Թիֆլիսում կատարելուց հետո՝ Կամոն մեկնում է Բաթում։

ՓԱԽՈՒՍՏ ԲԱԹՈՒՄԻ ԲԱՆՏԻՑ

Կամոն Բաթումում առաջին հերթին պետք է տաքածներ ռուսներեն, վրացերեն և հայերեն լրտեսներով թռուցիկներ։ Սակայն առաջին իսկ օրը Բաթումի կայարանում ձերբակալվեց մի մեծ կապոց թռուցիկներ և բրոշյուրներ ձեռքին։ Մինչև ոստիկանատուն հասնելը նա կարողացավ իր անձնական վկայականներն ու փաստաթղթերը ոչնչացնել, իսկ կապոցը մնաց մոտը։ Ճանապարհին նա ոստիկանին մի մեծ դոմար առաջարկեց, որ իրեն բաց թողնի, սակայն վերջինս թե դոմարը վերցրեց և թե նրան ոստիկանատուն տարավ կապոցի հետ միասին։ Այդտեղ փորձեցին ծեծել Կամոյին, բայց նա այնպիսի ազմուկ բարձրացրեց, որ ոստիկանները վախեցած ետ քաշվեցին։ Հարցաքննության ժամանակ Կամոն համառ կերպով պնդում էր, որ կապոցը իրեն չի պատկանում։

— Պատահաբար դուռ կայարանում և չգիտեմ նույնիսկ ինչ է միջինը։

Թռուցիկների միջից մի զաղտնի նամակ գտան, որը կարող էր բազմաթիվ ընկերների ձերբակալման պատճառ դառնալ։ Այդ նամակը որ դրված էր հարցաքննող ոստիկանի սեղանին, չատ էր անհանգստացնում Կամոյին։ Ի՞նչ անել նամակը, ինչպե՞ս անհետացնել այն։ Երբ ոստիկանապետը մի պահ հեռացավ սեղանից ու սկսեց թերթել թռուցիկների կապոցը, նոր նամակներ գտնելու հույսով, Կամոն անկատելորեն վերցրեց նամակը բռան մեջ տրորելով դուրս դարձրեց և

արագ կուլ տվեց։ Ոսոխականապետը կրկին իր տեղը վերադարձավ և նամակը սեղանի վրա չդնելով դայրացած բացականչեց.

— Ո՞ւր է նամակը։

— Ի՞նչ նամակ, զարմացած հարցրեց Կամոն։

— Ինչպե՞ս թե ինչ նամակ, չէ՞ որ քիչ առաջ սեղանին էր,— զայրույթից դրեթե ղողալով գոռում էր ոսոխականապետը։

— Սեղանի վրա կարծեմ մի այն հեռագրեր էին, որ դուք երևի նամակների տեղ եք ընդունել,— հանդիստ պատասխանեց Կամոն։

Չնայած ոչինչ չկարողացան հաստատել Կամոյի վրա, այնուամենայնիվ նրան նետեցին Բաթումի նշանավոր բանտը՝ փակելով առանձին կամերայում։ Բանտում ամենատանջալին Կամոյի համար մենակ լինելն էր։ Այցելությունները խստորեն արգելված էին։ Եվ այսպես, չորս ամիս ոչ ոքի չէիոշին Կամոյի մոտ, իսկ որքա՜ն անհրաժեշտ էր նրան տեսնվել մարդկանց հետ։ Երկար թախանձանքներից հետո՝ նրան հանեցին առանձնարանից ու տարան ընդհանուր կամերան։ Կամոյին թվաց, թե մութ աշխարհից լույս աշխարհ ընկավ։ Նա սկսեց դննել, հետազոտել չորջը գտնվող մարդկանց։ Այնուհետև ուշի ուշով ուսումնասիրում էր նա բանտի բակը և փախուստի մասին էր մտածում։

Դրսից բանտի մի կողմը բուլվարն էր ընկած, մյուս կողմը՝ դիմնազիան։ Բանտի պատերը հինգ-վեց արշին բարձրություն ունեին։ Կամոն հաճախակի կատարվող հարցաքննություններին միշտ նույն պատասխանն էր տալիս, որ ինքը հայ է, Գորեցի է, Բաթում է եկել աշխատանք գտնելու, այդ կապոցը իրեն չի պատկանում, և տեղյակ չէ կապոցի բովանդակությանը։ Որևէ բան հաստատել չէին կարողանում նրա վրա, սակայն ժամանակները խառն էին և հենց սոսկ կասկածների համար էլ կարող էին աքսորել։ Կամոյի ընկերներից մեկը, որ իմացել էր Բաթումի կայարանում նրա ձերբակալվելը,

խնդրեց լուր էր տվել Թիֆլիսի Կամխաեին: Թիֆլիսից էլ զգուշացրել էին Գորիսում գտնվող Կամոյի հարազատներին, որ ոստիկանության հարցաքննության ժամանակ հրաժարվեն Կամոյի մասին տեղեկություններ տալուց: Այդ մասին հաղորդող մարդուն Կամոյի հայրը պատասխանել էր.

— Ես վաղուց եմ հրաժարվել նրան իմ որդին ճանաչելուց և չգիտեմ թե ո՛րտեղ է թրև գալիս նա:

Չնայած հոր այս պատասխանին, ոստիկանությունը զարձյալ խուզարկության էր ենթարկել նրանց բնակարանը, բայց ոչինչ չէր գտել:

Կամոյին մատանվող մի քանի հարյուր բանտից ազատվելն էր: Ցնդում տատանվելու պատճառով թիֆլիսները Կամոյին թույլ տալին առավոտները վաղ բակ դուրս գալ չորսաժամից: Ամեն առավոտ չորսաժամից դուրս գալիս՝ Կամոն չարունակում էր գինել բակը և ուսումնասիրել պահակին [illegible] թե [illegible] նրան ամենից շատ դուր գալիս, ամենից շատ [illegible] շատ շուտով Կամոն նկատեց, որ պահակը մի քիչ ուրկամոլ, մի քիչ էլ օղու սիրահար մարդ է: Կամոյի մտքին աշխատում էր լուրման մեքենայի նման: Գիշերը նա քուն չուներ, տեսնում՝ հանդիման: Իր ապագան տեսնելին զարմանող ծովի նման՝ նա եռում էր ինքն իր մեջ, փրփրում, բայց դուրս գալու ելք չէր գտնում: Մի առավոտ էլ, սովորական չորսաժամյան պահին, երբ մյուքը դարձյալ պրպտված էր փախուստի հարցով, նրան լուր տվին, թե Թիֆլիսից մորաքույրը Լիզան տեսակցության է եկել: Բանտապետը թույլ տվեց նրան տեսնվել մորաքրոջ հետ: Մորաքույրը կարիանդակ ու հաց էր բերել նրա համար, բայց նա ուտելու ցանկություն ամենևին չուներ: Ամեն անգամ [illegible] լարտանները և մոքի հուզտանները ապրելիս՝ Կամոն դժվարությամբ էր ուտում, գրկվում էր քնից և տանջվում: Կամոն հացն ու կարկանդակը տվեց պահակին:

— Ես մեզ բանտի դյուրավորները չեն հասկանում,

որ անվարձ բանել կլինի, անհաց բանել չի լինի,—ասաց պահակը, ագահությամբ ուտելով կարիանդակները։

Այս միջոցին կամոյի մեջ մի միտք հղացավ.

— Գնեցնել պահակին և...

Կամոն պահակից աննկատելի՝ հասկացրեց մորաքրոջը.

— Վաղը կարիանդակներին քնաբեր փոշի խառնիր և բեր. իսկ ճանապարհ դնելիս քաքմը ճաշով ասաց.

— Վաղն ինձ մոտ գալիս, չմոռանաս էս քեռուն էլ բաժին բերես։

Ուրախացած մորաքույր Լիզայի տված առատ մարճաստրությունից, տարված վաղվա համեղ խորտիկներով հուսով, պահակը ինքնագոհ չոյեց թավ բեխերը.

— Հա՛, համեցե՛ք, վաղն էլ համեցե՛ք...

Մորաքույր Լիզան այդտեղից չառավ գնաց Կամոյի ընկերների մոտ և պատմեց Կամոյի հետ ունեցած տհաճությունի մասին։ Ընկերները խոստացին, թե Կամոն ինչ է ուզում անել։ Ծանոթ բժիշկների միջոցով նրանք քնաբեր փոշի ճարեցին և խառնեցին կարիանդակներին։ Նույն պահակի հերթապահության օրը մորաքույրը կարիանդակներն առած գնաց Կամոյին այցելության։

Երբ Կամոյին իմաց տվին, թե հայ են բերել քեզ համար, նա՝ սիրտը թրթռալ առած, չտատպեց պահակի մոտ։ Անհամբեր պահակը սրրեն բաց էր տվել մորաքույր Լիզայի բերած կոպրոն ու բոլոր կարիանդակները վերցրել։ Կամոն մի պատառ հաց վերցնելով ետ թաչվեց «հիվանդ եմ, ախորժակ չունեմ» ասելով։ Այնինչ պահակը խժռում էր համեղ և յուղալի կարիանդակները։ Մորաքույր Լիզան պահակի գլխանը մի չիչ օղի դրեց, Կամոյին էլ մի քիչ փող տվեց ու վերադարձավ։ Կամոն քաչվեց բակի մի անկյունը և սկսեց ուշադիր դիտել, թե ինչպես ախորժակով նա ծծում է մորաքույր Լիզայի բերած օղին։ Կարիանդակների վերջին պատառը կուլ տալուց, չչի մնացած օղին ագահությամբ խմե-

լուց հետո պահակը մտավ իր խցիկը: Կամոն զարթյալ չալուածակից հետևել նրան:

Անցավ մի աս ժամանակ: Արտաքուստ հանդիստ ու զուսպ, ներքուստ՝ լարված և ուշադիր հետևում էր Կամոն պահակին: Նա նկատեց, թե ինչպես քունը հետզհետե հաղթահարում է նրան: Ահա վերջապես նրա գլուխը հակվում էր դրծքին: Նա ջանում է բանալ աչքերը, կոպերը չեն ենթարկվում ու փակվում են: Կամոյի ուշածն էլ հենց այդ էր: Նա վաղուց նկատել էր, որ բակի պատերից մեկի վրա մի փոքրիկ ադյուս կա դուրս ցցված: Կամոն մի կողմից դիտում էր ներհող պահակին, մյուս կողմից խաղում աղյուսի հետ, ավելի ու ավելի դուրս քաշելով այն: Վերջապես պահակն ամբողջապես սուզվեց քնի ալիքների մեջ: Կամոն դուրս քաշած աղյուսի տեղը մի փոքրիկ հայելի դրեց, որ իր պահանջով բերել էր մորաքույր Լիզան և այդ հայելու միջով հետևում էր բակի անց ու դարձին:

Հենց որ դրսի պահակները երեսները շուռ տվին, Կամոն մի քիչ հեռացավ պատից և ուժեղ վազքից թափ առած՝ թռավ, ոտքը դրեց դուրս եկած աղյուսի տեղը, մի ոստյուն ևս, Կամոն արդեն ցանկապատի վրա էր: Պահակը չարունակում էր ննջել: Առանց վայրկյան իսկ կորցնելու, Կամոն ցած թռավ պատից ու մնաց անշարժ... Ի՞նչ պատահեց, ոտքը՞ կոտրվեց, թե հոդեկան ուժեղ ապրումներից ուշաթափվեց... Հեռվից նայողին զուցե այդպես թվար: Նոր եկած անձրևից փափկացած հո՞ղն էր արդյոք պատճառը, թե՞ բանտից ազատվելու ուրախությունը, որ Կամոն ոչ մի ցավ չզգաց: Այս գլուխքով ավելի հարմար էր չուրջը դիտել, նկատել՝ թե որևէ մեկն արդյոք չի՞ հետևում իրեն: Ոչ ոք չկար: Ներքևում Սև Ծովն էր հանդարտ ծփում, ափին տալիս, վերևում՝ արևն էր հարազատ քրոջ նման ժպտում: Կամոյին թվաց, թե Ծովն ու արևն անդամ ուրախ են, որ ինքն ազատվեց բանտից: Համոզվելով, որ ոչ ոք չի հե-

առնում իրեն, Կամոն ոտքի կանգնեց և կասկածները չա-
ռաջացնելու համար դանդաղ քայլեց դեպի ծովափ:
Ճանապարհին մի երեխայի փող ավեց, խնդրեց, որ
կառք հրավիրի: Փոքր անց կառքը եկավ: Կամոն կառք
բարձրացավ՝ կառապանի ականջին մի հատցե չշնչալով:
Կառքը թռավ առաջ ու չատ ժամանակ չանցած— կանգ
առավ մատնանշված տան առջև: Տանից դուրս եկան
Կամոյի ընկերները: Նրանք կառքը ճանապարհ դնելուց
հետո մեկն սկսեցին ողջագուրել նրան և իրենց ուրա-
խությունն արտահայտել նրա՝ բանտից ազատվելու առ-
թիվ: Երբ ընկերներն ուզեցին սափրիչ հրավիրել, նա
թույլ չտվեց՝ կասկածանքի տեղիք չտալու համար: Ըն-
կերները իրենց ձեռքով Կամոյին սափրեցին, լոգացրին,
և տիպեցին մի առ ժամանակ հանգստանալ:

Կամոն բանտից փախավ առավոտյան կողմը, մինչ-
դեռ նրա բացակայությունը նկատվեց կեսօրից հետո
մեկն, երբ քննիչը եկավ ու պահանջեց Կամոյին հար-
ցաքննության կանչել: Այստեղ նոր մեկն պարզվեց
Կամոյի փոխարեն: Բանտապետը համոզված էր, որ
այդ փախուստը կազմակերպել է բանտի աշխատողնե-
րից որևէ մեկը: Բանտապետն այն հարցին՝ թե ո՞վ
կարող էր Կամոյի փախուստին նպաստած լինել, ցույց
տվին բանտի վերակացուներից մեկին, որին չէին սի-
րում: Բանտարկյալների այդ ցուցմունքի հիման վրա
վերակացուն, թեև անմասն էր այդ փախուստին, իր
համապատասխան պատիժն ստացավ:

Կամոյի փախուստի պատճառով ամենից չատ կա-
տաղել էր քաղաքի ոստիկանապետը: Նրա համոզմուն-
քով քաղաքական բանտարկյալը պետք է ապնիվ լինի և
թույլ չտա իրեն փախուստի դիմելու, այլ պիտի սպասի
օրինավոր ներման կամ դատի: Որքան էլ ալեհոծվեր
ոստիկանապետը, որքան էլ սենդորեն գործեր լրտես-
ների ոհմակը, Կամոյին գտնել չէին կարող, նրա հետքն
ընդամէնը չկար:

Մի չարաթ ընկերների մոտ հանգստանալուց հե-

տո, Կամոն սկսեց մտածել Թիֆլիս տեղափոխվելու մասին: Այս օրերին պատահած մի դեպք նրա գործին: Հենց նույն բակում, ուր պատսպարվել էր նա, հարթանիք կար: Հարթանիքավորների մեծ մասը Թիֆլիսեցիներ էին և հարսին Թիֆլիս պետք է տեղափոխեին: Հարթանիքի ամենատաք ժամանակ հարբած հյուրերից ոչ մեկը չնկատեց, թե ինչպես նույն բանվի մի անից դուրս եկավ վրացական բոլորովին նոր չերքեզկա հագած դանդուր մազերով, մաքուր սափրված միջահասակ և ամրակազմ մի վրացի ու խառնվելով պարողներին, սկսեց ինքն էլ պարել: Նա իր գալարուն, ճկուն պարով, մանրիկ ոտքերի արագընթաց դոփյուններով, թևերի արծվային ճախրումներով բոլորի ուշադրությունը իր վրա բևեռեց: Սկսեցին հարց ու փորձ անել, ու երբ իմացան, որ վրացի աղնվական է նորեկ հյուրը, ավելի մեծ համակրանքով չրջապատեցին նրան: Նույնիսկ քաղաքի ոստիկանապետը, որ դեռ մի քանի օր առաջ որոնում էր Կամոյին, այժմ հարբած, սկսեց պարել Կամոյի հետ: Հարթանքավորների հիացմունքը կրկնապատկվեց, երբ իմացան, որ վրացի աղնվականը լավ պարելու հետ նաև լավ նվագել էլ է իմանում: Այս բանը ուրախացրեց նրանց, որովհետև զուռնաչին չատ խմելուց բոլորովին կորցրել էր իրեն, նվագել չէր կարողանում: Այժմ նոր նվագող կար, հինը կարող էր քնել որքան ուզում էր:

Ոստիկանապետի քեֆը կատարին էր հասել: Կամոյի նվագի տակ նա այնպես էր վեր ու վար ցատկում, որ բոլորին հրճվանք էր պատճառում: Կամոյի ընկերները հեռվից դիտում էին ու հրճվում Կամոյի հնարամտությամբ: Եվ ինչո՞ւ չհրճվեին: Ջե՛ որ ընդամենը մի քանի օր առաջ հենց նույն ոստիկանապետը, փըփուրը բերնին, տակն ու վրա էր անում քաղաքը Կամոյին գտնելու համար: Իսկ այժմ, հենց նա ինքը, նորին մեծություն պարոն ոստիկանապետը, պարում է Կամոյի նվագի տակ...

Կամոն հարբած հափրանքավորների հետ մեկնեց կայարան ու տեղավորվեց Բաթումից Թիֆլիս մեկնող գնացքում: Այդ օրը եկեղեցական տոն էր: Վագոնը, ուր տեղավորվեց Կամոն, լեցուն էր հարբած ուղևորներով, որոնք իրենց հերթին թամամպատակում էին հարբանքավորների ազմուկը:

Ողջ ճանապարհը Կամոն անցավ երգ ու նվագի մեջ: Գնացքը մոտենում էր Թիֆլիսին, այնքան Կամոն ախտում էր անհանգստանալ, որովհետև չէր ուզում հարբածների հետ միասին Թիֆլիս մտնել: Երբ հասան Ավճալա կայարանը, նա դիտավորյալ կերպով վեճի մտավ մի խչխանի հետ.

— Դո՛ւ զուռնայի նվագի տակ չես կարող վագոնների մեջով գնացքի մի ծայրից մյուսն անցնել:

— Ո՞նց թե չեմ կարող:

— Ա՛յ, չես կարող:

— Դե՛, նվագիր:

Ոգևորված ներկաների խրախուսանքից, խչխանը թևերը պարզած առաջ անցավ: Կամոն նվագելով հետևեց նրան: Մի երկու վագոն չանցած, Կամոն զուռնան ավելց արդեն արթնացած զուռնաչուն ու ինքը բոլորից աննկատելի, ճարպկորեն ցած թռավ Ավճալա կայարանում, կառք նստեց ու մտավ Թիֆլիս:

Այստեղ Կամոյի առաջին գործն այն եղավ, որ մտավ Թիֆլիսի Կոմիտեն և ներկայացավ Ստալինին, որը 1904 թվականի սկզբներին Սիբիրից փախչելով, եկել էր Թիֆլիս և գլխավորում էր բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը:

Կյանքի ջրապտույտը նորից իր մեջ առավ Կամոյին: Այս օրերին նա մեծ հմտությամբ կատարեց Ստալինի մի շատ կարևոր հանձնարարությունը՝ Թիֆլիսի Արտիստական թատրոնում «Համլետ» ներկայացման ժամանակ՝ նախքան կերպարը Համլետի ուրվականը:

ԿՇՄՈՆ ԿԱՏՐՈՒՄՈՎ Է ՍՏԱԼԻՆԻ ՀԱՆՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասյան Միացյալ Կոմիտեն համակ կենդանի ու քաջախոս մի սիրտ էր դարձել, որից ճյուղավորվում էին բազմաթիվ արյունատար երակներ ու տարածվում հասարակական կյանքի օրգանիզմի մեջ: Թիֆլիսի Միացյալ Կոմիտեն արդեն ուներ իր զաղտնի բարեկարգ տպարանը, որը զանվում էր քաղաքից դուրս մի տպահով վայրում: Այստեղ էին տպագրվում «Պրոլետարիատի Կռիվ» թերթը և զանազան բրոշյուրներ ու թռուցիկներ, որոնք անհեռանալի և անդադար ճեռքերով տարածվում էին Ղարսում, Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, ապա անցնում զավառներն ու ամենախուլ անկյունները: Այս տպարանից էր, որ Կամոն վրացի և հայ բազմաթիվ ընկերների հետ գուրս էր բերում թռուցիկներ, բրոշյուրներ ու տարածում: Մի անգամ Կամոն հանձնարարություն ստացավ թռուցիկները ցրել Աբոիտատական թատրոնում: Կամոն իր կոնսպիրատիվ բնակարանի բանալին հանձնեց ընկերներից մեկին, որպեսզի ձերբակալվելու դեպքում այն օգտագործվի ընկերների դեմ:

Երեկոյան նա վերցրեց թռուցիկները ու գնաց Աբոիտատական թատրոն: Այդ օրն այնտեղ ներկայացվում էր «Համլետը»: Կամոն բարձրացավ բալկոն: Այն պահին, երբ սկսի երևալ Համլետի հոր ուրվականը, երբ ողջ ժողովուրդը լարված հետաքրքրությամբ հետևում էր ներկայացմանը, Կամոն ծոցից հանեց թռուցիկները ու նետեց դեպի դահլիճը: Թռուցիկները սպիտակ աղավնիների նման ֆրֆռալով օդում իջան ժողովրդի

վրա։ Մի խումբ Թռուցիկները էլ կամուն նետեց դեպի առաջին շարքը, ուր նստած էր քաղաքի ոստիկանապետը, ապա դուրս եկավ Թատրոնից։ Ոստիկանապետը, որը բոլորի հետ լսվածը սպասում էր Համլետի հոր ուրվականի երևալուն, Թռուցիկների տարածը զլխին տեղալուց հետո՝ սարսափած վեր թռավ տեղից։ Հանդիսականները խառնվեցին իրար, լուսերը վառվեցին, ներկայացումն ընդհատվեց։ Սրահի զանազան անկյուններից լսվեցին բազմաթիվ բացականչություններ ու լռզունգներ ցարական կառավարության, ոստիկանների ու ոստիկանապետի հասցեին։ Հանդիսականները առանց ուշադրության առնելու ոստիկանապետին, սկսեցին հետաքրքրությամբ կարդալ Թռուցիկները։ Ոստիկանապետը զայրույթից կարմրատակած նետվեց առաջին իսկ պատահած կնոջ վրա և խլեց նրա ձեռքից Թռուցիկը։ Կինն այլայլված այս կողմ հարձակումից ասաց.

— Դուք պատասխանատու եք քաղաքի կարգ ու կանոնի համար։ Եթե Թույլ եք տվել մինչ այս աստիճան՝ ապա Թույլ տվեք և կարդալ Թռուցիկները։

Կոչերն ու Թռուցիկներն իրենց բովանդակությամբ համակում էին մասսաներին։

Թիֆլիսի Կոմիտեի չունչն ու հոգին Սաալինն էր, որը խոր ընդհատակից ղեկավարում էր քաղաքական կյանքը։ Կամուն քայլ առ քայլ հետևում էր Սաալինի հանդիսատ և մտածված գործելակերպին և շատ բան էր սովորում։ Կովկասյան Միացյալ Կոմիտեի աշխատանքներն ավելի լայն ծավալ էին ստանում Պետերբուրգից և Ռուսաստանի մյուս քաղաքներից եկած մարքսիստ ագիտատորների մանակցությամբ։ Նրանք իրենց հետ բերում էին նոր հրահանգներ և քաղաքական գործունեության պլաններ։ Այդ ագիտատորները հաճախ լինում էին Սաալինի մոտ, խորհրդակցում էին նրա հետ և տալա բանվորների և ուսանողների շրջանում՝ մտածելի դասախոսություններ էին կարդում սոցիալիզմի պատմության, Մարքսի ուսմունքի և քաղաքական այլ



հարցերի մասին։ Մի անգամ Սատվինը իր մոտ կանչեց Կամոյին և պատվիրեց մի ապահով վայր գտնել ընկերներին հավաքելու և դասախոսության լսելու համար։ Կամոն չտապեց մորաքույր Լիլայի մոտ, նրա միջոցով ձեռք բերած ցնցոտիները հագավ, գլխին դրեց թաղիքե մաշված մի գոտկ և ձեռքն առնելով ձեռնափայտը՝ դուրս եկավ տանից։ Մորաքույրն առանց հարց ու փորձի ճանապարհ դրեց նրան, համոզված լինելով, որ մի նոր հանձնարարություն է կատարում։ Այդ հագուստով Կամոն անցավ փողոց-փողոց, բակից-բակ և հասնելով Օրթաճալայի այգիներից մեկը, կանգ առավ։ Դրան առջև նրան դիմավորեց այգու տերը և ձեռքերը խրած արծաթե լայն գոտի տակ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում, առ...

Կամոն ձեռքով մի կողմ հրեց նրան ու մտավ այգին։ Այգու տերը զարմացած այս հանդուգն մուրացկի արարքից՝ հետևեց նրան։ Հասնելով այգու անկյունը, ուր մի զարտավոր կաղնու տակ փայտե թախտ էր դրած, Կամոն նստեց թախտին ու բարձր ծիծաղեց.

— Դուն էլ, որ ինձ չի՞ս ճանաչում, բա էլ ո՞վ կանա ճանաչի...

Այգու տերը ուշադիր նայեց Կամոյին ու նոր միայն ճանաչելով նրան, ինքն էլ ծիծաղեց ու հարցրեց.

— Հը՞, խե՞ր է, թե՞ չառ։

Կամոն բացատրեց իր այցելության նպատակը և խնդրեց այգու դուռը բաց պահել ու պատրաստության տեսնել։

Այդ այգում նման հանդիպումներ հաճախ էին տեղի ունենում, դրա համար էլ Կամոյի պատվերը այգու տերոջը խորթ չթվաց, մանավանդ որ Կամոն նախօրոք վճռաստ վարձատրեց նրան հյուրերին ցույց տրվելիք հյուրասիրության համար։ Դուրս գալով այգուց, Կամոն մտավ մորաքրոջ տունը, հագավ սովորական

ները և ապա չտապեց Սոալինի մոտ հայտնելու նրան թե ուր են հավաքվելու։ Այնտեղից էլ նա գնաց մյուս ընկերներին հայտնելու հավաքավայրն և ժամանակը մասին։

Երբ արևը հրաժեշտ էր վերջին համբույրը տվեց Քուռ գետի հորդահոս ալիքներին և հավաքելով իր հրաշեկ շողերը քաղաքի վրայից, դեպի արևմուտք թեքվեց, կամոն գնաց Օրթաճալա՝ նշված վայրը։ Նա կարծում էր, թե ամենից շուտ ինքը տեղ հասած կլինի, այնինչ այդտեղ գտավ Սոալինին, Պետերբուրգից եկած հյուրի հետ զրուցելիս։ Սոալինը կամոյին ծանոթացրեց նրա հետ և չարունակեց զրույցը։ Ընկերները կամաց-կամաց հավաքվում էին, իսկ կամոն այդտեղ տիրող մոտ ընթրիքի պատրաստությունն էր տեսնում։ Հյուրը Պետերբուրգի մարքսիստ ուսանողներից մեկն էր։ Նա միջահասակ էր, ամուր կազմվածքով, հագնված էր համեստ, մաքուր և կոկ։ Երբ բոլոր ընկերները հավաքվեցին, կամոն այդտեղ տիրող հետ առաջ բերեց սեղանը՝ ծածկված մաքուր սփռոցով։ Բոլորը մոտեցան սեղանին։ Փոքր անց սեղանը ծածկվեց կախեթի կարմիր գինու շշերով, թարմ վարունգով, Քուի համեղ ձկներով և այլ տեսակի ուտելիքներով։ Ներքևից գետն էր հոսում իր ախորժալուր մրմունջով, վերևից՝ մեղմ շրշում էին Օրթաճալայի սովերախիտ ծառերը։ Հավաքվածները հափշտակված լսում էին ազիտատորի զրույցը և միաժամանակ ընթրում։ Կամոն չարունակ ներս ու դուրս էր անում և հսկում այդու մուռքը։ Մեկ-մեկ էլ այդ գործը այդու տիրոջը թողնելով՝ գալիս էր ունկնդրելու զրույցը։ Այդ օրվա զրույցի նյութը պատմության երրորդ համագումարի որդյունքներն էին։ Ունկնդիրները գրի էին առնում զեկուցողի մտքերը։ Այդ հանդիպումից կամոն կրկին անգամ համոզվեց, որ ծրագրած նպատակին հասնելու համար պահանջվում է մեծ աշխատանք և մեծ զոհաբերություններ։

Նման բազմաթիվ հանդիպումներ կատարվեցին

Թիֆլիսի Միացյալ Կոմիտեն քաղաքի Վերա կոչված արվարձանում, Դեպոյում, Նախալովկայում և այլուր: Թիֆլիսի Միացյալ Կոմիտեի հանձնարարությամբ կամոն Նախալովկայում կազմակերպեց նշանավոր մի ցույց, սակայն կազակների ձեռքն ընկավ, ապա ազատվեց վեհացու ձևանալով:

ԿԱՄՈՆ ՓՇՍՏՅՈՒ

Այս օրերին Թիֆլիսի Միացյալ Կոմիտեի նպատակն էր՝ ի պատասխան կառավարության բռնությունների բանվորների զինը ուղղել պետության դեմ: Թիֆլիսի Միացյալ Կոմիտեի կոչերն ու թռուցիկները, ցրված կամոյի և նրա ընկերների ձեռքով, իրենց բարերար ազդեցությունն ունեցան: Դեկտեմբերի կեսերին Նախալովկայում տեղի ունեցավ գինված մեծ ընդհարում: Այս ժամանակ չէր ացած մթնոլորտ էր ստեղծվել Թիֆլիսի դեպոյում: Դեպոյի պետ Արտենբուրգը կիսով չափ կրճատել էր երկաթուղայինների աշխատավարձը: Երկաթուղայիններն այդ առթիվ պատվիրակություն էին ուղարկել նրա մոտ, առաջադրելով իրենց պահանջները: Արտենբուրգը չէր բարեհաճել ընդունել բանվոր պատվիրակներին և լսել նրանց պահանջները: Այս բանն անասելի զայրույթ էր առաջացրել երկաթուղայինների մեջ: Հասունանում էր գործադուլի հարցը: Կոմիտեի ագիտատորներին հաջողվեց օգտագործել դեպոյի զրադարանը: Մի երեկո նրանք բոլոր երկաթուղայիններին հավաքում են զրադարան՝ գրադարանի վիճակը քննության առնելու պատրվակով: Թիֆլիսի Կոմիտեից եկած ագիտատորը իր զրույցը սկսելով զրադարանի վիճակից, անցնում է երկաթուղայինների նյութական դրության, ցույց տալով, որ այդ ծանր պայմաններից դուրս գալու միակ ելքը գործադուլն է:

— Ձո՛ւյց տանք մեզ ուժը: Բավական է մեզ վրա մատ թափ տան,— միաձայն արձագանգում էին երկաթուղայինները:

Հավաքը քվեարկեց հօդուտ գործադուլի: Ընտրվեց հանձնաժողով գործադուլի պլանը մշակելու համար: Ժողովը ցրվելուց հետո մնացին միայն ընտրվածները, որոնք ստուգեցին բոլոր մանեվրող չոգեքարշերը, կայարանները և մարեցին չոգեքարշի հնոցները: Այնուհետև ստուգելով նավթլուղ և Ամմասա տանող գծերը, նրանք մարեցին այդ գծերի վրա կանգնած չոգեքարշերը և փակեցին կայարանի ելքն ու մուտքը երկու կողմից: Ապա կայարանի հերթապահության տախտակի հակառակ երեսի վրա գրեցին. «Գործադուլ է, հավաքվե՛լ վազը, ժամը 7-ին դեպոյում»: Դրանից հետո ցրվեցին իրենց տները, թողնելով կայարանում հատուկ հերթապահներ: Նույն օրը երեկոյան մարզատար գնացքներ պիտի մեկնեին Բաքու, Բաթում, Ղարս: Կառամատույցի վրա եռուզեռ էր: Ուղեվարները տեղավորվել էին վագոններում և անհամբեր սպասում էին գնացքի մեկնելուն: Սակայն նրանց համար միանգամայն անհասկանալի պատճառներով չոգեքարշերը չէին մոտենում էշելոնին: Դեպոյի պետ Արտեներսըդը խուճապի էր մատնվել: Կառամատույցի վրա նա մեկ այս կողմն էր վազում, մեկ այն, սակայն ոչ կարողանում էր չոգեքարշերը դեպոյից դուրս հանել և վագոններին միացնել տալ, և ոչ էլ՝ մեքենավարներին գտնել: Նա զանգահարեց ոստիկանապետին, բացատրելով նրան գործի էությունը: Կայարան եկան մի խումբ ոստիկաններ: Նրանց երեսն ավելի անհանգստացրեց ժողովը-պին: Ուղևորների լուռ դժգոհությունը վերածվեց բարձրաձայն աղմուկի: Արտեներսըդը հանգստացնում էր նրանց, ասելով թե ինքն ունի հատուկ մեքենավարներ «Հայրենասերների միությունից», բայց և այնպես ժողովրդի հուզմունքը չէր անցնում: Ուշացան ավելի աստիճանակ, երբ լուր տարածվեց, թե կայարանը եր-

կու կողմից փակված է։ Արտենբուրգն զգաց, որ այժմ գնացք ճանապարհ դնելն այնքան էլ հեշտ չէ։ Նույն այդ պահին մեքենավարները, փոխած իրենց երկաթուղայինների հագուստները, շրջում էին ուղեվորների մեջ, անցնում վագոնից-վագոն, հայտնելով, որ մեքենավարները չեն գալու։ Արտենբուրգը հեվիհեվ այս ու այն կողմ էր վազում ոստիկանների հետ, բայց ոչինչ անել չէր կարողանում։ Դիչերվա ժամը երկուսն էր։ Սպասելուց հոգնած ուղեվորները կամաց-կամաց ցրվեցին իրենց տները, հաշտված հաջորդ օրը մեկնելու մտքի հետ։ Փիչ առ քիչ կայարանը դատարկվեց ու խաղաղվեց։ Այլևս չէին լսվում չոգեքարշերի ահեղ օրյա սուլոցները։ Ամենուրեք լուռ էր ու անդորր։

Այդ պահին կայարանի մոտ մի տնակում հավաքվել էին գործադուլավոր մեքենավարները Թիֆլիսի կոմիտեի անդամների հետ և մշակում էին իրենց պահանջները։ Հանկարծ չոգեքարշի սուլոց լսվեց։

— Ո՞վ կարող է լինել,— զարմացած հարցրին գործադուլավորները։

Բոլորը վեր կացան ու չտապեցին կայարան՝ իմանալու թե ո՛վ կարող էլ լինել այն։ Նրանք տեղ հասան այն ժամանակ, երբ Արտենբուրգի մարշրկանցիկ մեկը չոգեքարշով քանում էր բանալ կայարանի դռները։ Գործադուլավոր բանվորները քաշքշելով ցած իջեցրին մեքենավից դավաճանին։ Կայարանում նորից լուռթյուն տիրեց։

Չնայած այն դիմումներին, որ կատարեց Արտենբուրգը, դեպոյում ծայր առած խռովութիւնների ալիքը ծավալվեց ամբողջ քաղաքում։ Գործադուլը գնալ խաղորում էր Թիֆլիսի կոմիտեն։ Նախալուվկայում գործադուլավորները սպասում էին կազակների կողմից երեք ուղղութիւամբ հարձակման։ Այդ ուղղութիւններով էլ գործադուլավորները դասավորել էին իրենց ուժերը։ Ցուցչի դուրս եկան բազմաթիվ բանվորական ջոկատներ, որոնցից մեկը դեկավարում էր Կամոն։ Ջինված ոստիկանները և կազակները լուրջ դիմադրու-

թյան էին հանդիպում յուցարարների կողմից: Կառավարությունը ոչ մի միջոց առնել կանդ չէր առնում ցույցը ճնշելու համար:

Կավի ամենատաք ժամանակ Կամոն նկատեց, որ սարից մի խումբ կազակներ են արշավում իրենց վրա: Այդ ուղղությամբ իրենք հարձակում չէին սպասում: Կամոն իր ջոկատի հետ խնդրյան սարը բարձրացավ և սկսեց դիմադրել կազակներին: Դիմադրությունը երկար չտևեց: Կամոյի ջոկատը պարտվեց: Կազակները հրձապատեցին Կամոյին: Նրանցից մեկը սուրը դուրս քաշած չեչոտակի նետվեց դեպի Կամոն: Սա արագ ետ ցատկեց, բայց սուրը կպավ նրա ձեռքին և պոկեց մաշկը: Կամոյին ձերբակալեցին, սկսեցին տանջել: Կամոն փորձեց զորձադուլին անտեղյակ դյուղացի ձևանալ, որ պատահմամբ է ընկել Նախալովկա: Կազակները չհավատացին: Ձեռքը քունդ ավին, ստիպելով փորել իր գերեզմանը: Կամոն փորում էր և ձևացնում, թե չի հասկանում՝ ինչու համար են փորել տալիս: Գերեզմանը պատրաստ էր: Կանդնեցրին նրան խոնավ հողաթմբին, բարձրացրին հրացանները և նշան բռնեցին: Կամոն աչքերը փակ սպասում էր համազարկին: Սակայն կազակները չկրակեցին, հարմար համարելով նախ զորձադուլավորների անուններն իմանալ, ապա սպանել: Կազակներից մեկը ուղեց մի չար կատակ անել Կամոյի հետ:

— Բերեք քթիը կտրենք,— առաջարկեց նա ընկերներին:

Բոլորը համաձայնվեցին: Կամոն սաստիկ ճիչ ու աղաղակ բարձրացրեց:

— Սրա՛ն տես,— հեգնեց նույն կազակը,— գնդակահարվելուց չվախեցավ, քիթը կտրելուց վախենում է:

— Է՛յ, քեզ համար քի՞թդ է թանգ, թե՞ գլուխդ,— հարցրեց մի ուրիշը:

— Գիտեք ինչ, եթե հարմարուս տեսնի ինձ առանց քթի, էլ ինձ չի հավանի, իսկ դա ինձ համար մահ է,—

անկեղծ վշտով ասաց Կամոն և ծածուկ մի քանի թըղ-թաղրամ տվեց նրանց պետին:

— Ա՛յ թե ինչ, ուրեմն դու փեսացո՞ւ ես,— փողը դրպանը դնելով ասաց պետը,— որ այդպես է, քեմթ չենք կոըի:

Կամոն թեթևացած շունչ քաշեց, որովհետև, մտածում էր, եթե դեմքը այլանդակվեր այլևս հնարավո-րություն չէր ունենա անճանաչելի մնալ գաղտնի աշ-խատանքները կատարելու համար: Ահա թե ինչն էր նրան ցավ պատճառում: Կաղակներով չրջապատված, Կամոն տեղափոխվեց ոստիկանատուն: Նրա պատառոտված հագուստները, արյունոտված մարմինը սարսուռ էր ազդում հանդիպողներին: Մի երկու տեղ կազակներին քարկոծելու փորձեր եղան, բայց կազակները նրանց էլ տանձահարեցին: Ջնայած վիրավոր, խոչանդված մարմնին, Կամոյին հիվանդանոց չտարան, այլ նետե-ցին Մեահեթի մութ կամերաներից մեկը: Այստեղ ուշքի գալով, Կամոն վերհիշեց կատարվածը, ճնշված զորձա-դուլը, իր կրած տանջանքները, կորցրած մարտիկնե-րին: Մի դառն հառաչանք արձակելով, նա փորձեց ոտ-քի կանգնել, սակայն չկարողացավ: Ուժասպառ էր սաստիկ: Գլխից մինչ ոտքերը սուր ցավեր էր զգում, ջարդված էր ու հոդնած: Զգում էր, որ ծանր պառիմ է սպասում իրեն, գուցե և մահ... Սկսեց մեկ առ մեկ վերհիշել իր հանդիպումները Ստալինի հետ: Հիշեց հա-րազատներին ու ընկերներին: Հիշեց Գորին, հեզա-համբույր մորաքրոջը, քույրերին, որոնց այնքան սի-րում էր:

— Ա՛խ, դռնե կարողանայի վերջին անգամ տեսնել քույրերիս,— հառաչեց նա ու մի կերպ ոտքի կանգնե-լով սկսեց չուրջը դիտել:

Պահելու ոչ մի հարմարություն չկար, ոչ մահճա-կալ, ոչ անկողին: Փայտե մի հասարակ աթոռ էր դըր-ված և ուրիշ ոչինչ: Կամոն սկսեց ուշադիր զննել բան-տի նեղ լուսամուտը: Փախչելու մասին չէր, որ մտա-ծում էր նա այդ պահին: Մտահոգված էր միայն, թե

ինչ է կատարվում դուրսը, հնարավոր չէ՞ արդյոք արևէ լուր առնել դրսից: Նա աթոռը քաշեց լուսամուտի տակ, բարձրացավ վրան, ցատկեց, բռնեց լուսամուտի ճաղերից և ագահաբար ներս ծծելով դրսի թարմ օդը, սկսեց դիտել փողոցը: Այնտեղ եռուզեռը սաստկացել էր, ոստիկանները չարունակում էին Մեռելթաղ բերել պարապած գործադուլավորներին:

Կամոյի քույրը՝ Ջավահիրը, լսել էր կատարված դեպքի մասին և շտապել Նախալովկա, ուր դիակներից բացի նա ուրիշ ոչինչ չէր գտել, որոնք սակայն այնքան էին այլանդակված, որ դեմքերից անհնար էր ճանաչել որևէ մեկին: Նախալովկայի դեպքից առաջ Կամոն եղել էր Ջավահիրի մոտ: Քույրը լվացել էր նրա գլուխը, փոխել սպիտակեղենը: Ջավահիրը հիշում էր, որ եղբայրը հագել էր նոր, սև չերեսով չապիկ: Դոզդողոնն ձեռքերով նա սկսեց չուռ ու մուռ տալ սպանվածների հագուստները... Դիակների մեջ եղբորը չգտնելով, Ջավահիրը թեթևացած արտավ այժմ էլ սկսեց չքվել բանակի մոտերքը, հույս ունենալով թերևս այնտեղից լուր առնել եղբոր մասին:

Կամոն չէր հավատում իր աչքերին: Այդ ինչ հրաշալի զուգադիպություն էր: Լուսամուտին բարձրանալն ու քրոջ երևալը մեկ եղավ: Կամոն բարձր ձայնով գոռաց.

— Հեծանիվս նկուղից սենյակ տեղափոխիր...

Մի քանի անգամ նույնը կրկնելուց հետո, նա վերջապես նկատեց, որ քույրը դլխով է անում և հասկացնում, որ լսեց եղբորը և ուրախ է նրան ողջ և առողջ տեսնելուն: Հանգստացած քրոջ հետ ունեցած այս անակնկալ հանդիպումից, Կամոն ցած լծվավ լուսամուտից ու սկսեց կապել իր վերքերը: Հանկարծ կամերայի դուռն աղմուկով բացվեց և ներս նետվեց մի ուրիշ բանտարկյալ: Կամոն մոտեցավ, բարձրացրեց նրան, հարց ու փորձ արեց և իմացավ, որ դեղագործի աշակերտ է, ազգանունը Շանչիաշվիլի, պատահմամբ է ձերբակալվել և ոչ մի կապ չունի գործադուլավորների հետ:

Շանչհաչվիլու հետ զրուցելիս Կամոյի մեջ մխաք ծաղեց օգտագործել նրա հագուստը: Եվ դրծ զրնց իր լեզվի ճկունությունն ու ճարտարությունը, սկսելով հեռվից՝ կամաց-կամաց մոտեցավ բուն հարցին: Բացատրեց իր ո՛վ լինելն ու ի՛նչ նպատակների ծառայելը: Շանչհաչվիլին Կամոյի մասին վաղուց էր լսել և այժմ չատ ուրախացավ, նրա հետ հանդիպելու համար: Նա անկեղծորեն ցանկացավ օգնել Կամոյին, մանավանդ, երբ լսեց, որ զբանով իրեն ոչ միայն վտանգ չի սպասում, այլ և, Կամոն ազատվելով բանակից, կազատի նաև նրան:

Ներանք փոխանակեցին հագուստները: Այսպիսով Կամոն հարցաքննության ժամանակ պիտի խաղար զինվորդրծ Շանչհաչվիլու դերը, իսկ զեղադրծը՝ Կամոյի: Դեռ նոր էին հագուստները փոխել ու Կամոն բացատրում էր, թե նա ինչպես պիտի պահի իրեն հարցաքննության ժամանակ, երբ ներս մտավ բանտի հսկիչը և քնթաթախ՝ ձայնեց.

— Շանչհաչվիլի, քննիչի մոտ:

Կամոն հետևեց հսկիչին: Միքանին անցան երկար ու մութ միջանցքներով և մտան քննիչի կաբինետը: Այնտեղ դեռ ոչ ոք չկար: Ներսի սենյակից, ուր գտնվում էին քննիչն ու բանտապետը, Կամոն հետևյալ խոսակցությունը լսեց.

— Պարո՛ն քննիչ,— ասում էր բանտապետը,— դուք իրավացի եք, Կամոյի գործի հանգամանքները ճիշտ ըստ արանելու համար անհրաժեշտ է նախնական քննություն ենթարկել Նախալովկայում մի քանի ձերբակալվածների:

— Առաջ ուրեմն նրանց կանչեք, իսկ հետո քննենք Կամոյի և նրա երեսունների գործը,— ասաց քննիչը:

— Մեկին կանչել եմ արդեն, կարող եք սկսել,— պատասխանեց բանտապետը:

Հարևան սենյակից դուրս եկան քննիչն ու բանտապետը: Նրանց տեսնելով Կամոն խոնարհաբար գլուխ

տալով՝ երկյուղած ետ-ետ քաշվեց: Նրանք անուշադրության մատնեցին կամոյի բարևը: Քննիչը ձգային չարժումով բացեց իր թղթապանակը, մի ծալք թուղթ հանեց, ապա նստեց և ակնոցները քթին դնելով՝ դիմեց կամոյին:

— Ձեր անունը, ազգանո՞ւնը, պատմո՞ւնքը, տարի՞քը...

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, պարո՛ն քննիչ, ես ո՞նց կարող եմ էդքան հարցերին միանգամից պատասխանել, ազգանունս Շանչիևսվիլի է, դեղագործի աշակերտ եմ, Ռուխաձեի դեղատունում,— անվստահ պատասխանեց Կամոն:

— Ի՞նչ գործ ունեիք Նախալովկայում:

— Ինձ ուղարկել էին...

— Ըհը: Ո՞վ էր ուղարկել, ինչո՞ւ էին ուղարկել, ո՞ւմ մոտ էին ուղարկել,— քննիչը թաթախեց գրիչը թանաքամանի մեջ և լարված սպասում էր պատասխանին:

— Ինձ Նախալովկա էր ուղարկել տատս: Գիտե՛ք, նա շատ խիստ կին է, անտանելի խիստ: Բայլ ղրանից Նախալովկայումն է ապրում նաև իմ հարանացուն: Ես նրան այնպես էի կարոտել, այնպես...

— Հանգիստ թողեք ձեր հարանացուին ու տատին,— ընդհատեց նրան քննիչը:

— Բանն էլ հենց այն է, որ ես նրանց հանգիստ եմ թողնում, իսկ նրանք ինձ հանգիստ չեն թողնում: Տատս ինձ մի քիչ այս ու այն կողմ է ուղարկում, իսկ հարանացուս պահանջում է մի քայլ չհեռանալ երեկից: Ա՛յ, հենց այսօր, տատս ինձ Նախալովկա էր ուղարկել իր հիվանդ քրոջ համար դեղ բերելու: Ասում է, եթե ջո բերած դեղերն օգնեցին, քույրս ոտքի կանգնեց, դեղ կպատակենք, իսկ եթե չօգնեցին, չենք պատկի, ատում է...

Տեսնելով, որ գործ ունի միամիտ, մի քիչ էլ թեթևամիտ երիտասարդի հետ, քննիչը փոխեց խոսակցության տոնը:

— Գիտե՞ս ինչ, սիրելիս, չարունակեց նա, դու պարզ տղա ես երևում, եթե անկեղծ ու չիտակ պատասխաններ տաս մեզ, կազատանք բանտից, կօղնենք, որ հարստանիքդ չուտ դլուխ գա ու մենք էլ դեռ կմատնակցենք հարստանիքին, այնպես չէ՞, պարոն բանտապետ:

— Իհարկե, իհարկե,— վրա բերեց բանտապետը:

— Ես ամեն ինչ կանեմ, միայն թե ինձ ազատ թողնեք, որ դեղերը տեղ հասցնեմ, չէ՞ որ այս դեղերից է կախված տատիս քրոջ բուժումը, իսկ այդ բուժումից էլ կախված է հարստանիքիս բախտը:

— Դե՛հ, ասա, երբևիցե լսել ես Կամո անունը:

— Ինչպես չէ, ինչպես չէ, մի հազար անդամ լսած կլինեմ...

Քննիչը գլիուխը թանաքամանի մեջ թաթախելով հարցրեց.

— Իսկ տեսե՞լ ես նրան:

— Դե դա ինչ բան է, որ տեսած չլինեմ, Կամոն[1]) մի տեսակ բույս է, որը և հում-հում են ուտում և եփում են,— պատասխանեց Կամոն:

— Այդ մասին չենք հարցնում, հիմա՛, ուրիշ Կամոյի մասին ենք հարցնում,— բարկացավ քննիչը:

— Ուրիշ Կամո՞յի, դե, լսարկե լսել եմ, մի այդպիսի դե՞ռ է, թե մա՞ռկ, Կամո է, թե Կամա, լավ չեմ հիշում, լսել եմ մեր դասատուից:

— Սա մեզ կդժվեցնի իր հիմար տեղով, հեռացրեք, իսեր տատծո, թողեք գնա իր դործին, թեթևսոլիկի մեկն է,— բարկացավ քննիչը հավաքելով սեղանի վրայից բոլոր թղթերը թղթապանակի մեջ, ապա կանչեց ոստիկանին:

— Սրան կտանեք էրենց քաղաքամասը, մանրամասն կատուղեք և եթե պարզեք, որ սա իր թաղում ճանաչված է որպես դեղադործ Շանչիախվիլի, ազատ կարձակեք, իսկ եթե ոչ՝ կվերադարձնեք, հասկացա՞ք:

[1]) Կամո-վրացերեն լեզվով մի տեսակ կանաչեղենի անունն է Ծ. Չ.:

— Հասկացա, ինչպես չէ, համաբյա հրաժեշտելով պատասխանեց ոստիկանը և դուրս հրեց Կամոյին:

— Գնա՛նք, պարո՛ն վեհապետ...

— Հարտանիքիս անպատման կյանք, ես մեծ պաշտպանյաներին չատ եմ սիրում, հարտնացուս էլ կուրախանա, երբ տեսնի, որ ձեզ պես մեծ մարդկանց հետ ծանոթ եմ,— հրճվանքով ասաց Կամոն և ոստիկանի հետ դուրս եկավ կաբինետից:

Կարծես Կամոյի աչքերի լույսն ավելացավ, ուժը վերականգնեց: Բանակից անպատասխանելուն ազատվելու համար ուրախությունից սիրտը թռունդ առավ: Սակայն վտանգավոր էր համարում ոստիկանատուն գնալը, որովհետև այնտեղ գաղտնիքը կբացվեր, կիմացվեր որ ինքն ամենևին էլ Շանչիաչվիլի չի ու նորից բանտ կնետվեր: Կամոն որոշեց ինչ գնով ուզում է լինի ոստիկանատուն չգնալ: Դրա համար չենքից դուրս եկան թե չէ, դիմեց ոստիկանին.

— Ինչո՞ւ ոտքով գնանք, լավ չի՞ կառքով...

— Խնդրեմ:

Կամոն կառք կանչեց, նստեցին և ուղևորվեցին դեպի ոստիկանատուն: Ճանապարհին Կամոն այնքան չատախոսեց, այնքան գովեց իր հարտնացուին, որ ոստիկանը լսելուց հոգնեց, և երբ մի պահ լռեց՝ զարմացած հարցրեց.

— Հը, ինչի՞ լռեցիր և ինչի մասին ես մտածում.

— Մտածում եմ այն մասին, պարոն ոստիկան, թե ինչ կասի իմ հարտնացուն, երբ տեսնի ինձ ոստիկանի հետ ոստիկանատուն գնալիս: Կմտածի, թե ես ավազակի մեկն եմ ու կհրաժարվի ինձանից: Այնինչ ես ինչքա՜ն եմ չարչարվել, մինչև կարողացել եմ նրանից խոսք առնել և հարսանիքի պատրաստություն տեսնել: Խնդրեմ, դուք էլ չնորհ արեք մեր հարսանիքին,—ասաց Կամոն ու մի գումար տվեց ոստիկանին:

— Շնորհ արեք, պարոն ոստիկան, թողեք մենակ գնամ ոստիկանատուն:

Կամոյի առատ վարձատրությունն ու խղճալի տեսքը

ազդեցին ասլիկանի վրա։ Նա իջավ կառքից ու հրամայեց կառապանին նրան քաղաքամոտ տանել։ Գործի կեսն արված էր արդեն։ Ասլիկանը հեռացավ թե չէ, կառքը շարժվեց առաջ։ Դեռ մի փոքր չանցած, կամոն կառապանից աննկատելի ցած թռավ ու մտավ առաջին պատահած եկեղեցին, քաշվեց մի անկյուն, ձևացրեց, թե ազոթում է, սպասեց մինչև ժամերգությունը վերջացավ ու ժողովրդի հետ դուրս գալով եկեղեցուց չտապեց քրոջ մոտ։ Ջավահիրը եղբորը տեսնելով՝ շատ ուրախացավ։ Նա սրտառուչ համբուրեց նրան, ապա հետաքրքրվեց, թե ինչպես հաջողվեց նրան այդքան շուտ ազատվել բանտից և երբ իմացավ, թե ինչ ձևով է ազատվել, սկսեց անհանգստանալ ու մտածել մի ապահով տեղ դնելու և եղբորը թաղցնելու մասին։ Նա չտապալ կապեց վերքերը, ապա սկսեց վերհիշել իր ծանոթներին թե ո՛վ մոտ կարելի կլինի պատսպարել կամոյին։ Ջավահիրը հիշեց իր վստահելի ընկերուհիներից մեկին։ Իսկույն կառք կանչեց, նստեցին, ու գնացին։ Մի փոքր անց կառքը կանգ առավ Մխթայելյան փողոցի չքեղ ու լուսավոր շենքերից մեկի առջև։ Ջավահիրը ցած իջավ կառքից, սեղմեց էլեքտրական զանգի կոճակը։ Ջավահիրն ու կամոն ճանապարհ դրին կառքն ու մարմարե սանդուխքներով վեր բարձրացան։ Նրանց դիմավորեց բարձրահասակ, փարթամ մարմնով, ճոխ ու դեղեցիկ հագնված մի կին, համբուրվեց Ջավահիրի հետ և ցույց տալով ծպտված կամոյին հարցրեց։

— Սա ո՞վ է, քա՛...

Ջավահիրը պատմեց գործի էությունը և խնդրեց մի քանի օր պատսպարել եղբորը։ Տիկինը համաձայնեց։ Ջավահիրը ապահով ու հանգիստ տուն վերադարձավ։ Դեռ նոր էր նա հեռացել, երբ մի ուրիշ կառք կանգ առավ այդ տան առջև։ Հնչեց զանգը։ Ադախինը լուսամուտից տեսնելով կառքը, մոտեցավ և ինչ որ բան չհնչեց ականջին։ Տիկինը մի պահ չփոթվեց։

— Ո՞վ է եկողը,— հետաքրքրվեց կամոն։

— Քննիչը... Նա, այսպես ասած, իմ երկրպագուներից մեկն է, մեկ-մեկ այցելում է ինձ,— կարմրելով պատասխանեց տիկինը:

— Ավելի լավ, իմ տեղը շատ ավելի ապահով կլինի,— ծիծաղեց Կամոն:

Գեղեցիկ տիկինը Կամոյին տարավ ընդունարանին կից սենյակը, դուռը փակեց վրան, ապա դիմավորեց առաֆաններով վեր բարձրացող քննիչին: Տեսնելով նրա քրտնաթոր, կարմրատակած դեմքը, տիկինը նախատինքով դիմեց նրան.

— Այսքան էլ ուշանալ կլինի՞...

Քննիչը առանց պատասխանելու տիկնոջը՝ մոտավ ընդունարան:

— Գիտե՞ս ինչ խաղ խաղաց մեր դլխին անպիտան Կամոն:

— Ի՞նչ,— հետաքրքրվեց կինը:

— Փախավ:

— Ինչպե՞ս թե փախավ,— զարմացավ կինը:

— Փեսացու ձևանալով:

— Փեսացո՞ւ:

— Այո՛:

Ու քննիչը մանրամասն պատմեց, թե ինչպես Կամոն հաղուստը փոխելով դեղագործի հետ, հիմարացրել է իրենց ու ազատվել ձերբակալումից:

— Իսկ ո՞րտեղ կարող է լինել հիմա,— խորհրդանշական ժպիտով հարցրեց կինը,— Թերևս քրոջ մոտ պահված լինի...

— Քրո՞ջ մոտ, ինչեր ես ասում, այնպիսի լուրեր ենք նշանակել քրոջ բնակարանի վրա, որ... է՛հ, ասենք ես գեղ մոտ այդ մասին խոսելու չեմ եկել...

Կամոն կից սենյակում նստած անուշ էր անում տիկնոջ ուշադրված ընթրիքը և մտածում իր անելիքների մասին:

Նա մնաց այդ տանը, չըջապատված տիկնոջ հոգա-

ծու ուշադրությամբ: Նրան մտահոգում էր մյուս ընկերների վիճակը, իր հետագա անելիքները և այն, թե արդյոք ե՛րբ հնարավորություն կունենա իր թագաւորից դուրս գալ:

Անցան չարաշներ, և երբ վերջապես փոքր ինչ խաղաղվեցին ասպետական հետապնդումները, նոր միայն Կամոն դուրս եկավ իր թագաւորից:

Այժ ձևով Կամոն ազատվեց ձերբակալումից, սակայն նրա երեսուներկու ընկերները մնացին Մեհեխի բանտում: Կարո՞ղ էր արդյոք Կամոն ձեռքերը ծալած, հանգիստ սրտով նստել, երբ նրա ընկերները տառապում էին բանտում ու ամենայն հավանականությամբ ծանր պատիժ էր սպասում նրանց: Իր ազատվելու համար նա այնքանով էր ուրախ, որ կարող էր մտածել նաև նրանց ազատելու մասին: Կամիտեին հայտնելով, թե ինչ ձևով է ուզում ազատել ընկերներին Մեհեխի բանտից, Կամոն իսկույն գործի անցավ:

Մեհեխը ժանտ և անողոք արքայի նման բազմել էր Քուռ դետի ամենաբարձր ափին: Եթե նա հեքիաթային զորությամբ լեղու առներ, պիտի պատմեր դալիք սերունդներին, թե ինչպես Կամոն գիշեր–ցերեկ պատրաստ էր գործում իր չուրջը, որ իմանա նրա թույլ կողմերը և ելք գտնի Մեհեխի ղնդանից իր ընկերներին փրկելու համար: Եթե Մեհեխի կրծքի տակ բաբախեր աչխարհի նուիրիակ ամենաչար մարդու սիրտը, նա գարժայլ կզգար Կամոյի հոգու փոթորիկները ու տանջանքները, կկարեկցեր, բայ կաներ իր քարե վանդակի դռները և փակված արծիվներին ազատության կչնորհեր: Սակայն Մեհեխը՝ սառն ու անողոք բազմել էր իր քարեղեն զահին՝ անտարբեր դեպի մարդկային տառապանքները, անտարբեր դեպի իր պատերի տակ հեծեծող որբերի ու այրիների լացը: Ա՛խ, այդ արցունքները, եթե գումարվեին իրար, մի հորդահոս գետ կդոյացնեին, մի գետ, որի մոտ վարար Քուռը մի խղճուկ վտակ կթվար: Մեհեխը նստը գինք էր գարձել անսիրտ մարդկանց ձևռքին, հեռուստես և պետք էր Մեհեխի հետ էլ անսիրտ վարվել, քանդել նրա հիմքերը:

Երկու կողմից օձագալար պատյատով բերդի ոտքերն էր լիզում Քուռը: Այդ կողմերից նրան մոտենալն անհնարին էր: Երրորդ կողմից Մեհեխը քաղաքին էր մոտում մի ալմկոտ ու եռուն փողոցով: Այդ փողոցից էլ Մեհեխին մոտենալ հնարավոր չէր: Բերդի չորրորդ կողմում, նեղլիկ փողոցի անելից մեկում, մի փոքրիկ չարշախի տակ ապրում էր աշխարհին անհայտ ու անշնչան, խակ կամոյին ու նրա ընկերներին մայր ու հավատարիմ քույր Բաբեն: Մարդիկ հաճախ էին տեսնում, թե ինչպես այն հասարակ լվացարարուհի Բաբեն, կյանքի հոգսերից կորաքամակ Բաբեն, լվացքաջրի մեջ խաչված ու դալուկ ձեռքերով Բաբեն՝ լվացք էր տնում ու իրեն պահում: Մարդիկ միայն այսքանն էին տեսնում, խակ Բաբեի հոգին, նրա մոտ եկող մարդկանց պատմությունը, «լվացքի» համար բերվող կապոցները դնելով ու հանձնելով անկարող էին: Բաբեի այս անշուք լվացքատունը հավաքատեղի էր Վրաստանի ազնիվ զավակների համար, նրանց համար, ում հոգու երազն էր, որ աշխարհում արյուն ու վիշտ չլինի, քաղցած ու որբ մանուկներ չլինեն:

Բաբեի խրճիթի մեջից կամոն իր մարդկանցով ահռելի անցք փորել դեպի Մեհեխի սիրտը: Հեշտ չէր այդ գործը: Մի կողմից փորված հողը դուրս էին բերում, մյուս կողմից այուններ դնելով վերչող հողաչերտերի տակ, առաջ էին տողում: Եվ տեղն էր նեղ, և՛ օդ չկար: Սակայն կար հավատ, ծով հավատ հաղթանակի նկատմամբ: Կամոն իր մարդկանցով փորում էր հողաչերտերն ու առաջ անցնում: Նրա պլանը ստուգված էր ստանապատիկ: Նրանք պիտի դուրս գային հենց այն կամերայի տակ, ուր նստած էին երեսուներկու ընկերները: Աչխատանքը կապված էր հազար ու մի դժվարությյան և արգելքների հետ: Աչխատում էին մեծ մասամբ գիչերները՝ կասկածի չենթարկվելու համար: Սակայն պետք էր շտապել: Թանգ էր յուրաքանչյուր ժամը, յուրաքանչյուր րոպեն... Գիչերը փորեցին, ցերեկ փորեցին նրանք, չարչարվեցին, տառապեցին ամբողջ,

մինչև որ կարողացան փոքվածքը հասցնել կամերայի տակ: Իսկ նեքսը, կամերայում, ընկերները տոռբերկրյա խուլ հարվածներից արդեն կատաղում էին, որ ինչ որ արտաքո կարգի բան պիտի կատարվի... Վերջապես մոտենում էր ցանկալի ժամը: Աշխատանքն ավարտվելու վրա էր: Վերջին հոդաչափերը քանդելով նրանք մի գիշեր դուրս եկան հենց նույն կամերան: Որքան արտառուչ, որքան հուզիչ էր հանդիսման վայրկյանը... Ուրախության զուսպ արտահայտություններից հետո, սկսեցին մեծ զգուշությամբ դուրս սողալ այդ անցքից... Նրանց հետ ազատվեց նաև Շանչիաչվիլին, որին նույնպես մահվան կամերա էին նետել Կամոյի փախուստին նպաստած լինելուն համար: Մահվան դատապարտված ընկերներին հաջողությամբ ազատելուց, լույս աշխարհ հանելուց հետո, հենց նույն գիշերը Կամոն բարեի խրճիթը հմտահատակ քանդեց և վերցնելով իր սիրելի բարեին՝ անհետացավ:

Ինչ վուլֆ Կամոյին, թե նրանից կատաղեց և ոռքի ելավ ոստիկանության ոհմակը: Ազատված ընկերները նոր եռանդով անցան գործի:

Կամոն հենց այս օրերին մեկնեց Փինլանդիա, ուր և տեղի ունեցավ նրա առաջին հանդիպումը Լենինի հետ:

ԿԱՄՈՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ ՓԻՆԼԱՆԴԻԱՑՈՒՄ

Կամոն Թիֆլիսից մեկնեց Պետերբուրգ, ներկայացավ Կոմիտե և խնդրեց թույլ տալ իրեն մեկնել Փինլանդիա Իլիչի հետ տեսնվելու, իրեն հետաքրքրող մի շարք հարցերի պատասխաններ ստանալու համար: Պետերբուրգի Կոմիտեի անդամները լսել էին Կամոյի մասին և այժմ խիստ ուրախացան նրան անձամբ տեսնելով: Այնքան բուռն ու անկեղծ էր Իլիչին տեսնելու Կամոյի փափագը, որ Պետերբուրգի Կոմիտեն սիրով ընդառաջեց նրան: Այդ օրերին կովկասցի մի խումբ հայ և վրացի ուսանողներ նույնպես դիմել էին Պետերբուրգի Կոմիտեին Լենինի հետ տեսակցության թույլտվություն ստանալու համար: Ռևոլուցիա-

յի ժամանակվանը պատուիրյունից հետո ծավալվող ռեակցիան, դաժան ռեպրեսիաները ծանր ազդեցություն էին թողել ամենուրեք, մանավանդ ուսանողության վրա: Եվ ահա ուսանողների մի առաջ խումբ Թիֆլիսից Պետերբուրգ էր եկել Լենինին տեսնելու, նրա կենդանի, ոգեշնչող խոսքը լսելու համար: Այդ հանդամանքները աչքի առաջ ունենալով Պետերբուրգի կոմիտեն նպատակահարմար գտավ կազմակերպել ուսանողների հանդիպումը Լենինի հետ: Այդ այն օրերն էին, երբ Ռուսաստանում դեկտեմբերյան ապստամբության ճնշելուց հետո ցարական ինքնակալության ծավալուն հարձակման էր անցել ապստամբների դեմ: Պետերբուրգի կազմակերպությունն այդ ժամանակ անցել էր ընդհատակ հետևելով Իլիչի խորհրդին թե՝ «Պետք է կարողանալ ամենուրեք, ուր հարկն է նորից անցնել ընդհատակյա աշխատանքի»: Ջնայած թույլ էր Մոսկվայի և Պետերբուրգի միջև եղած կապը, այնուամենայնիվ Ռուսաստանի զանազան քաղաքներից շատ ընկերներ էին գալիս Պետերբուրգ և Կրուպսկայայի միջոցով տեսակցում Լենինի հետ: Կառավարության կողմից հետապնդվելու պատճառով Իլիչը մնայուն բնակավայր չուներ: Փոխելու համար նա թափառում էր տեղից-տեղ: Կրուպսկայայի հետ նա հանդիպում էր «Վիեննա» ռեստորանում: Կրուպսկայան Լենինի հանդիպումը բանվորական ներկայացուցիչների հետ կազմակերպում էր Նեվսկի պրոսպեկտի վրա բնակվող ատամնաբույժ Դորա Դավյդովնայի բնակարանում, Նիկոլաևսկի փողոցում ապրող մի այլ ատամնաբույժ՝ Լավրենտիևայի մոտ, և կամ «Վպերյոդ»-ի գրապահեստում: Քանի գնում հետապնդումները սաստկանում էին: Այդ պայմաններում ապրելն անհնարին էր դառնում, ուստի և Իլիչը ստիպված եղավ տեղափոխվել Ֆինլանդիա, ուր և մնաց մինչև Ստոկհոլմի համագումարը: Ֆինլանդիայում ևս Իլիչը չընդհատեց իր հանդիպումները բանվորների և ուսանողների հետ: Այդ հանդիպումները կազմակերպվում էին Պետերբուրգի Կոմիտեի միջոցով: Լենինի մոտ մեկ

նոր ահա այդպիսի խմբերից մեկին Պետերբուրգի կոմիտեն միացրեց նաև ուսանողական համազգեստ հագած Կամոյին: Այդ համազգեստն այնքան էր սազել Կամոյին, որ նա իրեն շատ ազատ էր զգում այդ համազգեստով, ո՛չ ոք մազաչափ անգամ կասկած չէր կարող տանել, թե նա ուսանող չէ:

Ծիննանդևա հանդիպում, Կամոն աննկատելիորեն բաժանվեց ուսանողներից ու շտապեց Կրուպսկայայի մոտ: Այդ ժամանակ Կրուպսկայան ապրում էր Կուակկալա կայարանի մոտ գտնվող «Վագա» ամարանոցում, ուր Իլիչն ուներ իր առանձին սենյակը: Նադեժդա Կոնստանդինովնան Կամոյի սխրագործությունների մասին լսել էր Պետերբուրգի Կոմիտեի անդամներից, այժմ ընդունեց նրան մեծ ջերմությամբ, հարց ու փորձ արեց Կովկասի ընկերների գործունեության մասին, հետաքրքրվեց Թիֆլիսի վերջին լուրերի մանրամասնություններով: Ապա Կրուպսկայան ծանոթացրեց նրան իր մոր հետ և լուրջ տալով Իլիչի համար Կովկասից բերած մրգերը, ասաց.

— Այս արտասովոր համարձակության, անսահման կամքի և ուժի տեր մարտիկը մի կատարյալ մարդ է, քնքուշ ընկեր: Նա ջերմորեն սիրում է Իլիչին:

Առաջին իսկ հայացքից Կամոն լավ տպավորություն թողեց Կրուպսկայայի մոր վրա և նրանք մտերմորեն սկսեցին զրուցել:

Ներքնահարկի սենյակներից մեկում Կամոն սեղանի վրա կաթ, հաց և այլ ուտելիքներ տեսավ, իսկ բազմոցին՝ պատրաստի անկողին:

— Ո՞ւմ համար են սրանք,— հարցրեց նա:

Կրուպսկայան պատասխանեց.

— Ամեն օր Իլիչի մոտ հատուկ մարդիկ են գալիս նյութերով, նամակներով: Իլիչը կարդալով ստացածը անհապաղ պատասխաններ է ուղարկում նույն մարդկանց հետ: Այս պատրաստությունը գիշերվա ընացքում եկող մարդկանց համար է, որպեսզի նրանք առանց

որևէ մեկին խանգարելու կատարյալ ընթրել և հանգստանալ:

Կրուպսկայայի հետ «Վագա» ամարանոցում չընգդայելիս Կամոն անհամբեր ու հուզված սպասում էր այն ժամին, երբ կհանդիպեր Իլիչին: Վերջապես Կրուպսկայան վերցրեց Կամոյին և ճանապարհ ընկավ դեպի այն ակումբը, ուր պիտի կայանար Լենինի հանդիպումը ուսանողության հետ: Կամոն առաջին անգամն էր տեսնելու Իլիչին: Նրա երևակայության մեջ Իլիչը պատկերանում էր որպես անմատչելի մի մեծության: Սակայն որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ ակումբ մտնելով Կրուպսկայան ցույց տվեց նրան մի ջահատասկ, ճաղատ գլխով ու լայն ճակատով մի մարդու, որը չընգդայած ուսանողների սեղմ օղակով՝ զրուցում էր նրանց հետ: Սրտի ջերմ թրթիռով Կամոն մոտեցավ այդ խմբին ու սկսեց ագահ հայացքով նայել Լենինին ու կլանել նրա խոսքերը: Դահլիճը հեղհեղաև լցվում էր ուսանողներով ու բանվորներով: Լենինի պարզ, դյուրըմբռնելի զրույցը հափշտակել էր բոլորին: Զրույցի նյութը Ռուսաստանում պարտված ռևոլյուցիան էր:

— Պետք էր ավելի վճռակամորեն, եռանդագին և հարձակողական ղենք վերցնել, պետք էր մասսաներին բացատրել մի մխիթար խաղաղ զարթադուլի անհնարինությունը և անվերհեր ու անողոք զինված պայքարի անհրաժեշտությունը:

Կամոն կատարելապես չլսել էր Լենինի պարզ ու հստակ մտքերից: Ամբողջ լուսյան մեջ ընկած մարդու նման՝ նա մեկ Լենինին էր նայում, մեկ ունկնդիրներին: Լենինը շարունակում էր իր խոսքը:

Լենինի զրույցից Կամոն հասկեց մի պարզ եղրակացություն, թե ռևակցիան դեռ ծավալվելու է, սակայն ուժերի լարումը, նոր զարթադուլները ազիտացիայի միջոցով կուժեղացնեն ռևոլյուցիայի նոր վերելքը: Բնութագրելով ժամանակակից կապիտալիստական անտեսությունը, բանվորների ցածր աշխատավարձը, դյուղացիության զրկանքով լի կյանքը, ժո-

դավթի ծանր դրությունը, ամոլ հակասությունները։ Լենինն իր կուռ սրամտությամբ ունկնդիրներին բերում էր այն մտքի եզրահանգության, թե պալիք անխուսափելի ռևոլյուցիայի համար պետք է լինել պատրաստ, պետք է զինվել ու զարձյալ զինվել։

— Պրոլետարիատի դրծունեության պետք է լինի միասնական,— այս խոսքերով ավարտեց Լենինն իր այդ օրվա զրույցը և հրաժեշտ առով ունկնդիրներին, դուրս եկավ դահլիճից։

Այդ միջոցին Կրուպսկայան մոտեցավ Իլիչին և հայտնեց նրան Պետերբուրգից Կամոյի իրենց մոտ գալու մասին։ Կամոյի անունը լսելով Լենինի դեմքը պայծառացավ համակրանքի մի ջերմ հույզով։ Կամոն ներկայանալով Լենինին համբված կանգնել էր նրա առջև ու ոչ խոսել էր կարողանում, ոչ էլ հայացքը նրանից հեռացնել։ Լենինը մտերմարար վերցրեց Կամոյի թևն ու երեքով դուրս գալով ակումբից, նստեցին իրենց սպասող կառքը։ Մինչև տուն հասնելը Լենինը նրան գործերի մասին ոչինչ չհարցրեց։ Երբ տուն հասան առանձնացավ նրա հետ իր աշխատասենյակում ու սկսեց իր մանրամասն հարցուփորձը Կովկասի դրության և այնտեղ տեղի ունեցած դեպքերի մասին։ Կամոն պատմեց Թիֆլիսում տարվող ընդհատակյա աշխատանքների մասին, նկարագրեց Նախիջևիկյանում տեղի ունեցած գույքի մանրամասնությունները, պատմեց նաև Մետեխի բերդից երեսուներկու ընկերներին ազատելու մասին։ Լենինը լսում էր նրան մեծ ուշադրությամբ և զոհունակությամբ, ժպտում՝ իրեն հատուկ մանկական ժպիտով։

Կամոն դրանից հետո չատ անգամ էր ներկա լինում Լենինի եղբայրներին բանվորական և ուսանողական վայրերում և ամեն անգամ նոր լուրք էր ստանում։

Կամոն մնաց Կուոկկալայում, Իլիչի ամառանոցում մի քանի ամսով։ Իլիչի մոտ հաճախ հյուրեր էին գալիս ժամանցի, հանգստանալու և բազմաթիվ հարցերի մասին զրուցելու համար։ Մի անգամ, ճաշից հետո,

երբ Լենինը պարապում էր իր առանձնասենյակում, իսկ Կամոն ղրուգում էր. Կրուպսկայայի մոր հետ, հաբևան սենյակում, հյուրերի մեջ վեճ ծագեց: Կրուպսկայան ու Կամոն անցան նրանց մոտ: Եկավ նաև Իլիչը: Վեճը Ռուսաստան գենք տեղափոխելու մասին էր: Պետերբուրգում կազմակերպվել էր մարտական կոմիտե Ռուսաստան գենք ներմուծելու համար: Այդ կոմիտեի գործունեությունից դժգոհ էր Իլիչը:

— Այսպիսի գործի համար պետք չեն սխեմաներ, վեճեր ու խոսակցություններ: Այստեղ հարկավոր է եռանդ ու գործ յալ եռանդ,— ասում էր Իլիչը, անցուդարձ անելով սենյակում՝ բութ մատերը ժիլետի գրպանների մեջ անցկացրած:

Կամոն ուշադիր հետևում էր նրա յուրաքանչյուր շարժմանը, կլանում նրա բոլոր բառերը: Իլիչը ժպտալով մոտեցավ, ձեռքը դրեց նրա ուսին ու մեղմ տոնով շարունակեց իր խոսքը.

— Սարսափով, ասում ած վկա, սարսափով եմ տեսնում ես, որ ռումբերի մասին խոսում են կես տարուց ավելի, բայց դեռ ոչ մի հատ չեն պատրաստել: Երխտասարդության մոտ դնացեք, ահա մի իսկ վերկարաբ միջոցը: Մենք պարտավոր ենք ու կարող ենք օգտվել տեխնիկայի կատարելագործություններից, սովորեցնելով մեր մարտական խմբակներին մեծ քանակությամբ ռումբեր պատրաստել, օգնել նրանց ձեռք բերելու ամոսմատ գենքեր ու պայթուցիկ նյութեր...

Թողնելով, որ հյուրերը շարունակեն իրենց վեճը, Լենինը Կամոյին տարավ իր առանձնասենյակը, աթոռ առաջարկեց նրան, իսկ ինքը նստելով դրասեղանի առջև, չոքելով սակրատյան իր լայն ճակատը դարձավ Կամոյին.

— Պետք է կարդավորել գենքի կոնսպիրատիվ փոխադրումը: Այդ կարող են կատարել միայն ուժեղ կամքի և տոկունության տեր մարդիկ: Այս ասելով Լենինը «Վպերյոդ» լրագիրը տվեց Կամոյին, որ կարդա, իսկ ինքը խորասուզվեց իր աշխատանքների մեջ:

Սակայն Կամոն լրագրով տարվել չկարողացավ:

Լենինը որպես մի հզոր մագնիս դեպի իրեն էր ձգում Կամոյի հոգու մեծագը։ Նա իր կլանող հայացքով ավելի Լենինին էր կարդում, քան լրագիրը։ Այնինչ Լենինը ամբողջովին տարված աշխատանքով, դրանցում էր իր մտքերը, իսկ երբ մեկ-մեկ վեր էր կենում, մտածելու դրքերի պահարանին ու դուրս քաշում որևէ բառարան՝ անծանոթ բառերի բացատրությունները գտնելու, Կամոն հավաքում էր իրեն, պոկում էր իր ուշադիր հայացքը նրա վրայից և նայում լրագրին, ձևացնելով թե կարդում է։

Իլիչի համառուն մտքերի ազդեցության ներքո Կամոյի համար բացվեց կյանքի ու գործունեության լայն հորիզոն։ Նրա համար ընդմիշտ պարզվեց, որ գալիք չարժումը լայն ծավալով առաջ կհորդի և ոտքի կհանի ժողովուրդը կանգ չի առնի կես ճանապարհին։— Հաղթանակը ժողովրդինը կլինի թե չէ, այդ ցույց կտա գալիք դատեմարտը, մտածում էր Կամոն, իսկ առայժմ որքան կարելի է, պետք է նորից պինդել ու պինվել։

Կամոն իրեն նշանաբան դարձրած Լենինի այն միտքը, թե «Ձենքի կոնսպիրատիվ փոխադրումը կարող են կատարել միայն ռեվոլուցիոն, արտաքո կարգի ու տոկունության տեր մարդիկ» — վերադարձավ Կովկաս, այդտեղից էլ անցավ Բուդղարիա՝ Վիտվինովի մոտ։

ԲՈՒԹԱՅԻՍԻՑ ԲՈՒԼՂԱՐԻԱ — ԼԻՏՎԻՆՈՎԻ ՄՈՏ

Ֆինլանդիայից վերադառնալուց հետո Կամոյին հրավիրեցին մասնակցելու Բութայիսում դումարված բոլշեվիկյան չրջանային կոնֆերանսին, որին մասնակցում էին նաև որոշ քանակով մենշեվիկներ։ Այս այն չրջանն էր, երբ Մոսկվայում նոր էր ճնշվել դեկտեմբերյան ապստամբությունը և պենեպալ Ալիխանով-Ավարսկին զինավոր ապստամբում էր կովկասը։ Ալիխանով-Ավարսկու զորագնդերը պիտի անցնեին Սուրամի լեռնանցքով։ Կոնֆերանսում հարց էր դրված.—

զինե՞լ ժողովրդին, դիմադրե՞լ Ալիխանով-Ավարսկուն թե՞ ոչ: Կոնֆերանսում մենշևիկյան թևի ներկայացուցիչները դատում էին այսպես.— եթե Ռուսաստանում պարտվել է դեկտեմբերյան ապստամբությունը, այլևս ի՞նչ revolուցիայի մասին՝ խոսք կարող է լինել Կովկասում, ուրեմն և ավելորդ է մարտական խմբակները ունենալը, ռումբեր պատրաստելը, զինամթերք ձեռք բերելը:

— Դրանք միայն ավելորդ զոհերի տեղիք կտան,— բացատրում էին նրանք:

Այս վեճի ժամանակ Կամոն նստած էր մի անկյունում, գլուխն առած ղույդ ափերի մեջ: Բարկությունից նրա վզի երակները լարվել էին, ականջները կարմրել էին ներքին այրող մի կրակից: Նրա կողքին նստած էր Թիֆլիսի Կոմիտեի անդամներից մեկը, որը ձեռքը Կամոյի ուսին դրած մերթ ընդ մերթ թեթևում էր զեպի նա, ականջին ինչ որ բան փսփսում, և Կամոն փոքր ինչ հանդարտվում էր: Վեճը դնալով սաստկանում էր: Մի փոքր ևս՝ և հարցը պիտի վճռվեր հօդուտ այն տեսակետի, թե հարկավոր է զենքը վայր դնել: Այդ պահին Կամոյի մոտ նստած ընկերը ձայն խնդրեց: Բոլորը կարծում էին, թե ինքը պիտի խոսի, այնինչ նա ձեռքը խփելով Կամոյի ուսին, ասաց.

— Ձայն ավե՛ք, թող Կամոն խոսի:

Նախագահը ձայն տվեց Կամոյին: Նա տոքի կանգնեց, սրբեց ճակատի քրտինքը ու լայն հայացքով չափելով ընկալատողներին, ասաց.

— Մենք թշնամիներ չատ ունենք, բայց ամենից վտանգավոր թշնամին նա է, ով մեր լեզվով սխալ մտքեր է քարոզում: Ես չեմ կարողանում հասկանալ ձեզ՝ մենշևիկներիդ, թե ո՞վքեր եք դուք: Մի հարցրեք ձեզ, թե ո՛րտեղ եք ապրում, ի՛նչ երկրի պատուղ եք: Մի տեսեք, թե ինչքան հարուստ է մեր երկրի բնությունը: Լեռները զեպի երկինք են ձգվում, դետերը սլանում են զեպի ծով: Կովկասյան բնության պես հզոր է մեր ժողովուրդը, իսկ դուք... ինչո՞ւ եք դուք այդքան վախկոտ ու ողորմելի...

Կոմիտեի անդամը, ինչպես և չաուերը, դվիով հավանության նշաններ էին անում, երբ Կամոն խոսում էր: Նա ոգևորված շարունակեց.

— Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ է ասել Իլիչը դեկտեմբերյան ապստամբության ճնշման առթիվ: Նա ասել է. «Մենք կարող ենք և պարտավոր ենք օգտվել տեխնիկայի կատարելագործություններից, ոսկորներն-ով մեր մարտական խմբակներին մեծ քանակությամբ ռումբեր պատրաստել, օգնել նրանց ճեռք բերելու ավտոմատ զենքեր ու պայթուցիկ նյութեր...»:

— Լենինի խոսքը ազնիվ է ու ճշմարիտ,— բացականչեց Կոմիտեի անդամը:

Չաուերը ճայնակցեցին նրան: Կամոյի խոսքը վճռական նշանակություն ունեցավ կոնֆերանսում: Կոնֆերանսն անհրաժեշտ գտավ ճեռք բերել զենք ու զինամթերք: Բայց ոչ Ռուսաստանում ու ոչ էլ Կովկասում այդ բանը հնարավոր չէր, ուստի որոշեցին Կամոյին ու մի քանի ուրիշ ընկերների ուղարկել արտասահման: Արտասահմանյան երկրներից ամենից հարմարը Բուլղարիան էր, որովհետև այնտեղ էր գտնվում Լիտվինովը՝ Ռուսաստան և Կովկաս զենք տեղափոխելու համար: Կամոն իր ընկերներով հաջողությամբ հասավ Բուլղարիա հենց այն ժամանակ, երբ Լիտվինովը կապ էր պողպատել Շվեցարիայից ու եվրոպական այլ երկրներից մակեդոնյան ռևոլյուցիոներների օգնությամբ մեծ քանակով զինամթերք դնել ու կենտրոնացնել Բուլղարիայի նշանավոր նավահանգիստ Վառնա քաղաքում: Այստեղից զինամթերքը պիտի ուղարկվեր Կովկաս, իսկ եթե կառավարության կողմից հարցաքննություն սկսվեր, Լիտվինովը փաստաթղթերով պիտի ցույց տար, որ այդ զենքը մակեդոնյան ռևոլյուցիոն կազմակերպության կողմից ուղարկվում է Տաճկահայաստան: Բուլղարական կառավարությանը պիտի համոզեին, որ հայ ըմբոստ ժողովուրդը չտանելով սուլթանական ռեժիմը, ոտքի է կանգնել, իսկ մակեդոնյան կազմակերպությունը զինամթերքով օգնություն է ցույց տալիս

ապստամբած հայ ժողովրդին: Լիսիփնովը քաջ գիտենալով, որ բուլղարական նավերը մեծ տարողություն չունեն՝ Ֆիումե քաղաքում, ամերիկյան մատնագետների ստուգումով և երաշխավորումով գնել էր հատուկ նավ և Բուլղարիա էր ուղարկել՝ օգտագործելով մակեդոնյան ռեվոլյուցիոներ Տուֆեկչիևի եղբոր անձնագիրը: Կամոն, հիացած Լիսիփնովի այս ճարտարամիտ պլանով, ինքը ևս գնդի էր գնում և միաժամանակ մասնակցում էր նավը բեռնելուն: Նա հաճախ էր այցելում մակեդոնյան ռեվոլյուցիոներ Նաում Տուֆեկչիևին, որից սովորում էր ձեռքի ռումբեր պատրաստելու արվեստը: Ռազմամթերքը նավը բարձելիս, հաճախ գալիս էր Լիսիփնովը և զրուցում Կամոյի հետ, նրա բազմաթիվ հարցերին տալով գոհացուցիչ պատասխաններ:

— Այս ի՞նչպես հաջողվեց օրը ցերեկով նավը զինամթերքները բառնալ,— հարցրեց մի անգամ Կամոն Լիսիփնովին:

— Մակեդոնյան ռեվոլյուցիոներների հետ ես ջերմ կապերի մեջ եմ: Նաում Տուֆեկչիևը, ռեվոլյուցիոն գործերի կազմակերպման այդ վայլուն մարդը, մակեդոնյան ձեռնամուխները հնարող գործարանատերը, իմ լավագույն բարեկամն է: Մակեդոնյան ռեվոլյուցիոներները բուլղարական կառավարության կողմից մեծ վստահություն են վայելում: Ավելին: Կառավարությունը հաճախ չի հրաժարվում նրանց նեցուկ հանդիսանալուց: Մյուս կողմից բուլղարական չինովնիկներն այնքան էլ բարեկամաբար չեն նայում Թուրքիային: Այնպես որ նրանց ձեռնտու է Թուրքիայի դեմ ուղղել գենքը: Ինչո՞ւ չօգտվել առիթից: Մեր գործի երեք քառորդը կատարված է: Մնում է նավը վաոնայից չուսատիւթ կերպով Կովկաս ուղարկել, քանի որ դեռ աչնանային խառը եղանակները չեն սկսվել:

Այս բոլորից հետո՝ Լիսիփնովը վստահելի մարդիկ ուղարկեց Օդեսա ու իր գնած նավի համար հատուկ անձնագրեր ու համուռ կապիտան բերել տվեց, որը երկար ժամանակ աշխատել էր «Պատյոմկին» զբոսանա-

վի վրա։ Նավում տեղավորվելին Կամոն և իր ընկերները։ Աչեան սկիզբն էր, «Զարա» նավը դուրս եկավ Վառնայից և ճանապարհ ընկավ դեպի Թուրքիա։ Նավի անձնակազմի ընդհանուր հրամանատարը և պատասխանատուն Կամոն էր։ Նա իր ընկերներին երկու խմբի բաժանեց նավի վախտան (հսկումը) հաջող տանելու համար։ Մի խումբը ցերեկն էր հսկում, մյուսը՝ գիշերը։ Սկզբում ամեն ինչ լավ էր գնում։ Կամոն մի փոքր հիվանդացավ ծովախտով, սակայն չուտով ոտքի կանգնեց։ Ջնայած գործն ավարտված էր ու նավն արդեն ճանապարհ էր ընկել, սակայն Կամոն հանգստանալ չէր կարողանում։ Նավի մեքենայական մասում նա տեսավորել էր մի դժոխային մեքենա, որի էլեքտրական լարերը տեղավորել էր իր սենյակում։ Բավական էր ցամաքյան ագենտների կողմից ձերբակալվելու փոքր ինչ վտանգ, Կամոն պետք է այդ մեքենայի միջոցով հօդս ցնդեցներ նավն առանց խնայելու ոչ ոքի։ Սակայն ցամաքյան ագենտների վտանգից ավելի մի սարսափելի վտանգ էր սպասում նրանց։

Սկզբում խաղաղ էր ծովը, պայծառ՝ երկինքը և անդորը՝ չուրջը։ Նավն հանգարտ առաջ էր սահում Սև ծովի կապույտ ջրերի վրայով։ Ոչ մի ճայն չէր վրդովում այդ լռությունը, բացի ջուրը պատռող ալիքների ճողփյունը։ Բայց այդ խաղաղությունը երկար չտեվեց։ Շուտով հուզվեց, կնճռոտվեց ծովի հայելու նման հարթ մակերեսը։ Երկինքը կորցրեց իր ջինջ կապույտը, մռայլվեց, կապարե ծանր ամպերը հեռահաս պատեցին ողջ երկնակամարը։ Սառը մի հոտ հանկարծ անցավ ու մի անդամից փոխեց քիչ առաջվա ակնապարար տեսարանը։ Կամոն ինքն էլ չնկատեց, թե ինչպես ծովի հանդարտ ալիքներն սկսեցին մեծանալ ու կատաղի մռայլների նման ցատկոտել նավի չուրջը։ Նավը ցավագնորեն ճոճվում էր ու ճոնչում։ Այս պահին նավը ծովի երեսն բնկած մի փոքրիկ տաշեղի էր նման, որ մերթ ալիքների գագաթին էր բարձրանում, մերթ էջնում ջրերի խորքը։ Շուտով նավի մեքենայական մա-

սում հատակից մի մեծ անցք բացվեց ու ջուրն սկսեց կատաղի հոսանքով ներս խուժել: Նավի ամբողջ անձնակազմը լարված ուժերով աշխատում էր փակել այդ անցքը: Բայց և այնպես նավի անձնակազմը անկարող էր դիմագրել բնության ահեղ տարերքին: Թվում էր, թե կործանումն անխուսափելի է: Նավի ահազանգող և օդնության խնդրող սուլոցներն ու պայմանական կանչերը անպատասխան մնացին: Հուսահատությունը տիրեց բոլորին: Հուսահատվեց նույնիսկ նավապետը, որը սկզբից փորձում էր հանդիսատես ձևանալ և ինքն էր հույս տալիս բոլորին: Եղավ մի վայրկյան, երբ նա մոռացել ինքնատպանությամբ վերջ տալ իր կյանքին, սակայն Կամոն հանդիմանեց նրան փոքրոգության համար և արգելեց նման քայլի դիմել: Մինչև ոսկորները թրջվել էին բոլորը: Աչնանային ցուրտ ու խոնավ քամին թափանցում էր մինչև նրանց ոսկորների ծուծը, մարդիկ հոգնել էին ուժից վեր աշխատանքից: Կամոն չէր դադարում նրանց հույս ներշնչելուց, սակայն անժամանակ և անխուսափելի մահվան երկյուղը իր դրոշմն էր դրել բոլորի դեմքին: Եվ հանկարծ, նույն այդ պահին, հեռվից երևացին ձկնորսական նավերը, որ չոտպում էին նրանց օդնության: Ուրախության մի ճիչ դուրս թռավ բոլորի բերանից: Մի ակնթարթում անցավ նրանց հոգնածությունն ու հուսահատությունը: Նորից չունչ ու կենդանություն առացան ամենքը:

«Զարա» նավի անձնակազմը առանց մարդկային զոհի՝ ազատվեց ու փոխադրվեց ձկնորսական այդ նավերի վրա, իսկ դիմամթերքը նավի հետ միասին սուզվեց ջրերի խորքը:

«Զարա» նավի խորտակումից հետո Կամոն գրեց նավի անձնակազմը, իսկ ինքը շարունակեց ճանապարհը դեպի Թիֆլիս:

Ներկայանալով Թիֆլիսի Կոմիտե, Կամոն մանրամասն պատմեց խորտակված նավի և դիմամթերքի մասին: Ընկերները խորհրդակցելով կոմունաի համար՝ միաժամանակ ուրախացան, որ Կամոն ողջ և ա-

ողջ է մնացել: Ընկերների ջերմ ու հոգատար հովանավորությամբ Կամոն մի առժամանակ հանգստանալուց հետո՝ դանձակեցի բանաստեղծ Բլբուլյանի (Հակոբ Հակոբյան) հետ հատուկ նպատակով ուղեվորվեց Ղորեչա՝ Սերգո Օրջոնիկիձեի ծննդավայրը:

ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ԹՆՆԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կամոն իր սահանձնած հանձնարարությունները հաջողությամբ կատարելու համար կարիք ուներ աղնվականի անցագրի: Հենց այն օրերին, երբ նա մտահոգված էր անցագիր ձեռք բերելու հարցով, նրա մոտ եկավ դանձակեցի բանաստեղծ Բլբուլյանը մի վրացի ընկերոջ հետ:

— Վասոյի հետ եկել եմ քեզ տանելու,— ասաց Բլբուլյանը, Կամոյին ներկայացնելով իր ընկերոջը:

— Ո՞ւր,— հարցրեց Կամոն:

— Ղորեչա:

— Ղորե՞չա, Օրջոնիկիձեի ծննդավա՞յրը,— բացականչեց Կամոն, մտածելով՝ թե մի գուցե այնտեղ հաջողվի ձեռք բերել աղնվականի անցագիրը:

— Ընկերս այնտեղացի է, եկել է ինձ իրենց գյուղը տանելու,— ասաց Բլբուլյանը:

Կամոն սիրով ընդունեց նրանց հրավերը և առանց ժամանակ կորցնելու, հենց նույն գիշեր երեքով մեկնեին ուղեվորվեցին Բելոգոր, ուր արդեն նրանց էին սպասում հեծնելու համար պատրաստ ձիերը:

Հոկտեմբերի վերջին օրերն էին: Նրանց դիմաց, աչքի ծայրի չափ հողերի տակ պպզում էին Ռաջայի ձյունակատար բարձունքները: Ձիերի սանձերն ազատ թողած նրանք բարձրանում էին լեռն ի վեր:

Ճանապարհին նրանք զրուցում էին Ռուսաստանում տեղի ունեցած ռևոլուցիոն դեպքերի և վրացական գյուղերում նրանց առաջացրած արձագանքների մասին: Բլբուլյանը լավ գիտեր, որ Ալյոշոտ կիրակին հովվական ժողովուրդների համար զարթոնքի մի կոչ

սում հատակից մի մեծ անցք բացվեց ու ջուրն սկսեց կատաղի հոսանքով ներս խուժել: Նավի ամբողջ անձնակազմը լծված ուժերով աշխատում էր փակել այդ անցքը: Բայց և այնպես նավի անձնակազմը անկարող էր դիմագրել բնության ահեղ տարերքին: Թվում էր, թե կործանումն անխուսափելի է: Նավի ահազանգող և օդնության կանչող սուլոցները ու պայմանական կանչերը անպատասխան մնացին: Հուսահատությունը տիրեց բոլորին: Հուսահատվեց նույնիսկ նավապետը, որը սկզբից փորձում էր հանգիստ ձևանալ և ինքն էր հույս տալիս բոլորին: Եղավ մի վայրկյան, երբ նա մոռացել ինքնատիրապետությամբ վերջ տալ իր կյանքին, սակայն կամոն հանդիմանեց նրան փոքրոգության համար և արգելեց նման քայլի դիմել: Մինչև ոսկորները թրջվել էին բոլորը: Աչնանային ցուրտ ու խոնավ քամին թափանցում էր մինչև նրանց ոսկորների ծուծը, մարդիկ հոգնել էին ուժից վեր աշխատանքից: Կամոն չէր դադարում նրանց հույս ներշնչելուց, սակայն անժամանակ և անխուսափելի մահվան երկյուղը իր ղողջն էր դրել բոլորի դեմքին: Եվ հանկարծ, նույն այդ պահին, հեռվից երեվացին ձկնորսական նավեր, որ չոտապում էին նրանց օդնության: Ուրախության մի ճիչ դուրս թռավ բոլորի բերանից: Մի ակնթարթում անցավ նրանց հոգնածության ու հուսահատության: Նորից ջունչ ու կենդանության տացան ամենքը:

«Զարա» նավի անձնակազմը առանց մարդկային զոհի՝ ազատվեց ու փոխադրվեց ձկնորսական այդ նավերի վրա, իսկ դինամիթերքը նավի հետ միասին տուվեց ջրերի խորքը:

«Զարա» նավի խորտակումից հետո Կամոն ցրեց նավի անձնակազմը, իսկ ինքը շարունակեց ճանապարհը դեպի Թիֆլիս:

Ներկայանալով Թիֆլիսի Կոմիտե, Կամոն մանրամասն պատմեց խորտակված նավի և դինամիթերքի մասին: Ընկերները խորհրդակցելով կորուստի համար՝ միաժամանակ ուրախացան, որ Կամոն ողջ և ա-

տաքացավ՝ Բլուլյանը նրա սրտի նուրբ լարերին դիպավ։

— Այո՛,— բացականչեց նա,— ես տեղյակ եմ, թե ինչպես էր Սուլթան Կրիմ Գիրեյը ծանոթանում ժողովրդի ցավերին։ Երբ 1905 թվի փետրվարի վերջերին նա եկավ Թուրքիայի Խեդիվթավի դյուցը և ժողովրդից ներկայացուցիչներ պահանջեց ղրուցելու համար, ժողովուրդը չվստահեց նրան և ոչ մի ներկայացուցիչ չուղարկեց նրա մոտ այնքան ժամանակ, մինչև որ նրանից խոսք չառավ, թե անմնաս կվերադարձնի այդ ներկայացուցիչներին։

— Իսկ ի՞նչ էր պահանջում ժողովուրդը,— հարցրեց Կամոն։

— Պահանջում էր հեռացնել զորամասերը Նոթանեի կայարանից, վերադարձնել ժողովրդից վերցրած գենքն ու զինամթերքը, պահանջում էր հող և ազատություն, հարկերի, տուրքերի թեթևացում, ազատագրում կալվածատերերի լծից։

Որպես լրացում Վատոյի ասածների՝ Բլուլյանն ավելացրեց.

— Մեր պարտքն է կոչերից ու թռուցիկներից օգտվելով Թուրքիայի ժողովուրդը պահանջում էր կառավարությունից վերադարձնել աքսորից քաղաքական հանցագործներին, պարտադիր դինվորագրության փոխարեն ստեղծել ժողովրդական միլիցիա, տալ ժողովրդական ներկայացուցիչների ընտրություններ ապահովել։

— Իսկ ի՞նչ էր պատասխանում ժողովրդի պահանջներին Սուլթան-Կրիմ Գիրեյը,— հարցրեց Կամոն։

— Այսքան համբերել եք՝ մի քիչ էլ համբերեցեք, ահա նրա պատասխանը,— ասաց Վատոն։

— Ես մի լրագրում կարդացի Նուհեյվիլի դյուցի ներկայացուցչի պատասխանը, որը մոտավորապես այսպիսի բովանդակություն ուներ.—Դուք ասացիք մեզ, թե այսքան երկար համբերել եք, մի փոքր էլ համբերեցեք։ Բայց համբերությունն էլ չափ ու սահման ու-

հանդիսացավ և ոտքի կանգնեցրեց նրանց պայքարի համար: Բլուէյնը չէջել էր վրացական շատ դյուղեր և տեսել, թե ինչպես հունվարի 9-ի մասին եղած զրույցները ժողովրդի մեջ բերնե-բերան անցնելով, ստացել էին հեքիաթի կերպարանք:

— Մի կողմից այդ զրույցներն էին ըմբոստացման կրակով բոցավառում ժողովրդի սիրտը, մյուս կողմից բանվորական ցույցերն էին զառեռաթափ կոչում,— ասում էր Բլուէյնը:— Ո՞ւմ հայտնի չէն, որ դյուղացիական չարժումները այն աստիճանի ծավալուն տեսք էին ընդունել, որ կալվածատերերն ու կուլակի վարչական պետերը կորցրել էին իրենց գլուխները:

Իրըև ապացույց իր ասածների՝ Բլուէյնը հիշեց 1905 թվի փետրվարին գենեռալ Ալիխանով-Ավարսկու պատժիչ զորախմբերի երևալը Քութայիսի նահանգի, Ուզուրգեթի և Բաթումի նահանգի կինոպաշի գավառներում:

— Մի՛թե Ալիխանով-Ավարսկու պատժիչ զորախումբը լավագույն ապացույցը չէր այն բանի, որ մեր ըմբոստ գյուղացիության ապստամբությունը սարսափի մեջ էր գցել ցարական կառավարությանը,— ասաց Վատսն և շարունակեց — Գուրիայի գյուղացիությունը բոյկոտելով ցարական հիմնարկները՝ զրանով իր բացահայտ բողոքն էր ցուցադրում իշխող պետական ինստեմի դեմ:

Ջրույցի ընթացքում Վատսի ցուցաբերած աչքաժուքյունից Բլուէյնը նկատեց, որ նա ևս մտերիկից ծանոթ է վրացական գյուղերում տեղի ունեցած մեծ դեպքերին, ուստի այդ ուղղությամբ էլ ընթացք տվեց խոսակցությանը.

— Ասես Ալիխանով-Ավարսկու պատժիչ զորախմբերը քիչ ավերածություններ էին կատարել, զրանից հետո էլ Գուրիա ուղարկվեց բարձրաստիճան պաշտոնյա Սուլթան Կրիմ Գիրեյը, իբրև թե վրաց գյուղացիների հետ ծանոթանալու համար:

Նեերով Սուլթան Կրիմ Գիրեյի անունը, Վատսն

ցրտում: Մի վոքը նախաճաշելուց հետո նրանք չտապ վեր կացան, նստեցին ձիերը և ղրուցելով չարունակեցին ճանապարհը: Զրույցը վերսկսեց Բլրուլյանը.

— Ցարական կառավարության սարքած ազգամիջյան կոտորածները իրենց արձագանքները գտան հայկական ժողովրդական բանահյուսության մեջ: «Լումա» ամսագրում վերջերս ես հանդիպեցի այսպիսի տողերի,— ասաց Բլրուլյանը ու ծոցից բլոկնոտը հանելով կարդաց.

«Լեռներով մեր այս խաղաղ աշխարհի
Անցավ չար դևը թշնամին հայի,
Անցավ ու ցանեց սերմը չարության,
Խաղաղ դրացիք թշնամի դարձան,
Լեռների վրա հովիվը ուրախ
Չի արածացնում իր հոտը անվախ,
Այժմ դաշտերում մահ, արյուն ու մոխիր,
Տիրում է սոսկում, արհավիրք, երկյուղ...»:

Դրանից հետո, Բլրուլյանը հիշեց Աչուղ Ջիվանիի այն տողերը, որոնցով նա թուրն ու նզովք է ֆախրում կովկասյան ժողովուրդներին իրար հետ թշնամացնողների դվլխին և ազգերի եղբայրության ու համերաշխության դավքն է անում:

Վասոն իր հերթին հիշեց վրաց մի քանի աշուղի, որոնք նույնպես երգել են ժողովուրդների եղբայրությունը ընդդեմ ցարիզմի: Ապա նա պատմեց իրենց գյուղում՝ Ղորեչայում, կատարված դեպքերի մասին:

— Ղորեչան, իմերեթիայի մեծ գյուղերից մեկն է: Բնիկները բուն իմերելներ են: Գյուղի մեծ մասն իրար ազգակիցներ են: Օրջոնիկիձեի ազգականները այդտեղ մեծ թիվ են կազմում: Մեր գյուղը հայտնի է իր ռևոլյուցիոն անցյալով:

— Իսկ ճի՞շտ է, որ ձեր գյուղացիները թուրլ չեն տվել մենշևիկ ագիտատորներին գյուղ մտնել,— հարցրեց Բլրուլյանը:

— Այո՛, ճիշտ է, մեր գյուղացիները մենշևիկներին

ու լրտեսներին բանեցին ու իրենց արժանի պատիժը տվին,— պատասխանեց Վասոն և ապա ավելացրեց.

— Քարափները դիրքեր դարձրած մեր դյուղացիները ջարդում էին Ալիխանով-Ավարսկու պատժիչ զորախմբերին:

Զրույցով տարված նրանք չնկատեցին, թե ինչպես հասան Ղորեչա: Գյուղի վաղոցներում նրանց դիմավորեցին բարձրահասակ, թիկնեղ խմբերիները չերքեզներով և բեչմեթներով: Կամոյին հետացմունք պատճառեցին ծերերը, որ կայտառ ու կենսունակ էին երիտասարդների պես և երիտասարդները՝ խոհուն ու բանիմաց ծերունիների պես: Տեսնելով իրենց համագյուղացուն հյուրերի հետ, դյուղացիները ջերմ համակրանքով ողջունեցին նրանց:

Անցնելով դյուղի ծուռ ու մուռ փողոցներով, նրանք կանգ առան մի դեղեցիկ ու ծառաշատ բակի առջև: Հյուրերին ուրախ-ուրախ դիմավորեց Վասոյի հայրը, որին հայտնի էր արդեն նրանց այցելության նպատակը: Ջիերը տեղավորելուց հետո, Վասոն և Բլքուլյանը գնացին ժողովի համար տեղ որոնելու, իսկ ծերունին Կամոյին տարավ մի մեծ լուսավոր սենյակ՝ զարդարված ընտիր գորգերով: Նստելով վարպետի գորգերով ծածկված թախտին, Կամոն սկսեց զրուցել ծերունու հետ: Ծերունին փառահեղ արտաքինով մի մարդ էր, դեղեցկության կատարյալ մարմնացում: Նրա ոսկեհատ և փարթամ մորուքը, բարի դիմագծերը, խելոք և իմաստուն աչքերը, լայն ու խոհուն ճակատը տալիս էին նրան շատ ազնվական տեսք: Զրույցի ընթացքում Կամոն հետացավ նրա խորհուրդ, կշռադատող մտքով: Ծերունին լավ ծանոթ էր Օրջոնիկիձեի կյանքին ու գործունեության:

— Գիտե՞ք, որդի՛ս, որ Սերգոն ձերբակալված է,— սրտի վշտով դիմեց ծերունին Կամոյին:

— Գիտեմ, հայրի՛կ, Թուզաուսիից Գագրի ընթացքում տեղափոխելիս ձերբակալվել է ու հիմա նստած է Սուխումի բանտում:

— Բայց նա այն տեսակ ասլանի ճուտ չէ, որ կժանդախի իր գլուխը: Ա՛յ, կտեսնեք թե ինչ դուրս կգա այդ բանից,— վստահ ասաց Ծերունին:

Ծերունու այս բարյացակամ վերաբերմունքը գեղի իրենց գործը և նպատակը, կամոյի մեջ միաք առաջացրեց խոսք բաց անել աղնվականի անցագիր ձեռք բերելու մասին:

— Հայրի՛կ, մի գործում պիտի օգնեք ինձ:

— Ի՞նչ գործ է, որդի՛ս:

— Ինձ աղնվականի մի անցագիր է պետք:

Ծերունին թաղ հանքերի տակից խորացնին նայից կամոյին.

— Իսկ ի՞նչ նպատակի համար է պետք:

— Հարկավոր է նույն գործի համար, որին իր կյանքն է նվիրել Սերգոն:

Ծերունին լուռ, գլուխը կրծքին հակած մտածում էր, իսկ Կամոն սպասում էր պատասխանի: Մի պահ անց Ծերունին ասաց.

— Լա՛վ, կմտածեմ...

Այդ ժամանակ ներս եկավ Վասոյի մայրը, կոկ հագնված, աչխուժ ու կյանքով լի մի կին: Նա արդեն պատրաստություն էր տեսել նորեկներին արժանավայել հյուրասիրելու և այժմ եկել էր հրավիրելու նրանց ճաշի: Ներս մտան նաև Վասոն ու Բլբուլյանը:

— Ամեն ինչ պատրաստ է, տեղը կա, ժողովուրդը մեզ է սպասում, ճաշենք ու գնանք,— խոսեց Վասոն:

Սեղան պատրաստեցին հենց դետնի վրա, աթոռներն փոխարեն հյուրերի տակ դրվեցին թավիշե մութաքաներ: Սեղանի, կամ ինչպես այստեղ են ասում «սուֆրի» վրա արևելյան առատություն էր տիրում: Մաճառով լի վաբշերը, տապակած հնդկահավ, խաչապուրի, սուրգունի, կարմրացրած խոճկոր, թթուներ ու առատ կանաչի: Ընթրիքն անցավ բավականին աչխուժ, պատմում էին գյուղի վերջին անց ու դարձից, Օրջոնիկիձեի գործունեությունից, պատմում էին գյուղացիներից պատիժ կրած մենշևիկ ագիտատորների և լրտեսների

մասին: Վասոյի հայրը իր հերթին չատ մեծ աշխատություն էր ցույց տալիս ղրույցի ընթացքում:

Ընթրելուց հետո, երբ զնացին այն տունը, ուր հավաքվել էր ժողովուրդը: Նրանց երևալուն պես բոլորը ոտքի կանգնեցին ու սկսեցին ծափահարել: Հավաքույթը բաց արեց Վասոն և խոսք տվեց Բլրուլյանին:

— Սիրելի՛ Ղորեչցիներ, դուք հավաքվել եք այսօր հանդիպելու քաղաքից եկած ձեր ընկերների հետ, լսելու նրանց խոսքը: Ծանր ու դժվարին օրեր է ապրում մեր երկիրը: Նրա դեմքին իջել է ռեակցիայի ահավոր բռունցքը... բանտը, աքսորն ու կախաղանը չլռում են մեր ուժերը: Մենք հյուծված ենք ու ծվատված, բայց ոչ թե հուսալքված: Մենք վշտացած ենք, բայց ոչ վհատված: Կա մի հզոր առաջնորդ, որը մեր նավը դեպի լույս ափերն է մղում: Հավատացե՛ք, ազնիվ զորեչցիներ, որ կգա մի նոր վերելարար ալիք...

Իր այս խոսքերից հետո բանաստեղծ Բլրուլյանը կարդաց վրացերեն թարգմանված մի քանի բանաստեղծություններ, որոնց մեջ նա անթաքույց պահ էր հյուսում մեռած, բայց չկորած նահատակների վերմնների: Վասոյի հայրը առաջինը լինքը ծափահարեց բանաստեղծին: Ժողովուրդը բուռն ծափերի որոտով ծածկեց բանաստեղծի վերջին բառերը:

Կամոն ժողովրդի մեջ նստած անհուն բերկրանք էր զգում տեսնելով, թե որքան անկեղծ ու ջերմ է ժողովրդի սերը դեպի ռևոլուցիոն գործիչները:

— Ահա՝ թե ի՛նչ ասել է ժողովրդի բանաստեղծ, խորհեց ինքն իրեն Կամոն:

Ուշ էր արդեն, բայց ժողովուրդը չէր ցրվում: Շատերն ուզում էին, որ դեռ չարունակվի ղրույցը, բայց այդ պահին Վերին Ղորեչայից մարդ եկավ և հայտնեց, որ իրենց գյուղն էլ է սպասում բոլշևիկ ագիտատորներին:

— Զգնաշ իհարկե չենք կարող, այնպես չէ՞,— հարցրեց Բլրուլյանը Կամոյին:

— Իհարկե, անցնենք Վերին Ղորեչան էլ,— ասաց Կամոն:

Դուրս գալով հավաքատեղից՝ նրանք ճանապարհ ընկան դեպի Վերին Ղորիչա: Գյուղացիները ուղեկցում էին նրանց վառված ջահերով: Երբ գյուղի ծայրն հասան՝ Բլբուլյանը սկսեց մեղմ ձայնով երգել «Սուլիկոն»: Թնդաց և ողջ ժողովրդի ձայնը: Երգում էին ծեր ու մանուկ: Ջահերը լուսավառել էին աշնանային երեկոն: Լուսավառված էին նաև մարդկանց հոգիները: Բարձր տրամադրությամբ համակված էին բոլորը: Միայն կամոն էր, որ փոքր ինչ մռայլ էր:

— Մի՞թե ծերունին չի կարողանա օգնել ինձ...

Այս մտածմունքի մեջ էր կամոն, երբ ծերունին, մյուսներից աննկատելի ավել նրան խոստացած անցագիրը:

— Ա՛ռ:

— Սա ի՞նչ բան է, հայրի՛կ,— հարցրեց կամոն:

— Իմ անցագիրն է, որդիս, պահիր և գործադրիր այն նպատակի համար, որին ծառայում է Սերգոն և բոլորդ,— ասաց ծերունին և սկսեց զրկելով կամոյին, համբուրեց նրան:

Հասնելով Վերին Ղորիչա նրանք այնտեղ էլ գտան նույն ջերմ ընդունելությունը, նույն ուշադրությունը և սրտաբաց հյուրասիրությունը: Իրենց զբաղմունքը հանդիպումը վերջացնելուց հետո՝ նրանք շտապեցին Թիֆլիս, թեև գյուղացիները չէին ուզում նրանց այդքան շուտ բաց թողնել:

Վերադառնալով Թիֆլիս, կամոյին շատ պետք եկավ ծերունու ամած անցագիրը: Հենց այս օրերին էր, որ կամոն կազմակերպեց Երևանյան հրապարակի դեպքը, որն անջնջելի տպավորվել է Թիֆլիսցիների հիշողության մեջ:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԴԵՊՔԸ

Կովկասն ապրում էր պայքարի լարված ու եռուն օրեր: Պատրաստվում էր ռևոլյուցիայի մի նոր ալիք: Հարկավոր էր ձեռք բերել զենք ու զինամթերք, հար-

կավոր էր դրամ՝ տպագրական դործը չարունակելու համար:

— Ի՞նչ անել, մտածում էր Կամոն, առայժմ քաշվարաբվել մեյն արածո՞վ, հրաժարվել դալիքի մասին մտածելո՞ւց, ձե՞ռք քաշել ամեն ինչից:

Ո՛չ: Կամոն թույլ չէր տա իրեն այդպես մտածել: Պետք էր ինչ դնով էլ լինի՝ մի կերպ ստեղծել, այդ էր պահանջում դրությունը: Այդ հարցով մտահոդված Կամոն դիմեց Ծանոթ որսորդների և ձեռք բերեց որոշ քանակությամբ վառոդ և այլ անհրաժեշտ պարագաներ՝ ձեռքի ռումբեր պատրաստելու համար: Նա դիշեր-ցերեկ քուն ու դադար կորցրած տանջվում էր ռումբեր պատրաստելու վրա: Մի օր էլ, ինքն էլ չիմացավ, թե ինչպես, ռումբերից մեկի հրապատիճը պայթեց, վիրավորելով նրա աջ ձեռքն ու աջ աչքը: Բարեբախտաբար ռումբը չպայթեց, ապա թե ոչ անխուսափելի կլինեին մեծ ավերվածություններ: Կամոն մեծ դդուշությամբ դեպքը թաղցրեց ընկերներից: Մի քանի օր նա դուրս չեկավ տանից: Մորաքույր Լիզան թժիշկ բերեց և կարողացավ կարճ ժամանակում բուժել Կամոյին: Դեռևս վերքերը լրտրովին չբուժված Կամոն անցավ աշխատանքի: Շուտով նա տիրապետեց ռումբեր պատրաստելու արվեստին և ոչ միայն այլևս չէր վախենում պայթյունից, այլև կատակով կրկնում էր թե «գործը վարպետից կվախենա»:

Նույն այդ ժամանակներըը Կամոն փոսախ չինովնիկներից ստույդ տեղեկացել էր, որ շուտով երեք ուղղությամբ մեծ գումարներ են տեղափոխելու զանազան վայրեր: Առաջինը՝ Զուլֆայից դեպի Պարսկաստան՝ ամնաեղ դանվող ռուսական դորամասերի համար: Երկրորդը Թիֆլիսից դեպի Բաթում՝ ճակատուրին հանձերի համար: Երրորդը՝ Պետերբուրգից ստացված մի խոշոր գումար, որ դանվում էր Թիֆլիսի փոստում և պիտի փոխադրվեր բանկ: Ահա այդ վերջինի վրա կանգ առավ Կամոն: Նա նորից կորցրեց իր քունն ու հանդիստը: Նրան խորը ցավ էր պատճառում այն,

որ ժողովրդից թալանած միջոցները պաշտոնյաների պարարտացմանը, ժողովրդին արյունաքամ անող պետական մեքենան ավելի ուժեղացնելուն պիտի ծառայեին: Այնինչ ժողովրդի ազատութեան համար կենաց ու մահու կռիվ մղողները միջոցներ չունեն, զենք ու պինամթերք չունեն: Մյուս կողմից կամոյի ականջին միշտ հնչում էր Լենինի իմաստուն խոսքը այն մասին թե՝

— Պետք է ջախջախել պետական մեքենան, ոստիկանական մեքենան, բանակային մեքենան:

«Չէ որ մեր հակառակորդները ամեն ինչ ունեն, իսկ մենք՝ քիչ բան: Նրանք ամենաանխիղճ կերպով տեռորի են ենթարկում, սպանում ու հոշոտում մեր մարդկանց: Միթե՞ մոռանալ կլինի Լազո Կեցխովելու գնդակահարումը Մեսխեում, Ծուլուկիձեի տանջալի մահը Թաքախից և մյուս դյուցազունների գնդակահարվելն ու աքսորվելը»— խորհում էր կամոն:

Երկար մտատանջվելուց, անքուն գիշերներ լուսացնելուց հետո, կամոն վճռեց դիմել այդ քայլին՝ նպատակ ունենալով ժողովրդից հափշտակված միջոցները վերադարձնել ժողովրդին: Նա իր չուրջը հավաքեց մի խումբ փորձված, պայքարի մեջ ստուգված ընկերների և անցավ աշխատանքի: Նրա առաջին գործն այն եղավ, որ իր ընկերներին վարժեցրեց պայմանական նշաններով խոսելուն: Նրանցից մեկը պետք է կանդներ Պուչկինյան այգու առջևը և հենց որ փողը փոխադրող փոստը երևար, պետք է հաներ թաչկինակը ու հովահարեր գեմքը: Երկրորդը՝ մի ճարպիկ ու խիզախ աղջիկ, կանդնելու էր այգու դիմացի խանութի ցուցափեղկի առջև, բացված հովանոցը գլխին: Առաջին ընկերոջ ազդանշանը ստանալուց հետո՝ պետք է ծածկեր հովանոցը: Երրորդը՝ պետք է անց ու դարձ աներ Երևանյան հրապարակում՝ լրագիրը ձեռքին և նախորդ ընկերների ազդանշանից հետո՝ պետք է ծալեր լրագիրն ու գներ գրպանը: Տղաներից չորրորդը հատուկ կառքով մոտենալու էր կամոյին: Այսքանը

կատարելու էին ընկերները, իսկ փող գրավելն ու տեղավորելը Կամոն վերցրեց իր վրա:

Ուշ գիշեր էր արդեն, երբ Կամոն ընկերներին ճանապարհ դրեց ու դնաց մի անգամ ևս ստուգելու այն ճանապարհները, որտեղով պետք է անցներ փոստը: Տանից դուրս եկավ նա վրացական իշխանի տարազով և անցագրով՝ ձեռքին մի թեթև ճամպրուկ: Ստուգեց բոլոր անկյունները, ուր պետք է կանգնեին ընկերները: Նա արտաքուստ հանդիստ էր ու խաղաղ, իսկ ներքուստ նույն վիճակն էր ապրում, ինչ ծովը փոթորկից առաջ: Մի ներքին ձայն անդադար չէնջում էր նրա ականջին. «Դու ազնիվ քայլ ես կատարում և եթե ընկնես, գիտցի՛ր, որ ընկնում ես հանուն մեծ նպատակի...»:

Ամեն ինչ ստուգելուց հետո, երբ Կամոն զանգազ քայլերով և մտախոհ տուն էր վերադառնում՝ նկատեց, որ մեկը լրտեսում է իրեն: Տեսնենք ո՞վ ում կհաղթի, մտածեց Կամոն և առանց ցույց տալու, թե նկատել է լրտեսին, փոխեց փողոցը: Լրտեսը նույնպես փոխեց փողոցը և չարունակեց հետևել:

— Պիտի մտանի անպիտանը և խափանի վաղվա անելիքս— մտածեց նա և արագ մտաենալով տրամվային նեղս թռավ նրա ընթացքի ժամանակ: Բայց լրտեսն էլ պակաս փորձվածներիցը չէր: Նա էլ թռավ նրա հետևից: Կամոն խելոք ցած թռավ տրամվայից ու մտավ դիմացի բակերից մեկը, պահվեց դռան հետևը: Լրտեսը հետևեց նրան, սակայն չնկատելով նրան դռան հետևում վազեց դեպի բակի խորքը: Այդ ժամանակ Կամոն դուրս եկավ դռան հետևից, փակեց բակի դուռը, մտավ հարևան բակը, ճամպրուկի միջից հանեց կինոտյի հագուստները, փոխեց իր հագի իշխանի հագուստը, հագավ կինոտյի տարազը և այնպես կերպարանափոխված, հարթածի քայլերով դուրս եկավ փողոց ու տեսնելով, որ լրտեսը չարչարվում է փակ դռան հետևում ու չի կարողանում դուրը բանալ, մոտեցավ նրան.

— Տո՛, անիծած, կատվի կծած, սատանի չաքուչ, ի՞նչ ես Օրթաճալի չարխի պես ճռճռում: Ամո՛ օձ չէ՞ մտել ականջդ...

Լրտեսը ներսից խնդրեց նրան դուռը բանալ:

— Ա՛յ դվնաբաց բարով տամ քիզ, աղա՛ պառուն,— ասաց Կամոն ու դուռը բացեց:

Դուրս գալով՝ լրտեսն սկսեց չուրջը դիտել կորցրած հետքը գտնելու... իսկ Կամոն ձեռքը նրա ուսին դնելով սկսեց երգել.

«Տիպլիպիտո, նաղարա,
Վիկաց, պարուն, հաղ արա,
Կուզիս, ես քիզ աղ կուտամ,
Օրթաճալա բաղ կուտամ,
Կրծանիսը դաղ կուտամ,
Հավլաբարը շաղ կուտամ...»:

Այն ինչ լրտեսը աչքերը չորս արած չուրջն էր դիտում կորցրածը գտնելու՝ Կամոն անվուլթ չարունակում էր երգել.

«Դու ման կուգաս Քոի ափը,
Քու բաժինն է մսի քաիբը,
Թե չիմանաս դու քո չափը,
Համառես կոնես մուշտուա թաիբը,
Դու փետրած հավի նման իս,
Կոտրված դավի նման իս,
Էլ ի՞նչ ասիմ քի պես շանը,
Ծակծկված նավի նման իս...»

Տեսնելով, որ հարբած կինոտոյի հետ գլուխ դնել չի կարող՝ լրտեսը վիզն ազատեց նրա թևից ու դժգոհած իր կրած անհաջողությունից, թողեց հեռացավ: Կամոյի մտքովն անցավ՝ գնալ նրա հետևից, քաշ տալ մի մութ անկյուն և...

— Է՛հ, օձի սևն էլ անիծած, սիպտակն էլ, մտածեց նա և իր հետքը բոլորովին կորցնելու համար մի քանի վողոց ևս վոխելով՝ տունն վերադարձավ:

Ամբողջ գիշերն աչք կպցնել և հանգստանալ չկարողացավ: Կրակին բռնած խորովածի չամփուրի պես

Կամոն չուռ ու մուռ էր գալիս վերմակի տակ: Մի կերպ լուսացրեց ու առավոտը վաղ՝ զինված, սպայի հագուստով, ծպտված չտապեց Երևանյան հրապարակ: Ընկերներն արդեն իրենց տեղերումն էին:

Հունիսյան ջերմ ու դուրեկան առավոտ էր: Ամեն օրվա նման Երևանյան հրապարակը լեցուն էր բազմությամբ: «Պետք է ժողովրդին հեռացնել հրապարակից՝ անտեղի զոհեր չտալու և գործը հաջող անցկացնելու համար»— մտածեց Կամոն ու մոտենալով հրապարակի հերթապահ ոստիկանին՝ ասաց.

— Քաղաքագլխի հատուկ հրամանով պետք է հրապարակը կարգի բերել:

Սպայի հագուստը, խիստ և ազդեցիկ տոնը սաստիկ ազդեցին ոստիկանին ենթարկվելու Կամոյին: Մի երկու րոպե չանցած՝ Կամոն հրապարակը ազատեց մարդկանցից ու սկսեց սպասել պայմանավորված ազդանշանին: Այս բոլորից հետո նա նկատեց, որ հրապարակի անկյուններից մեկում, դեպի Սոլոլակ տանող ճանապարհի վրա մի ծեր գյուղացի խնճոր էր ծախում: Կամոն արագ մոտեցավ գյուղացուն.

— Բեռի՛, ազատիր վողոցը:

Ծերունին համառում էր: Ըստ երևույթին հաջող առևտուրը սիրում էր նրան մնալ այդտեղ: Կամոն կրկնեց իր խնդիրը, սակայն ծերունին կարծելով, թե այդ պահանջը սպայի սովորական քմահաճույքից է բխում, տեղից չշարժվեց:

— Սատանան քեզ հետ,— ասաց Կամոն ինքն իրեն ու հեռացավ: Սակայն նրա սիրտը ցավում էր ծերուկ նու համար, որը կարող էր զոհ գնալ՝ այդտեղ մնալով:

Կամոն նորից մոտեցավ ծերունուն, համոզեց հեռանալ: Եվ երբ այս անգամ էլ ծերուկը հրաժարվեց հեռանալ, Կամոն վերցրեց նրա պարկն ու կշեռքը, տարավ դրեց հրապարակից բոլորովին հեռու ապահով մի տեղ: Ծերունին քրթմնջալով վեր կացավ տեղից ու գնաց, կանգնեց խնճորով լի պարկի մոտ և ժպտուն

թյամբ նայեց այդ տարօրինակ զինվորականին: Վերադառնալով իր տեղը՝ Կամոն սպասում էր: Սպասում էր ու թվում էր նրան, թե գետինն այրվում է իր տակ, բայց նա իրեն հանգիստ ու զուսպ էր պահում: Նա գիտեր, որ ամենավտանգավորն անզգուշությունն իսկ ճակատագրական կլինի թե ընկերների, թե գործի համար: Կամոն լարված սպասում էր, երբ մեկ էլ նկատեց, որ ընկերները ավելի ազդանշանը. նշանակում է դրամ փոխադրող կառքերը դուրս են եկել փոստից: Մի ներքին տաղնապ համակեց Կամոյին: Նա չտապ կանչեց իրեն սպասող կառքը, թռավ մեջը, ռամբը պատրաստ պահած դրսանում: Կառքը կանգնեցնել ավեց հրապարակի մի անկյունում: Հեռվից սրընթաց գալիս էին փոստատար երկու կառք մի խումբ կազակների ուղեկցությամբ: Նրանց ընթացքից թանձր փոշի էր բարձրանում: Այն պահին, երբ կառքերը սկսած է թեքվելին դեպի Սոլոլակ, Կամոն մեկը մյուսի հետևից երկու ռամբ նետեց փողը բերող առաջին կառքի անիվների տակ: Թանձր ծխի ամպը պատեց կառքերն ու մարդկանց: Պայթյունից խրտնած ձիերը ծառս ելան ու ջարդված կառքը վախցրին մի կողմ: Ադմուխով թափվեցին մոտակա անների լուսամուտների ապակինները: Հրապարակը տակն ու վրա եղավ: Այնինչ մյուս կառքը, որի վրա գտնվում էին փողի պարկերը, դեռևս անվնաս թռչում էր դեպի Սոլղատակի չուխան: Կամոյի ընկերներն անընդհատ կրակում էին օդում, հանկարծակիի եկած և իրենց կորցրած ոսոխականներին ավելի չփոթեցնելու, խուճապն ավելի ուժեղացնելու համար: Հանկարծ Կամոյի ընկերներից մեկը վրա հասավ փողը տանող կառքին ու ռամբը նետեց ուղիղ ձիերի ոտքերի տակ, ինքն էլ թափվելով սարահատակին: Փոչու ամպը ծածկեց նրան Կամոյի աչքերից: Ձիերը պոկվեցին կառքից ու խելագար վազքով առաջ նետվեցին: Կամոն ընկերներից մեկի հետ ատրճանակները ձեռքներին վազեցին դեպի դանձապահ Կյուրդյումովը:

— Ձգարժվե՛ք, ապա թե ոչ...— գոռաց Կամոն՝

չտապ կերպով փողի պարկերն իր կառքը տեղափոխելով։

Անպատելի հարձակումից, կրակոցներից, ծխից ու որոտից գլուխները կորցրած դանձապահ Կուրդյումովն ու կազակները չկարողացան որևէ դիմադրություն ցույց տալ։ Վրա հասան նաև կամոյի մյուս ընկերները։ Փողի պարկերը մի ակնթարթում կառքում տեղավորելուց հետո՝ կամոն ընկերների հետ կառք նստեց ու հրամայեց կառապանին, որը նույնպես իր ընկերներից էր, քշել կառքը։ Հասնելով Վիննիչ վերջը կոչված դառիվերը, ձիերը այլևս չկարողացան առաջ գնալ։ Կառապանը չտապում էր բոպե առաջ տեղ հասնել։ Ամեն մի հապաղում կարող էր ճակատագրական լինել, սակայն վերելքը շատ էր դժվար ու ձիերը ոչ մի կերպ չէին կարողանում առաջ շարժվել։ Նա մեկ վեր էր թռչում տեղից, մարակահարում, մեկ նստում ու թափահարում սանձերը։ Ինչ ուզում ես արա, ձիերը չեն կարողանում բարձրանալ։ Տեսնելով կառապանի անօգնականն ու հուսալքված վիճակը՝ կամոն թեքվեց դեպի նա և հանդիստ հարցրեց.

— Մի կորցներ քեզ, թեքվիր պեսկովսկայա փողոցով։

Կառապանը հանգստացած կամոյի հանգարտ տոնից, ձիերի դուխը չուռ տվեց ու քշեց նրա ցույց տված ուղղությամբ։ Սակայն դեռևս Ցիցիանովսկայա վերելքին չհասած, մի խումբ կազակներ, որոնք չտապում էին Երևանյան հրապարակ, կանգնեցին կառքի առջև։ Բոլորը աստիճ անհանգստացան։ Սառը քրտինքը պատեց կառապանի ճակատը։ Այն ինչ ապշի համազդեստ հագած կամոն առանց իրեն կորցնելու, կանգնեց կառքում և դուրս կազակների վրա.

— Թեքվել դեպի աջ, առաջ, մարշ...

Կազակները թեքվեցին կամոյի ցույց տված ուղղությամբ, իսկ կամոյի կառքը սլացավ առաջ։ Այս ամբողջ իրարանցման ժամանակ լանջոր վաճառող Ջեբունին մի անկյուն քաշված հետևում էր այն տարօրի-

նակ տալիս։ Ու նկատելով՝ թե ինչպես նա այժմ ճարպկորեն հափշտակեց փողի պարկերն ու կառք նստելով, ընկերների հետ անհետացավ, հիացած թափահարեց գլուխը և բացականչեց.

— Ա՛յ տաղօլ...

Վերջապես Կամոն կառքը կանգնեցրեց քրոջ տան առջև։ Փողի պարկերը ներս առան, կառքը ճանապարհ դրին և պահակներ նշանակեցին դռան առջև։ Երբ փողի կապոցները տեղավորեցին՝ Կամոն նոր միայն նկատեց, որ ընկերներից մեկը չկա։

— Իսկ ո՞ւր է նա, ինչո՞ւ է ուշանում,— հարցրեց Կամոն։

— Ես տեսա, թե ինչպես ինքն իր նետած ռումբի թափից տապալվեց գետին ու կորավ փոչու մեջ,— տասց տղաներից մեկը։

Կամոն ցայրացած ճչաց.

— Ինչո՞ւ վրա չհասար բարձրացնելու...

Սաստիկ անհանգիստ ու վրդոված՝ Կամոն անդ ու դարձ էր անում սենյակում։ Անհանգիստ էին նաև մյուսները, որոնցից ամեն մեկը ֆատածում էր՝ գնալ օրոնել ընկերոջը։ Ջավահիրը հուզված դուրս ու ներս էր անում։ Նույնիսկ քույրը չէր ուզում մտածել վատ ծպտուն հանել՝ եղբոր բարկությունն էլ ավելի չբորբոքելու համար։ Տեսնելով, որ ընկերն ուշանում է, Կամոն վերցրեց գլխարկը և ուզում էր դուրս գնալ ընկերոջը գտնելու, երբ դուռը բացվեց և ներս եկավ ընկերը։ Կամոն վրա հասավ ու գիրկն առնելով նրան համբուրեց.

— Մե՛ղ, ախպեր ջան, մահն էլ չի հաղթի։ Ինչքան էլ մեզ մեջքի վրա նետեն, էլի մեր մեջքը գետին չի տեսնի,— ուրախ բացականչեց Կամոն։

Քիչ առաջ մթագնած Կամոյի հոգու երկինքը մեկին զվարթացավ։ Զգացող կենճիռները նրա լայն ճակատից։ Ջայրալից աչքերը սկսեցին փայլել սիրով ու ջերմությամբ։ Ուրախությունից նա մեկ այս կողմն էր վազում, մեկ այն կողմ, կատակում էր ընկերների

հետ, ոգևորված խոսում գործի հաջող ավարտի մասին:

Մի փոքր հանգստանալուց հետո բոց արին վագոնները: Հաշվեցին դրամը: Երկուհարյուր հիսուն հազար ռուբլի էր: Շատ գործ կարելի էր տեսնել դրանով: Դժվարությունն այն էր սակայն, որ փողի մեծ մասը հինգ հարյուրանոցներ էին, որ անհնար կլիներ Թիֆլիսում մանրել:

— Ի՞նչ անել,— հարցրին ընկերները:

— Այդ թե ինչ,— ասաց Կամոն,— փողի պարկերը պիտի կարասել և կատվերը չաղ տալ քաղաքի ծայրամասերում՝ ոստիկանությանն ավելի չվոթեցնելու և մեր հետքերը կորցնելու համար:

— Իսկ դրա՞մը,— նորից հարցրին ընկերները:

— Դրամը պիտի տեղափոխել Ֆինլանդիա և հանձնել մեր կենտրոնին,— պատասխանեց Կամոն:

— Իսկ Ֆինլանդիա գնալու համար միակ թեկնածուն դու ես, ասացին ընկերները:

— Այո՛, բայց ինչպե՞ս և ի՞նչ ձևով փողր Ֆինլանդիա տեղափոխել, այդ է խնդիրը,— խոսեց Ջավահիրը:

Մի պահ բոլորը լռեցին և մտածմունքի մեջ ընկան: Հանկարծ Կամոն դյուտ արածի պես, ձեռքը ճակատին խփելով, դիմեց Ջավահիրին.

— Հապա, քուրդս, բեր ինձ քո ղլխարկները պահելու հատարակ արկղները:


Քուրդն իսկույն դատարկեց արկղները և տվեց Կամոյին: Կամոն դասավորեց փողերը արկղների մեջ, նստեն օրն ևեթ դնացք նստեց և ուղևորվեց Պետերբուրգ: Գնացքի մեջ սովորականի նման ստուգում կատարվեց, սակայն Կամոյի հատարակ արկղների վրա նայել անգամ չուղեցին, ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ Կամոյի հնարամտությունը փայլուն արդյունք տվեց: Հաջողությամբ հասնելով Պետերբուրգ նա դասավ իր ընկերներից մեկին, որը փոքրիկ երեխա ուներ: Կամոն մանրկանց համոզելու, իր գաղափարներով վա-

բակելու բնածին արտակարգ ընդունակությամբ էր օժտված: Ամենահամառ մարդուն անգամ նա կկարողանար իր կողմը գրավել: Այս մարդուն էլ իր հետ Ֆինլանդիա տանելու համար Կամոն մեծ ջանք չգործադրեց: Ընկերն իսկույն համաձայնեց գնալ նրա հետ ու չատ զարմացավ, երբ լսեց, որ իր փոքրիկ երեխային էլ պետք է վերցնի իր հետ, այն էլ օրորոցով: Բայց երբ Կամոն բացատրեց նրան, որ երեխայի օրորոցը պետք է որոշ նպատակի համար, նա համաձայնեց օրորոցն էլ վերցնել: Կամոն գրամը տեղավորեց երեխայի օրորոցի մեջ, անկողինն էլ վրան փռեց, երեխային գրեց անկողնու մեջ՝ և ընկերոջ հետ գնացք նստելով՝ մեկնեցին Ֆինլանդիա: Տեղ հասնելուն պես Կամոն ամբողջ գրամը հանձնեց, իսկ ինքը մի քանի օր Ֆինլանդիայում մնալուց հետո ուղևորվեց Բեռլին՝ վառոդ, ռումբեր և այլ զինամթերք գնելու նպատակով:

ԿԱՄՈՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Կամոն Բեռլին մտավ իբրև ապահովագրական ընկերության ներկայացուցիչ՝ Դիմիտրի Միրսկի կեղծ ազգանունով: Գերմանական ոստիկանությունն արդեն տեղեկացել էր, որ Բեռլին է եկել ծպտված մի հայ բոլշևիկ՝ Միրսկի ազգանունով և ոտքի էր հանել ոչ իր կողմը: Փնտռում էին ամենուրեք և չէին կարողանում գտնել, մինչդեռ նա եվրոպական չլսված գլխին չրջում էր Բեռլինի փողոցներում՝ հիացած դիտելով գերմական ոճով և զարդանկարներով չինված շենքերը:

Մի օր Բեռլինում, ռևոլուցիոն ընկերների ժողովին մասնակցելուց հետո, Կամոն փողոց դուրս եկավ: Նա չէր կարող նկատել, թե ինչպես ժողովի մասնակցողներից մեկը, ծխամիրսկի ազգանունով, սեղանի տակ մի թուղթ նետեց, որի վրա գրված էր. «Բեռլին, Էլզաս չարաուսե 11, տուն 14, Միրսկի»: Այսքանն էլ քիչ չէր գերմանական լրտեսների համար: Կամոյի բնակարանը չրջապատված էր ոստիկաններով:



Մոտենալով տանը և տեսնելով ոստիկաններին, Կամոն մի ներքին երկյուղ զգաց, բայց առանց իրեն կորցնելու դիմեց մոտեցող ոստիկանին.

— Ի՞նչ եք կամենում:

— Դուք եք Միրսկին,— ռուսերեն լեզվով դիմեց ոստիկանը նրան:

— Ես եմ:

— Անհրաժեշտ է խուզարկել ձեր բնակարանը, թույլ տվեք ներս մտնել:

Ոչինչ անել հնարավոր չէր, պետք էր ենթարկվել: Երեք ոստիկան ներս մտան, մյուսները մնացին հսկելու դրսի մուտքը:

— Թույլ տվեք նայել ձեր անցագիրը,— խոսեց ավագ ոստիկանը:

Կամոն տվեց իր անցագիրը: Ոստիկանները խուզարկության ընթացքում գտան երկտականի մի ճամպրուկ՝ պայթուցիկ նյութերով, նաև մեծ քանակով վառոդ և պայթեցման զանազան պարագաներ: Ավագ ոստիկանը վերջացնելով անցագրի զննումը, Կամոյին տվեց ստորագրելու մի թուղթ, որի վրա գրանցված էին նրա մոտ գտնված իրերը: Կամոն ստորագրեց: Ավագ ոստիկանը ուշադիր զննեց ստորագրությունը և համեմատեց անցագրի մեջ եղած ստորագրության հետ: Ըստ երևույթին քիչ նմանություն գտնելով դրանց մեջ, թուղթը հանձնեց ոստիկաններից մեկին՝ ասելով.

— Իրերի հետ տանել նաև Միրսկուն...

Կամոյին տարան կենտրոնական ոստիկանատուն: Այստեղ հարցաքննության մեջտեղին նա իրեն պահում էր անտարբեր դեպի հարցաքննությունը, դեմքի մի-մի մի քիչ էլ զարմացած արտահայտությամբ:

— Ինչո՞վ բացատրել, որ ըստ անցագրի նշանակված տարեթվի դուք 35 տարեկան եք, այնինչ հազիվ 20 տարեկան լինեք,— հարցրեց ոստիկանապետը:

— Պարոն ոստիկանապետ, այդ պիտի բացատրել մեր կովկասյան հատուկ կլիմայով և իմ կովկասյան ծագմամբ,— համոզիչ տոնով ասաց Կամոն:

— Շատ բարի, իսկ ի՞նչ կասէք ձեզ մոտ գտնված խորհրդաւոր երկտակ ճամպրուկի և պայթուցիկ նյութերի մասին:

— Դրանք իմը չեն, պարոն ոստիկանապետ: Դրանք Վիեննայում ինձ պահ տվեց Պետրով ազգանունով մեկը, և ես սպասում եմ, որ նա դա վերցնի իրերը: Միծապես օգնած կլինեք ինձ, պարոն ոստիկանապետ, եթե գտնել տաք նրան և իրերը հանձնեք, դրանով դուք ինձ ազատած կլինեք այդ իրերը պահելուց:

Ոստիկանապետը զայրանում էր: Ներքին մի ձայն թելադրում էր նրան, որ դա հենց նույն ծպտված հայ բոլշևիկն է, որ գաղտնի անցել է Բեռլին, մինչդեռ նա չանում է կորցնել հետքերը:

— Ինչո՞ւ այս ճամպրուկը երկտականի է, և ի՞նչ նպատակի համար են գտնված այս պայթուցիկ նյութերը,—հարցրեց ոստիկանապետը, զսպելով իր զայրույթը:

— Դա արդեն ինձ միանգամայն անհայտ է, պարոն ոստիկանապետ: Ես Բեռլին եմ եկել աչքս բուժելու համար, ավելին ոչինչ ասել չեմ կարող,— հանգիստ պատասխանեց Կամոն:

— Ո՞ւմ մոտ եք բուժվում:

— Պրոֆեսոր Գոտչվիլդի:

— Դեղեցիկ, ասացեք խնդրեմ, ինչի՞ց է վնասվել ձեր աչքը:

— Պատահաբար, մի խառնուրդում սպիրտի ամանը պայթեց և վիրավորեց աչքս,— պատասխանեց Կամոն, ուշադիր հետևելով, թե ինչ չափով են իր պատասխանները համապատասխանում հարցաքննողին:

— Թեև ձեր պատասխանները հիմնավոր են և տրամաբանորեն լավ կառուցված, այնուամենայնիվ մենք բանտարկում ենք ձեզ,— ավարտեց իր հարցաքննությունը ոստիկանապետը:

— Պատճա՞ռը,— անկեղծ զայրույթով հարցրեց Կամոն:

Ոստիկանապետը դրսեղանի դարակից հանեց մի արձանագրություն և մեկնեց Կամոյին։ Դա ակնարկով պրոֆեսոր Դոռչիլլեի վկայականն էր։

— Այս արձանագրությունը ցույց է տալիս, որ ձեր աչքը վնասվել է ոչ թե սպիրտի ամանի պայթյունից, այլ ռումբի,— ընդգծեց ոստիկանապետը, որովհետև ձեր աչքում մնացել են մետաղի մասնիկներ։ Ձեր աչքը լուրջ օպերացիայի կարիք ունի։ Այս մեկ պատճառ։ Անցագրում վավերված է ձեր լուսանկարը։ Անցագիրը ստացել եք Թիֆլիսում, այնինչ լուսանկարը հանված է Բեռլինում և ենթադրվում է Միքսիի ազգանվանը՝ ձեր դիմագծերը կատարյալ հայկական են։ Այս երկրորդ պատճառ։ Վերջապես Ս. Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի գրասենյակի պաշտոնական հաղորդագրության համաձայն դուք հայ նշանավոր ռևոլյուցիոներ Կամոն եք, և ձեր իսկական ազգանունը Սիմոն Արշակի Տեր Պետրոսյան է, ծնվել եք Գորիում, 1882 թվին, մայիսի 15-ին...

Փաստերը այնքան էին զորավոր, որ Կամոն առարկել չկարողացավ, սակայն առանց կորցնելու արիությունը պատասխանեց.

— Դրանք հերյուրանքներ են։ Ես ոչ մի կապ չունեմ Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյանի հետ։

Կամոյին ձերբակալեցին։

Նրա ձերբակալման լուրը մեծ հուզմունք և ցավ պատճառեց Լենինին, որ այդ ժամանակ գտնվում էր արտասահմանում։ Իր մոտ հրավիրելով Կրասինին և Կարլ Լիբկնեխտին, Իլիչը երկար խորհրդակցում էր նրանց հետ՝ բանակից որևէ կերպ Կամոյին ազատելու մասին։ Գերմանական ոստիկանության ձեռքի տակ եղած վաստերն անհերքելի էին։

Ոստիկանության համար պարզ էր, որ Միքսիի ազգանուն կրող այդ անձնավորությունը ինքը՝ Կամոն է։

— Միթե՞ ոչ մի ելք չկա,— հարցրեց Իլիչը, հայացքը սևեռելով Կրասինին։

— Կա, Վլադիմիր Իլիչ,— պատասխանեց Կրասինը:

Իլիչը աչքերը կկոցելով ապատում էր պատասխանի:

— Միակ ելքը այն է, որ Կամոն հոգեկան հիվանդ ձևանա:

Կրասինի այդ առաջարկը խիստ հավանական թվաց Իլիչին: Նա գոհունակությամբ շոյեց իր ճակատը և հարցրեց.

— Իսկ այդ մասին ինչպե՞ս հայտնել Կամոյին:

— Իր դատապաշտպանի՝ Օսկար Կոնի միջոցով,— մեջ բերեց Կարլ Լիբկնեխտը: Կոնը ռուսերեն լեզվին տիրապետում է և կկարողանա հասկացնել Կամոյին ամեն ինչ:

Երբ իր դատապաշտպանի՝ Օսկար Կոնի միջոցով Կամոն իմացավ Կրասինի խորհուրդը՝ հոգեկան հիվանդ ձևանալու և ժամանակ շահելու մասին, իսկույն անցավ գործի: Կամաց կամաց սկսելով աննորմալ իր արարքները՝ նա քանի գնում ավելի ու ավելի կատաղի էր դառնում, ապտակում էր հսկիչներին, պատռատում էր հագուստները, ջարդուրում ճեռքն ընկածը: Սակայն բանակի վերակացուները անփորձ չէին և գիտեին նման բանտարկյալների հետ վարվելու եղանակը: Այդպիսիներին նրանք իսկույն իջեցնում էին նկուղային հարկը, ուր օդի չնչմասիճանը շատ ցածր էր լինում: Բավական էր նման փորձության մի քանի շաբաթ և ահա այդ «հիվանդները» բոլորովին առողջանում էին: Ենթադրելով, որ Կամոն էլ այդ տիպի ձևացողներիցն է, նրան համարյա թե մերկ իջեցրին ցուրտ նկուղը: Պայմանները շատ դաժան էին: Հատակը ցեմենտ էր, որն ավելի էր սառակացնում ցուրտը, քաղցը մյուս կողմից էր տանջում: Սակայն Կամոն որևէ էր դիմադրել ամեն գնով: Նախ նա դադար ցուրտը հաղթահարելու միջոցը: Շարունակ արագ շարժումներ էր անում, թռչկոտում նկուղի մի անկյունից մյուսը և մարմնամարզական այլ վարժություններ կատարում:

Այդպես նա անցկացրեց ինն օր: Բանակ հավիշները, հատուկ հանձնարարությամբ ամեն օր զբաղեցում էին նրա բոլոր ժամերը: Ինն օրից հետո Կամոյին տեղափոխեցին իր նախկին կամերան: Այստեղ նրան այցելության եկավ Օսկար Կոնը և հայտնեց, թե ինչպես Լենինը մտահոգված է Կամոյի վիճակով, թե ինչպես Կրասինը և Լիբկնեխտը ամեն ինչ անում են Կամոյին ռուսական ռազիկանության չհանձնելու համար: Լենինի և նրա դինակիցների ջերմ վերաբերմունքը Կամոյի մեջ առաջացրեց ավելի մեծ համբուրություն:

— Գերմանացիները իրենց գործը գիտեն մեկ, իսկ մեզ բոլշևիկներիս դեռ չգիտեն,— ոգևորված ասաց Կամոն:

— Պետք է չարունակել խելագար ճանապարհը, այս է միակ ելքը,— ասաց Օսկար Կոնը հրաժեշտ տալով նրան:

Ձերբակալությունից որոշ ժամանակ անց Իեռլինում լսեց Կամոյի գործը: Նա այնպես համոզվեն էր կատարում խելագարի իր դերը, որ դատական կոլեգիան ստիպված եղավ հետաձգել նրան Ռուսաստան տեղափոխելը, որոշելով տանել հոգեբուժական հիվանդանոց և ստուգման ենթարկել: Բժշկական ստուգման ամիսները նույնպես Կամոն անցկացրեց փորձելով հաղորդություն: Նկատելով, որ իր վարքագիծը դրսի են անցնում՝ Կամոն օրը մի տարօրինակ նորություն էր ավելացնում իր խելագարությունն ապացուցելու համար: Առաջին ամիսներին Կամոն բոլորովին անկոպեն չմտավ: Նա անընդհատ քայլում էր սենյակի մի անկյունից մյուսը, իսկ երբ հոգնում էր, երեսը չուռ էր տալիս դեպի պատը և կանգնում մի ոտքի վրա երկար ժամանակ: Երբ մի ոտքը հոգնում էր սկսում էր մյուսի վրա կանգնել: Այս կերպ մի քիչ հանդստանալուց հետո, սկսում էր գոռալ, երդել, պարել, ողղակիել: Մի օր էլ մորուքից մի քանի վուն մաղ

պահելով չարեց անկողնու վրա, սկսեց դասավորել այդ մազափնջերը և ծիծաղելով ասաց.

— Ուզարկելու եմ ընկերներիս նվեր...

Մի ուրիշ անգամ ամբողջ օրն անցկացրեց՝ խաղալով ջարդված ատամների հետ: Այդ ատամները նա պահում էր իր մոտ սկսած այն օրից, ինչ հրաժարվել էր ճաշ ուտելուց և բանկ ուժով կերակրելիս կոտրվել էին: Երբեմն էլ նա խաղում էր կերակրից դուրս եկած ոսկորների հետ, զվարճացնելով բանակ հսկիչներին: Այդ չջնջամ կամոյին տեղափոխեցին Բուխի հոգեբուժական հիվանդանոցը: Տեղափոխման պատճառներից մեկն էլ այն էր, որ կամոն կախվելու փորձ էր կատարել և ոսկորով կարել էր իր երակը: Բուխի հոգեբուժական հիվանդանոցի այն պալատը, ուր տեղափոխեցին կամոյին, կային հոգեկան ինը հիվանդներ, որոնք ամեն մի նորեկի հյուրասիրում էին սաստիկ ծեծով: Նույն հյուրասիրությանն արժանացավ նաև կամոն: Մի բան կամոյին սաստիկ զարմացնում էր: Այդ այն էր, որ կատապի հիվանդներին թողնում էին առանց հսկողության: Նրանք էլ անում էին ինչ որ խելքները փչում էր, խփում էին, ծեծում միմյանց, ջարդում պատահած ամեն ինչ: Այդտեղ անհնար էր երկար դիմանալ: Կամոն խնդրեց Օսկար Կոնին՝ տեղափոխել տալ իրեն ավելի հանգիստ կամերա: Կոնին հաջողվեց տեղափոխել տալ նրան Այլս-Մոաբիտ, ուր նրան մի անգամ էլ ենթարկեցին ստուգման և վերջնական եզրակացության ավին նրա խելագարության մասին:

Կամոյի խելագարությունը վերջնականապես ստուգելու համար Այլս-Մոաբիտ հոգեբուժական հիվանդանոցի բժշկական բաժինը հատուկ օր էր նշանակել էքսպերիմենտի փորձերն ամփոփելու համար: Այդ օրը երեք հսկիչներ կամոյին դուրս բերին կամերայից ու տարան բանակի բժշկական բաժինը: Երբ նա մտեցավ կաբինետի դռներին, ականջին ծանոթ մի ձայն հասավ. լարեց լսողությունը և ճանաչեց՝ Օսկար Կոնն

էր: Կարլ Լիբկնեխտը Օսկար Կոնին կամոյի դատապաշտպանը դարձնելով, ինքը զբոսից, թերթերի մկնոցով, աշխատում էր ազդել դեմոնական կառավարության վրա, կամոյին հոգեկան հիվանդ վկայակոչ ցարական ոստիկանության չհամձնել: Օսկար Կոնի ներկայության ավելի սրատարեց կամոյին և ջերմ ցանկություն առաջացրեց նրա մեջ՝ լսելու, թե Կոնը բժիշկների հետ ինչ է խոսում իր մասին: Նա վայր ընկավ, չոքչոք մոտեցավ կաբինետի դռներին, պառկեց և այլևս վեր չկացավ: Նրան ուղեկցող հսկիչները չուզեցին ոտքի կանգնեցնել. նրանք կանգնել և սպասում էին, ավելի ճիշտ՝ հանգստանում էին, մինչև կամոյի ներս տանելու հրաման տային: Եվ ահա այս դրությամբ կամոն լսեց հետևյալ խոսակցությունը: Օսկար Կոնն ասում էր.

— Պարոն Հոֆման, թույլ ավեք ծանոթանալու հիվանդի վերջին օրերի վարքագծի նկարագրության, ինչպես և մատնանշել ձեր էքսպերտիզայի եզրափակման նիստին:

— Ոլորես ի՞նչ,— հիստերիկ և չոր ձայնով հարցրեց դոկտոր Հոֆմանը:

— Ոլորես հոգեկան հիվանդի խնամակալ և դատապաշտպան: Այդ առթիվ ունեմ հատուկ միջնորդություն դեմոնական սոցիալ-դեմոկրատական պարտիայի կողմից:

Այդ անունը ըստ երևույթին դուր չեկավ դոկտորին, ու կամոն լսեց, թե ինչպես Հոֆմանը արագ քայլերով հեռացավ խոսակցից և դիմեց իր կոլեգաներին.

— Պարոնայք, բոլոր պարագաները լրի՞վ են,— հարցրեց նա և առանց պատասխանի սպասելու ազմուկով չուռ ու մուռ ուղեց սեղանի վրա եղած բժշկական գործիքները: Կամոն չուռ եկավ մյուս կողքին, սկսեց ոլորել մորուքի մազերը և դռան անցքից ներս նայել: Հսկիչները ուրախացան, որ ներսում խոսակցությունը երկարում է և իրենք հանգստանալու շատ ժամանակ ունեն:

— Ես սպասում եմ պատասխանիդ,— ասաց Օսկար կոնը:

— Հիվանդի վերջին օրերին վարքագծի նկարագրությանը ձեզ կարող եմ ծանոթացնել, իսկ եզրակացությունների մասին մանակցելու մասին կմտածենք,— պատասխանեց դոկտոր Հոֆմանն ու դարձավ լիւիկ Լիսմանին.

— Պարոն Լիսման, կարդացեք արձանագրությունը:

Լիսմանը կարդաց.

— 15-ը հունիսի, 1908 թ. ձախ ձեռքով անընդհատ միօրինակ շարժումներ է անում օդում: Հրաժարվից աննդից: Կերակրելիս քանի ուժով զոնդի օգնությամբ: Կերակրելու ընթացքում չարդվեցին ատամները:

— Սպասեցեք մի րոպե,— ընդհատեց Օսկար կոնը:

— Ի՞նչ է, պրոֆեսո՞ր ևս անում,— հարցրեց դոկտոր Հոֆմանը:

— Այո,— պատասխանեց կոնը, ծոցատետրում բան որ նշումներ անելով:

Դոկտոր Լիսմանը շարունակեց.

— 19-ը հունիսի, 1908 թ. հարմածում է իրեն բռնացքով և կրկնում. «մեռնել, ոչ ապրել»: Պահեց թեթև մի մասը, ուզում է ուղարկել ընկերներին և հիշատակ: Գիշերն աղմկում էր: Լռում էր ինքն իր հետ: Հրաժարվից հարցերին պատասխանելուց: Իրեն հանցավոր չի ճանաչում: Գանգատվում է, որ ամեն տեղ տանջում են իրեն, ծեծում, խոշտանգում: Գերմանեերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով հայհոյում է ոստիկաններին, անվանում է նրանց «խոշտանգիչ ինկվիզիտորներ, անիծյալ խոզեր»:

— Բավական է,— դոկտոր Լիսման,— միջամտեց Հոֆմանը:— Պարոն իրավաբան, հիմանդի երկու տարվա վարքագծի նկարագրությունը Ձեր իրաստոգի համար թուլատրվում է կատանք մեզանից, մեկն էլ

գաղտնելու պայմանով։ Այժմ անցնենք մեր հքսպեդիցիայի աշխատանքներին։

— Ես սպասում եմ պատասխանի,— ասաց Օսկար Կոնը,— կարո՞ղ եմ մանակցել նիստին։

— Դեհ մանակցեցեք, եթե այսօրվա կատարվելիք խոշտանգումները չեն նպատակ ձեր նեղվային տոնուսի անկմանը,— պատասխանեց Հոֆմանը և պահանջեց ներս բերել հիվանդին։

Ներսի հակիչը դուրս եկավ թե չէ, մյուսները վրա հասան կամոյին բարձրացնելու։ Կամոն վեր ցատկեց հարվածելով հակիչներին. նրանցից երկուսը գետին գլորվեցին, երրորդը ներս սպրաց կամոյին։ Նրանից հետևից ներս ընկան նաև մյուս հակիչները։ Կարճնեակ դռան դիմացի պատից մի մեծ հայելի կար կախված։ Կամոն աչքի ծայրով նայեց հայելու մեջ։ Վերջին երկու սպրյու ընթացքում նա առաջին անգամն էր իրեն հայելու մեջ տեսնում։ Ի՞նչ օրն էր ընկել։ Դեմքն սպրդոցովին ծածկվել էր խիտ մորուքով։ Աչքերը մեղսամոմի պես դունատ էին։ Թևերը այնպես թուլ ճոճվում էին կողքերի հետ, որ թվում էր, թե հիմա պիտի պոկվեն։ Սպիտակ խալաթը հագիվ էր ծածկում քիչ առաջ ծվեն-ծվեն արած սպիտակեղենը։ Միայն աչքերի փայլն էր, որ չէր մարել։ Կամոյի ներս մտնելուն պես Կոնը քաշվեց մի անկյուն, աշխատում էր չնկատել նրան...

— Մոտեցրեք,—հրամայեց դոկտոր Հոֆմանը հլսակիչներին։

Հակիչները կամոյին կոպտաբար հրեցին դեպի սպիտակ սիսեռով ծածկված սեղանը, որի չորքը թաղել էին էքսպերտիզի անդամները՝ ձյան պես մաքուր խալաթներ հագած։ Առանց ուշք դարձնելու թժշկական պրծիքներին, կամոն անթարթ հայացքով և դանդաղ քայլերով մոտեցավ դոկտոր Հոֆմանին։ Կարծելով, թե հիվանդն ուզում է հարձակվել իր վրա՝ նա սպրսափահար թռավ.

— Նստեցրեք դրան, դրեք տեղի...

Հակիչները կամոյին բանտիյամբ նատեցրին սեղանի մոտ աթոռին։ Աթոռը նրան փոքր թվաց. վեր կացավ նայելու՝ կոեղավորվի՞ թե չէ, հակիչները բանեցին և դարձյալ նստեցրին։

— Խոտոր Լիպատ, դրանցեք,— ասաց Հոֆմանը և սկսեց իր հարցերը։

Կամոն մի ակնթարթում վերհիշեց մինչ այդ եղած իր բոլոր հարցաքննություններն և պատրաստվեց տարբեր պատասխաններ տալ։ Այդ միջոցին Կամոն դուրս էր նայում լուսամուտից անվերջ մտածելով փախուստի մասին։ Հոֆմանն սկսեց հարցերը.

Հոֆման— Ձեր անուն, ազգանունը։

Կամո — Դիմիտրի Միրակի։

Հոֆման— Ձեր ազգությունը։

Կամո — Հայ, ռուս, վրացի, չինացի և ամեն ազգացի։

Հոֆման — Քանի՞ տարեկան եք։

Կամո — Շատ տարեկան եմ, քիչ տարեկան եմ, քսան և մի քանի տաս տարեկան եմ։

Հոֆման — Հիվա՞նդ եք։

Կամո— Շոդ է։

Հոֆման — Հավատացյա՞լ եք։

Կամո — (Պատասխանն փոխարեն սկսում է քրքջալ և երգել)։

Հոֆման — Որքա՞ն ընակչություն ունի Ռուսաստանը։

Կամո — 200 միլիոն։

Հոֆման — Դոխտոր Լիպման, նա կարող է քաղցած լինել, մի բաժակ կաթ տվեք։

Լիպմանը սպակին բաժակով կաթ է տանջարկում նրան, սակայն նա հրաժարվում է խմելուց։

Հոֆման — Ինչո՞ւ, դա կաթ չէ, թույն է...

Կամոն մի ձեռով դատարկում է բաժակը, համոզված՝ որ թույն լինել էլ կարող, սպա բաժակը նետելով դեպի կոնը, բացականչում է.

— Մեռնել, ոչ։ Ապրել, ես Նապոլեոն եմ...

Օսկար Կոնը վեր է թռչում տեղից և տարակուսած նայում Կամոյին:

— Լավ, այժմ անցնենք մեր գործնական աշխատանքներին,— առաջարկում է դոկտոր Հոֆմանը:

Օսկար Կոնը զգալով, որ կատարվելու են ամենասարսափելի խոշտանգումները, չուռ ավեց դեմքը՝ Կամոյի ասելանքները չտեսնելու համար: Հարցաքննության հետո Կամոն գլուխը կախել էր: Դոկտոր Հոֆմանը մոտեցավ նրան, բարձրացրեց աչ ձեռքը և մատները կոտրելու սասիճանի ցավ պատճառելով՝ բաց արեց ամուր սեղմված բռունցքը:

— Նայեցեք ուղիղ աչքերիս մեջ,— դիմեց նա Կամոյին:

Կամոն զգաց, որ իր ամենալուրջ քննությունը հիմա է սկսվում ու սկսեց խորհրդածել ինքն իր մեջ. «Եթե վրնպեմ այստեղ, մատանեմ իմ խելագար ձևանալը, ապա զուր կկորչեն իմ երկու տարվա կրած տանջանքները և կատարվելեն ապագայի երազները»:

Միևդեռ նա մոտածմունքի մեջ էր՝ աչ ձեռքի եղունգների տակ անասելի ցավ զգաց: Ուզեց նայել մատներին, սակայն հիշեց, որ դրանով դեռմանագիները փորձության են ենթարկում իրեն, որ բավական է մի անզգույշ շարժում կամ ցավ արտահայտելու մի նշան, և ամեն ինչ կորած է: Անթարթ հայացքով նա շարունակեց նայել դեռմանագի հակառակորդին բուռն ատելությամբ, լուռ ցավերի կսկիծը զսպած իր սրտում:

— Դե՛հ,— հարցականորեն դիմեց դոկտոր Լիպմանը:

— Դիմադրելի ոչ մի փոփոխություն,— պատասխանեց խոշտանգողն՝ ասեղները շարժելով Կամոյի եղունգների տակ:

— Ջարկերա՞կը,— հարցրեց Լիպմանը:

— Ջարկերակը մի րոպեում 120-ից ավելի է,— ասաց Հոֆմանը:

Նույն այդ պահին, երբ նա շարժում էր ասեղները Կամոյի եղունգների տակ, Կամոյի միտքն ընկավ հայ-

կական հին հեքիաթներից մեկը: Պատանին կտրում է իր աջ ձեռքի մատը, աղ ու պղպեղ լցնում կտրվածքին, որ ցավից քունը չտանի և տեսնի իր ցանկացած հրեշին ձյուն:

«Մի՞թե ես այն պատանու չափ էլ չկամ, որ վախտանամ ցավին, չմատնեմ ինձ ու տեսնեմ իմ երազի հրեշին ձին»,— խորհում էր Կամոն, երբ դռկտոր Լիխմանը ձայնեց.

— Նայեցեք, դոկտոր Հոֆման, դեմքին ոչ մի արտահայտություն, նուլնիսկ բիբերի ռեակցիա չի նկատվում...

— Դեմքին ոչ մի փոփոխություն, ցավ արտահայտող ոչ մի նշան, բիբերն անփոփոխ են, դիակ է, կատարյալ դիակ,— հուսահատ ասաց խոշտանգողն՝ ազեղները հանելով Կամոյի եղունգների տակից:

Ազեղները դուրս քաշելուն պես աղջկան սկսեց հոսել Կամոյի եղունգների տակից, անասելի ցավից մորմոքում էր նրա սիրտը, բայց նա իր դերը չէր մոռանում: Զգեաք է մատները լրեն: Մատների ցավը մոռանալու, դեմքի արտահայտություններով չմատնելու համար, Կամոն նստած տեղից կատաղի վեր ցատկեց, կանգնեց աթոռին, ապա անզուսպ քրքջով նետվեց դեպի Հոֆմանը՝ ոչ անգամ նրան լրոք խեղդելու նպատակով:

— Զոպեցեք, դոպեցեք,— ոչ ու ոչ կողմ ընկնելով ճչում էր Հոֆմանը: Օգնար Կոնը նայում էր Կամոյին և քիչ էր մնում հավատա, որ Կամոն ոչ թե կեղծ խելագար է ձևացնում, այլ իրոք խելագար է: Հսկիչները Կամոյին նորից նետեցին աթոռի վրա, պինդ բռնեցին թևերը: Լիխմանը մոտեցավ նրան և մի վունչ մազ պոկեց մորուքից: Կամոյի դլուխը ցնցվեց, ծնոտները զարնվեցին միմյանց, աչքերն արցունքով լցվեցին: Ցավի նշաններ դեմքին չերևացնելու համար, Կամոն պոկվեց հսկիչների ձեռքից, աթոռը դուրս քաշեց տակից և ամուսով վռնդեց հատակին: Կոնին այնպես թվաց, թե դեռևին տատալվեց կաշտանից

հաց մի կաղնի... Հսկիչները բաժանեցին նրան, իսկ ժիլհները վճռեցին մազը պոկեցին նրա գլխից, այլ ցին կծքի մազերը: Անհարազատների ցավը ու կսկիծ նը էլ զգում կամաց, բայց դիմանում էր խոչտանգում ներին, ոչ մի նշանակ ցույց չէր տալիս, թե որևէ ցավ է զգում: Դոկտոր Լիմանն ինքն էլ անզորություն զգացած կոչեց.

— Տարեք մյուս սենյակը, չնկացրեք ձողերը...

Երբ կամոյին մյուս սենյակն էին տանում, Սոկար Կոնը ամուր սեղմել էր թաշկինակը աչքերին: Մյուս սենյակի խոչտանգումները կամոյի համար սպառած չէին և լավ վերջացան: Կամոն ուրախացավ, երբ նրան դեմքի վրա պառկեցրին թախտին: Այդ բանը լավ էր նրանով, որ նա կարող էր չտանջել իրեն և զսպել ցավի նշանները՝ չնկացած ձողով մեջքն ու աղքերը դաղելիս: Նա այդ պահին ևս մտածում էր իր երազած հրեղեն ձին սանձելու, Լենինի մոտ պարզերես դուրս գալու մասին: Երկացած ձողերով մարմինը մի քանի անգ ապրելուց հետո, կամոյին էս բերին իր նախկին սենյակը: Սոկար Կոնը կանգնած էր իր սեղանի կարմրած ու վրիժառու աչքերով: Պետք է սեղն ունենար ամենահետաքրքրական՝ Կրթությունյէ եղբակացությունը: Կամոյին նորից իր կամերան էին ուղում տանել, իսկ նա մեծ ցանկություն ուներ լսելու նրանց եզրակացությունը: Հենց որ հսկիչները մոտեցան նրան տանելու, կամոն վայր ընկավ ձևանալով թե ուշաթափվել է: Նրան պառկեցրին թախտին, ծածկեցին սավանով: Կամոն իր կյանքի ամենաարժեքավոր րոպեներն էր ապրում՝ պիտի լսեր երկու տարբա իր տառապանքների գնահատականը:

— Հարգելի կոլլեգաներ, անցնենք մյուս սենյակը մեջ, դիատոգությունները ամփոփելու, իսկ դուք, պարոն իրավաբան, ղրաղվեցեք ձեր օրենքով,— հենվեց Հոֆմանն Սոկար Կոնին:

Բոլորն անցան մյուս սենյակը: Հետացան նաև հրա կիչները: Սոկար Կոնը դանդաղ մոտեցավ սենյակի դռ-

ներին, մի քանի վայրկյան նայեց ուշադրությամբ, և երբ համոզվեց, որ իրենց չեն լսոտնում, մոտեցավ Կամոյին և չչնչաց ուսերեն.

— Կամո, մի րոպե զգաստացեք խելագար ձևանալուց և լսեցեք. ինձ Լենինն է ուղարկել ձեզ մոտ:

Զգալով, որ բոլորովին մենակ են, և լսելով Օսկար Կոնի խոսքերը, Կամոն իր դեմքի արտահայտությունը վայրկենապես փոխեց: Նրա անթարթ և սառն աչքերը նայում էին լուրջ և ուշադիր: Կռնատ ու անփայլ դեմքը չառաջոնեց ներքին այրող կրակից: Օսկար Կոնը նայում էր զարմանքից լայն բացված աչքերով: Նա չէր կարողանում հասկանալ, թե այդ ինչ կախարդական ուժով է Կամոն կարողանում այդպես արագ կերպարանափոխվել: Օսկար Կոնը կրկնեց.

— Ինձ Լենինն է ուղարկել ձեզ մոտ:

— Լենի՞նը:

— Այո, Լենինը:

— Հայտնեք իմ խորին շնորհակալությունը Լենինին: Եթե կրասնին տեսնեք, նրան շնորհակալություն հայտնեք իմ կողմից: Զի՞ որ խելագար ձևանալու միտքը ձեր միջոցով նա հաղորդեց ինձ,— ասաց Կամոն:

— Բայց դուք ինչպե՞ս եք կարողանում այդքան վարպետորեն խաղալ:

— Հոգեբուժական հիվանդանոցում մի խելագար տեսա, ուսումնասիրեցի նրա չարժ ու ձևերը, և ահա կատարում եմ նրա դերը:

— Ի պատիվ ձեզ պիտի ասեմ, որ դուք այդ դերն անթերի և մեծ արվեստով եք կատարում, չարունակեցեք նույն տակտունությամբ, այդ չատ կօգնի ձեզ,— ասաց Օսկար Կոնը:

— Իսկ մերո՞նք, իսկ գործերը,— հարցրեց Կամոն:

— Սմեն ինչ լավ է: Ձեր գործով ձերբակալվել են մի քանի ընկերներ, բայց դուք առայժմ ոչնչի մասին չպետք է մտածեք բացի ձեր առաղջությունից: Ձեր առողջությունը թանկ է ամենքիս համար, այդպես է ա-

սել Լենինը, այդպես ենք կարծում մենք, բոլորս,— ասաց Կոնը:

— Կարծում եք թե իրո՞ք կխնայվեմ...

— Այնուամենայնիվ, խնայեցեք ձեզ: Իսկ լուրջ ցավեր չե՞ք զգում:

Կամոն դանդաղեց դվռացավից և անքնությունից:

— Անցողիկ բաներ են,— ասաց Կոնը, վերհետաքրքիր ներվերի փոսկիցիոնալ խանգարումներ, ուրիշ ոչինչ: Այ, մի կերպ դուրս կբերենք ձեզ այստեղից, կտեսնեք թե ինչպես արագ կբուժվեք: Ջրաբուժումներ, էլեկտրոբուժումներ, մի խոսքով ամեն ինչ կանենք: Լենինը հատկապես շատ է մտահոգված ձեր առողջությամբ:

Այդ լսելով Կամոն չկարողացավ զսպել իր հուզմունքը. չէ որ Լենինն էր նրան հարցնողը, նրա առողջությամբ հետաքրքրվողը, ու Կամոն չէնչաց.

— Երբ տեսնեք Լենինին, ասացեք, որ իր կռվկային միշտ վստ է պահում իր հոգում նրա պատկերը: Ասացեք, որ ես իմ բարօրության համար չեմ մտածել և ինչ որ արել եմ, արել եմ միայն հանուն այն մեծ գործի, որի համար աշխատում են մեր ուսուցիչները: Ասացեք, որ ես մի հոգս ունեմ միայն. չմոռնել, պարել ու նորից օգտակար լինել ռևոլուցիայի սրբազան գործին...

Օգնաը Կոնը մոտեցավ դռներին.

— Գալիս են...

Կամոն գլխին քաշեց սավանը: Եկավ էքսպերտիզան: Դոկտոր Հոֆմանը կարդաց եզրակացությունը, որի մեջ մեկ առ մեկ նկարագրված էր Կամոյի խելագարության առաջին օրվա դեպքերից մինչ այդ օրը չհիացած ճոպերով այրելը: Կամոյի համար հետաքրքրականը արձանագրության վերջին տողերն էին, ուր ասված էր, թե սիմուլյացիայի կամ խելագար ձևանալու մասին ոչ մի խոսք լինել չի կարող, որ ըստ արտահայտված սիմպտոմների, Կամո Աբչակի Ցեր Պետրոսյանը տառապում է չիզոֆրենիա կոչված հոգեկան հիվանդությամբ:

— Ռայսխատագի որոշմամբ հիվանդին այսօր կտեղափոխվի Ռուսաստան,— ավելացրեց Հոֆմանը:

Այդ բանը միանգամայն անսպասելի էր Կոնի համար, ու նա զարմացած բացականչեց:

— Ինչպես թե, սրան այս վիճակով տալ ռուսական ոստիկանների ձե՞ռքը... Դուք այդ թույլ չեք տա ձեզ: Չէ՞ որ սա հոգեկան հիվանդ է:

— Այո,— հեգնական տոնով պատասխանեց Հոֆմանը, դուք իրավացի եք, բայց մոռանում եք, որ հիվանդը դերմանացի չէ: Սվեյնն. բոլշևիկ է, հետևապես խիստ վտանգավոր է մեզ համար: Մենք նրան անպայման կտեղափոխենք Ռուսաստան:

— Այդ ձեզ չի հաջողվի,— ճչաց Օսկար Կոնը:

— Կտեսնենք...

Դրանով վերջացան կամոյի կրած խոշտանգումները Բեռլինի Այլս- Մոաբիտ հոգեբուժական հիվանդանոցում: Եվ այս եղավ կամոյի վերջին հանդիպումն Օսկար Կոնի հետ: Վիլհելմ երկրորդի կառավարությունը կամոյին հանձնեց ցարական Ռուսաստանին: Այդ 1909 թվի սեպտեմբերին էր:

ԹՈՒՉՈՒՆ ՕԳՆԵՑ ԿԱՄՈՅԻՆ

Վրեչեն- Սարեվիովո կայարանում ցարական ոստիկանների ձեռքն անցնելուց հետո, կամոյին մտահոգում էր այն հարցը, թե ուր են տեղափոխում լրելն: Որքան աշխատեց ուղեկցող ոստիկաններից այդ մասին մի բան իմանալ, ոչ մի կերպ չհաջողվեց: Կամոն էր կյանքի ամենաախուր րոպեներն էր ապրում: Անորոշ վիճակից նեղազում էր հոգին: Եթե նրա դեմ մթին անտառում մի զաղազած առյուծ դուրս գար, կամոյի համար պարզ էր իր անելիքը: Պիտի հարձակվեր առյուծի վրա, կամ պատռեր նրա երախը, և կամ ինքը հոշոտվեր: Սակայն նեղկա դեպքում ինչ աներ:

Եթե նրան Թիֆլիս տեղափոխեին՝ հնարավոր կլի-

ներ մտածել վախչելու մասին: Ծանոթ մի ջրավայրը, բնակիչների հետ ունեցած տեսակցությունները վախչելու ելք կտեղծեին: Եթե ուրիշ տեղ տանեին, ուրեմն մնաք բարև կյանք, մնաք բարև հույսեր...

Անցան մի երկու կայարան ևս: Կամոն չկարողացավ հասկանալ, թե ուր են տանում: Փակ ու մութ վագոն, սահմռակներով մեխած լուսամուտներ: Ուղեվորները չկան, որ դոնե նրանցից մի բան իմանա: Ի՞նչ անել... Երկար տանջվելուց հետո Կամոն ելքը գտավ: Ոստիկաններից պահանջեց զուգարան տանել: Տարան: Զուգարանի լուսամուտից թռչել չէր կարող. ոտքերն ու ձեռքերը չղթայակապ էին: Մի քիչ մնաց և լուսամուտից կարզալով երար հաջորդող կայանների անունները, թռնաց ուրախությունից:

— Թիֆլիս ենք գնում...

Կամոն հազիվ զսպելով իր ուրախությունը՝ վերադարձավ կուպեն: Վերջին երկու տարվա լուռ տանջանքների մեջ նա առաջին անգամ հանգիստ սրտով քուն մտավ:

Ուշ գիշեր էր, երբ հասան Թիֆլիս: Նորից հարազատ օդը շոյեց նրա ճակատը: Այդ րոպեին նա այնքան ուրախ էր, հոգով այնքան զվարթ՝ հայրենիք վերադառնալու համար, եթե չղթաները չխանգարեին, կհամբուրեր չենքերի պատերը, փողոցների քարերը:

Կամոյին նորից նետեցին Մետեխ...

Երկու տարի Մետեխի բերդում պահեցին, փորձությունների ենթարկեցին: Տանջվում էր Կամոն բերդում ֆիզիկապես, իսկ հոգին, ուշքն ու միտքը անընդհատ դուրսը մնացած ընկերների ու դործերի հետ էր: Անվերջ այն մասին էր մտածում, թե ե՞րբ է վերջապես գալու ազատության ցանկալի ժամը: Հաճախ աթոռի վրա բարձրանալով նա բանում էր լույն նեղլիկ պատուհանի ճաղերից և անձկությամբ նայում կապուտակ երկնքին, պայծառ արևին, կարոտով ունկնդրում Կուր խշշոցին: Մի օր էլ պատուհանից դուրս նայելիս՝ մի հետաքրքրական տեսարան բացվեց օդում՝ նրա առջև:

Լուսամուտից ոչ հեռու, մի թռչնիկ հուսահատ ծվծվոցով ջանում էր խուլ տալ իրեն հետապնդող ուրուրից: Կամոյի սիրտը ցավից մորմոքվեց.

— Խեղճ թռչնիկ, հիմա ուր որ է, պիտի հոշոտվես...

Սակայն ուրուրը չէր չտապում հաղթահարել իր զոհին: Եվ ինչո՞ւ չտապեր, քանի որ որսն իրենից խլող մրցակից չուներ, թռչնիկն էլ թուլ էր ու անկարող հեռու փախչելու: Ուրուրը թևերը տիրաբար պարզած ճախրում էր որսի չուրջը և զվարճանում նրա անզոր ու խեղճ ծվծվոցով: Մի պահ մոռացած իր սեփական տանջանքը, չղթաները, Կամոն ջերմ կարեկցությամբ լցված դեպի թռչնիկը, հառաչեց.

— Խեղճ թռչնիկ, քո կյանքն էլ երևի այդպես պիտի վերջանար...

Սակայն՝ կատարվեց անսպասելին: Հանկարծ թըռչնիկը նկրս նետվեց բանտի լուսամուտից: Նրա հետևից ուրուրն էլ փորձեց նկրս ընկնել, բայց զարկվելով երկաթե վանդակներին, ցասաշնորեն կռնչաց ու թռավ, հեռացավ: Կամոն վրա հասավ, բռնեց իր ցանկալի հյուրին, ու սկսեց հետաքրքրությամբ նայել: Թռչնիկն այնպես էր դողում, այնպես էր բարախում նրա փոքրիկ սրտիկը, որ անտարբեր մարդն իսկ կզղայլեր: Կամոն ջուր խմացրեց նրան, չոլեց խաստուտիկ գլուխը: Թըռչնիկը կամաց-կամաց հանդստացավ, սրտի դողն անցավ, սկսեց չուրջը դիտել, բայց դուրս թռչելու փորձ անգամ չէր անում: Կարմիր տոտիկներով նա Կամոյի ափի վրա ոստոստում էր, հետո բարձրացավ նստեց ուսին: Կամոն մոտեցրեց նրան լուսամուտին:

— Հապա տեսնեմ ուզո՞ւմ ես դուրս թռչել:

Սակայն թռչնիկը իրեն սենյակի անկյունը նետեց ու նորից սկսեց դողահար ծվծվալ:

— Խեղճ թռչնիկ, ահը վեր է, քան թե մահը,— մտածեց Կամոն:

Այդ օրվանից թռչնիկը Կամոյի համար հաճելի

զրահամանք զարճալ։ Կերակրում էր հոգի վշտանքներով, ջուր էր տալիս։ Խոչընդիկը հետզհետե ընտելացավ Կամոյին ու զարճալ նրա մխիթարիչն ու սիրականը։

Վերջապես Կամոյին հայտնեցին, որ հետևյալ օրը ազգային դատարանում լսվելու է նրա գործը։ Կամոն գտավ օրը չմոռացավ վերցնել նաև Թռչնիկին։ Երբ ոստիկանների հետ նա մտավ դատարանի դահլիճը՝ ժողովուրդը ծովի պես ալեկոծվեց։ Բոլորը ուզի կանգնեցին։ Կամոյին տեսնելու համար չատերը նստարանների բարձրացան։ Դահլիճի մի անկյունում նստած էր Կամոյի քույրը՝ Ջավահիրը, չքնաղատեսիլ եղբոր ընկերուհի։ Նրան տեսնելով Կամոյի սիրտը ցավից ճմլվեց։

— Ինչ լավ է որ մայրս կենդանի չէ, թե չէ՝ իմ պատճառով վշտից կկենդանանար,— մտածեց Կամոն ու ծանր հառաչեց։

Կանաչ մահուդով ծածկված սեղանի չորսը դեռ ոչ ոք չկար։ Ինչ անց՝ եկավ դատական քարտուղարը։

— Դատարանը գալիս է, ուզի,— դիմեց նա ժողովրդին։

Հանդարտություն առանց այդ էլ ուզի էր կանգնած Կամոյին տեսնելու համար։

Կամոն անտարբեր դեպի չորսլանը՝ խաղում էր Թռչնիկի հետ։ Ներս մտավ դատավոր Ռուսանովը, դատարանի անդամների ուղեկցությամբ։ Դատավան նիստի ձևական կողմերը կատարելուց և մեղադրական ակտը ընթերցելուց հետո, դատավոր Ռուսանովը դարձավ Կամոյին.

— Ի՞նչ կասեք ձեր դեմ հարուցված մեղադրանքի մասին։

Դահլիճում քար լռություն էր տիրում։ Կամոն հանգիստ նստած՝ չոյում էր Թռչնիկի գլուխը։ Դատարանի անդամների պահանջով ոստիկանները բռնությամբ ուզի կանգնեցրին նրան։ Կամոյի չղթաների զնդոց ահռելի հառաչանքի նման տարածվեց դահլիճի լռության մեջ։ Ներքին հուզմունքից վառվում էին Ջավահիրի աչքերը։ Այլևս անկարող իրեն զսպելու նա երեսը ծածկեց ձեռ-

քերի մեջ ու հեկեկաց... Տեսնելով զրոյ հուզված վիճակը Կամոյի սրտերը ցավից կտրծաց: Ծորաքուրը էլ դադարեց, քաշվեց մի անկյուն ու սկսեց էլ ավելի լալ: Դատավորը կրկնեց իր հարցը: Կամոն նորից լուռ մնաց:

— Չե՞ք լսում, ականջ չունե՞ք...

«Անդալն էնդու համար չի մեռնանում, մեզ չատ բան է լսում»,—հիշեց Կամոն թիթիևսցիների հայտնի առածը և առանց պատասխանելու զրաւվորի հարցին, շուռ եկավ դեպի գահլիճը, ուր նստած Թռչնիկին ու բռնակալին:

— Թռչո՛ւկ իմ անբասիր...

Ժողովուրդը կարեկցությամբ ու համակրանքով նայում էր Կամոյին: Կանանցից շատերն արտասվում էին: Զավահիրը արտասվածոր աչքերով հետևում էր եղելությը:

Թռչնիկը մի երկու պատառ դրծնելով օդում, ևկավ, նստեց Կամոյի ուսին:

— Ա՛յ, ապրես, հավատարիմ ես, որպես քույրդ,— մրմնջաց Կամոն ու համբուրեց Թռչնիկի գլուխը:

Ոտիկանը բռնեց Կամոյի ուսերից և երեսով շրջեց դեպի զրաւվորը:

— Որտե՞ղ եք գտնվում դուք,— բարկացած ճչաց զրաւվորը:

— Չգիտեմ... Ես ուզում եմ չղիմանալ չլինեն... Մենք ուզում ենք չղիմանները խորտակել,— քրքջալով պատասխանեց Կամոն, չարունակ չդադարելով Թռչնիկին: Դատավորը չարունակեց հարցաքննությունը.

— Իսկ դիտե՞ք, թե ովքեր են կանդնած ձեր կողքին:

Առանց իր Թռչնիկից հայացքը հեռացնելու Կամոն պատասխանեց.

— Իմ կողքին կանգնած են զինվորներ:

— Զինվորնե՞ր: Ի՞նչ բանի համար:

— Որպեսզի Թուլ չասեն, որ դուք ինձանից բան դողացաք:

Դահլիճում ասես ռումբ պայթեց։ Ադմիրալի քրքիջ, հավանության բացականչություններ... Թաղավորը Ռուսանովը զայրացած ոտքի կանգնեց։ Նա անընդհատ զանգահարում էր, սակայն ապարանը երկար ժամանակ չէր լռում։ Թաղավորը զարձյալ դիմեց Կամոյին.

— Այժմ ի՞նչ եք խնդրում պատասխանից։

Դահլիճը լռեց։ Բոլորին հետաքրքրում էր Կամոյի պատասխանը։

— Մի կտոր թուղթ,— մանկական միամտությամբ պատասխանեց Կամոն։

— Մի կտոր թո՞ւղթ, ի՞նչ բանի համար,—հարցրեց պատավորը։

— Հաշվելու, թե Ռուսաստանում քանի՞ չղթա կա։ Ասում են մեկ միլիոնից ավելի է, բայց ես ինքս պիտի հաշվեմ։ Մի բանտարկյալ ինձ ասաց, թե չուտով ամեն ինչ լավ կլինի։ Գիտե՞ք, նա ստանալուց յոթ օր առաջ էր ծնվել...

Դահլիճը նորից պոռթկաց ծիծաղից, իսկ Կամոն դիմելով ատիկաններից մեկին հչնջաց.

— Սուտս...

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց պատավորը։

Կամոն վոխանակ պատավորին պատասխանելու, դիմեց նույն ատիկանին.

— Սուտս. կատուն զարան է մտել, թող մուկ որսա, որ ինքն էլ ուտի, ձեզ էլ տա...

Դահլիճը նորից աչխուժացավ։ Պատավորը տարակուսանքով ուսերն էր թոթվում։ Կամոն իր գրպանից մի կտոր հաց հանելով, արագ-արագ ծամեց, մի մասը թռչնիկին տվեց, մյուս մասը նետեց պատավորի առջև։ Պատարանի անգամները զղվանքով երեսները թեքեցին։ Ռուսանովը չզսկացած մի կողմ նետեց հացը։ Ատիկաններից մեկը թռչնիկը խլեց Կամոյից և լուսամուտից դուրս չպրտեց։ Այս արդեն խոր վիշտ պատճառեց Կամոյին։ Նա մոլեգնած խոյացավ դեպի ատիկանը, աչխատելով բռնել նրա կոկորդից։ Մյուս ատիկանը կոպտությամբ ետ հրեց Կամոյին՝ մարակը ճոճելով նրա

գլխին: Դահլիճը հուզվեց, բարձրացավ աղմուկ, սուլոց:

— Չհամարձակվեք խփել կամոյին...

— Նա հիվանդ է...

— Մենք ձեզ ցույց կտանք...

Կամոն առանց վախենալու ոտիկանի մտրակից՝ պոռաց.

— Ինձ գերմանացիները պարոն Պետրոսյան էին կանչում: Ես նրանց էլ, ձեզ էլ իմ ախոռապանները կղարձնեմ: Ես հիսուն մլիոն ձի ունեմ... Ես դանձեր ունեմ հորաձ...

Դատավորը ոտքի կանգնած աշխատում էր խանգարված կարգը վերականգնել: Նա վրդովված էր ոտիկանի արարքից և մեծ անախորժություններ էր դուշակում: Տեսնելով դատավորի զայրույթից կարմրատակած դեմքը, ոտիկանը իջեցրեց մտրակը: Հուզված ու զայրացած Ջավահիրն ու մորաքույր Լիլան աղատ շունչ քաշեցին և վոքը լինչ հանդստացան այն ժամանակ միայն, երբ ոտիկանները հանգիստ թողեցին կամոյին: Դահլիճը խաղաղվեց:

Դատավորն իր ձեռքի տակ ուներ Գերմանիայից Օսկար Կոնի մի ջոգով ուղարկած, Կամոյի հիվանդության և վարքագծի նկարագրությունը՝ գերմանական հոգեբույժ պրոֆեսորների եզրակացությամբ: Բացի այդ, Ջավահիրը Օսկար Կոնից ստացել և դատարանին էր հանձնել «Ֆորվերտս» և «Յումանիտե» թերթերի այն համարները, որոնց մեջ տպագրված էին Օսկար Կոնի հոդվածները: Այդ հոդվածներում նրանք մեղադրում էին Վիլհելմ երկրորդի կառավարությանը հղեկան հիվանդ կամոյին ցարական ոտիկաններին հանձնելու համար: Դատարանին հայտնի էր նաև Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Ստոլիպինի հատուկ նամակը՝ ուղղված Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, ուր ասված էր, թե եվրոպական դեմոկրատիան լուրջ ուշադրություն է դարձնում կամոյի դատին, և նույնպես մեղադրում է գերմանական կառա-

վարությանը՝ Կամոյին հոգեկան այդ վիճակով Ռուսաստան տեղափոխելու համար: Դատավորի ուշադրությունից չէր վրիպել նաև Ստոլիպինի հետևյալ տագնապալի խոսքերը. «Մամուլի հարձակումները դեմ նական կառավարության վրա ավելի ևս կուժեղանան, եթե Միքսկին (Կամոն) դատապարտվի մահվան: Ներքին գործերի նախարարությունը երկյուղ է կրում, որ այդ բանը կարող է աննպաստ ազդեցություն ունենալ ռուսական չահերի վրա»:

Դատարանում Կամոյի վարպետորեն խաղացած հոգեկան հիվանդի դերը, մյուս կողմից այդ հիվանդության հաստատող գերմանական պրոֆեսորների վկայաթղթերը, ինչպես և Ստոլիպինի ահազանգող նամակը ստիպեցին դատավորին դատավճիռ չկայացնել, այլ ուղարկել Կամոյին Միքայելյան հիվանդանոց և պահել խիստ հսկողության տակ:

Կամոն երկար ժամանակ չէր կարողանում մոռանալ իր թռչնիկին, որն այնքան օգնել էր նրան խելագարի դերը հաջող կատարելու մեջ: Նրան կորցնելուց հետո Կամոն հանդիստ չէր տալիս վերակացուներին ու անընդհատ պահանջում էր վերադարձնել իր «քույր» թռչնիկին: Վերակացուները պատասխանում էին.

— Նա թռավ, ազատվեց...

«Այո, նա թռավ, ազատվեց, տեսնենք ես ե՞րբ պիտի թռչեմ»— մտածում էր Կամոն:

Ու մի օր էլ նրան հաջողվեց թռչել, ազատվել մի ծաղկեվանջի միջոցով...

ԿԵՍԱՐՊԱԿԱՆ ԹԱՂԿԵՓՈՒՆՋԸ

Ռազմադաշտային դատարանի որոշմամբ Կամոյին տեղափոխեցին Միքայելյան հիվանդանոց՝ դատախազի հետևյալ մակագրությամբ. «Կամո Աբչակի Տեր-Պետրոսյանին մեկուսացնել առանձին կամերայում, պահել կրկնակի փականքի տակ, սահմանել խիստ հսկողություն...»

Մ[illegible]քայելյան հիվանդանոցի հոգեկան հիվանդների հատկացված ութ պալատներից մեկում տեղավորեցին Կամոյին: Այստեղ նա բժիշկների ներկայությամբ հետևողական կերպով ստանում էր խելագարի իր դերը, մինչդեռ աշխատակիցների և հիվանդների մոտ երեն միանգամայն նորմալ էր պահում: Նրանց համար զանազան զեպքեր էր պատմում ապրատահարանքի իր կյանքից, մեծ մարդկանց հետ ունեցած հանդիպումներից: Աշխատակիցների մեջ կար մի ռուս սանիտար Բրագինն ազգանունով: Նրան ամենից շատ էին դուր գալիս Կամոյի պատմությունները: Կամոն նկատեց Բրագինի հետաքրքրասիրությունը և սկսեց ավելի հաճախ լինել նրա հետ: Կամոն ամեն առիթով նրան իր մոտ էր կանչում և դրուցում հետը: Կամոն նրանից իմացավ, թե ինչպիսի ապերսպեկտիվ է լցված նա դեպի ժամանակակից կարգերը: Բրագինը լավ չէր հասկանում քաղաքական անց ու դարձը, չէիմ չուներ լայն հրջանների հետ: Կամոն քացատրում էր նրան ամեն ինչ և փոքր առ փոքր դրավում իր կողմը: Պատմելով Բրագինին ապրատահարանքյան կյանքի մասին՝ Կամոն խոստանում էր նրան տանել ապրատահարանքի և կրթություն տալ, եթե նա օգնի իրեն հիվանդանոցից փախչելու: Այդ միտքն սկզբում Բրագինին անհավանական թվաց, բայց Կամոն այնպիսի հաստատ համոզմունքով էր խոսում փախուստի հնարավորության մասին, որ ի վերջո Բրագինն էլ համոզվեց և պատրաստակամություն հայտնեց օգնել Կամոյին ինչով կարող էր: Նորապես համոզված լինելով Բրագինի անկեղծության, Կամոն մի երկտող տվեց Զամահիրին հանձնելու: Այդ նամակով Կամոն քրոջից խնդրում էր պայմաններ ստեղծել փախուստի համար: Բրագինը Կամոյի տված հասցեով գնաց գտավ Զամահիրին, հանձնեց երկտողը և նրանից պատասխան բերեց:

Մ[illegible]քայելյան հիվանդանոցում Զամահիրը հաճախ էր տեսակցում Կամոյի հետ: Զնայած նրան, որ այդ տեսակցությունները տեղի էին ունենում բժիշկների ներ-

կայութեամբ, այնուամենայնիվ Կամոն կարողացավ մի կերպ հասկացնել Զավահիրին, թե ինքը հաստատ վճռել է վախչել հիվանդանոցից և խնդրեց զրոյը պետք եղածն անի այդ գործը գլուխ բերելու համար: Մի օր էլ առաւկցութեան ժամանակ օգտվելով բժիշկների բացակայութենից Զավահիրը չհնչաց.

— Բռադինի միջոցով ստացանք նամակը: Կոմիտեի անդամների հետ նայեցինք կազմածդ պլանը վախտանդ մասին: Վաղը ծանրևիուն կբերեմ քեզ՝ մեջը անդամական փոքրիկ սղոցներ: Զուգարանից դեպի Քուռը նայող լուսամուտի ճաղերը սղոցելուց հետո, կպատես սպիտակ թաշկինակով ազդանշանի, Քուի ձախ ափից, իսկ պարանը կստանաս Բրադինից:

Հենց այդ ժամանակ միջանցքից ոտնաձայներ լսվեցին: Կամոն արագ հարձակվեց Զավահիրի վրա և սկսեց բարձով հարվածել նրան:

— Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, ճչաց Զավահիրը:

Ներս վազեց հերթապահ բժիշկը, աղաղակեց Զավահիրին Կամոյի ձեռքից:

— Դե արի հիմա ու հանգստացրու սրան, հազիվ էր խաղաղվել,— դժգոհեց բժիշկը:

Զավահիրը չնորհակալութեան հայտնեց բժշկին և թաշկինակին աչքերին սեղմած, ձեվանալով, որ լալիս է դուրս գնաց պալատից: Կամոն ու բժիշկը մնացին մենակ: Կամոն պառկեց մահճակալին: Բարձը դրեց կըրծքին և խաղաթը քաշեց վրան: Բժիշկը գլուխն օրորելով դուրս գնաց: Կամոն անվերջ մտածում էր փախչելու մասին: Ամբողջ գիշերը նա սաստիկ հուզված էր ու անհանգիստ: Ազատութեան հույսը մի կողմից, վախտանդ անհաջողութեան երկյուղը մյուս կողմից նրան ծայր աստիճան դրգռված դրութեան էին հասցրել: Զգում էր, որ այդ քայլն իր համար ճակատագրական նշանակութեան պիտի ունենար: Եթե փախուստը հաջողվեր, նա դիտեր իր անելիքը, իսկ եթե բռնվեր, դուր պիտի կըբէին իր չորս տարվա կրած տառապանքները... Ի՞նչն էր Կամոյին այդքան մտատանջում, մահվան սարսո՞-

վը, Ֆլեղելական կրոնասաը։ Ամենևին։ Կամոն մահից չէը վախենում։ Նրան այրում, առջորում էը իր ծրագրի անկատար մնալը, ինչպես ժողովուրդը կասեր՝ կյանքից անմուրազ հեռանալը։ Նրան ցավ էը պատճառում այն միտքը, որ պիտի կործանվեր հենց այն ժամանակ, երբ մի քայլ էը մնում դեպի ազատ կյանքը, մի համարձակ և խիզախ քայլ։ Այդ բոլորից բացի, դատարանը համոզված չէը, թե Կամոն անուժելի հիվանդ է և պահանջում էը Ալբայելյան հիվանդանոցից ապացույցներ նրա բուժման ընթացքը։ Քաղաքի դատախազությունն իր հերթին հարց էը տարուցել՝ Կամոյին տեղափոխել ռազմական հիվանդանոց, մի հանգամանք, որ մեծապես կվնասեր նրա փախուստին։ Այդ պատճառով նա վճռեց՝ ինչ էլ լինի արագացնել փախուստը...

Կամոն մինչև լուսաբաց մնաց անչարժ պառկած և տարված այդ ծանր մտածմունքներով։ Առավոտյան կողմ մի բան սկսեց մի փոքր ննջել, երբ մեկն արթնացրեց նրան։

— Ծաղկեփունջ եմ բերել, վեր կաց...

Կամոն վեր թռավ տեղից։ Հիվանդանոցի հերթապահ բժիշկն էր ձայն տվողը։

— Ռուլրդ եկել է, քեզ ծաղկեփունջ է բերել։ Մեծ լաշտար ու ծաղկեփունջ...

— Թող գա,— ճչաց Կամոն ու մտավ մահճակալի տակ։

Բիչ հետո, բժշկի ուղեկցությամբ եկավ Ջավահիրը ծաղկեփունջը ձեռքին։ Սենյակում չգտնելով եղբորը, պատրաստած չուրջը նայեց։ Կամոն առանց մահճակալի տակից դուրս գալու ձեռքը մեկնեց ծաղկեփունջը վերցնելու։ Ռուլրդը, ցույց տալով, թե վախենում է, ծաղկեփունջը տալուն պես ետ քաշվեց։ Կամոն խլեց ծաղկեփունջը և թաղցրեց մահճակալի տակ։ Նա չտալ հանեց սղոցները ծաղկեփնջից և պահեց խալաթի մեջ, ապա դուրս թռավ մահճակալի տակից և ծաղիկները չպրտեց քրոջ դեմքին։ Հերթապահ բժիշկը հավաքեց սենյակում մեկ ցրված ծաղիկներն ու դուրս գնաց։

— Հեռացիր, կոպասեմ ազդանշանի,— չընջաց Կամոն և նորից սկսեց իր մոլեգին թուիչքները սենյակի մի անկյունից մյուսը:

Ներս մտավ բժիշկը:

— Նորից կատաղեց...

Ջալահիրը հեկեկալով դուրս գնաց բժշկի հետ: Կամոն նստել էր մահճակալին, երդում էր, սուլում, աղմկում: Վերմակը ոտքերին քաշելով՝ հանեց թագը և սկսեց սղոցել ոտքերին հագցրած շղթաները: Նույն այս միջոցին բրադինը, որ տեղյակ էր Կամոյի ծաղկեփունջ ատանալուն, հերթապահ բժշկին առած շրջում էր պալատներն ու զբաղեցնելով նրան՝ արգելք էր հանդիսանում մտնել Կամոյի մոտ: Մինչ այդ Կամոն ավարտեց շղթաների սղոցելը, ապա չնկատվելու համար, սղոցված շղթաները նորից միացրեց բարակ լարերով ու սպասեց մթնելուն:

Վերջապես մթնեց: Գիշերը հերթապահ բժիշկը զբաղված ուրիշ հիվանդներով, նրան այցելությանն չէկավ: Հեռվհեռու անցուդարձը դադարում էր, խաղաղվում էր հիվանդանոցը: Կամոն ծեծում էր սենյակի դուռը, պահանջելով որ իրեն զուգարան տանեն: Սանիտարը կատարում է նրա պահանջը, տանում է զուգարան, դուռը դրսից փակում ու գնում իր գործին: Կամոն բարձրանում է լվացարանին ու սկսում սղոցել լուսամուտի երկաթե ճողերը: Մերթ սղոցում է, մերթ չունչը պահած ականջ դնում, և հենց որ ոտնաձայն է լսում, դադարեցնում է գործը, ապա նորից չարունակում: Այս ձևով Կամոն մի քանի գիշեր զուգարան է գնում և ավարտում ճողերի սղոցումը և ապա հասկ մի միջուկով նորից կպցնում կտրված-քները: Վերջապես գործն ավարտվում է: Կամոն լարված ու սրտատրոփ սպասում էր նշանակված օրվան: Բրադինը մանրամասնորեն տեղյակ լինելով Կամոյի փախուստի ծրագրին, մի քանի օրով արձակուրդ էր վերցրել և գնացել Ռուբիայիս, որպեսզի անհայտ փախուստի դեպքում հեռու մնա կասկածներից:

Հանդում է նշանակված օրը: Ողջ գիշերը Կամոն անքուն ու լարված սպասում էր լուսանալուն: Վրա է հասնում այնքան անձկությամբ սպասած առավոտը: Սկսվում է հիվանդանոցի սովորական կյանքը: Կամոն նորից խնդրում է անխոսելից երեն գուգարան տանել և երբ անխոսը նրան տանում է ու թողնում մենակ, Կամոն անմիջապես բարձրանում է լվացարանին ու անհանգիստ և հուզված սպասում ապրանշանին: Սակայն ապրանշանն ուշանում է:

— Ինչո՞ւ են ուշացնում, մի՞թե մի արդեյք եղավ, մի՞թե չեն գալու... Այս մտքերն էին տանջում նրան, երբ վերջապես ընկերները հայտնվեցին գուռը զետի ձախ ափին, Կամոյի փոքր քրոջ՝ Աբուսյակի հետ և առաջին ապրանշանը ափին: Մի ակնթարթում Կամոն հանեց պատանը, կապեց մեջքից, մյուս ծայրը ամրացրեց լուսամուտի ճաղից և անհամբեր սպասել երկրորդ ապրանշանին: Սակայն ապրանշանն ուշանում էր: Կամոն զայրույթից մատներն էր կրծում: Նա զգուշությամբ գուրս է նայում լուսամուտից: Գետի ափին ահա ինչ որ մարդիկ են գրոհում. պետք է սպասել մինչև նրանք հեռանան: Բոպենները Կամոյին թվում են ժամեր: Սակայն նրա ընկերները երկրորդ ապրանշանը դեռ չեն տալիս: Կամոն նորից է գուրս նայում: Այս անգամ էլ մի ինչ որ կին է իր շանը զետում լողացնում: Ժամանակն անցնում է, ընկերներն անհանգիստ չրջում են զետի ափին, Կամոն սպասողական վիճակում հուզմունքից դողում է, իսկ շունը լողացող կինը կարծես ամենևին չի էլ ուզում հեռանալ իր տեղից:

— Գուցե և լրտես է,— մտածում էր Կամոն:

Վերջապես կինը հեռանում է: Ընկերներն իրար հետևից տալիս են ապրանշանները: Կամոն գուրս է սողում լուսամուտից, պարանը բռնած սկսում է ցած իջնել: Իջնում է դանդաղ ու զգույշ: Լարվածությունից տանջունչը վտրտում էր, սիրտն անհանգիստ բաբախում, ճակատը պատում է սառն քրտինքով: Ընկերները հետևում են հեռվից՝ ոչ պակաս հուզված:

Երկրորդ հարկին չհասած, Կամոն զգում է, որ պարանն սկսում է ճզմրթալ... փսած է... Սակայն նա չարունակում է իջնել... Անցնում է երրորդ հարկը, ահա պարանն այլևս չի դիմանում, կտրվում է և Կամոն ընկնում է թաց ու փափուկ հողի վրա:

Բուլլն ու ընկերները վրա են հասնում:

— Ամուր պարան դանելը ջի՞վ էր,— զոռում է Կամոն ընկերների վրա:

— Կամո, ցավդ տանեմ, աղմկելու ժամանակ չէ, վախիր, աղերսում է քույրը:

Կամոն Բուլն է նետում պարանն ու չղթաները և ինքն էլ ընկնում ջուրը լողալով հասնում է վերևյի կամուրջի տակ և դուրս գալիս Նարեկաժնայա փողոցը, ուր սպասում էին նրան ընկերները՝ կառքով: Կամոն արագորեն հագնելով իր համար բերած հագուստները, ընկերների հետ թռչում, անհետանում է: Ընկերները Կամոյին տարան մշտօրոք պատրաստված մի բնակարան, ուր նա առաջին անգամ, այդ երկար ու տաժանելի տարիներից հետո, քնեց հանգիստ և անխռով:

Կամոյի փախուստից հետո Թիֆլիսի ոստիկանությունը վոհմորկվեց: Ոտքի կանգնեց լրտեսների և հետախույզ շների մի ամբողջ բազմություն: Կովկասյան քաղաքների և շրջանների ոստիկանները զլուխները կորցրած, փնտրում էին փախստականին ամենուրեք:

Թեև Կամոն ազատ էր, բայց անկարող էր որևէ կերպ քաղաքից դուրս գալ, քանի որ չորս կողմը ոստիկաններն էին վխտում: Կամոյի համար վտանգավոր էր նույնիսկ իր իջևանած տանը երկար մնալը: Իր հին փորձից ելնելով՝ նա դիտեր, որ հետապնդումների ժամանակ ամենից ապահով վայրը հենց հետապնդողներին մոտ գտնվելն է, ուստի նա որոշեց այս անգամ էլ տեղ որոնել ոստիկանական հիմնարկներից որևէ մեկին մոտ: Շուտով նա տեղեկացավ, որ կենտրոնական փողոցներից մեկում գտնվող մի մեծ տան վերնահարկում, որի առաջին հարկում տեղավորված էր Թիֆլիսի ոստիկանության կենտրոնական վարչությունը, ապրում է իր հին

ծանոթներից մեկը: Նույն օրն ևեթ նա փոխադրվեց այդ ծանոթի մոտ: Ո՞վ կարող էր դլխի ընկնել, որ հենց ոստիկանության չենքում կդտնվի նա, որին փնտրում է ինքը, ոստիկանությունը:

Մի քանի ժամ հիմնադանդից փախչելուց անմիջապես հետո, կամոն հետաքրքրվեց Բրաչինի վիճակով: Թիֆլիսի կոմիտեի անդամներից նա իմացավ, որ իր փախուստի կապակցությամբ ձերբակալվել են Բրաչինը, իր քույրերը, ինչպես նաև փախուստը կազմակերպող ընկերներից մի քանիսը և դատապարտվել տաժանակիր աշխատանքի: Թե դատը և թե արդեն աքսորավայր ուղարկելն այնքան արագ էր կատարվել, որ կամոն հնարավորություն չունեցավ որևէ բանով օգտակար լինել նրանց և կամ լուր տալ իր մասին:

Թիֆլիսում մնալը հետզհետե դառնում էր վտանգավոր: Անհնար էր գործի ձեռնարկել, հարաբերություններ մտնել ընկերների հետ: Դրա համար էլ, կամոն խորհրդակցելով կոմիտեի անդամների հետ, որոշեց մեկնել արտասահման՝ Փարիզ, մանավանդ որ պետք էր տեսակցել Լենինի հետ՝ նրանից հետագա գործունեության վերաբերյալ ցուցումներ ստանալու համար:

ՓԱՐԻԶ՝ ԼԻՉԻ ՄՈՏ

Թիֆլիսից դեպի Մոսկվա է ձգվում մի լայն ու դեղեցիկ խճուղի: Կամոյի փախուստից որոշ ժամանակ անց, այդ խշճուղու վրա սկսեց երևալ հեծանիվավոր դիմադիսանների մի փոքր խումբ: Փիմնադիսաները զբոսնում, մրցում էին միմյանց հետ, սրախոսում, զվարճանում ու նորից վերադառնում քաղաք: Կամոյին ձերբակալելու նպատակով քաղաքը շրջապատած պինվորները, ձանձրացած ու հոդնած միօրինակ ու ատղակալի ծառայությունից, զվարճանում էին ու թարմանում այդ ջահելների ուրախ ժամանցից, մանավանդ, որ նրանց մեջ աղջիկներ էլ կային... Իսկ

եթե պատահում էր, որ նրանք, ոգևորված պահակների խրախուսանքից, սահմանից մի քիչ էլ այն կողմն էին անցնում, պահակներից մեկին ու մեկը անմիջապես ձայն էր տալիս.

— Եա պարթևք, գիծն անցնելն արգելված է...

Եվ երիտասարդներն աչքուժ քրքիջով եա էին դառնում: Սակայն վերջին օրերը սահմանի այդ խախտումներն այնքան հաճախակի էին լինում, որ պահակներն այլևս ուշադրություն չէին դարձնում:

Ծանոթ, հարազատ աչքն անդամ չէր կարող զիմնազիստի հագուստով ծպտված կամոյին տարբերել մյուս գիմնազիստներից, որոնք հեծանիվներով զբոսնում էին Մցխեթի խճուղու վրա: Մի օր, այդ անմեղ զբոսանքներից մեկի մէջտեղին, երբ աղջիկների ու տղաների մի խումբ պահակներին չէր ջայապատած, զբաղեցնում էր վատակներով, չոփլաղ և ընտիր ծխախոտ հրամցնում նրանց, կամոն և չորս ընկերները հեծանիվներով սլացան արգելված գծից այն կողմ՝ դեպի Մցխեթ: Ուշեմասի ոլորապտույտն անցնելուց հետո՝ մյուս ընկերները եա դարձան, իսկ կամոն չարունակեց ճանապարհը դեպի Մցխեթ: Ճանապարհին, թփուտներում թաղնված սպասում էր նրան Մցխեթում ապրող ընկերներից մեկը: Կամոն զգեստափոխվեց, ու էր ընկերոջ հետ մտան Մցխեթ: Այդ օրը Մցխեթում հարսանիք կար: Համարյա ողջ գյուղը հարսանիքում էր: Այդ հանդամանքը նպաստավոր դրություն էր ստեղծում կամոյի համար: Մինչև ուշ գիշեր, այսինքն մինչև գնացքի ժամանելը նա իր ընկերոջ հետ նստած նրա տանը՝ պատմում էր իր դլխով անցածը վերջին երկու տարվա ընթացքում: Ուշ գիշերով կամոն ընկերոջ հետ ուղեվորվեց կայարան, հրաժեշտ ավեց նրան, նստեց գնացք ու մեկնեց Բաթում: Այստեղ ծանոթ նավասիների օգնությամբ նա թաղնվեց նավի ներքնահարկում, արկղների և տակառների արանքում և անվնաս հասավ Ֆրանսիայի Մարսել քաղաքը և այդտեղից էլ ուղևորվեց Փարիզ:

Կրուպսկայան սիրալիր կերպով ընդունեց Կամոյին, առաջնորդեց նրան ընդամարան և խնդրեց մի փոքր սպասել, ասելով.

— Իլիչը զբաղված է մի հին ու հայ ռեվնոլ նամակ գրելով և չուտով դուրս կգա իր աշխատասենյակից:

— Այդ ի՞նչ հայ ռեվնոլն է,— հարցրեց Կամոն:

— Մենք Իլիչի հետ հենց նոր վերադարձանք Սպանդարյանների ընտանիքին կատարած մեր այցելությունից: Երևի դիտեք արդեն, որ Սուրենը ձերբակալված է: Գնացել էինք Սուրենի ձերբակալման մանրամասնությունները իմանալու: Սուրենի հոր անօդնական և հիվանդ վիճակը մեզ վրա չատ ծանր ապավորություն թողեց: Ապրում է մենակ ու անխնամ: Նույնիսկ բնակարանի վարձ տալու հնարավորություն չունի: Մենք նրան մի փոքր օգնեցինք, բայց նրան անհրաժեշտ է ավելի լուրջ օգնություն: Բարվոք վիճակում չէ նաև Սուրենը բանտում:

— Իսկ ի՞նչ հայ ռեվնոլ է նամակ գրում Իլիչը,— կրկնեց իր հարցը Կամոն:

— Սուրենը Բեռլինում Իլիչին ծանոթացրել էր իր բարեկամուհի Ոսկի Հովհաննիսյանի հետ, որ համակրում և օժանդակում է մեր պարտիային: Իլիչն այժմ նրան նամակ է գրում, որպեսզի նա հոգա թե՛ Սուրենի և թե՛ նրա հոր մասին:

Կրուպսկայան դեռ իր խոսքը չէր ավարտել, երբ ներսի սենյակի դուռը բացվեց և երևաց Իլիչը: Կամոյին տեսնելով նա ուրախ գոչմանքով բացականչեց.

— Կամո, դուք այստե՞ղ, էլ ո՞ւր եք սուս ու փուս նստել, գնանք սենյակ:

Կամոն Կրուպսկայայի հետ մտավ Իլիչի աշխատասենյակը: Դա մի փոքր սենյակ էր, որը զբաղեցնում էր պատվորություն թողնում: Ամենուրեք թերթեր էին ու գրքեր: Նստելով գրասեղանի առջև Իլիչը դարձավ Կամոյին:

— Բեռլինում ձեր ձերբակալման և Թուրուխանսկ տեղափոխվելու մանրամասնությունները լսել եմ կարլ

Լիլինեֆսկիյ և Օսկար Կոնիլ։ Պատմեցեք խնդրում եմ, թե ինչպես ազատվեցիք Միքայելյան հիվանդանոցից։

Կամոն պատմեց Միքայելյան հիվանդանոցից վախչելու և Փարիզ հասնելու մանրամասնությունները, ինչպես նաև իր կրած հոգեկան ու մարմնական տանջանքների մասին։

Այդ ամբողջ պատմության ընթացքում, Լիլիը մատները ժիլետի գրպանները հագցրած անց ու դարձ էր անում սենյակում, երբեմն էլ կանգ էր առնում ու հիացմունքով լի, բարեկամական հայացքը հառում Կամոյի դեմքին, կարծես ցանկանալով մուտք գործել լեգենդար հերոս դարձած այդ մարդու հոգու խորքը։

— Այժմ ի՞նչ եք մտադիր անելու,— հարցրեց Լիլիը։

— Աերոպլանի գործարան եմ ուզում բաց անել... Լիլիը պոռթկաց ծիծաղից։

— Ձեզ նախ և առաջ անհրաժեշտ է լավ կազդուրվել։ Մի նայեք թե ինչ եք գարձել, այդքան տանջանքներ կրելուց հետո։ Անհրաժեշտ է ձեռք բերել կորցրած առողջությունը, թե չէ այդ վիճակով մեզ համար մեծ գործ անել չեք կարող։ Իսկ դուք մեզ չատ եք պետք։ Այ, տեսեք, ձեր աչքը ոսկրից վնասվել է, քնաժել պե՞տք է, թե՞ ոչ։ Գնացեք Բելգիա։ Այնտեղ նշանավոր ակնարուեստներ կան։ Բուժեք ձեր աչքը, կկազդուրվեք։ Ձե՞ք առարկում։

Լիլիի այդչափ ջերմ և հոգատար վերաբերմունքը կաշխատել էր Կամոյի լեզուն։ Նա իրեն բարոյապես այնպես վարձատրված էր զգում, որ եթե հազար կյանք ունենար, հազարն էլ կզոհեր Լենինի առաջին խոսք պահանջով։

— Իսկ դուք նոր վերարկու ունե՞ք,— ասաց Լիլին ու նայելով Կամոյի մաշված վերարկուին, ավելացրեց։

— Սառնհոլմում մայրս տաք ու փափուկ մի մուշտակ է նվիրել ինձ։ Ես այն ձեզ կտամ, որ Բելգիա գնալիս ճանապարհին չմրսեք...

Եվ Լիլիը պահարանից հանելով մորից նվեր ստացած

չքեղ մուշտակը, դրեց կամոյի ուսերին: Կամոն իրեն թոլթոլվին կոլցրել էր Իլիչի այս ջերմ ու հոգատար վերաբերմունքից: Նա մինչև ականջները կարմրած՝ հագիվ կարողացավ չհնչել.

— Թանկագին Իլիչ...

Եվ հուզմունքից խոնավացան Կամոյի աչքերը: Լենինն ամուր սեղմեց Կամոյին իր կրծքին: Կամոն բախտ ունեցավ մոտիկից, շատ մոտիկից լսելու Իլիչի սրտի զարկերը:

— Առողջացեք, կազդուրվեք, դուք մեզ դեռ շատ եք պետք,— անընդհատ կրկնում էր Իլիչը:

Փարիզում եղած ժամանակ Կամոն ապրում էր Իլիչի տանը՝ շրջապատված նրա բացառիկ հոգատարությամբ: Ամբողջ ժամերը նրանք զրուցում էին: Իլիչին հետաքրքրում էր հատկապես Կովկասի ընկերների դործունեությունը, նրանց հետագա անելիքները: Կամոն հիացած ու զգացված էր նրա ընդունելությունից, նրա հոգածու վերաբերմունքից իր վիճակի, իր առողջության նկատմամբ:

Չնայած Լենինի հորդորներին՝ Կամոն այնպես էլ բելգիա չէրնայ՝ աչքը բուժելու: Մի քանի ամիս Փարիզում Լենինի մոտ ապրելուց հետո նա վերադարձավ Թիֆլիս և առաջին իսկ օրից նետվեց կյանքի եռուն ջրապտույտի մեջ: Սակայն հենց այս օրերին էլ ձերբակալվեց և դատապարտվեց մահապատժի...

ՄԱՀԱՊԱՏԺԻՑ ՏԱԺԱՆԱԿԻՐ ԱԶԱՏԱՏՆԿԻՆ

Կամոն ձերբակալվեց: Նա ճանաչված էր իբրև պետական բարմաթիվ հանցագործությունների հեղինակ: Տասնմեկ զաղտնի տպարաններ հիմնելը, Նախալովկայում գինված ապստամբության ակտիվ մասնակցելը, Երևանյան հրապարակի նշանավոր դեպքը, խելագար ձևանալով զերմանական առաջնակարգ դիմանականներին և ցարական դատարանին խաբելը, Միքայելյան հիվանդանոցից փախչելը և հազար ու մի այլ հանցանք-

ներ, որոնցից յուրաքանչյուրի համար դնդակահարությունն էր սպասում նրան: Կամոյի դատավճիռը վաղուց էր կայացվել: Նա սպասում էր վճիռն ի կատար ածվելուն: Հոգով խաղաղ էր նա և իր վիճակի հետ արդեն հաշտված: Սակայն մի դեպք նրան ստիպեց նորից մտածել փախչելու և կյանքն ազատելու մասին: Մի օր կարցերի հսկիչը եկավ Կամոյի մոտ հետը բերելով նավթի մի վոքրիկ լապտեր:

— Սա ընկերդ է ուղարկել, որ լույսի տակ վերքերդ կապես,— ասաց հսկիչը լապտերը տալով նրան:

Կամոն անմիջապես գլխի ընկավ, որ լապտերը որոշակի նպատակով է ուղարկված, քանի որ ինքը վերք չուներ կապելու, սակայն մխմխա ձև տալով խոսակցությանը, դիմեց հսկիչին.

— Իսկ որտե՞ղ է ընկերս:

— Հարևան կարցերում, դու վերքերդ կապիր, ես կգամ լապտերը տանելու,— ասաց նա ու դուրս գնաց:

Ուշադրությամբ զննելով լապտերը, Կամոն նրա մի կողմից հանեց մի վոքրիկ նամակ, որով ընկերը հետաքրքրվում էր Կամոյի վիճակով և հարցնում, թե արդյոք չէ՞ մտածում փախչելու մասին: Հույսի մի պայծառ շող փայլեց Կամոյի դլխում, հուզված ու դողդողուն ձեռքով նուշն թղթի հակառակ երեսին նա գրեց մի քանի տող՝ խնդրելով ընկերոջը սղոցներ ու մեծ քանակով քնաբեր փոշի ճարել և որևէ կերպ ուղարկել իրեն: Նամակը դրեց, տեղավորեց էր լապտերի մեջ, երբ հետ եկավ հսկիչը: Կամոն խնդրեց նրան վերադարձնել լապտերն ընկերոջ, ասելով, որ ինքն արդեն իր վերքերը կապել է:

Այդ օրվանից Կամոյին հանգիստ չէր տալիս փախչելու միտքը: Նրան մտատանջում էր մի այլ հարց ևս՝ իր մահավճիռը ի կատար ածելու ձգձգումը: Ջարմանքն ավելի ևս խորացավ նրա մեջ, երբ մի օր նրան այցելության եկավ ինքը՝ դատախազ Գալիցկինսկին: Ջարհատո՞ւկ էր այդ, որ խաղում էր բախտը Կամոյի հետ մահվան չեմքին, թե՞ մի կախարդական հանելուկ, որի

լուծման համար անզոր էր նրա միտքը: Կամոն դատաստաղ Գալիցինակու դեմքը զննելու ու իրեն տանջող հարցերի պատասխանները ստանալու հարկ չուներ: Պարզ էր, որ եկել էր հայտնելու.

— Հանցագործ Կամո Աբչակի տեր-Պետրոսյան, վաղը ձեզ տանելու են գնդակա...

— Է՛հ, մահվանից այն կողմն էլ հո տանջանք չկա՞,— դառնությամբ մտածեց Կամոն:

Դատաստաղ Գալիցինակին իրեն ուղեկցող բանտապետին ճանապարհ գնելուց հետո, նստեց Կամոյի մահճակալին՝ հառաչելով թղթախաղանակը ծոցերին գնելով, և Կամոյին էլ հրավիրեց նստել: Ծանր էին Կամոյի վրից մինչև ոտքերը ձգված շղթաները: Ինքն էլ հյուծված էր և ուժասպառ, սակայն լի արժանապատվության զգացումով: Նստելու վոխարեն նա կանգնեց ամբողջ ձգված և հպարտ կեցվածքով: Այդ, ըստ երևույթին, դուր եկավ դատաստաղին ու նա վեր կենալով տեղից՝ մոտեցավ Կամոյին:

— Դուք գիտե՞ք, որ ձեզ մահ է սպասում...

— Իմ գերեզմանին մինչև հիմա երեք արշին խոտ պիտի բուսած լիներ: Փառք ընկերներիս, որոնց ջանքերով այսքան էլ ապրել կարողացա:

— Զարմանալի է,— ուսերը թոթվեց դատաստաղը:

— Ի՞նչն է զարմանալին, պարոն դատաստաղ:

— Ձեր սառնասիրտ վերաբերմունքը դեպի մահը:

— Է՛հ, մի օր պիտի մեռնե՞լ, թե՞ չէ:

— Ձեր մասին շատ լեգենդներ էի լսել, և անկեղծ ասած, մի տեսակ կասկածով էի վերաբերվում լսածներիս: Ողբալիորեն վիճակում ձեր այս խոսքերը միանգամայն վերացրեցին իմ կասկածները ձեր նկատմամբ և համոզեցին ինձ, որ դուք անընկճելի բնավորության տեր մարդ եք: Այնուամենայնիվ, մեռնել ձեր հասակում, դեռ մի լավ օր չտեսած...

— Սխալվում եք, պարոն դատաստաղ, ես լավ օրեր շատ եմ տեսել, դուք իմ կյանքը լավ չգիտեք,— պատասխանեց Կամոն:

— Զլիսո՞վ, ախ, մյուս այցելությանս ժամանակ կպատմեմ ձեզ ձեր կյանքի դեպքերից և դուք կհամոզվեք, որ ինձ հայտնի է ձեր կյանքը: Այժմ չտապում եմ: Ռոմանովյան տոհմի երեքհարյուրամյա հոբելյանն է առնվում: Տոների հետ կապված հարցեր կան լուծելու: Շտապում եմ,— կրկնեց դատախազն ու կամոյի ձեռքն ամուր սեղմելով դուրս գնաց:

Կամոն մնաց տարակուսանքի մեջ: «Ի՞նչ է ուզում ինձանից այս մարդը: Սպանե՞լ է ուզում, թող սպանի, էլ ուր է հոգուս հետ խաղում», ինքն իր հետ խոսում էր Կամոն ու չէր կարողանում դատախազի վերաբերմունքից որևէ եզրակացության գալ: Հաջորդ օրն իսկ եկավ դատախազը և իսկույն վերսկսեց իր ընդհատված խոսակցությունը.

— Ո՞րն եք դուք ձեր կյանքի լավ օրը համարում, Կամո Աբշակովիչ, բանտից—բանտ, աքսորից—աքսոր, անհանգիստ ու կիսաքաղց կյանքը, այս չէ՞ ձեր կյանքի համառոտ բովանդակությունը: Հիմա էլ այսքան երեստասարդ, այսքան քիչ ապրած...

Կամոն ընդհատեց նրան.

— Ճիշտ է, քիչ եմ ապրել, բայց իմ կյանքի մեջ պարապ ժամեր չեմ ունեցել: Այն վեհ գործին, որին ծառայում են իմ մեծ ուսուցիչները, ես ավել եմ այն՝ ինչ կարողացել եմ տալ առանց խնայելու, իսկ հիմա, երբ կյանքս է պահանջվում՝ կտամ նաև կյանքս...

Դատախազը լուռ լսում էր և անկեղծ համակրանքով լցվում դեպի Կամոն: Նա ցանկանում էր որևէ կերպ ցույց տալ իր համակրանքը դեպի նա և նրա գործը: Դատախազն սկսեց խոսել մեծ ռեվոլյուցիոներների մասին և հայտնեց Բեբելի մահվան լուրը, կարդաց պերմանական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոմիտեին ուղղված հեռագիրը, ապա խոսեց Բեբելի մահվան առթիվ Պլեխանովի գրած հուշերի մասին, ինչպես նաև Կոլկասից ուղարկված ցավակցական բազմաթիվ հեռագրերի մասին՝ ուղղված պերմանական ժողովրդին:

Այս դրույթների ընթացքում, մոտիկից ծանոթանալով կամոյի հերոսական բնավորությանը, դատախազը ցանկացավ օգնել նրան: Ուստի նրա գործը հիմնովին ուսումնասիրելու պատրվակով մահափաճառի ի կատար ածելն այնքան ձգձգեց, որ վրա հասան Ռոմանովների տան երեքհարյուրամյա հոբելյանի հետ կապված հանդեսները, ապա և նշանավոր մանիֆեստը, որով կամոյի մահափաճառը փոխարինվեց քսան տարվա տաժանակրության: Այդ լուրը մեծ ցնծություն պատճառեց թե կամոյին և թե նրա ընկերներին: Այդ նշանակում էր, որ կամոն դեռ պիտի ապրեր: Այդ նշանակում էր, որ նա դեռ պիտի գործեր...

Կամոյի մահվան դատավճիռը ձգձգելու և նրա գործին այդ ձևով ընթացք տալու համար դատախազ Փալիցինսկին կառավարության աչքում կորցրեց իր հեղինակությունը: Նրան զրկեցին բարձր պաշտոնից, սակայն ինչ արած: Գալիցինսկին գիտակցում էր, որ մոմը վառվելով է լույս տալիս, մարխը՝ սպառվելով տաքացնում...

Մահապատիժը տաժանակրությամբ փոխարինելն անչուշտ մեծ ուրախություն էր թե Կամոյի և թե նրա ընկերների համար, որոնք այժմ ամեն կերպ ելք էին փնտրում տեսակցել նրա հետ՝ մինչև նրան աքսորելը: Այդ տեսակցությունը Թիֆլիսում հնարավոր չէր, որովհետև Կամոն դտնվում էր խիստ հսկողության տակ: Թիֆլիսի Կոմիտեում այդ առթիվ նիստ գումարվեց և որոշվեց Բաքու ուղարկել մի քանի հոգու Ստեփան Շահումյանի օժանդակությամբ Կամոյի հետ տեսակցելու և փախուստի պայմանները ստեղծելու համար:

Կես գիշեր էր արդեն, երբ գնացքը հասավ Բաքու: Թեև ժամանակն անհարմար էր որևէ այցելության համար, բայց և այնպես, նկատի ունենալով խնդրի կարևորությունը, Կամոյի բնկերներն անմիջապես գնացին Շահումյանի մոտ: Նրանք ենթադրում էին, որ Շահումյանը հոգնած առօրյա լարված աշխատանքից, այդ ուշ ժամին քնած կլինի, բայց զարմացան, երբ հասնե-

լով նրա բնակարանը, բայց լուսամուտից տեսան, որ նա անց ու դարձ է անում սենյակում, գրկած իր փոքրիկ երեխային: Սենյակից կողմնակի մարդու խոսակցության ձայները էլին լսվում: Նրանք կանդ առան լուսամուտի տակ:

— Դուռն ոսոխականներ են, խուզարկում են բնակարանը,— ասաց ընկերներից մեկը: Նրանք սկսեցին սկանջ դնել:

— Ստեփան Գեորգեվիչ, երեխայի համար նպատակահարմար եմ գտնում սալոլ կոչված դեղ դուրս գրել, այո, սալոլ: Կտաք օրը կես փոշի: Պա՞րզ է:

Կամոյի ընկերները հասկացան, որ ոչ մի խուզարկություն էլ չի կատարվում: Շահումյանի երեխան հիվանդ է, բժիշկ են հրավիրել: Ընկերներից մեկը քաշեց էլեքտրական զանգի կոճակը: Շահումյանը երեխան տալով իր կնոջը, մոտեցավ լուսամուտին և հարցրեց.

— Ո՞ւմ եք ուզում:

Ընկերները հայտնեցին իրենց ով լինելը: Դուռը բացեց ինքը՝ Շահումյանը, ներս հրավիրեց նրանց, ծանոթացրեց կնոջ հետ, որ նստած էր հիվանդ երեխայի մահճակալի մոտ՝ տխուր դեմքով և բժիշկի հետ: Շահումյանն ուշադրությամբ լսեց նրանց, հարցրեց դատի մանրամասնությունների մասին, հետաքրքրվեց Թիֆլիսի կոմիտեի աշխատանքներով: Շահումյանի բոլոր հարցերին զոհացուցիչ պատասխաններ տալով՝ ընկերներն անցան բուն նյութին, խնդրելով օգնել Կամոյին ճանապարհից փախցնելու համար:

— Իսկ ի՞նչ է անհրաժեշտ դրա համար,— հարցրեց Շահումյանը:

— Փող և քնաբեր փոշի,— պատասխանեց մեկը:

Քնաբեր փոշու հարցը հենց տեղն ու տեղը լուծվեց: Շահումյանի տնային բժիշկը խոստացավ տալ պետք եղած քանակությամբ փոշին: Մնում էր դրամի հարցը, որի համար պետք էր դիմել Բաքվի կոմիտեի օգնության, որը և Շահումյանը խոստացավ անել հենց այդ օրն իսկ:

Հիվանդ երեխային կնոջ և բժշկի հոգածությանը հանձնելով Շահումյանը Թիֆլիսից եկած ընկերների հետ առանձնացավ և ողջ գիշերն անցկացրեց Կամոյի վիճաբանի ծրագիրը մշակելով:

Լուսաբացին մոտ Շահումյանը նորից ընկերների հետ դուրս եկավ տանից և չտապեց դեպի այն ճանապարհը, որտեղով պիտի անցներ բանտարկյալների էտապը: Սակայն այդ օրը էտապը չերևաց: Շահումյանին հայտնվեց Թիֆլիսից տեղեկանալ էտապի ժամանման ստույգ օրվա մասին:

Այդ նույն օրը նրանք նորից չտապեցին կայարան: Շահումյանն արտաքուստ հանդարտ էր, սակայն ներքուստ անհանգիստ էր և հուզված: Նրան խորը ցավ էր պատճառում պարտիայի խմբադրչի անդամներից մեկի՝ Կամոյի, այդ նվիրված, աղնիվ ու խիզախ բոլշևիկի վիճակը: Այդչափ կհայտնվի՞ նրան վիճաբանել, իսկ եթե վիճաբանը չհայտնվի, արդյոք կդիմանա՞ տաժանակիր աշխատանքի դաժան պայմաններին: Այս հարցերն էին մտատանջում նրան այն պահին, երբ մյուս ընկերների հետ անցուդարձ էր անում կայարանի տակ: Նա տխուր էր: Աչքի մի անհասանելի ճեղք իր մեջ էր առել նրա սիրտը ու սեղմում էր անդադար: Պակաս հուզված չէին նաև մյուսները: Վերջապես երկար սպասելուց հետո երևաց էտապը: Ամեն ինչից երևում էր, որ կատավարությունը այս անգամ առանձնապես խիստ միջոցներ էր ձեռք առել՝ Կամոյի աքսորման առթիվ որևէ խռովարարություն չառաջանալու համար: Կրկնակի հսկողություն էր նշանակված էտապի վրա, ավելացված էր ուղեկցող ոստիկանների թիվը: Բանտարկյալները քայլում էին թև-թևի:

— Մի՞թե չեն բերել,— մտածում էր Շահումյանն ու անհանգիստ դննում չորքերը: Վերջապես նա տեսավ Կամոյին: Կամոն էլ նկատեց Սահակյանին, նայեց, կարմրեց, ժպտաց թևեհասկի, բարևեց ու անցավ՝ գլուխը բարձր, թևեթև ու առույգ քայլերով, զնգացնելով շղթ-

թանեը... Շահումյանը հուզված էր: Նա դողդողջուն ձեռքով հրաժեշտի չարժում արեց:

Ղեթայված աքսորականները մոտենում էին ապրանքատար դնացքի վագոններին: Շուտով սկսեցին նրանց բարձրացնել, ավելի ճիշտ, խցկել վագոնները: Մոտենալ անհնարին էր: Թիֆլիսից եկած ընկերներից մեկը, կապոցը ձեռքին արագ մոտեցավ Շահումյանին, ինչ որ բան չընկայց նրա ականջին, ապա մի ոտքյունով թռավ ու կանգնեց վագոնի սանդուղքի վրա: Կոնդուկտորը դիմադրում էր նրան, և ոչ մի կերպ թույլ չէր տալիս վագոն մտնել: Մի քանի ղեթադրամ պետք եղավ միայն՝ նրա դիմադրությունը կատելու և ներս մտնելու համար: Ընկերը հանձնեց կամոյին կապոցը, որի մեջ էին այն բոլոր պարագաները և հագուստները, որոնք պետք էին կամոյին փախչելու համար, ապա հրաժեշտ տվեց նրան, համբուրվեց ու իջավ վագոնից: Ընչեց գանգը: Վերջին ղեթայվածները ևս վագոն բարձրացան: Գնացքը չարժվեց: Սկզբում դանդաղ, ապա հետզհետե արագացրեց ընթացքը, մինչև բոլորովին հեռացավ անաղորմությունից, թողնելով հետևում հարազատներին և բարեկամներին, որոնց ականջին դեռ երկար հնչում էր ղեթաների տխուր չառաչը...

Կամոն ստացավ պետք եղած հագուստը, սղոց և փոչի: Հարմար առիթ գտնելով՝ նա այդ փոչիով քնեցնում էր պահակներին և սկսում սղոցել իր ոտքերի ղեթանները: Սակայն գործի կեսը չավարտած կտրվում է սղոցը: Մեծ ցավով նա հրաժարվում է փախուստի մտքից և ստիպված հաշտվում աքսորականի իր վիճակի հետ:

ԿԱՄՈՆ ՏԱԺԱՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աքսորի ճանապարհից փախչելու անհաջող փորձից հետո էլ Կամոն հույսը չէր կտրել բոլորովին և չարունակում էր նոր ծրագրեր կազմել: Տեղ հասնելուց հետո, հոգնած հուզումներից և տանջալի ուղևորությունից,

նա մի պահ, «հանդիսատ» ասվեց երեկ, համարվելով նոր մեջալայրի և մարզիկանց հետ: Երբ էլ տաժանակիր կյանքը լիներ մերօրինակ ու տաղտկալի, եռուզեռից հեռու, այնուամենայնիվ կամոն չէր մի զբաղմունք գտնել, մի բանով զբաղվել՝ մոայլ մաքերը ցրելու համար: Նա իր ժամանակի մի զբաղված մարդ անց էր կացնում տաժանակիրների մեջ՝ չընկճվելով և պինդ մնալով, թեև ինչպես նրանցից ամեն մեկը տարված է մի որևէ զբաղմունքով: Մի քանիսը կաղամբներ էին հյուսում, մյուսները չրջանակներ ու ափոռներ պատրաստում: Մի ուրիշ խումբ սպիտակեղեն էր կարում: Ահա կամոն մոտենում է մի խումբ հյուսն տաժանակիրների: Նրանցից մեկն իսկույն աթոռ է առաջարկում կամոյին: Սա նըստում է և ուշադիր դիտում նրանց աշխատանքը: Կամոյի ձեռքին մի նամակ կար: Ընկերները հետաքրքրվում են նամակով: Այդ կամոյի զրած նամակն էր իր քրոջը, որն արդեն վերադարձել էր աքսորից, գանվում էր Թիֆլիսում և նամակագրությամբ կապվել էր եղբոր հետ: Ընկերների խնդրանքով կամոն կարդում է իր նամակը: Տաժանակիրների համակրանքը դեպի կամոն ատանապատկվում է, երբ նրանք տեսնում են, թե ինչպես, չնայած իր հյուծված, ծանր վիճակին, տաժանքի անտանելի պայմաններին, կամոն ուրախ բովանդակությամբ նամակներ է գրում իր քրոջը, ցանկանալով միշտ բարձր պահել նրա տրամադրությունը: Աքսորյալներին հատկապես դուր եկավ նամակի հետևյալ հենաախնդ տողերը· «Մի քիչ ոտքար եմ մարմնով, բայց առույգ եմ հոգով և սպասում եմ լավ, շատ լավ օրերի...»

Տաժանակիրներից նրանք, ովքեր վաղուց դիտեին կամոյին, ճանաչում էին նրա հոգին, նրան վերաբերում էին խորին հարգանքով, իսկ ովքեր լսել էին միայն, բայց չէին տեսել, այժմ որոնում էին նրա ընկերությունը և ձգտում ավելի մոտեմանալ նրա հետ: Կամոն ինքն էլ իր հերթին չէր խուսափում նրանցից: Իր ունեցած վերջին պատառը բաժանում էր նրանց հետ, կամ

պատմում մեծ մարդկանց հետ ունեցած իր հանդիպում-ներից: Տաժանակրներին դուր էր գալիս կամոյը պարզ, ազնիվ վերաբերմունքը դեպի յուրայինները և ատելա-վարմունքը դեպի բռնակալները: Նույնիսկ ամեն-մեհատաժան ցրտերին կամոն դվնարկ չէր ծածկում, որպեսզի մեծավորներին հանդիպելիս դվնարկ չհանի, դուրս չտա և դա ավելի էր բարձրացնում նրան ընկեր-ների աչքում:

Վերադառնալով աքսորյալների մոտից, կամոն ա-ռանձնանում էր ամերայում: Նա հիշում էր իր հանդի-պումները սիբելի մարդկանց, հարազատների և ընկեր-ների հետ: Նամակների մեջ կամոն խնդրում էր Ջա-վահիրին և մորաքույր Լիզային՝ չընկճվել հոգով և չտա չմտատանջվել իր համար: Կամոյի ծանր կյանքի միակ ուրախությունը քրոջից ստացած նամակներն էին: Այդ օրերին կամոն զառնում էր անհանգիստ, փա-թաթվում էին վշտերը, կարծես դադարում էր կոզերի դավը, տեսողությունից թուլացած աչքերը տեսնելու նոր ուժ ու կարողություն էին ստանում: Մի օր էլ կա-մոն այսպիսի բովանդակությամբ նամակ գրեց քրոջը. «Սիբելի քույր իմ, առանձնապես խնդրում եմ հնար-վորին չափ օգնես ուսանող Անդրեին: Դու գիտես, որ նա տենչում է իր պետական քննությունները չուտա-փությամբ տալու և կյանք դուրս գալու մասին: Խնդրում եմ օգնես նրան այդ հարցում, թե չէ նա խորապես վըշ-տանում է»:

Երկար ժամանակ կամոն անհամբեր ու լարված սպասում էր իր այդ նամակի պատասխանին, որը չատ բան էր պարզելու նրան: Վերջապես ստացվեց պատաս-խանը: Ջավահիրը, ինչպես և պետք էր սպասել, գվախ էր ընկել, թե կամոն ինչ է ուզում, և գրել էր, թե ու-սանող Անդրեյը մի քանի ամիս էլ գետ պետք է սպա-սի... Այդ նամակը մեծ հույս ներշնչեց կամոյին: Նա որոշեց համբերությամբ սպասել այդ մի քանի ամիսը, ինչքան էլ ծանր ու դժվար լիներ սպասումը: Անցան ամիսներ: Այդ ժամանակամիջոցում քույր ու եղբայր

կանոնավոր նամակագրություն ունեին: Քանի մտե-
նում էր պայմանաժամը, այնքան անհամբեր էր դա-
նում Կամոն: Ջավահիրն իր նշած ժամկետին Թիֆլիսից
եկավ խարխալյան տաժանավայրը՝ Կամոյին այցելու-
թյան: Եղբորը տեսնելուց հետո, նրա առաջին գործն
եղավ խնդիր հարուցել բանտի վարչության առաջ՝ կա-
մոյին բանտից դուրս՝ ֆիզիկական աշխատանքի ու-
ղարկելու համար: Լսելով, որ բանտի վարչությունը
մերժել է նրան աշխատանքի ուղարկել, Կամոն հայտ-
նեց քրոջը, որ վճռել է անպայման փախչել և հայտնեց
նրան իր փախուստի մասնագիտոր պլանի մասին: Լսած
իր մտադրության Կամոն պետք է մեռած ձևանար և
փախչեր դերեզմանատնից: Ջավահիրը խնդրեց եղբորը
առայժմ չգիմել այդ մտանգավոր քայլին, սակայն ան-
օգուտ, Կամոն մնաց անդրդվելի իր որոշման մեջ: Նա
վաղուց արդեն մի ջոգներ էր ձեռք առել նիհարելու և
մաշկի գույնը դեղնացուն գործելու համար և այդ
միջոցառումները որոշակի արդյունքներ էին տվել: Ջա-
վահիրին սաստիկ անհանգստություն էր պատճառում
Կամոյի այդ մտադրությունը: Բանտում ունեցած ծա-
նոթներից մեկի հետ զրուցելիս Ջավահիրը մի անգամ,
ի միջի այլոց, հարցրեց.

— Իսկ ինչպես են վարվում ձեզ մոտ, մեռած բան-
տարկյալների հետ:

— Փայտե ծանր մուրճով նվիճեցյալի ճակատին և
քունքերին մի քանի անգամ ուժեղ հարվածում. հաջողելուց
հետո, թաղում են,— եղավ պատասխանը:

Այս լսելով Ջավահիրը չտատանվեց Կամոյի մոտ,
հայտնեց նրան այն, ինչ լսել էր իր ծանոթից և մեծ
չանք թափելով կարողացավ ետ կանդնեցնել նրան այդ
մտքից: Փախուստի միակ հնարավոր ճանապարհը աշ-
խատանքի դուրս գալն էր: Ջավահիրն սկսեց նորից դի-
մել բանտի վարչությանը: Նրա խնդրագրերը անհետ-
վանք չանցան: Բանտի վարչությունը, կարծես թե ար-
դեն որոշած էր Կամոյին ֆիզիկական աշխատանքի
ուղարկելու բանտից դուրս: Այդ բանն արագացնելու

համար անհրաժեշտ էր կաշառել բանտի կառավարչին։ Գետք եղած դրամը ձեռք բերելու նպատակով Ջավահիշվիլը եղբոր համաձայնությամբ մեկնեց Թիֆլիս, բայց չկարողացավ պայմանավորված ժամկետին վերադառնալ։ Կամոն սաստիկ անհանգստանում էր։ «Ի՞նչ պատահեց նրան, ինչո՞ւ չի վերադառնում» — մտատանջվում էր նա։ Ընկերներն աշխատում էին նրան հանգըստացնել, ասելով թե. «Մի դուցե քաշրդ հիվանդացել է»։ Սակայն Կամոն օրեցօր ավելի անհամբեր էր դառնում։ Գործի խակությունն այն էր, որ Ջավահիշվը կամոյին օգնելու և պարտիական ընդհատակյա հանձնարարություններ կատարելու պատճառով ձերբակալվել և նետվել էր Մետեխի բանտը։ Կամոն նորից մնաց առանց քրոջ, առանց հոգեկան այդ ուժեղ նեցուկի։ Ազատվելու վերջին հույսից զրկված նա օրերով դուրս չէր գալիս կամերայից։ Զրկվել էր ախորժակից, քնից։ Անզադար քայլում էր իր խցիկի մի անկյունից մյուսը, ծանր ու խորին մաքերի ծովը ընկած, առանց որևէ հույսի, թե մի օր իր առաջ կբացվեն ազատության դռները...

Փետրվարյան դեպքերի լուրը մեծ ուրախություն պատճառեց նաև Խարկովի տաժանակիրներին։ Անհամբեր ու հուզված սպասում էին նրանք այնքան երազած իրենց ազատությանը։ Միայն Կամոն էր, որ անմասն էր մնացել ընդհանուր ուրախությանը։

«Ո՞վ է, ի՞նչ է այդ նոր կառավարությունը, որ չի դալիս օգնության։ Ո՞վ է ինքը, ո՞ւմ համար է գործել, որ այդպես հեշտությամբ մոռանում են իրեն, նշանակում է այդ «նոր» կառավարությունն այն չէ, որին ինքն սպասում է»։

Չնայած կատարված դեպքերից չափազանց հեռու էր գտնվում նա, սակայն Կամոն պարզ ու որոշակի զգում էր, որ նոր կառավարությունը իր սպասածը չէ։ Այդ օրերին Կամոն գրեց քրոջը. «Սիբելի քույր, կըցկտուր տեղեկություններից իմացանք, որ պետական հին սիստեմը փոխվել է նորով, բայց ես ոչ մի լավ բան

չեմ սպասում այդ «նորից»: Ինձ դեռ չեն ազատել բանտից, գուցե և չազատեն... Եթե ինձ չազատեն, սիրելի իմ քույր, դու չանհանգստանաս... Միայն իմ խնդիրն այն է քեզանից, Թանկագին քույր, չմոռանաս ինձ և որքան կարող ես շուտ գաս ինձ այցելության, իսկ եթե մոռանաս ինձ, այդ դեպքում...

Այստեղ Կամոն կանգ առավ մի պահ՝ հարմար բառ չգտնելով: «Այդ դեպքում ի՞նչ» կրկնեց ինքն իրեն նա, ապա չարունակեց. «Այդ դեպքում ինձանից այլևս ոչ մի նամակ չես ստանա» ավելացրեց նա, համոզված լինելով, որ քրոջ համար ամենամեծ պատիժը իր սիրած եղբորից մոռացված լինելը, նամակ չստանալն է:

Մինչդեռ նա այդ նամակին էր գրում իր քրոջը, կամերայի դուռն աղմուկով բացվեց, ներս թափվեցին ընկերները:

— Կամո,— ազատված ես տաժանքից, ահա հեռագիրը...

***

Ազատվելով խարկովյան տաժանքից, Կամոն ուժասպառ և հյուծված հասավ Թիֆլիս ու մի քանի այդտեղ իմացավ քրոջ բանտարկության մասին:

Կամոյի առողջական վիճակն այնքան էր վատացել, որ Թիֆլիսի Կոմիտեն նրան որևէ գործ հանձնարարել չէր ուզում: Եվ ահա Կոմիտեի պահանջով և ընկերների օգնությամբ Կամոն առողջանալու և կաղդուրվելու է մեկնում Ուցերայի հանքային ջրերը, ուր շատ չուտով կաղդուրվում է: Բժիշկներին զարմանք էր պատճառում Կամոյի սպառակույն այն խիտ ռեժիմը, որ սահմանել էր նա ինքն իր համար: Ամեն օր վաղ առավոտյան մինչև գոտին լվացվում էր սառը ջրով, ապա մյուլլերյան սիստեմով մարմնամարզությամբ զբաղվելուց հետո վերադառնում իր սենյակը, որի լուսամուտները միշտ բաց էր թողնում թարմ օդի համար: Զարմանալի չէ, ուրեմն, որ Կամոն կարճ ժամանակամիջոցում կարողանում է վերականգնել կորցրած ուժերը և նորից նետվել կյանքի հորձանուտը:

Ուշերայի հանքային ջրերից վերադառնալով, Կամոն մորաքույր Լիզայի և Ջավահիրի հետ գնաց Փորի և այցելեց մոր շիրիմին: Նա տապանաքար դրեց մոր գերեզմանի վրա, թարմ ծաղիկներով պատեց գերեզմանը և ծունկի եկած համբուրեց սիրելի մոր շիրմաքարը:

Կամոն կատարելապես կազդուրված էր թե մարմնով և թե հոգով: Նա նոր ծրագրեր էր կազմում իր անելիքների համար: Անասելի կարոտը դեպի Լենինը, Կամոյին մղում էր դեպի Մոսկվա: Լենինին տեսնելու և նոր գործունեություն սկսելու համար Կամոն ուղեվորվեց Մոսկվա՝ Լենինի մոտ:

ԿՐԵՄԼՈՒՄ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Կամոն մեկ անգամ չէ, որ հանդիպում էր ունեցել Լենինի հետ, սակայն այդ հանդիպումը, որ տեղի ունեցավ 1917 թվի դեկտեմբերի կեսերին Կրեմլում, զարմանալի Կամոյի կյանքի անմոռանալի էջերից մեկը:

Մի անգամ, երբ Կամոն վերադարձավ հյուրանոց, հայտնեցին, որ Լենինը Կրեմլից զանգահարել է ու չուզով իր մոտ կանչել նրան: Կամոյի դեմքը վայելեց հրճվանքից.

— Ասել է թե Իլիչը նոր հանձնարարություններ սիրտ անի,— մտածեց նա ու չսպասեց Կրեմլ: Տեղ հասավ հենց այն ժամանակ, երբ նոր էր վերջացել ժողկոմսովետի նիստը: Կամոն մտավ նիստերի դահլիճը: Այնտեղ էին բոլոր դեկավար ընկերները: Կամոյի ներս մտնելուն պես Լենինն ու Ստալինը մոտեցան նրան, բարևեցին և սկսեցին հարց ու փորձ անել նրան իր առողջության, տրամադրության և վերջին աքսորի մասին: Կամոն հակիրճ պատասխանում էր տրված հարցերին և զրույց, որ մեծ առաջնորդները ինչ որ ասելիք ունեն, բայց չեն ասում: Լենինը ձեռքը բարեկամաբար դրել էր Կամոյի ուսին, աչքերը կկոցած նայում էր նրան և յուրովի ժպտում:

— Վլադիմիր Իլիչ, ժամանակը չէ՞, որ մենք հեմ-

նավին քանջինջ անենք մեր բոլոր թշնամիներին,— հարցրեց Կամոն:

Իլիչը թեթևակի ժպտաց: Կամոն ոգևորված շարունակեց:

— Այ, օրինակ, ասում են, որ Փարիզի կոմունայի օրերին լավ դատաստան էին տեսնում ռևոլուցիայի թշնամիների հետ...

— Ո՛չ, դու պատմությունն էլ պիտես,— բարձր ու աչքառությամբ ծիծաղեց Իլիչը և վոխեց խոսակցության նյութը:

Լենինից ու Ստալինից Կամոն տեղեկացավ, որ Շահումյանին նշանակել են Կովկասյան դործերի արտակարգ կոմիսար: Այդ կապակցությամբ, անհրաժեշտ էր չտապ մի մեծ դումար վոխադրել Թիֆլիս: Կամոյի Մոսկվայում գտնվելը չատ ժամանակին էր: Նրանից լավ ոչ ոք չէր կարողանա կատարել այդ հանձնարարությունը: Ստալինը համառոտակի ծանոթացրեց Կամոյին երկրի դրությանը, մանրամասն հանձնարարություններ արեց հայտնելու Թիֆլիսի կոմիտեի անդամներին, հանձնեց Շահումյանին կոմիսար նշանակելու մանդատը, դրամը և ապա հարցրեց.

— Ե՞րբ ես ուզում ճանապարհ ընկնել:

— Հենց այսօր կմեկնեմ,— պատասխանեց Կամոն:

— Եվ լավ էլ կանես, որքան չուտ՝ այնքան լավ:

Լենինն ու Ստալինը Կամոյին հաջողություն մաղթեցին և ճանապարհ դրին:

Ոգևորված բարձր վստահությամբ, որ նորից վերադառնում է դեպի իր սիրած դործը, Կամոն նույն օրն ևեթ դնացք նստեց ու ճանապարհ ընկավ դեպի Թիֆլիս՝ ծպտված ուսանողական համազգեստով: Ձերեկները քնում էր, գիշերները՝ արթուն մնում: Այսպես ավելի ապահով էր: Մինչև Գրոզնի հասնելը նրա չուրջը կասկածելի ոչ ոք չերևաց: Գնացքը Գրոզնուց դուրս դալիս Կամոյի կուպեն մտավ կաշվե կիսամաշ բաճկոնով, ճարպատ կեպիով մի կիսամարդ: Փոքր, չոր ու ոսկրատ մեկն էր այդ մարդուկը: Անհանդիստ, արագա-

չարժ աչքերի դողունի հայացքով չուրջը պիտելով նա նտեց Կամոյի դեմ–դիմաց, ձևանալով թե ներհուն է:

— «Սրան տեսեք, տատանի թաղում լարախաղ է խաղում: Ես քեզ պես հազարների եմ մոլորեցրել, դու հիմա դիմացս նստել տաս քսան տալով լրտես՞ես ինձ»,— ասաց մտքում Կամոն և իր կուպեն փոխեց:

Հանդրվ. կայարանում կատկածելի այդ նույն անձնավորությունը նորից հայտնվեց Կամոյի դողքին:

— Ի՞նչ անել, Թուլլ տալ, որ սա ինձ տապալի՞: Ոչ մի դեպքում,— վճռեց Կամոն ու տկեց որոճալ իր անելիքը:

Կես գիշերն անցել էր վաղուց: Վագոնում անց ու դարձը դադարել էր: Կամոյի ուղեկիցը քնա՞ծ էր, թե միայն ձևացնում էր՝ պարզ չէր: Կամոն աննկատելի դուրս եկավ կուպեից, կանչեց վագոնի դռների մոտ փողի ճամպրուկը ձեռքին: Ծխում էր ու նայում գիշերային մթությանը մեջ երբեք հետևից անհետացող վերստաչափերին և ճյուճածածկ տափաստաններին: Գնացքը ծանր հեվալով պատռում էր գիշերային խավարն ու առաջ սլանում: Կամոնին ու մտածում էր Կամոն, թե ինչ ձևով ապատվի իրեն հետապնդողից: Վերջինս զուգահեռ դուրս եկավ կուպեից՝ դողի աչքերով չորս կողմը նայեց և սկսեց որոնել Կամոյին: Կամոն բարձրաձայն հազաց, որ իմաց տա իր տեղը: Բիչ հետո, միջանցքի խավարի մեջ լրտեսը մոտեցավ Կամոյին: Ուզում էր տատուկել նա՞ է, թե՞ ոչ: Գրպանից հանեց ծխախոտը և կրակ խնդրեց:

— Համեցեք,— ասաց Կամոն և վառած ծխախոտը մոտեցրեց նրան:

Լրտեսը վառեց ծխախոտը մի քանի ակնթարթ ուշ–ուշ նայելով Կամոյի դեմքը: Կամոն առանց վայրկյան կորցնելու դրկեց նրան.

— Ես հենց այն մարդն եմ, որին դու որոնում ես, դե գնա, որտեղ քոնը կասես, այնտեղ էլ իմն ասա,— չլսեցավ նրա ականջին Կամոն ու վագոնի բաց դռնից նրան դուրս շպրտեց:

Լավեց մի խուլ ճիչ և ամեն ինչ լռեց դիշերային խավարի մեջ:

Կամոն փողն ու մանդատը անվտանգ հասցրեց Թիֆլիս: Մանդատը տպագրվեց «Կովկասյան բանվոր» առաջին թերթում: Թիֆլիսի կոմիտեն հեռագիր ուղեց Բաքու — Շահումյանին:

Շահումյանի Կովկասյան գործերի արտակարգ կոմիսար նշանակվելու լուրը անսահման ուրախություն պատճառեց կոմիտեի անդամներին: Այդ լուրը որքան հաճելի էր կոմոյի և նրա ընկերների համար, նույնքան անախորժ էր մենշևիկների՝ Անդրկովկասյան կոմիսարիատի համար, որի ձեռքումն էր իշխանության դեկը: Այդ շրջանում Թիֆլիսի բոլոր թերթերը գրում էին Շահումյանի մասին: Հակառակորդ թերթերը ջանք էին թափում վարկաբեկել նրան, բայց ապարդյուն: Շահումյանը պաշտելի էր ժողովրդի համար: Կամոն իր ընկերներով ապաստում էր Շահումյանին: Վերջապես եկավ նա...

Այդ եղավ Շահումյանի վերջին այցելությունը Թիֆլիսին, վերջին հանդիպումը Կամոյի և ուրիշ ընկերների հետ: Վերջին հանդիպումը...

ՍՏԵՓԱՆ ԹՈՒՐԻՍՏԱՆԻ ՀԵՏ

Տխուր ու խառն էր դրությունը թե Թիֆլիսում և թե մերձակա շրջաններում: Զնայած քաղաքը լեփ լեցուն էր զաղթականներով ու որբերով, բայց էլի գլխի-գերեկ դալիս էին նրանք ու հեղեղի պես լցվում ամեն տեղ: Առանձնապես ցավագին դեպքեր էին տեղի ունենում Շամխորում: Մուսավաթները ռազմաճակատից վերադարձող ռուս, հայ, վրացի և ուրիշ ազգի զինվորների ճանապարհը փակել էին Շամխոր կայարանում ու անխնա կոտորում էին նրանց: Ի՞նչ մարդկային սիրտ կդիմանար ու չէր դղկատ այդ վայրագությունների: Ովքե՞ր էին սատկող զինվորները—անմեղ երիտասարդներ, որոնք երեսար բացակայությունից հետո կարոտով տուն էին վերադառնում...

Այդ լուրերը հարկադրում էին Կամոյին մտածել Շամխոր գնալու մասին։ Կամոն մի օր գնաց Թիֆլիսի կոմխան և հայտնեց, որ Շամխոր է մեկնում։ Քաղ գիտենալով նրա հատատուն բնավորությունը, այլևս հարց ու փորձ չարին նրան, թե ինչու է գնում, մանավանդ, որ պարզ էր գնալու նպատակը։

Ճմռան մի ցուրտ օր երբ Կամոն պատրաստվում էր Շամխոր մեկնել, կոմխանից եկավ Ջավահիրը, իր հետ բերելով «Պայքար» թերթի վերջին համարը։

— Ես այսօր քեզ երկու նորություն պիտի հայտնեմ,— ասաց Ջավահիրը։

Կամոն հետաքրքրությամբ նայեց քրոջը։

— Առաջինն այս է. «Վրացի բանվորների լուման հայ դաշնականներին» կարդաց նա թերթում,— Մմբադրության Սուխումի մի խումբ վրացի բանվորներից ու գործակատարներից ստացել է մի մեծ գումար հօգուտ հայ դաշնականների»։

— Այդպիսի նվերներ վրաց ժողովրդից հաճախակի է ստացվում,— ասաց Կամոն, իրերը ճամպրուկի մեջ դասավորելով։

— Այո, ճիշտ է, բայց դու չարունակությունը լսիր. «Մմբադրության ուղղված նամակի մեջ բանվորները գրում են». «Աբհեստականորեն ստեղծված ազգային ատելության ներկա օրերին, երբ հայ և վրացի նացիոնալիստները թունավոր սերմեր են ցանում հարեվան ազգերին իրար դեմ լարելու համար, մենք Սուխումի վրացի բանվորներս, միանգամայն դատապարտում ենք այդ տարրերի քաղաքականությունը և ձեռք մեկնելով սարագիր տաճկահայ ժողովրդին, մեր ցավակցությունն ու բուռն համակրությունն ենք հայտնում նրան»։

— Հրաշալի է, այդ կարճ նամակի մեջ շատ լավ է գծված մեր երկու եղբայրական ժողովուրդների փոխադարձ օգնության կարևորությունը,— բացականչեց Կամոն։

— Դեռ վերջը լսիր,— ասաց քույրը չարունակելով ընթերցումը. «Հոգով ու սրտով ցավում ենք հայ ժողո-

վըրդի կրած դարավոր տանջանքների համար, այլևում նրա կրակով, լալիս նրա արտասուքով»:

— Ա՛յ, հենց այդ բարեկամության մեջ է մեր ուժը,— ասաց Կամոն իր գործը չարունակելով:

— Դու դեռ պատրաստվում ես Շամխոր գնալո՞ւ,— հարցրեց քույրը:

— Ա՛յո, ի՞նչ է որ:

— Չէ՞ որ քեզ մոտ թանգագին հյուր է գալու:

— Հյո՞ւր, ո՞վ է այդ հյուրը:

— Ա՛յ, հենց այդ էլ կլինի այն երկրորդ լուրը, որ պիտի հայտնեի քեզ: Դեհ, խմացիր տեսնեմ, ո՞վ կարող է լինել քո հյուրը:

Կամոն չկարողացավ դուշակել, թե ով էր նրանը: Կենտրոնանալ չէր կարողանում: Ուշքն ու միտքը Շամխորումն էր: Տեսնելով, որ Կամոն չի կարողանում դուշակել, Ջամահիրն սկսեց նկարագրել հյուրին:

— Քո հյուրը, Կամո, մի պատվական հայ է, ո՛ր, ոչ: Պատվական բառը շատ է քիչ նրան բնորոշելու համար: Աշխատասեր ժողովրդի համար մի ապնիվ հոգի է նա: Իր հայրենի երկնքի պես կապույտ-կապույտ աչքեր ունի ու խորունկ սիրտ: Արտաքինով մի անթերի տղամարդ է նա: Գեղեցիկ, վայելուչ, ճակատը լայն, հոնքերը...

Կամոն լարված լսում էր Ջամահիրին ու մտածում, թե ով կարող է լինել նա. իսկ քույրը չարունակեց.

— Փոքրիկ, հմայիչ մորուքը, ճյան նման սպիտակ օճիքը, ընտիր, փողկապով, ապնիվ տեսք են տալիս քո հյուրին: Դե, դուշակիր, թե ով կարող է լինել քո հյուրը:

— Ստեփանն է,— գլուխ ընկավ Կամոն,— ուրեմն նա տացել է մեր հեռագիրն ու գալիս է: Իսկ ե՞րբ է գալու:

— Ա՛յս երեկո:

Կամոյի համար լուսն ժամ, ժամը տարի էր թվում: Այդ ամբողջ օրը նա չկարողացավ որևէ բանով զբաղվել: Հուզմունքից և ուրախությունից չէր կարո-

զանում հանգստանալ: Վերջապես հայվեց ցերեկը, ընկավ երեկոն, բերելով իր հետ ցանկալի հյուրին: Կամոն սենյակի լուսամուտից անհամբեր դուրս էր նայում և երբ Շահումյանը կոմիտեի անդամների ուղեկցությամբ բակ մտավ, նա չկարողացավ սպասել մինչև նրանք սենյակ կմտնեին, դուրս նետվեց ու գրկախառնվեց Շահումյանի հետ...

— Կամո, այդ ի՞նչ եմ տեսնում, դու լաց ես լինում,— գրկում նրան սիրուր սեղմելով հարցրեց Շահումյանը:

— Այո, Սահակ ջան, չկարողացա զսպել ինձ,— կարծես արդարացավ Կամոն և ընկերներով ներս մտան սենյակ, ուր նրանց դիմավորեցին Ջավահերն ու մորաքույր Լիզան:

Շահումյանն արդեն լսել էր, որ Սահակինի առաջարկությամբ իբրև Կովկասյան գործերի արտակարգ կոմիսար են նշանակել: Կամոն Շահումյանին հանձնեց մանդատը և պատմեց Լենինի ու Սահակինի հետ իր վերջին տեսակցության մասին: Մորաքույր Լիզան ու Ջավահերը սկսեցին ընթրիքի պատրաստություն տեսնել: Կոմիտեի աշխատանքների մասին տեղեկանալուց հետո՝ Շահումյանը դիմեց կոմիտեի անդամներից մեկին, որը գրասեր ուսանող էր և կապված էր գրական աշխարհի հետ:

— Ինչ նորություններ կան գրական աշխարհում: Ուսանողը, որ լուռ հետևում էր նրանց զրույցին, այս հարցից կարծես լեզու առավ: Նա ոգևորված սկսեց պատմել.

— Մի ուրախալի երևույթ է տեղի ունեցել վերջին տարիներս մեր գրականության մեջ: Մեր չատ ընդհատակյա բանաստեղծներից մեկի նախաձեռնությամբ լույս են ընծայվել «Կարմիր Մեխակներ» խորագրով մի քանի ժողովածուներ: Տպագրված նյութերի հեղինակները նոր մարդիկ են մեր գրականության մեջ:

— Ծանոթ եմ թե այդ ժողովածուների և թե այդ գրողների հետ,— ասաց Շահումյանը: Վաղուց է ինչ

ռևոլուցիոն արվեստը քաղաքակիական իրավունք է նվաճել ինչպես արևմտյան Եվրոպայում, նույնպես և Ռուսաստանում և Կովկասում: Նա ունի խոշորագույն ներկայացուցիչներ հանճարնեն Գորկու, Լմիլ Վերհարնի, Կիմոնեի, Բարնաուլի, Դեհմելի... Մի պահ լռելուց հետո, Շահումյանը շոյեց ճակատը և ապա արտասանեց՝

«Ահա քաղաքը, հսկա բուրգերի մի զանգված է այն,
Թե՛ միապաղաղ, պողպատից ձուլված լեռների շարան,
Ուր թրամների, հեռախոսների ցանցերը անխոնջ
Շարժի են բերում, աղմկում կյանքի երակները ողջ...»

— կարծեմ «Կարմիր մեխակներ» ժողովածուից է, այնպես չէ՞,— դիմեց Շահումյանը ուսանողին:

— Այո, այդ ժողովածուից է, ուր զետեղված են նաև «Աբևը», «Կիսատ տունը» և մի ամբողջ շարք ուրիշ գործեր,— պատասխանեց ուսանողը:

— Մենք ամբողջ հոդով ողջունում ենք նրանց մուտքը մեր գրականության մեջ,— ասաց Շահումյանը:

Սրախոսված Շահումյանի հետաքրքրությունից, ուսանողը ավելի ևս սրտապնդվեց.

— Սուրիան Գեորգևիչ, ինձ շատ վաղուց մտահոգում են մի շարք հարցեր՝ կապված Մաքսիմ Գորկու համբավության հետ ծագած «Հայ գրականության ժողովածու»-ի հետ: Ի՞նչ կարծիքի եք այդ ժողովածուի մասին:

Շահումյանը կարդացել էր այդ ժողովածուն, համեմատել էր թարգմանությունները բնագրի հետ և իր որոշակի կարծիքն ուներ: Նա սիրով պատասխանեց ուսանողի հարցին:

— «Հայ գրականության ժողովածուն» ընդհանուր առմամբ լավ մտածված, բավարար կերպով իրագործված ձեռնարկություն է: Նրա համբավությունները և աշխատակիցները մեծ եռանդ և աշխատանք են թափել այդ ժողովածուի վրա: Սակայն դրա հետ միասին չենք

կարող չավելացնել, որ մի ջազդայնության մաքուր զգացմունքների ու ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկին արժանի էր այդ տեսակետից ավելի լավ աշխատակիցների, քան այդ եղածները են»:

Շահումյանը խոսում էր հանդարտ, առանց չտապելու, իր տեսակետների մեջ համոզված մարդու երկաթե տրամաբանությամբ: Սակայն որքան էլ պարզ էր Շահումյանի դժգոհությունը ժողովածուի աշխատակիցների նկատմամբ, այնուամենայնիվ, ունկնդիրների և ակնոցավոր ուսանողի համար որոշ հարցեր անհասկանալի մնացին: Այս բանը նկատեց Շահումյանը և հարկ համարեց ավելի պարզ արտահայտել իր մտքերը:

— Թարգմանված բանաստեղծների ցանկը նայելիս մեր մեջ հարց է ծագում, թե ինչո՞ւ նրանց թվում չկա նաև Հակոբ Հակոբյանը: Գուցե խմբագիրները արժանի չեն համարել հիշել նրան հայկական Պառնասում:

— Սեւման Գեորգևիչ, չէ՞ որ Մ. Գորկու աշխատակիցների թվում կան այնպիսի պատահական անուններ, ինչպիսիք են Վ. Տերյանը, և ուրիշները: Մի՞թե նրանք չէին կարող պահանջել, որ...

— Գիտեմ, գիտեմ, ընդհատեց Շահումյանն ուսանողին: Ցավալին հենց այն է, որ Տերյանին չեն հանձնարարել ըստ իր ճաշակի ծաղկաքաղ անել հայ բանաստեղծներից: Տերյանը չատ լավ գիտակցում էր, որ մեր մեջ կա հասարակական մի սովոր խավ, որի համար Հ. Հակոբյանը ճանաչված բանաստեղծ է, որ նա հայ բանվորության ցավերի և ուրախության արտահայտիչն է,— ասում էր նա սենյակի մի անկյունից մյուսը քայլելով:— եթե այդ բանվորությունը որևէ նշանակություն ունի հայկական կյանքում, ապա նրա բանաստեղծն անշուշտ պետք է տեղ գտներ այդ ժողովածուի մեջ:

Շահումյանը կանգ առավ մի պահ և իր խորաթափանց հայացքն ուղղելով ակնոցավոր ուսանողին, ընդգծված ձևով ասաց.

— Մ. Գորկու աշխատակիցները ոչ միայն պետք է հաճախանային, որ այդ հարկավոր է անել, այլև ուրախությամբ անեին։ Եվ անհասկած, Հակոբյանի գերվածքներից կարելի էր մի գեղեցիկ վումջ կազմել ժողովածուի համար։

Սրանով ավարտվեց Շահումյանի զրույցը ակնոցավոր ուսանողի հետ։ Այնուհետև Սահակը պատմեց, թե ինչ դժվարություններ է հանդիպել ինքը Գանձակի լեռներով անցնելիս և թե ինչպես Գեղեչկորների ու Ման-Մոյակիների քաղաքականության հետևանքով միանգամայն զգաստել էր հայի ներմուծումը հյուսայինի կովկասից, կանգ էր առել երկաթուղային հաղորդակցությունը Բաքվի հետ։ Այդ բոլորի պատճառով ուժեղացել էր հակաևրոպացիան։

Մինչ այդ՝ սեղանը պատրաստվեց, և Կամոն Շահումյանին ու մյուս ընկերներին ընթրիքի հրավիրեց։ Սեղանի վրա հայտնվեցին գառան մսից խորոված, թարմ ճուկ, կանաչի, հայկական լավաշ, թթուներ, որ անչափ սիրում էր Սահակը։ Շահումյանը ուտում էր անտրամադիր, մտազբաղ։ Ճիշտ է, նա մասնակցում էր զրույցին, բայց դժվար չէր նկատել, որ նրա մտքերն ուրիշ տեղ էին։

— Ի՞նչն է քեզ մտահոգում, Սահակ Գեորգիևիչ,— հարցրեց Կամոն։

— Նրանք երեկոյվա զայրագույթյունների համար հավիտյան կտան մի օր։ Այդպիսի հանցանքներն անպատիժ չեն մնա։ Ոչ միայն պատմության, այլև ժամանակակից երեկների դատաստանը անողոք կլինի նրանց նկատմամբ։ Գանձակում գոյություն ունի ռճրագործների մի բուն, որը հիմքից պիտի քանդել։ Դա Գանձակի թուրքական ազգային կոմիտեն է՝ կազմված բացառապես ռեակցիոներներից ու բեզերից։ Մենք չենք մոռանա Շամխորի և Գանձակի դեհերին, իսկ դրա համար անհրաժեշտ է նախապատրաստվել,— ասաց Սահակը ու հանելով ժողովրդին ուղղած իր դրած կոչերը՝ կարդաց նրանցից մեկը. «Հասել է ժամը, երբ դուք վերջնականապես դեն

— Մ. Թոփու ազատագրիչները ոչ միայն պետք է հանգանակեին, որ պետք հարկավոր է անել, այլև ուրախությամբ անեին: Եվ անկասկած, Հակոբյանի զբաղածքներից կարելի էր մի զեղեցիկ փոխի կազմել ժողովածուի համար:

Սրանով ավարտվեց Շահումյանի պատմությունը ասեղնագործ հետ: Այնուհետև Ստեփանը պատմեց, թե ինչ զժվարություններ է հանդիպել ինքը Գանձակի ընակիչներ անցնելիս և թե ինչպես Գեղակերտների ու Հան-Ղոլարիների քաղաքականության տեսիանդեղ մթնոլորտի պատճառով էր հազի ներսուծումը հյուսիսային Կովկասից, կանչ էր առել երկաթուղային հաղորդակցությունը Բաքվի հետ: Այդ բոլորի պատճառով ուժեղացել էր հակառուսական:

Մինչ այդ՝ ասեղնը պատրաստվել, և Կամոն Շահումյանին ու մյուս ընկերներին ընծերքի հրավիրեց: Սեղանի վրա հայտնվեցին դասան մսից խորոված, թարմ ձուկ, կանաչի, տավարան բաշլամա, Քիմոնիներ, որ անհատ սերում էր Ստեփանը: Շահումյանը ուտում էր անսրամասիրաբար, մասրագաղ: Ձկան ն, նա մասնակցում էր զրույցին, բայց զժվար չէր նկատել, որ նրա մտքերն ուրիշ տեղ էին:

— Ինչն է քեզ մտահոգում, Ստեփան Գևորգեվիչ,— հարցրեց Կամոն:

— Նրանք երեկոյի վարպետությունների համար տալիս կաման մի օր: Այդպիսին հանդանդների անպատիժ չեն մնա: Ոչ միայն պատուհասի, այլև ժամանակակիցների գատաստանի անողոք կրկնի նրանց նկատմամբ: Գանձակում գործության ունի ոճրագործների մի բուն, որը հիմքից պետք քանդել: Դա Գանձակի Քուրքանի-պատկան կոմիտեն է՝ կազմված բացառապես ռեակցիոնարիչներից է՝ կապված Ղոլարիների հետ: Մենք չենք մոռանա Շամխորի և Գանձակի դեպքերին, իսկ դրա համար անհրաժեշտ է նախապատրաստվել,— ասաց Ստեփանը ու հանելով ժողովրդին ուղղած իր զրած կոչերը՝ կարդաց նրանցից մեկը. ջնջակ է ժամը, երբ դուք վերջնականապես դեն պետք է նետեք ձեր վրից կալվածատերերի, հոզատերերի, խաների, բեկերի զարհավոր լուծը: Քաները և աղալարները չինովնիկների մթնոլորտ զրեթե բոլոր հոդերը իրենց սեփականությունն են հայտարարել, խանական սարուկներ են զարձրել ձեզ և անգութ կերպով թալանում, կեղեքում են բոլորիդ: Պետք է վերջ դրվի այդ բոլորին»:

Այդքանը կարողացավ հետո հա կոչերը հանձնել ընկերներին և պատվիրեց՝ տարածել Թիֆլիսում ու չբրջակայքում: Այսա որոշ կարդագրություններ արվեց՝ հնաքաղաքացիությամբ մասնակցելու Կովկասյան հանակի չրկանային երկրորդ համագումարին:

Ուշ էր արդեն, երբ ընկերները զրույս եկան Կամոյի բնակարանից: Նրանք զրվեցին այս ու այն մասի վենց եղը ստացած հանձնարարությունները կատարելու: Շահումյանն առանձնացավ աշխատելու:

***

Մամա-Խանիի սարից մինչև Սոլոլակ, Բուլաղախանի այրեր զարգարող բարձունքներից մինչև Ավլաբար ու Օրթաձալա հասավ Շահումյանի խոսքն ու ժողովրդին հավաքեց, բերեց Ջուրաբելի թաղամասը, ուր կայանալու էր Կովկասյան հանակի երկրորդ համագումարը:

Ձմեռ էր: Թիֆլիսի փողոցներում բարակ չերտով ձյունը ծածկել էր գետինը: Ձմռան արևն իր ցաց հարկնդացուն համայրքները հավաքելով զարաքի վրայից դեպի մայրամուտ էր ընթանում: Ջուրաբելի թաղամասը գնալով լցվում էր ռազմանախագիծ ու զրոշանձնելից եկած պատգամավորներով:

Կանաչ ժամուրով ծածկված լայն սեղանի չուրջը նստած էր հանգանակությունը, որի կարմ ամբողջովին մենչևիկյան էր: Գեկնչերին մի կողմից զրաված էր հանգանակության անդամների հետ, մյուս կողմից հետամուտ դահլիճում չրվող այն երեք պատգամավորներին, որոնք հանձնի փոխում էին իրենց տեղերը: Նրա

պետք է նետեք ձեր վրից կալվածատերերի, հողատերերի, խաների, բեգերի դարավոր լուծը: Խաները և աղալարները չինովնիկների մի ջոգով գրեթե բոլոր հողերը իրենց սեփականությունն են հայտարարել, իսկական սարուկներ են դարձրել ձեզ և անդուլթ կերպով թալանում, կեղեքում են բոլորիդ: Պետք է վերջ դրվի այդ բոլորին»:

Այսքանը կարդալուց հետո նա կոչերը հանձնեց ընկերներին և պատվիրեց՝ տարածել Թիֆլիսում ու շրջակայքում: Ապա որոշ կարդադրություններ արեց՝ նախապատրաստվել մասնակցելու Կովկասյան Բանակի չրջանային երկրորդ համագումարին:

Ուշ էր արդեն, երբ ընկերները դուրս եկան կամոյի բնակարանից: Նրանք ցրվեցին այս ու այն կողմ հենց նոր ստացած հանձնարարությունները կատարելու: Շահումյանն առանձնացավ աշխատելու:

***

Մամա-Դավթի սարից մինչև Սոլոլակ, Բուլաբանական այգու քարքարոտ բարձունքներից մինչև Ավլաբար ու Օրթաճալա հասավ Շահումյանի խոսքն ու ժողովրդին հավաքեց, բերեց Զուբալովի թատրոնը, ուր կայանալու էր Կովկասյան Բանակի երկրորդ համագումարը:

Ձմեռ էր: Թիֆլիսի փողոցներում բարակ չերտով ձյունը ծածկել էր գետինը: Ձմռան արևն իր բաց նրընջագույն ճառագայթները հավաքելով քաղաքի վրայից՝ դեպի մայրամուտ էր թեքվում: Զուբալովի թատրոնը դնալով լցվում էր ռազմաճակատից ու չրջանններից եկած պատգամավորներով:

Կանաչ մահուդով ծածկված լայն սեղանի չուրջը նստած էր նախագահության, որի կազմն ամբողջովին մենչևիկյան էր: Դեկեչկորին մի կողմից պրուցում էր նախագահության անդամների հետ, մյուս կողմից հետևում դահլիճում չրջող այն երեք պատգամավորներին, որոնք հաճախ փոխում էին իրենց տեղերը: Նրա

դեմքին երկյուղի մի արտահայտություն կար, թեև, աշխատում էր անտարբեր ցույց տալ իրեն: Նա անհանդիստ էր հատկապես այն պատճառով, որ այդ անծանոթությունները արժանանում էին պատգամավորների ակնքախ համակրանքին, բոլորն էլ սիրով էին ընդունում նրանց: Երեք պատգամավորներից մեկը Շահումյանն էր, մյուսը՝ Միխա Ցխակայան, երրորդը՝ Փափաթարաձեն:

Կամոն դահլիճ մտավ այն պահին, երբ Միխան դահլիճի դռների մոտ հավաքած մի խումբ պատգամավորների բացատրում էր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական նշանակությունը: Կենդանի օրինակներով նա ցույց էր տալիս մենշևիկյան կառավարության հակառևոլյուցիոն բնույթը: Պատգամավորները ուշադրությամբ և համակրանքով էին լսում նրան: Միխայի համակրելի դեմքը, դրույցի բարեկամական, մտերիմ տոնը վարակում էր ունկնդիրներին: Դահլիճի մյուս անկյունում Փափաթարաձեն մի այլ խմբի բացատրում էր, թե ինչպես մենշևիկյան կառավարությունը երեսը շուռ տված Հոկտեմբերյան վերկարար ռևոլյուցիայից, դաշինքի մեջ է մտել Հայաստանի Կոմիտասի հակառևոլյուցիոն տարրերի հետ և երկիրը կանգնեցրել անդունդի եզրին: Մի այլ տեղ Շահումյանն էր իր դործը տեսնում: Գևկեչկորին դայրույթից շրթները կրծելով, հետևում էր այդ խորհրդավոր եռյակին: Գնալով աճում էր նրա դայրույթը, աճում էր նաև երկյուղը: Դահլիճում տիրում էր մի խուլ աղմուկ, որն անլսելի էր դարձնում բոլշևիկ ագիտատորների խոսքերը Գևկեչկորիի համար:

Համագումարի բացման խոսքով ելույթ ունեցավ Գևկեչկորին, որը փքուն և չողոքորթ լեզվով բացատրում էր պատգամավորներին իրենց կառավարության անելիքների մասին: Նա դեռևս իր խոսքը հունի մեջ չդցած, դահլիճի մի անկյունից, ամպրոպաձիորեն պայթեց Շահումյանի ռեպլիկան.

— Ի՞նչ նպատակով Հյուսիսային Կովկաս ուղարկվեց քան վագոն փամփուշտ...

Հաստատակամությունը չուռ եկավ դեպի այն կողմը, որտեղից լսվեց Շահումյանի ձայնը, որի կապույտ աչքերը զայրույթ էին արտահայտում: Նա չեշտակի նայում էր ճառախոսին և պատսխանի սպասում: Հանկարծակիի եկած հռետորը գալեն և իրեն չկորցներ, եթե հզոր արձագանքի նման չհնչեր բորբոքված պատգամավորների ձայնը.

— Բասն վագոն վամվուշա...

— Բասն վագոն...

Գևկեչկորու պերճախոսության խարխուլ հենքը վերջնականապես փլվեց Մ'լիայի բամբ ձայնից.

— Բասն վագոն վամվուշը վոխեցիք սպիտակ հացով՝ ձեր փափկասուն սիրելնց համար...

Քալֆաբաճեն իր կողմից վերջին զորեղ հարվածը հասցրեց.

— Ձեզ սպիտակ հաց, իսկ զորքին ու ժողովրդին՝ դարի հաց, այն էլ ոչ միշա...

Իշուր էր նախագահը անվերջ զանգահարում: Իշուր էր Գևկեչկորին վորձում իր ձայնը լսելի դարձնել: Դահլիճը որոտում էր աղմուկից: Պատգամավորների հուզմունքը դնալով աճում էր: Ներանց համար այժմ պարզվում էին շատ մութ հարցեր: Հատկապես ռազմաճակատից եկած պատգամավորների համար որոշակի էր դառնում, որ զենքը առաջին հերթին պետք էր ուղղել հենց մենշևիկյան կառավարության դեմ, որը հարվածում էր իրենց թիկունքից: Բոլշևիկ պատգամավորների եռյակը այստեղ ցույց տվեց իր դաղափարական ուժը՝ խուճապի մեջ գցելով Գևկեչկորուն: Շահումյանի ելույթը լրացրեց ամեն ինչ: Կամոյի, ինչպես և բոլորի վերա, անջնջելի տպավորություն թողեցին Շահումյանի հետևյալ խոսքերը.

— Պարոնայք Գևկեչկորիներ, Ջան-Ջոյակիներ, ձեր կառավարությունը մենշևիկների, մուսավաթականների մի բլոկ է: Զևենկել, Պապաջանյան, Ջաֆարով,— ահա ձեզ մի եռյակ, որին հանձնված է մեր ժողովրդի բախտը: Սակայն դուք լինքներդ էլ ձեզ չեք համոզում և փոխադարձաբար լրտեսում եք իրար...

Շահումյանի այս խոսքերը նախագահության մեջ անհանգիստ չարժում առաջացրին։ Նրանցից ամեն մեկը իր հերթին վեր թռավ հերքելու ճառախոսին, սակայն պատգամավորները որոշ ընդոստ ազդուվով պահանջեցին չխանգարել նրան։ Շահումյանն այլևս նախագահությանը չէր դիմում, այլ ուղղակի խոսում էր դահլիճի հետ.

— Այս «հեռատես» քաղաքականները երես դարձրին Պետերբուրգի ռևոլուցիոն իշխանությունից և դաշինք կնքեցին Միլյուկովների, Կոնկլյովների հետ, Հյուսիսային Կովկասի հակառևոլուցիոն տարրերի հետ։ Սրանք իրենց ներքին քաղաքականությամբ եղբայրական ժողովուրդների մեջ երկպառակություն մտցրին, փոխանակ բոլոր ազգերի դեմոկրատիայի միասնության՝ հանուն սոցիալիզմի և մեր ընդհանուր գաղափարների։

Տեսնելով ուժնդիրների ջերմ և անկեղծ ուշադրությունը՝ Շահումյանը չարունակեց էլ ավելի սթեվորված.

— Անասելի ոճրագործություն է կատարվել ռուսական բանակի դեմ։ Դա հանցանք է ողջ Կովկասի դյուցազնության և ռևոլուցիոն չարժման դեմ։ Անհրաժեշտ է պարզել Գանձակի դեպքերի իսկական պատճառը։ Անհրաժեշտ է ներկայացնել այդ դեպքերի հեղինակներին և ըստ արժանվույն պատժել նրանց։ Հասել է ժամը, երբ վերջնականապես դեն պիտի նետել նրանց յուծը։

Կամոյի, ինչպես և բանակային պատգամավորների համար, պարզ էր մի բան, որ թիֆլիսի հենց նույն կառավարությունն է, որը թիկունքից հարվածում է ժողովրդին։ Բոլշևիկ հռետորները այդ օրվա հաջող ելույթով իրենց կողմը գրավեցին պատգամավորությանը։

Մյուս օրն ևեթ, երբ Թիֆլիսի կոմիտեի անդամները նորից հավաքվել էին կամոյի բնակարանում՝ Շահումյանի հետ խորհրդակցելու, և երբ Շահումյանը նախապատրաստվում էր մասսայական մի ցույց անց-

կացնել Անդրիասյան կոմիտարիատի դեմ, հենց այդ պահին դուռը բախեցին:

— Ո՞վ կարող է լինել,— ասաց Կամոն:

Ջավահիրը դուրս եկավ միջանցք: Սահակյանն ու ընկերները լարված սպասում էին:

— Ո՞վ է,— հարցրեց Ջավահիրը առանց դուռը բաց անելու:

— Ես եմ, բաց արեք,— լսվեց դրսից:

Շահումյանը վեր կացավ տեղից, ուզեց մոտենալ դռանը:

— Կաց, Սահակյան, ես նրա ձայնից ճանաչեցի, մենշևիկներից է, դու դեռ մի երևա, տեսնենք ինչ է ուզում,— ասաց Կամոն:

— Ո՞վ եք, և ի՞նչ եք ուզում,— հարցրեց Ջավահիրը:

— Հայտնեցեք պարոն Շահումյանին, որ Անդրիասյան կոմիտարիատը հանձնարարել է ինձ տեսնվել նրա հետ,— խոսեց դրսից եկվորը:

— Իսկ ի՞նչ գործով, բարեհաճեցեք հայտնել,— համառեց Կամոյի քույրը:

Շահումյանը դուրս եկավ միջանցք և դուռը բաց արեց:

— Ի՞նչ եք կամենում:

— Սառցեք,— կտրուկ ասաց նա՝ Շահումյանին մեկնելով մի ծրար:

Շահումյանը վերցրեց ծրարը, բաց արեց և հանելով մի երկծալ թուղթ, արագ աչքի անցկացրեց, ապա վերադարձրեց նորեկին.

— Հայտնեցեք ձեր պարոններին, որ ես Թիֆլիսում որոշակի անելիքներ ունեմ և ոչ մի սպառնալիք չի կարող ազդել ինձ վրա և հեռացնել Թիֆլիսից, եթե ինքս հեռանալու անհրաժեշտություն չզգամ,— խիստ տոնով պատասխանեց Շահումյանը և զայրացած վերադարձավ սենյակ:

Եկվորը սպառնալից հայացքով նայեց նրա հետևից ու անհետացավ:

— Լա՛վ ժամկետ է, քսանչորս ժամ,— յուրահա-

տուկ յուսորով ասաց Շահումյանն ընկերներին,— իսկ եթե չըհեռանա՞մ...

Ընկերները հասկացան բանի էությունը: Անդրկովկասյան կոմիսարիատը վախենալով Շահումյանի ներկայությունից՝ պահանջում էր նրանից քառնչորս ժամվա ընթացքում հեռանալ Թիֆլիսից:

— Իսկ եթե չը հեռանա՞մ,— կրկնեց Շահումյանը, կարծես ինքն իր հետ խոսելով,— նրանք զորք ունեն, ռազիկաններ, մլջոցներ, իսկ մեր՞նք, արդյոք պատրա՞ստ ենք մենք դիմադրելու, եթե գործը զենքի հասնի:

— Կդիմադրենք,— պատասխանեց Կամոն:

Կամոյի խոսքին հավանություն տվին ընկերները:

— Այնուամենայնիվ, դրության մասին պետք է տեղյակ պահել ընկերներին, դինվորներին— ասաց Շահումյանը, և ամեն մեկին առանձին հանձնարարություններ տալով ուղարկեց ուր պետքն էր, իսկ ինքը վակզեց սենյակում և սկսեց առաջիկա մխինդի համար թռուցիկներ գրել:

Այդ գիշեր Կամոն, Ջավահիրը և կոմիտեի անդամներից չատերը աչք չփակեցին, նրանք եղան այն բոլոր վայրերում, ուր սովորաբար հավաքվում էին բանվորները: Ցրեցին Շահումյանի գրած թռուցիկները և բոլորին նախապատրաստեցին մխինդի:

Մխինդն սկսվեց հետևյալ օրը, վաղ առավոտյան: Գորոդինակի պողոտայով, Բարյադինակի, Լոռիս-Մելիքյան, Փոստի և այլն փողոցներով գալիս էին բանվորների, ուսանողների, երկաթուղայինների խմբերն ու հավաքվում Ալեքսանդրյան այգում: Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում ճնշան ցրտին: Այդ օրը լուծվելու էր բոլորին հետաքրքրող մի հարց.— ո՞րն է անհանելի վիճակից դուրս գալու ելքը: Իսկ այդ հարցի պատասխանը ապասում էր Շահումյանից, մի մարդուց, որը Լենինի ու Ստալինի մերձավոր գինակիցներից էր, ընդանց մտքերի թարգմանը:

***

Մարդկային բազմությամբ լեցուն Ալեքսանդրյան այգին ասես կախարդական գավազանի մի հարվածով

երկվեղկվեց և բացվեց մի նեղ ճանապարհ, որտեղով դեպի այդու մուտքն էր շտապում Շահումյանը, շըրջապատված Թիֆլիսի կոմիտեի անդամներով։ Այդու մուտքը հսկելու գործը Թիֆլիսի կոմիտեն հանձնել էր կամոյին։ Կամոն կանգնած բարյաղինակի վողոցի և Դոլովինակի պողոտայի անկյունում՝ Սրամյանների հոյակեն տան դիմաց, պետք է հսկեր և ազդանշան տար, կազակների կամ ոստիկանների երևալու դեպքում։

Հասնելով այդու կենտրոնը, ուր ամբոխն փոխարեն մի փոքրիկ սեղան էր դրված, Շահումյանը կանգ առավ և մի հայացք ձգեց շուրջը հավաքված ժողովրդի վրա։ Ամբոխը այդու զանազան ծայրերից կոհակ առ կոհակ չարունակում էր առաջանալ և հավաքվել ամբիոնի շուրջը, Շահումյանին մոտիկից տեսնելու, մոտիկից լսելու համար...

Մուլ աղմուկը դնալով ուժեղանում էր։ Երբ Շահումյանը բարձրացավ սեղանին, աղմուկն իսկույն դադարեց։

— Հարգելի հասարակություն,— հնչեց Շահումյանի թավիչ ձայնը,— Թիֆլիսի աշխատավոր ժողովուրդ, դուք այսօր հավաքվել եք հաշիվ պահանջելու ձեր տերերից այն ամեղ արյան համար, որ թափվեց Շամխորում և դեռ չարունակվում է թափվել...

Զարմանալի պարզ և համոզիչ էին հնչում նրա խոսքերը։ Սակս մայիսը կենտրոն անձրև էր գողում երաշից տուչորված արտերին։ Կամոն վախենում էր տարվել Ստեփանի ճառով և մոռանալ իր դերը՝ այդու մուտքը հսկելու գործը։ Շահումյանը չարունակեց.

— Դուք հավաքվել եք իմանալու, թե կո՞ արդյոք ելք այս սարսափելի վիճակից։ Մենք ասել ենք և նորից ենք ասում, ճանաչեցեք բանվորադյուզացիական կառավարության ժողովրդական կոմիսարիատի լիակատարությունը։ Հրավիրեք բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների համագումար և թող կազմակերպված ուժերը դասակարգերը կովկա-

սում ստեղծեն մի ջազդային հեղինակավոր, ուժեղ իշխանություն...

Այս պահին Բայադինակի վաղուցից ձիերի ոռնաձայները լսվեցին ու կամոն տեսավ, թե ինչպես դեպի այդին էր շտապում ասիկանների ու մենշևիկյան դվարդիականների մի խումբ:

— Մորհուդները վերջ կդնեն Կովկասում տիրող հակահեղափոխությանը և երկիրը կտանեն դեպի պայծառ ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը,— լրացրեց իր միտքը Շահումյանը:

Ասիկանների խումբը մոտենում էր: Կամոն, ինչպես պայմանավորվել էին, հանեց իր գլխարկը և թափահարեց օդում: Այս բանը նկատեցին Կոմխեի անդամները, նկատեց նաև Շահումյանը և առանց խուճապի մատնվելու ցած թռավ սեղանից: Ներան վոխարինեց Քավթարաձեն և մեծ ոգևորությամբ շարունակեց Շահումյանի ճառը: Քավթարաձեի ճառն ամբողջովին ուղղված էր Անդրկովկասյան Կոմիսարիատի և մենշևիկյան կառավարության դեմ:

Ասիկանների և դվարդիականների խումբը նեբխուժեց այդին: Ժողովուրդն ալեկոծվեց, փոթորկվեց: Կրակոցներ, հայհոյանք, անեծք, իրարանցում: Քավթարաձեն շարունակում էր հակայարական լոզունգները արձակել: Ժողովուրդն արձագանքում էր նրան ուռաններով: Մինչև ասիկանները կճեղքեին ժողովրդի պատնեշը և կմոտենային Շահումյանին ու նրա ընկերներին՝ ամբիոնն արդեն դատարկ էր: Շահումյանը Կոմիտեի անդամների օգնությամբ արդեն դուրս էր եկել այդից և անհետացել: Քավթարաձեն ասիկանների ուշադրությունը իր կողմը դրավելու համար դեռ շարունակում էր ճառը, առանց վախենալու նրանց կրակոցներից:

Այդ դեպքից հետո Թիֆլիսում մթնոլորտը չիկայացավ Շահումյանի շուրջը: Անդրկովկասյան Կոմիսարիատը ստանալով Շահումյանի արհամարհական պատասխանը Թիֆլիսից հեռանալու մասին, որոշում կա-

յայրեց անհապաղ ձերբակալել նրան։ Այդ լուրը կայծակի արագությամբ տարածվեց ժողովրդի մեջ և զայրույթի բուռն ալիք բարձրացավ։ Շահումյանն անցավ ընդհատակ և այնտեղից չարունակեց ղեկավարել աշխատանքները։ Բայց այդ չկացած մի քանի վայրկյանում առանց վտանգի ենթարկվելու անհնարին էր աշխատել։ Անգլոկովասյան կոմիսարիատը խուզարկություններ էր կատարում և տակն ու վրա էր անում կասկածելի այն վայրերը, ուր ենթադրվում էր, թե կարող էր թաղնված լինել Շահումյանը։ Քանի-քանի տներ խուզարկվեցին, քանի-քանի կասկածելիներ ձերբակալվեցին, իսկ Շահումյանը կամոյի օգնությամբ այնպիսի տեղ էր թաղնվել, որ երբեք հնարավոր չէր նրա հետքը գտնել։ Այսպես, մի առ ժամանակ անց՝ Շահումյանը ծպտված, զինվորական մաշված վերարկուով, մորթե հին գլխարկ ծածկած, կամոյի օգնությամբ զինվորական գնացքով մեկնեց Բաքու։

Այդ եղավ կամոյի վերջին հանդիպումը Շահումյանի հետ։ Գնաց Շահումյանը մի անջնջելի և այրող հիշողության թողնելով կամոյի և նրա ընկերների սրտերում

Կամոն այդ դեպքերից հետո ապրեց ծանր արկածների մի հետաքրքրաշարժ չրջան և Օրջոնիկիձեի հետ ուղևորվեց Ասորաստան՝ Կիրովի մոտ։

ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՀԵՏ ԿԻՐՈՎԻ ՄՈՏ

Երեսասարդ կարմիր բանակը չանչանչելով կոլչակյան հրոսակախմբերին, իր ողջ ուժերը զորահավաքի ենթարկած՝ առաջ էր չարժվում Կուբանի և Օրյոլի ուղղությամբ, որ գրավված էր դենիկինցիների կողմից։ Դենիկինյան զորքերի դեմ ծավալվող մարտերը ղեկավարում էր Ստալինը։ Անհրաժեշտ էր Դենիկինի թիկունքում զորձող կարմիր պարտիզանների չարքերը համալրել նոր և թարմ ուժերով։ Կամոն եռում էր ինքն իր մեջ, տեսնելով, թե ինչպես Վրաստանի մենչևիկները ձայնակցելով ռուս մենչևիկներին՝ մի կողմից հետա-

պնդում են բոլշևիկներին, չլսում նրանց ուժերը, մյուս կողմից՝ ընդառաջում դեներիկինյան զորքերին, հնարավորություն ստեղծելով նրանց համար վրաժանել տերիտորիայով զինամթերք տեղափոխելու Մոսկվայի դեմ: Ավելին: Դեներիկինյան լրտեսները ազատ ու անարգել գործում էին Անդրկովկասյան Կոմիսարիատի քթի տակ և ոչ մեկն էլ չէին հետապնդվում կառավարության կողմից, այլև քաջալերվում էին:

Կամոն իր կյանքում ոչ մի քայլ չէր արել առանց Թիֆլիսի Կոմիտեի թույլտվության, առանց իր մեծ ուսուցիչների համաձայնության: Այս անգամ էլ նա Թիֆլիսի Կոմիտեից թույլտվություն ստանալով, հազարափի անվան տակ մեկնեց Բաքու: Այստեղ նրան միացան Օրջոնիկիձեն և իր կինը՝ Զինան, լինչպես նաև Վառո Ջափարիձեն: Նրանք ձկնորսական նավերով ուղևորվեցին Աստրախան՝ Կիրովի մոտ: Այս ճանապարհը որքան վտանգավոր, նույնքան էլ հաճելի էր նրանց համար: Ջրույցի նյութն անսպառ էր: Օրջոնիկիձեն խոսում էր նորաստեղծ Սովետական հանրապետության բախտի, նրա առաջիկա անելիքների, կարմիր բանակի հզորացման և այդ օրերին բոլորին հուզող հրատապ հարցերի մասին: Կամոն լարված ուշադրությամբ լսում էր Օրջոնիկիձեի ջրույցն այն մասին, թե լինչպիսի խորաթափանցությամբ Լենինն ու Ստալինը կարողանում են նկատել ֆենամու ամեն մի քայլը և սովորեցնել ժողովրդին, պաշտպանել Սոցիալիստական Հայրենիքը:

Կամոն լսում էր Օրջոնիկիձեի ուշադրավ զրույցը և դիտում հորիզոնը, որ զարդարված էր վարդագույն ամպերով: Ծովի մեղմ ալիքները հանգարտ մրմունջով բախվում էին նավի կողերին և հետ նահանջում: Վառո Ջափարիձեն ճամպրուկից հանեց Լենինի «Պատերազմի մասին» գրքույկը և պարզեց Օրջոնիկիձեին:

— Ես վերջերս կարդացի այս գրքույկը և հիացա: Լենինը չատ բարձր է դնահատում բանակի քարոյական կայունությունը,— ասաց Վառոն:

— Ինձ ծանոթ են Լենինի մտքերն այդ հարցի մա-

ալին,— պատասխանեց Օրլովնիկիձեն և ավելացրեց,— եւ անկեղծ ասած հիմա կցանկանայի լինել Ստալինի մոտ, Ցարիցինում:

Օրլովնիկիձեի զրույցից կամոն տեղեկացավ, որ Ստալինը, որպես Ռուսաստանի ամբողջ հարավի պարենավորման գործի ղեկավար, Ցարիցին մեկնելով, սկսած ռազմական հրամանատարության օգնականներից և վերջացրած արհեստակցական, պարտիական և Սովետական կազմակերպություններով, ամեն տեղ գտնում էր քաոս, խառնաշփոթություն: Ուշքրաինան նվաճված էր գերմանական զավթիչների կողմից: Կազակները երեսից հակահեղափոխին խմբերով գրավել էին Ցարիցինի մերձակա հարստատ շրջանները և կասեցրել Պետրոգրադին և Մոսկվային հաց մատակարարելու գործը: Օրլովնիկիձեի պատմածից կամոյի համար պարզվեց, որ արտաքին խոչընդոտներից բացի, Ցարիցինի ներսումն էլ հազար ու մի արգելքներ են խանգարում Ստալինին՝ հացի մատակարարման գործը կանոնավորելու համար:

Այս զրույցից հետո ընկերների խնդրանքով կամոն մի քանի էպիզոդներ պատմեց իր կյանքից: Այսպես պրոֆեսոր Նրանք մոտենում էին Աստրախանին:

Դոնվելով Դենիկինի և Կոլչակի ռազմաճակատների սահմանագծում՝ Աստրախանը ծանր վիճակ էր ապրում: Արևմուտքից նեղում էր Դենիկինը, Արևելքից քաղաքին սպառնում էր Կոլչակը: Կասպից ծովից Վոլգայի գետաբերանին էին մոտենում Անգլիական ինտերվենտների ռազմանավերը: Պահու ավերիչ գործ չէին կատարում մոտակա ճակոորական դյուղերում ամրացած սպիտակ հրոսակախմբերը՝ միացած տեղական կուլակության հետ: Իսկ ի՞նչ էր կատարվում քաղաքի ներսում: Աստրախանում ապստամբ էին դարձել գարնան նախկին սպաները, կալվածատերերը, հոգևորականները, որոնք փախել էին քաղաքացիական պատերազմով բռնկված շրջաններից: Հակահեղափոխական տարրերը պրովոկացիայի պարարտ հող էին գտնում Աստրախանում՝ օգտվելով պարենային սուղ պայմաններից:

Ահա այս օրերին էր, որ Օրջոնիկիձեի հետ կամաց հասավ Աստրախան և չտապեց Կիրովի մոտ: Այդ ժամանակ Աստրախանում էր նաև Ամթարբեկյանը: Նա Կիրովի հետ մարտնչում էր Սովետական Իշխանության թշնամիների դեմ:

Սպիտակ գվարդիական Դուտովի վինված բանդաները այդ ժամանակ շրջապատել էին այն շենքը, ուր գտնվում էր Ամթարբեկյանը և պահանջում էին անձնատուր լինել:

Շրջապատողներն սպառնում էին ջարդել դռները: Դրությունը գնալով ծանրանում էր: Ամթարբեկյանը հեռախոսով կապվեց Կիրովի հետ և հայտնեց ստեղծված դրության մասին:

Այս միջոցին Օրջոնիկիձեն և Կամոն Կիրովի մոտ էին: Լսելով Ամթարեկյանի ծանր դրության մասին, Կամոն ուզեց անմիջապես օգնության հասնել, սակայն Կիրովը զսպեց նրան.

— Ոչ, Կամո, դրությունը ավելի լուրջ է, քան կարելի է պատկերացնել: Միայն քո օգնությամբ հարցը չի լուծվի: Դու պետք է չտապես քաղաքից ոչ հեռու գտնվող մեր զորամասերի չտարը և հայտնես, որ անհրաժեշտ զորք տեղափոխեն այստեղ: Ես և Օրջոնիկիձեն կգնանք դեպքի վայրը:

Կամոն ձի նստեց և կայծակի արագությամբ սլացավ Կիրովի հանձնարարությունը կատարելու համար:

Մինչ այդ խռովարարները ուզում էին ջարդ ու փշուր անել դռները և ներս խուժել: Ի՞նչ անել ուրեմն: Երկար մտածելու ժամանակ չկար: Բոպեն խիստ ճակատագրական նշանակություն կարող էր ունենալ: Ամթարբեկյանը զսպելով հուզմունքից եռացող իր մարտիկներին, դիմեց նրանց ռումբերով, երկու ռումբ էլ ինքն առավ և ասաց.

— Դուռը հանկարծակի բաց կանենք և ռումբերը ձեռքներիս կհարձակվենք նրանց վրա, բայց ռումբերը չենք նետի: Մեր այդ հարձակումը կհաբեկի նրանց... մենք ժամանակ կշահենք դուրս պրծնելու օդակումից...

Այդպես էլ արին։ Ամբարեկյանի և իր զինվորների հրեայն այնքան անապահով էր խռովարարների համար, այնքան ահաբեկող, որ նրանք երեկոյան կոլտնտեսության հետ քաշվեցին։ Հենց այդ պահին դեպի քաղաք էր սլանում մի զորապողպատ, կովկասյան տարազ հագած մի մարդու գլխավորությամբ։ Ամբարեկյանն իսկույն ճանաչեց Կամոյին։ Եկան, հասան նաև Կիրովն ու Օրջոնիկիձեն։ Խռովարարները անձնատուր եղան։ Այսպիսով Կիրովն ու Ամբարեկյանը վերջնականապես չարչաքեցին Դաշտովչին։ Օրջոնիկիձեն և Կամոն ուղևորվեցին Մոսկվա՝ Լենինին տեղեկություն տալու Ատրպատականի հեղափոխական դրության վերաբերյալ։

Տեղ հասնելուն պես Կամոն հանդիպեց Լենինին և խնդրեց թույլ տալ կազմակերպելու մարտական ջոկատ՝ Թիֆլիսից Դենիկինին հարվածելու նպատակով։ Լենինը ծանոթանալով նրա պլանի հետ, գտավ այն խիստ համարձակ ու սրամիտ և ավելց իր համաձայնությունը։ Լենինը Կամոյին տալիս է նաև մի վկայական, որի մեջ գրում է, թե ինքն անձամբ ճանաչում է Կամոյին, գիտե նրա գործունեության մասին և պահանջում է Սովետական, զինվորական և այլ հիմնարկներից լիապես վստահել նրան՝ ցույց տալով ամեն տեսակ աջակցություն։ Այս բոլորից հետո Կամոյին հանձնվում է անհրաժեշտ քանակով ռազմամթերք, միջոցներ և իրավունք է տրվում կազմել մարտական հատուկ ջոկատ։ Կամոն ոգևորված մեծ առաջնորդի խորը վստահությունից, լծվում է մարտական ջոկատ կազմակերպելու գործին։ Կամոն կազմում է իր մարտական ջոկատը կովկասցի մարտիկներից և լատիշներից։ Մարտիկների ընտրությունը կատարելիս Կամոն գործը հասցրեց ծայրահեղ խստության, որի համար Լենինից հանդիմանություն ստացավ։ Սակայն Կամոն իր ընտրած ջոկատի գործունեությամբ կարողացավ արդարացնել իր գործադրած խստությունը և գնահատել Լենինի դիտողությունը։

Սեպտեմբերի առաջին կեսին Կամոն իր մարտական

ամբողջ հասավ Օրյոլ և Լենինից ստացած վկայականով ներկայացավ տեղական ռազմական օրգաններին, որոնք ամեն ջանք գործ դրին Կամոյի մարտական խումբն էլ ավելի ուժեղացնելու համար: Օրյոլում Կամոյի տրամադրության տակ դրվեց մեծ քանակությամբ ռազմամթերք, մարտիկները և մի զրահապնակ: Մի քանի օր անց՝ Կամոյի էշելոնը պատրաստ էր անխոտոր-ներով, խոհանոցով և ռազմական գործողությունների համար բոլոր անհրաժեշտ պարագաներով: Կամոն ռազմական գործողությունների մեջ պիտի մտներ Կուբանի քաղաքից ոչ շատ հեռու գտնվող մի կայարանում: Այս կայարանը դեպի դենիկինյան զորամասերը տանող գծի ամենամոտ կետն էր: Այդ կայարանը հասնելուն պես Կամոն լսեց հրանոթային կրակոցներ: Պարզ էր, որ կրակի գիծը շատ հեռու գտնվել չէր կարող: Կամոն կարգադրեց ռազմիկներին ապաստել իր հրամանին, իսկ ինքը բարձրացավ կայարանի շենքի բարձր տանիքը և ծխնելույզի հետևում պատսպարվելով՝ սկսեց հետազոտել դիտել այն ուղին, որ ձգվում էր դեպի հակառակորդի բանակատեղին: Դենիկինցիները արդեն Կամոյի և նրա մարտական խմբի հետն առել էին և մեծ պատրաստու-թյուն էին տեսել նրանց ոչնչացնելու համար: Կամոյի սրատես աչքերից ոչինչ վրիպել չէր կարող: Նա չուռավ նկատեց, որ դիմացի փոքրիկ անտառից ծուխ է բարձ-րանում: Ինչպե՞ս որոշել՝ խարույկի ծուխ էր այն, թե՞ չոգեքարշի: Ուշի-ուշով դիտելով թանձր, օղակաձև ծուխը, Կամոն հասկացավ, որ չոգեքարշ է կանդնած անտառի մյջով անցնող երկաթգծի վրա: Նա հրամայեց իր ռազմիկներին մարտական վիճակում պահել գնդա-ցիրը և ապա ապասել, իսկ զրահապնակի մեքենավարին պատվիրեց առաջ չարժվել դեպի անտառ: Զրահապնակ-քարշ առանց ամմունկի դուրս սողաց կայարանից և չուռավ սկսեց կրակ տեղալ անտառի ուղղությամբ, սակայն այդ կրակոցները մնայուն անարձագանք: Հակառակորդը դեռևս չէր երևում: Կամոն դուրս եկավ ծխնելույզի հետևից, մի ուրիշ հարմար տեղ պատրաստեց ու նորից չա-

բանակից դիտել ճանապարհը: Նա նկատեց, թե ինչպես հակառակորդի զրահապնոցքը ուղիղ դեպի իրենց է գալիս:

— Կրակել համաչափ, հանգիստ,— պատվիրեց կամոն զրահապնոցքի մարտիկներին, իսկ ինքը չարունակելով հետախուզել ճանապարհը:

Երբ դենիկինցիների զրահապնոցքը դուրս եկավ անտառից ու չարժվեց դեպի կայարան, կամոյի մարտական ջոկատը ավելի ուժեղացրեց կրակը: Հակառակորդը իր հերթին սկսեց կրակ տեղալ: Մարտը դնալով թեժանում էր: Դենիկինցիների արձական արկերի պայթյունից առաջացած ծուխն ու փոշին բռնել էր ջոկատը: Հակառակորդի զրահապնոցքը մոտենում էր կայարանին: Պայթյուններից ցնցվում էին չենքերը: Կամոն տեսնելով հակառակորդի ուժերի գերազանցությունը, հրամայեց իր զրահապնոցքին հետ նահանջել:

Դենիկինցիները ավելի սաստկացրին կրակը, ջանալով փակել նահանջի ճանապարհը և ավերել երկաթգիծը: Սակայն այդ բանը նրանց չհաջողվեց: Կամոյի նշանառած վերջապահ զինվորները համաչափ կրակոցներով ապահովում էին ռազմիկների կանոնավոր նահանջը:

Կամոն առանց մեծ կորուստի կարողացավ իր ռազմիկներին մինչև Կուրսկ հասցնել: Իր ջոկատով կամոն ոչ տեղից Մոսկվա կանչվեց և այլ ուղղությամբ գործելու հրաման ստացավ: Այս անգամ նա գնաց Մալոարխանգելսկի ուղղությամբ: Քաղաքից մի քանի վերստ հեռավորության վրա նա կանգնեցրեց իր խումբը և հետախույզներ ուղարկեց քաղաքում տիրող դրության մասին տեղեկություն ստանալու: Կարճ ժամանակից հետո հետախույզները վերադարձան, հայտնելով, թե քաղաքում ոչ մի իշխանության գոյություն չունի, իսկ ժողովրդի մեջ համառ լուրեր են պտտվում, որ գալիս են սպիտակները: Կամոն որոշեց օգտվել առիթից: Առանց հապաղելու նա իր ռազմիկներին սպիտակ գվարդիականների զգեստներ հագցնել ավեց, ուսադիրները ամրացրեց և լուր ուղարկեց քաղաք, թե սպիտակները գալիս են: Քաղաքի հոգևորականները, առևտրականնե-

րը և զորացրված սպանները ջերմ ընդունելության կազմակերպեցին, տեղավորեցին նրանց մի մեծ և լուսավոր չենքում և ապահովեցին պարենով: Ռազմիկները մեծ ցնծության մեջ էին իրենց այդպիսի բարեհաջող դասավորման համար: Կամոն կարզադրեց իր մարտիկներին մնալ ռազմական դրության մեջ, իրեն տեղակալ նշանակեց, իսկ ինքը դնաց ուղեկալի զինվորների մոտ հաստատակորզի մասին լուր առանալու: Այնտեղ էլ նա տեղեկացավ, որ Մալո-Արխանգելսկից ոչ հեռու դանվում է հակառակորդի հեռախուզության և շարժվում է դեպի իրենց ուղեկալը: Կամոն արագ աչքի անցկացրեց ուղեկալում եղած ուժերը: Այդտեղ կար ընդամենը մի գնդացիր և երեք հեռահար զինվոր: Կամոն հրամայեց սրվեց առանց ժամանակ կորցնելու անմիջապես նախահարձակ լինել և ոչնչացնել սպիտակների հեռախուզությունը: Գործի դրվեց գնդացիրը: Սպիտակների հեռախուզությունն էլ իր հերթին սկսեց կրակել:

Ծանր վիրավորվեցին և չարքից դուրս եկան Կամոյի գնդացրորդը և ժապավեններ մատուցող մարտիկը: Կամոն արագ նետվեց դեպի գնդացիրը և չարունակեց գնդակների տարափ տեղալ հակառակորդի հեռախուզության վրա: Երկու անգամ նա թեթև վիրավորվեց, բայց չթողեց գնդացիրը և կրակեց այնքան ժամանակ, մինչև ոչնչացրեց հակառակորդի հեռախուզների մի զգալի մասը, մյուս մասին էլ ստիպեց փախուստի դիմել: Զնայած ճակատամարտի բարեհաջող ելքին, այնուամենայնիվ Մալո-Արխանգելսկում դիչերել նպատակահարմար չդանվեց: Կամոն իր ջոկատը չարժեց դեպի Ալեքսանդրովսկոյե գյուղը և գիչերն այնտեղ անցկացրեց: Առաջամասերին Կամոն արթնացավ և գյուղի բարձունքից սկսեց դիտել չրջակայքը: Նա նկատեց, որ դաշտավոր ճանապարհով դեպի գյուղն է չարժվում սպիտակների մի զորամաս: Ալեքսանդրովսկոյե գյուղն իր բարձրանիստ դիրքով խիստ հարմար էր մարտական գործողությունների համար: Կամոն կարզացավ հրամայեն օգտագործել տեղանքը և հատկապես գյուղի

հողմաղացը, որի մոտ էլ թագցրեց զնդացիրները և ռազմիկների հետ հաշտ դիրք մտնելով՝ սպասեց սպիտակների մոտենալուն: Կամոյի ուշարկած հետախուզությունը ստույգ տեղեկություններ հաղորդեց, թե մոտեցող զորամասը Ալեքսեևյան գունդն է, որ առաջ է չարժվում առանց հետախուզության և առանց հենելաեզերքի: Կամոյի համար պարզ էր, թե ինչու է այդ գունդն առանց հետախուզության առաջ չարժվում: Ալեքսանդրովսկոյե գյուղը գանվելով խոր թիկունքում, զնդի հրամանատարությունը որևէ կասկած տանել չէր կարող, թե այնտեղ կարող է հանդիպել հակառակորդին: Ալեքսեևյան զնդի առաջապահ մասերն արդեն մոտենում էին հողմաղացին, սակայն Կամոն կրակ բաց անելու հրաման դեռ չէր տալիս: Ռազմիկներն անհամբերությամբ սպասում էին հրամանի: Սակայն Կամոն կարծես չէր էլ մտածում այդ մասին: Իսկ երբ գունդը բոլորովին մոտեցավ ու լսվեցին հակառակորդի զինվորների խոսակցությունը, ձիերի ոռնաձայնները, Կամոն որոտաց «կրակ»: Հրացաններից ու զնդացիրներից անմիջապես տեղացին զնդակների տարափը: Գնդի առաջին չարքերը հնձած խոտերի պես փռվեցին ճանապարհին, այն ինչ դեռ վերջին չարքերն ուշքի չեկած՝ թե ինչ է կատարվում առջևում, չարժվում էին առաջ և թավալգլոր փռվում խուճապահար մարդկանց և ձիերի ոտքերի տակ: «Կրա՛կ»,— որոտացին դարձյալ Կամոն, ինքն էլ իրար հետևից ռումբեր նետելով դեպի սպիտակները: Անօրինակ տենդով էին գործում Կամոյի զնդացրորդները և խիզախ ռազմիկները:

Հանկարծակի հարձակումից խուճապի մատնված սպիտակները մինչև ուշքի կգային և հակահարձակման կդիմեին՝ բնկնում էին չեչոտակի և անվրեպ զնդակնեբից: Ներանց մի չնչին մասը միայն կարողացավ գըլխահոլուս նահանջելով ապաստանել և պատսպարվել Մայո-Ալբխանգելսկում:

Ալեքսեևյան գունդը այսպիսի հնարամտությամբ և վարպետությամբ ջախջախելու համար՝ Կամոյի ռազմական խմբակը մարտական տեղամասի պետից չնոր-

հակառակությունն ստացավ և ներկայացվեց պարզևատրման։ Կամոն իր ռազմական ջոկատով նորից կանչվեց Մոսկվա։ Լենինը չափազանց գոհ էր նրա մարտական գործունեությունից։ Այդ խրախուսանքը կրկնապատկեց Կամոյի կորովը։ Նա նորից եռուն պատրաստության մեջ էր և համալրում էր իր ջոկատը։ Երբ նա համոզվեց, որ իր ջոկատը նորից պատրաստ է ռազմական գործողությունների մեջ մտնելու, ներկայացավ Լենինին և հանձնեց նրան իր՝ Մոսկվա, Սատրախան, Բաքու, Սոչի Նովորոսիյսկ մարշրուտով գործելու պլանը։ Լենինը առաջին իսկ հայացքից խորապես ըմբռնեց Կամոյի պլանի իմաստը։ Նովորոսիյսկում էր գտնվում Դենիկինի չաբը։ Լենինի համար պարզ էր, թե Կամոն ինչու է ձգտում դեպի Դենիկինի չաբը, ինչ հաշիվներ ունի այնտեղ մաքրելու, ուստի հրահանգեց գործել ամենայն հապաղման։ Շատ չանցած Կամոն իր մարտական ջոկատով և դինամիթերքով Մոսկվայից ճանապարհ ընկավ նորից Սատրախան, ուր՝ նրան դիմավորեց Կիրովը։

ԿԻՐՈՎԸ ԴԻՄԱԿՈՐՈՒՄ Է ԿԱՄՈՅԻՆ

Իլիչը Սերգեյ Միրոնովիչ Կիրովին տեղեկացրել էր, որ իր թուլությունից Կամոն զայրս է Աստրախանն, որտեղից պետք է մեկնի Բաքու և ապա չարունակի ճանապարհը Դենիկինի թիկունքն անցնելու համար։ Կիրովը Կամոյին ընդունելու եռանդուն պատրաստություն տեսավ։ Չնայած Կիրովը համոզված էր, որ Կամոն ռազմական բոլոր անհրաժեշտ պատրաստությունները տեսած կլինի Դենիկինի թիկունքում գործելու համար, այնուամենայնիվ, բազմաթիվ հարցեր ղարձյալ մտահոգում էին նրան։ Ի՞նչ չափով է Կամոյի խմբակը մարտունակ։ Որքանո՞վ են վստահելի նրա մարտիկները։ Կիրովի համար կար մտահոգվելու մի ջրիչ ուրիշ ևս։ Դենիկինի թիկունքն անցնելու համար Կամոն իր ռազմիկներով Աստրախանից կասպից ծովով պետք է

հանձնել Բաքու, իսկ կասպից ծովն այդ օրերին գտնվում էր Դենիկինի տիրապետության տակ։ Կիրովին հնդկաց էր, որ Կամոն Աստրախան է գալիս ձկնորսական հատարակ նավով և այդ նավով էլ պետք է իր ռազմիկներին և ռազմամթերքը տեղափոխեր Բաքու։ Մի հանդուգն և համարձակ քայլ, որ միայն Կամոն կարող էր իրագործել։ Որքան էլ Կամոյի քաջությունն ու հնարամտությունը ծանոթ լինեին Կիրովին, այնուհանդերձ խիստ վտանգավոր էր նրա ճանապարհը։

— «Մշակե՞լ է արդյոք Կամոն իր գործողությունների պլանը։ Եթե դենիկինյան նավերից որևէ մեկին հանդիպի բաց ծովում—որը չատ հավանական է,— ի՞նչ կարող է անել նա հատարակ, ձկնորսական նավով։ Ի՞նչ կարող է անել այստեղ Կամոն, քաջության համար էլ միջոցներ ու պայմաններ են հարկավոր»։—Ահա թե ինչ հարցերով էր մտահոգված Կիրովը այն պահին, երբ Կամոն Մոսկվայից հասավ Աստրախան։

Կիրովը նրան ընդունեց սիրով ու ջերմությամբ։ Կամոյին և նրա ռազմիկներին մի քանի օր հանգիստ տալուց հետո՝ Կիրովը ցանկություն հայտնեց անձամբ տեսնել ռազմիկների մարտունակությունը։ Կիրովի այս ցանկությունը Կամոյին մեծ ուրախություն պատճառեց։ Ջորս ավտոմեքենաների վրա տեղավորելով իր տասնութ ռազմիկներին, վերցնելով անհրաժեշտ քանակությամբ ռումբեր և այլ զինամթերքներ, Կամոն Կիրովի հետ դուրս եկավ քաղաքից։ Կիրովը հիանում էր տեսնելով, թե ինչպես Կամոն մեծ համարձակությամբ է վարում իր ռազմիկներին։ Ռազմիկների մարտունակությունը առանձնապես լավ դրսեւորվեց նռնակակոծության մեջ։ Այս տեսակետից գոհ և բարձր տրամադրությամբ նրանք քաղաք վերադարձան։ Կամոն ռազմիկներին ազատ արձակելով՝ ինքն առանձնացավ Կիրովի հետ։ Նրանք երկար զրուցում էին առաջիկա վտանգավոր ճանապարհորդության մասին։ Կիրովը չատ լսողները էր լսել Կամոյի մասին, իսկ այդ պահին ավելի էր բարձրանում Կամոն նրա աչքում, երբ մտիկից

էր ծանոթանում նրա համարձակ ձեռնարկումներին: Կիրովին առանձնապես դուր էր գալիս, որ Կամոն քաջ գիտակցում է իր ձեռնարկած գործի վտանգավորությունը: Առաջին հարցը, որ լուծեց Կիրովը, Կամոյի հաջող ճանապարհորդությունն ապահովելու համար՝ ամուր տաքատակամածով ձկնորսական մի նավ գտնելն էր: Կամոյին հանձնվեց մի լավ ձկնորսական նավ, որն տուդված էր մասնագետների կողմից: Նավի վրա ռադիկներին և ռադիոմթերքը տեղավորելուց բացի, տեղավորեցին նաև Կիրովի կողմից Բաքվի բանվորներին հանձնվելիք դնեքը: Կամոն միշտ լրեն բարձրաձայն և հոգեպես վարձատրված էր զգում, երբ մեծ մարդիկ, ավագ ընկերները հատկանում էին իր հոգին և ըստ ամենայնի ընդառաջում: Այդ էր պատճառը, որ Կամոն այնքան դոհ էր Կիրովի վերաբերմունքից: Բայց էլի հոգսի մի ամպ կար նրա ճակատին թառած, որը չվերացավ Կիրովի ուշադրությունից:

— Հը, Կամո Արշակովիչ, ի՞նչ կա, ուրիշ ինչի՞ կարիք ունես, չէ՞ որ նավդ կազմ ու պատրաստ քեզ է սպասում,— դիմեց Կիրովը նրան:

— Սերգեյ Միրոնովիչ, նավս պատրաստ է, բայց ո՞վ է վարելու այն, ո՞վ է մեզ Բաքու հասցնելու: Ինձ անհանգստացնում է նավն սպասարկող անձնակազմի հարցը: Ես հո չեմ կարող չստուդված նավաստիներով մի այսպիսի դժվարագին ճանապարհորդություն կատարել:

— Այդ հարցը, Կամո, վճռված է այնպես, ինչպես ինքդ կցանկանայիր: Ես հրավիրել եմ ծովագնացության լավագույն վարպետների մի ամբողջ կոհորտ: Համարձակ ընտրիր, ում ցանկանաս,— պատասխանեց Կիրովը:

Եվ ահա Կամոն ընտրեց իր նավի անձնակազմը: Կիրովին զոհացրեց այն, որ Կամոն նավի անձնակազմը ընտրելիս նավաստիներից ոչ մեկն չէր թագցնում ճանապարհի վտանգները, այլ և չափազանցնում էր: Կիրովի առաջարկած թեկնածուները վստահելի մար-

դիկ էին։ Նրանք աներկյուղ հանձն առան խաբել հասցնել կամոյին։ Նավի անձնակազմն ընտրելուց հետո Կիբովը նորից առանձնացավ կամոյի հետ։ Առաջին հարցը, որով դիմեց Կիբովը կամոյին, այս էր.

— Վճռե՞լ ես արդյոք, թե ի՞նչ ես անելու, եթե բաց ծովում հանդիպես հակառակորդի նավերին։

Կամոն նստել էր Կիբովի առջև լուռ ու մտախոհ։ Տեսնելով, որ կամոն լռում է, Կիբովը չարունակեց.

— Պարզ է, որ քո ճկնորսական նավով ճակատել չես կարող դենիկինյան նավերի հետ, ուրեմն ի՞նչ է լինելու քո անելիքը։

— Կաչխատենք չհանդիպել,— կատակի տվեց կամոն։

— Իսկ եթե հանդիպեցի՞ք...

— Իսկ եթե հանդիպեցի՞նք, ահա թե ինչ պլանով եմ դործելու,— ասաց կամոն և իր խիստ համարձակ և վտանգավոր պլանը հայտնեց Կիբովին։

Կիբովը մտաչաւի անդամ չէր կասկածում, որ կամոյի խոսքը մտածված և հանդուրժն պլանը կիրկի նրա նավը կորուստից, բայց և այնպես ի սրտե ցանկանում էր, որ այդ հանդիպումը տեղի չունենար։ Սակայն այդ հանդիպումը տեղի ունեցավ...

Նույն տարվա հոկտեմբերին, մի խոնավ երեկո, երբ մթնշաղի մանիշակագույն մշուշը կախվեց ծովի հարթության վրա, երբ ծովը ծփում ու ծավալվում էր պաղ քամիների շնչից, Կիբովը ջերմ զրկախառնվելով կամոյի հետ, եղբայրաբար համբուրելով նրան, հրաժեշտի ուղղույն տվեց նաև ռազմիկներին, նավի անձնակազմին և ճանապարհ դրեց նրանց։ Կամոյի նավը պատռելով կապույտ ծովի թանձր ալիքները, առաջացրը պարզած լողաց դեպի բաքու։ Մայր մանող ալեծակի վերջին ճաճանչները սավառում էին ալիքների վրա, ջրերին տալով իրենց ոսկեփայլ գույնը։ Կիբովը այնքան ժամանակ մնաց ծովափում կանգնած, մինչև որ նավակալի վերջին ծայրը վոչքրիկ ստորակետի նման հալվեց ու կորավ ալիքների կատարների մեջ։

Բարեհաջող քամին երեք օր, երեք գիշեր առաջ էր մղում նավը: Կամոյն ամենատես աչքերից չէր վարող վրիպել ոչ մի բան: Նա նկատեց, որ առաջին երեք գիշերից մի քանիսի դեմքերին երկյուղի ստվերները մերթ երևում են, մերթ անհետանում: Նա գիտեր, որ իր ռազմիկները միանգամայն վստահելի մարդիկ են, բայց քանի որ նրանցից մի մասը առաջին անգամն էր նման ճանապարհորդության կատարում, ուստի և անբնական չէր թվում երիտասարդների երկյուղը: Մի առավոտ էլ Կամոն նստած ռազմանավերքների արկղի վրա, մի կոշիկից հեռադիտակով զննում էր ծովի մանիշակագույն տարածությունը, մյուս կոշիկից ունկնդրում երիտասարդ ռազմիկների զրույցին: Նրանցից մեկն ասում էր.

— Վտանգի դեպքում ես ավելի չուտ անձնասպան կլինեմ՝ քան թե կենդանի–կենդանի կհանձնվեմ դեներին:

Մի ուրիշ երիտասարդ ասում էր.

— Լավ չի՞ լինի արդյոք, եթե լուրջ վտանգի դեպքում մեր իսկ սեփական ձեռքով հօդս ցնդեցնենք մեր նավը...

Կամոն ժպտում էր և խուզարկու հայացքով զննում հորիզոնը: Շուտով հորիզոնի վրա մի սև կետ նշմարվեց: Կետը գնալով մեծանում, ձև ու կերպարանք էր առնում: Կամոն առանց տպնապի մատնելու, սառն ու անայլայլ ընթացքով նավի նավախորշը և իր շուրջը հավաքեց ռազմիկներին:

— Ուղիղ դեպի մեզ է գալիս դենիկինյան ռազմանավերից մեկը... Հանդիպումը հավանական է... Հաշվել սպիտակ գվարդիական սպանների համազգեստները և դուրս գալ տախտակամածի վրա,— կարգադրեց Կամոն և ինքն էլ արագ զգեստափոխվելով դուրս եկավ նավախորշից:

Կամոն չէր սխալվել: Մոտեցողը դենիկինյան ռազմանավերից մեկն էր: Կամոյի պահանջով նավը փոխեց իր ուղղությունը: Հակառակորդի նավը նույնպես փո-

խեց իր ուղղությունը և հետապնդել սկսեց։ Հանդիպումից խուսափելը անհնարին էր։ Կամոյի ռազմիկները զինավառ կանգնած էին տախտակամածի վրա և իրենց փորձված հրամանատարի հրամանին էին սպասում։ Կամոն երկրորդ անգամ հրամայեց նավի ուղղությունը փոխել, սակայն հակառակորդի նավը նորից կորեց նրանց ճանապարհը... Կամոն հեռադիտակով արդեն պարզ տեսնում էր դեկի իրենց ուղղված հրանոթի փողը... Հակառակորդի նավի վրա շարժումն ու եռեւեռուքյունն աչքուժանում էր։ Կամոն զգում էր, որ հակառակորդը հասկացել է իրենց ծալված լինելը։ Այդ բանը զգում էին նաև ռազմիկները։ Բոպեն ծանր էր ու ահավոր։ Բավական էր հակառակորդից ստացած արկի մի քանի հարված ու Կամոյի նավը ջրասույզ կլիներ... Հակառակորդի նավը մոտենում էր հեռվեռուց։ Ջնայած այս ահավոր վտանգին, Կամոն առանց որևէ խուճապի վարել էր տալիս նավը ուղիղ դեպի հակառակորդը։ Ռազմիկները երկյուղած սպասում էին Կամոյի հրամանին։ Շուռով հակառակորդի նավից լսվեց մի սուր ու սպառնալի ձայն.

— Կանգնե՛լ...

— Վայր դնել զենքերը...

Ռազմիկների համար պարզ էր, որ զրեսաափոխվելու հնարը չծառայեց իր նպատակին։ Կամոյի պահանջով նավը դանդաղեցրեց իր ընթացքը և ռազմիկները վայր դրին զենքերը, սպասելով նոր հրամանի։ Ներանք լրված մոտածում էին, թե ի՞նչ է անելու Կամոն։ Մի՞թե կա մի որևէ ելք կորստից փրկվելու համար։ Մահն անխուսափելի էր թվում և այն էլ տանջալի մահը։ Ռազմիկները լցված սպասողական հայացքները հառել էին Կամոյին։ Ներանցից ոչ մեկը չէր կարող դուշակել, թե ինչ է անելու նա։ Կամոն հրահանգեց իր ռազմիկներին իջեցնել առագաստը և կոտրել կայմը։ Ռազմիկները մի ակնթարթում կատարեցին նրա պատվերը։ Մի քանի րոպեից հետո կայմը երկու կես եղած ընկած էր նավի տախտակամածի վրա։ Կամոն դողերոցքի մեջ տատա-

պող մարդու թուլ ու դողդողուն ձայնով դիմեց հա-
կառակորդներին.

— Այլևս եմ դողերոցքից... նավի կայմն էլ կո-
տրվեց, նավն այլևս առաջ չարժել չենք կարող... օգ-
նություն հասեք..

Հազիվ այդքանը կարողացավ ասել նա ու ընկավ նավի եղրափայտին, կիսով չափ թեքվելով դեպի ծովը: Նրա դողդողուն ձեռքերը մինչև արմունկները թաղվե-
ցին ծովի սառն ալիքների մեջ: Ռազմիկները քաթանի պես դունատ դեմքերով կանգնել էին տախտակամածին, ապասելով թե հետո էլ ինչ է անելու իրենց հնարագետ հրամանատարը: Տեսնելով այս ամենը դենիկինյան սպան հրամայեց.

— Վերցնե՛լ բուքսիրի...

Մյուս սպաները դեպի կամոյի նավն ուղղված զեն-
քերի փողերը ցած թողեցին և պատրաստվեցին բուքսի-
րի վերցնել «հիվանդների» նավը: Մինչ սպիտակ գվար-
դիական սպաները եռանդուն պատրաստություն էին տեսնում բուքսիրի վերցնելու աղետի ենթարկված նավը, կամոն վազրի ճարպկությամբ ետ ցատկեց ու դուրիկից ռումբը հանելով նետեց հակառակորդի նավի վրա: Կամոյի ռազմիկները դլխի ընկան, թե ինչ նպա-
տակով էր կամոն հիվանդ ձևացել ու առանց ժամանակ կորցնելու, որը հրացանով, որը սարճանակով, որն էլ ռումբով էլ ավելի սաստկացրին դեռ ուշքի չեկած և խուճապի մատնված հակառակորդի իրարանցումը: Կա-
մոյի նետած երկրորդ ռումբը պայթեց հակառակորդի նավի եզրին չատ մոտ: Ջրի մի ահագին սյուն պոկվեց ծովի հարթությունից ու փչրվեց նավի վրա՝ թրջելով սպաներին ու նրանց ռազմամթերքը: Ռազմիկները հե-
ռևեցին կամոյի օրինակին, հակառակորդի նավը չորս կողմը ռումբեր պայթեցնելով և ջրով ողողելով նրա ռազմամթերքը: Մեծ ոգևորությամբ համակված կա-
մոյի նավի անձնակազմը դնդակոծում էր հակա-
ռակորդին: Այդ հարձակումն այնքան անսպասելի էր դենիկինցիների համար, որ նրանք սաստ ջրով թրջ-

ված, գրեթե առաջ-առաջի տալով, մինչև կզտնեին իրենց, մինչև ձեռք կգարնեին ռումբերին, նրանց նավն արդեն ջրասույզ էր լինում: Կամոն չատ կցանկանար մոռեհալ և գրավել նրանց գենքերը, բայց հնարավոր չէր: Հակառակորդի նավն ընկղմվում էր:

Կամոյի նավի անճնակազմը և ռազմիկները կատաղյալ հրճվանքի մեջ էին: Բերկրանքի ժպիտը դեմքերին նրանք չրջապատել էին Կամոյին և իրենց գոհունակությունն էին հայտնում նրան՝ հնարամտությամբ իրենց կյանքը փրկելու համար: Կամոն որքան սառնարյուն էր մեծ վտանգների ժամանակ, նույնքան զգայուն էր հաջողություններից հետո: Հաջողությամբ տարվելը նա չափազանց վտանգավոր էր համարում և ուզում հրահանգեց.

— Արագ վերանորոգել կայմը, բայց անել առաջասը:

Ռազմիկները նորից հաղան իրենց զգեստները և լծվեցին աշխատանքի: Նավը փոխվեց մեղվանոցի: Ռազմիկներից մի քանիսը մաքրում ու խորացնում էին կայմի հին բունը, մյուսները՝ գործիքներն ու պարաններն առած կապկապում էին կայմը: Մի ուրիշ խումբ կայմի պարաններն ամրացնում էր նավի եզրերին: Կամոն զննեց առագաստը. պատռվածք չկար: Մի քանի ժամվա քրտնաջան և լարված աշխատանքը փայլուն արդյունքներ տվեց: Ամեն ինչ պատրաստ էր, կայմը վերականգնած: Կամոյի պահանջով սկսեցին բարձրացնել առագաստը: Հենց այս պահին սաստկացավ հյուսիսային քամին: Ծաղող ջրերն սկսեցին ալեկոծվել, եռդալ: Նավն սկզբում մեղմ, հետո արդեն ուժգնորեն սկսեց ճոճչալ: Կամոն բրեզենտե թիկնոցը հագավ և պատվիրեց նույնն անել նաև իր ռազմիկներին: Վերջիններս հագան թիկնոցները և չարունակեցին իրենց եռանդուն աշխատանքը: Առագաստի պարանը իր ամբ ձեռքին փաթաթած, ձախ ձեռքով Կամոն սակավ առ սակավ բաց էր թողնում պարանը: Քամին ուռցնում էր

առագաստը: Զնայած քամու սաստկանալուն, ինչպես և ծովի ալեկոծվելուն և նավի ուժեղ տատանումներին, ռազմիկները չարունակում էին իրենց լարված աշխատանքը: Հանկարծ անսպասելի կերպով քամու մի հուժկու հոսանք թափով ներխուժեց առագաստի մեջ, ուժեղ ձիգ տալով պարանը, որի ծայրը կամոյի ձեռքումն էր գտնվում: Կամոն թափով պոկվեց իր կանգնած տեղից, թռավ նավի եղրից չատ բարձր ու դղմիկայը խոտոռվեց ջրի մեջ: Մի փոքրիկ փոս առաջացավ ծովի մակերեսին, ու այլևս ոչ մի հետք... Ռազմիկների ու նավաստիների մեջ իրարանցում ընկավ.

— Կամոն խեղդվեց...

— Կամոն խեղդվեց...

Ռազմիկներից չատերը դեն նետեցին թիկնոցները և պատրաստվեցին ջուրը նետվել իրենց սիրելի հրամանատարին օգնելու: Այդ աղմուկի վրա տախտակամած դուրս եկավ նավապետը և արգելելով ռազմիկներին ջուրը նետվելու, ահեղ ձայնով ասաց.

— Իջեցնել առագաստը, ջուրը նետել փրկարար օղակը...

Առագաստն իջեցրին, նետեցին փրկարար օղակը: Կամոն սակայն չէր երևում: Ռազմիկներից մեկը մոտեցավ նավապետին:

— Ընկեր նավապետ, մի՞թե դուք չեք ուզում փրկել կամոյին, ի՞նչու չեք հրամայում խարխափ ձգել:

Նավապետը հանդիստ պատասխանեց.

— Մեր նավն այժմ գտնվում է Դերբենդի չրջակայքում, իսկ այստեղ հակա չգենավերն անգամ խարխափ չեն ձգում, ուր մնաց մեր ձկնորսական նավը...

— Ուրեմն ի՞նչ, հաշվի՞լ կամոյի կորստի հետ...

Նավապետը տարակուսած թոթվեց ուսերը: Ռազմիկները մնացել էին չվարած: Իսկ ի՞նչ եղավ կամոն...

Երբ պարանը ձգվելուց կամոն հանկարծակի պոկվեց նավից ու ջուրն ընկավ, պաղ ալիքների մեջ նոր միայն ուշքի եկավ և գլաց, թե ինչ կատարվեց իր հետ: Դեռ վաղ մանկությունից Լիսիսայի ու Քուռի ալիք-

նրբի մեջ մարված կամոյի համար դժվար չէր կասեցնել ծովի ալիքների հետ լեզու գտնել, համաձայնել ալիքների ընթացքին ու պատեհությանը, որ ընդունել նավը՝ հենց այն պահին, երբ բոլոր նրա ընկերները մատաղը դիտում էին ծովի այն կետը, ուր անհետացավ Կամոն։ Շրջանցելով նավը, նա ամուր բռնեց ղեկի թևը և ընկերներից աննկատելի նավի վրա ելնելով նետվեց նավախորշը։ Նա արագ ղեկ տափոխվեց. մի քանի բաժակ կոնյակ խմելուց հետո դուրս եկավ տախտակամած և առույգ ձայնեց.

— Առանց խուճապի, ամենքն իրենց տեղը, բարձրացնել առագաստը, չարժվում ենք առաջ։

Բոլորը ետ նայեցին ու զարմանքից քարացան։ Այդ պահին բոլորը, որոնց թվում և նավապետը միայն մի բան էին մտածում. «Այդ ինչպե՞ս պատահեց...» Կամոն կարևորությունն չտալով նրանց զարմանքին կրկնեց իր հրամանը.

— Բարձրացնել առագաստը, չարժվում ենք առաջ...

Ռազմիկները ու նավաստիները լուռ ենթարկվեցին նրա հրամանին։ Նավը չարունակեց իր ճանապարհը դեպի Բաքու։ Անվտանգ անցնելով ճանապարհի մյուս կեսն էլ, Կամոն իր նավը կանգնեցրեց Բաքվից 30—40 վերստ հեռավորության վրա գտնվող ծիլոյե կոչված կղզյակի մոտ։ Այդ կղզյակը մի քարաժայռ էր և չատ հարմար էր առ ժամանակ այդտեղ պատսպարվելու։ Մարտիկներին ու զինամթերքը թողնելով, Կամոն հենց նույն ղեկերը թիանափով լողաց դեպի Բաքու և այն դուրս գալով՝ չատպեց իր ընկերոջ մոտ նրա օգնությամբ զինամթերքը տեղափոխելու և թաղցնելու համար։

Աշնանային ուշ գիշեր էր։ Ծովը մեղմ ծփում էր գիշերվա կապույտ ծածկոցի տակ, իսկ Բիբի Էյբաթի, Սև քաղաքի և Սաբունչիի նավթի աշտարակները երկինք էին խոյանում թանձր ծուխ արձակելով։ Հասնելով Մալականյան այդին, Կամոն նստեց առաջին իսկ պատահած նստարանին մի պահ հանգստանալու։ Այս այ-

պին, որ մի տեսակ հանդիպման կայան էր լրտեսների և քրեական մութ անձնավորությունների համար, այժմ հանդիստ էր առել: Դադարել էր անց ու դարձը: Մերթընդմերթ հեռու փողոցներից լսվում էին ժամապահների սուլոցները և ձիաքարշերի խուլ դրնդոցը: Նստել էր կամոն այդու մթին ծառուդիններից մեկում: Աչխանապին հաճելի դեփյուռը շոյում էր Կամոյի ճակատն ու խաղում նրա մազերի հետ: Կամոն լիաթոք ընչելով այդու թարմ օդը, դիտում էր ուղիղ դիմացը ձգված Մալաիանյան փողոցը: Ինչո՞ւ էր նա այդպես անընդհատ նայում այդ փողոցին... Այդ փողոցումն էր ապրում Բագվի Կոմիտեի նշանավոր անդամներից մեկը, որի մոտ Կամոն հաճախ էր պատրաստվել: Նրա բնակարանը ամենահարմարն էր, թե թաղնվելու և թե դինամիթերը թաղցնելու համար: Կամոյի նստած ծառուղուց պարզ երևում էր ծանոթ տունը: Ահա նրա արհեստանոցը, որը ուշադրություն բաղմաթիվ գործիչների համար ծառայել է երկու հուսալի թաղատոց: Արհեստանոցի մուտքը դիմացից փողոցից է: Նշանակում է այս մուտքից դինամիթերը ներս բերելը վտանգավոր է: Դիմացից մուտքից մի քիչ ներքև կա մի ուրիշ դուռ: Սրտաբուստ թվում է, թե այդ դուռը կապ չունի ընկերոջ բնակարանի հետ, սակայն բակի կողմից դաղտնի դուռ է բացվում դեպի արհեստանոցը: Այս մուտքն ավելի ապահով է: Կամոն դուրս է գալիս ծառուղուց և կարելով ձիաքարշի երկաթգիծը, արագ մտնում է ընկերոջ տան բակը և ուշադիր գննում չուրջը: Ոչ ոք չկա: Կամոյ ծեծում է դաղտնի դռնակը, տալիս պայմանական նշանները: Դուռն իսկույն բացվում է նրա առջև ու նա սուզվում է սենյակի կիսախավարի մեջ: Ընկերը տանը չէ: Բաքվի Կոմիտեի հանձնարարությամբ նա մեկնել է Հայաստան:

Ընկերոջ կինը, Սաթենիկը, բարձրահասակ էր, առույգ, արծաթին տվող մազերով և մանկական չինչ աչքերով: Նա իր ամուսնու գործերի լավագույն աջակիցն էր և օգնականը: Բագվի 26 կոմունարներին պա-

որպեսզի նրան Սաթենիկը բանտարկվել էր և նոր էր միայն ազատվել բանտից։ Կամոյի առաջին հարցը եղավ.

— Ո՞ւր է Ստեփան Շահումյանը։

Սաթենիկը համառոտ պատմեց Ստեփան Շահումյանի և մյուս կոմունարների սպանության մասին՝ Ախճակումայի ավազուտներում։ Այս բոլոր անասելի ծանր տպավորությունն թողեց Կամոյի վրա։ Արմուկները հենած սեղանին, գլուխը գոգդ ափերի մեջ առած, Կամոն երկար ժամանակ մնաց վշտահար և լուռ։ Սիրելի Ստեփանի և նրա անզուգական ընկերների կորուստը ծանր, չափազանց ծանր էր նրա համար...

Նրան այդ ծանր վիճակից հանելու նպատակով Սաթենիկն սկսեց հարց ու փորձ անել Կամոյին՝ իր գործերի մասին, ինչպես նաև ընդհանրապես մատուցեց։ Կամոն մատաղրազ պատասխանում էր նրա հարցերին։ Երբ Կամոն հայտնեց, թե ուզում է իր բերած զինամթերքը Սաթենիկենց տանը թաղցնել, նա ոչինչ չասաց։ Կամոն տարակուսած նայեց Սաթենիկի դեմքին։

— Մի թե դու դեմ ես, որ քո բնակարանը օգտագործենք,— հարցրեց Կամոն։

Սաթենիկը ոչինչ չպատասխանեց, սակայն նրա չպատասխանելը այլ պատճառ ուներ։

Այդ միջոցին կից սենյակում մի երիտասարդ արագ հագնվում էր և ականջ դնում Կամոյի խոսակցությանը։ Երիտասարդը արհեստանոցի աշակերտ Բագրատ Սահնջանյանն էր, Զանգեզուրի Ուժանիս գյուղից։ Վազուց էր, ինչ նա ցանկանում էր ելնել իր ծննդավայրից, տեղափոխվել էր Բագու եղբոր մոտ, որն աշխատում էր նավթային բանվորների միության մեջ, Շիխովոյի նավթահանքերում։ Նրա եղբայրը Սաթենիկենց լավագույն բարեկամն էր և հաճախ էր լինում նրանց մոտ, իր հետ տանելով նաև Բագրատին։ Տեսնելով նրանց արհեստանոցը, Բագրատի մեջ բուռն ցանկություն առաջացավ սովորել այդ արհեստը։ Սաթենիկը և նրա ամուսինը սիրով ընդունեցին ուշիմ և աչքաբաց Բագրատին իրբև աշակերտ։ Բագրատը Սաթենիկենց համար սոսկ աշա-

կերա չէր. նա կատարում էր ամեն տեսակ դաղտնի հանձնարարություններ: Բադրատը այդ ասնը հաճախ էր լսել Կամոյի անունը, խանդավառվել նրա սխրագործություններով և միշտ երազել էր տեսնել նրան, բայց առիթ չէր եղել: Այժմ Կամոն ինքն իր ոտքով էր եկել նրանց մոտ, սրանից էլ լավ բախտ... Բադրատն արագ հաղնվեց ու դուրս եկավ այն սենյակը, ուր Կամոն և Սաթենիկը զրուցում էին: Կամոն ոտքից գլուխ չափեց երիտասարդին: Սաթենիկը Կամոյի կասկածը փարատելու համար ասաց.

— Ծանոթացիր, Կամո, սա մեր արհեստանոցի աշակերտն է: Նա նուիրական աչքաբաց է՝ որքան և վստահելի:

Սաթենիկի այս հանձնարարականը բավական էր Կամոյի համար: Եվ նա երիտասարդի հետ ծանոթանալուց հետո, մտերիմ տոնով հարցրեց.

— Լավ ծանո՞թ ես Բաբլին:

Բադրատը իր սեհեռուն հայացքով ասես կլանում էր Կամոյին: Մի՞թե այն լեգենդար հերոսը, որի մասին այնպիսի հիացմունքով են խոսում, այս տեսակ պարզ ու հասարակ մարդ է: Կհավատա՞ն արդյոք իր ընկերները, եթե Բադրատը պատմի նրանց, թե ինչպե՞ս տեսել և դրուցել է Կամոյի հետ: Մինչդեռ Բադրատը այս մտքերով էր տարված, Կամոն կրկնեց իր հարցը.

— Լավ ծանո՞թ ես արդյոք Բաբլին:

— Ծանոթ եմ:

— Լավ, դե ասա տեսնեմ, Ժիլոյե կղզին որքա՞ն է հեռու Բաբլից,—հարցրեց Կամոն՝ վեր կենալով ընթրիքի սեղանից և չնորհակալություն հայտնելով Սաթենիկին: Բադրատը պատասխանեց.

— Քաղաքից 35—40 վերստ:

— Ճիշտ է, այդքան էլ կլինի,— հաստատեց Սաթենիկը սեղանից ամաններըը հավաքելով:

— Իսկ Ժիլոյե կղզուց ինչպե՞ս կհասնես Մալականյան փողոցը՝ բնաբերով ամենակարճ ճանապարհը:

— Ժիլոյե կղզուց կգամ Զիբե: Այնտեղից կմտնեմ Սև քաղաք, ապա ճիաքարշով ուղիղ կլանամ Մալա-

կանչան այդի, այնտեղից էլ՝ Մալաիանյան փողոց,— պատասխանեց Բազրատը:

Սաթենիկը լսում էր ու գլխով ճչտում Բազրատի ասածները: Նա կռահեց, թե ինչո՞ւ է Կամոն այդպիսի հարցեր տալիս Բազրատին: Կամոյի այս հարցն ու փորձի ժամանակ Սաթենիկի գլխում մի միք ծագեց՝ Կամոյի գենքերը թաղնել Բազրատի եղբոր բնակարանում, որը Բաքվի Կոմիտեի կոնսպիրատիվ բնակարաններից մեկն էր, քաղաքի կենտրոնից հեռու էր գտնվում և շատ նպատակահարմար էր: Երբ Սաթենիկը հայտնեց Կամոյին, որ իրենց բնակարանում մի քանի օր առաջ խուզարկություն էր կատարվել և այժմ էլ դեռևս հսկողություն տակ է գտնվում, Կամոն դիմեց Բազրատին.

— Ձո նկատմամբ ունեցած Սաթենիկի վստահությունը ինձ իրավունք է տալիս հավատալ քեզ և խնդրել, որ օգնես ինձ մի հարցում:

Բազրատը լսում էր և չէր հավատում իր ականջներին: «Ինչպե՞ս թե խնդրել,—մտածում էր Բազրատը,— այդ ո՞վ ումից է խնդրում: Կամոն, այդ մեծ մարդկանց լավ բարեկամը, որին Բազրատը երազում կարող է միայն տեսնել, այժմ հարազատի նման դիմում է նրա հետ, և դեռևս խնդրո՞ւմ»:

— Օ՛, ոչ, ի՛նչ եք ասում, ոչ թե խնդրել, այլ հրամայեցեք,— սրտի արագ բաբախյունով պատասխանեց Բազրատը:

— Հարմա՞ր է արդյոք եղբորդ բնակարանում զենքեր թաղցնել,— հարցրեց Կամոն:

— Ջափազանց հարմար է: Այդ բնակարանում միայն եղբայրս ու քույրս են ապրում, երկուսն էլ վստահելի մարդիկ են,— պատասխանեց Բազրատը:

— Իսկ որտե՞ղ է գտնվում այդ բնակարանը:

— Բայիլովի երրորդ փողոցում,— ասաց Բազրատը:

— Շատ լավ, իսկ ժիլոյե կղզուց ինչպե՞ս է հնարավոր զինամթերքը Բայիլով տեղափոխել,— հարցրեց Կամոն:

— Ահա թե ինչպես: Բայլովն սկզբը է առնում չոգենավերի նորոգման Դաղաչովի գործից և վերջանում Անգլիական ակումբի մոտ: Այդ նավահանգստում մեկ կիլոմետր երկարությամբ կանգնած են վերանորոգվող նավերը: Այժմ երթևեկություն չկա: Ժիլոյե կղզուց կարելի է մոտենալ այդ գործին և վերանորոգվող նավերի արանքով զենքերն աննկատելիորեն բայլովի տեղափոխել:

Կամոյին դուր եկավ այս պլանը: Ժամանակ չկորցնելու համար, նա Բագրատին ուղարկեց Բայլովի՝ անելիքը պատրաստելու, իսկ ինքը իր թիանավով ժիլոյե գնաց, այնտեղ սպասող իր ընկերների հետ զինամթերքը տեղափոխելու: Վերանորոգվող նավերի արանքով անցկացնելով զենքն ու զինամթերքը, Կամոն կանգ առավ Բագրատի ցույց տված տեղը, ուր նրան էին սպասում Բագրատն ու Սաթենիկը: Կամոն խնդուն իր տասնութ մարտիկներին դասավորեց իրարից որոշ հեռավորության վրա, որոնք զենքի արկղները մեկը մյուսին փոխանցելով հասցրին Բայլովի՝ Բագրատի եղբոր բնակարանը: Այս բոլորից հետո Կամոն Սաթենիկի և Բագրատի օգնությամբ բաբվի վտահելի բանվորների ուղարկեց իր զինվորներին: Բագրատը նույնպես գնաց հանգստանալու, իսկ ինքը Սաթենիկի հետ մի անգամ ևս պտույտ գործեց բնակարանի շուրջը, որից հետո տուն վերադարձավ:

Հոգնած Բագրատը դեռ նոր էր աչքը փակել, երբ ինչ որ մեկը ուժեղ հարվածեց նրա կողքին: Բագրատին թվաց թե երազի մեջ է ու դլուխը խորը թաղելով բարձի մեջ չարունակեց քնել: Դիչերային այցելուն այս անգամ նրա մազերը քաշեց: Բագրատը աչքերը բաց արեց ու իր դիմաց կանգնած տեսավ Բաբվի ներքին ոստիկանության պետի տեղակալ Սուլեյման խան Բեկովին: Հասկանալի էր, որ լուռեսել էին և մատնել:

— Երիտասարդ ազա, խորն եք քնում, ապա մի քարի եղեք հաղնվել:

Բագրատն իրեն չկորցնելով հագնվել սկսեց, մտածելով այն մասին, թե ինչպես իմաց տա Կամոյին կա-

տարվածի մասին: Ձէ՞ որ այստեղ կատարված խուզարկությունից հետո Սաֆենիկենց մոտ ևս անպայման խուզարկություն կկատարվի:

Երբ Բագրատը հագնվեց, Սուլեյմանը կոպիտ տոնով ասաց.

— Հետևեցեք ինձ:

Բագրատը լուռ ենթարկվեց նրան: Սուլեյմանը տարավ նրան եղբոր սենյակը, ուր չորս ոստիկաններ արդեն բաց էին արել զենքերի արկղները: Նրանք գտել և բաց էին արել նաև այն արկղը, որի մեջ տեղավորված էր դժոխային մեքենան: Տեսնելով որ պայթուցիկ բամբակը ընկած է ոստիկանների ոտքերի մոտ, Բագրատը զարհուրած չրթունքը կծեց և նայեց եղբոր դեմքին: Բամական էր մի փոքր չփոում, կամ մի թեթև հարված, որ բամբակը պայթեր: Բամբակի այս հատկության մասին ըստ երևույթին գիտեր նաև Սուլեյմանը: Վերջինս վրա հասնելով՝ ղղուշությամբ բամբակը դրեց արկղի մեջ և մի անկյուն քաշեց:

— Ո՞ւմն են այս իրերը,— դիմեց Սուլեյմանը Բագրատին:

«Ի՞նչ պատասխան պիտի տա Բագրատը»,— մտածում էր նրա եղբայրը: Ի՞նչ է ասելու այս զենքերի մասին:

Այնինչ Բագրատը հանգիստ պատասխանեց.

— Սարգիս Ալիխանյան ազդանունով մի հայ վաճառական խնդրեց ինձ պահել այս արկղները, իսկ ինքը մի քանի օրով մեկնեց Հայաստան:

Եղբայրը զարմացավ, թե ինչպես Բագրատը այդքան լուրջ ու հանգիստ հնարեց մի այդպիսի սուտ, չնայած ինքը գիտեր, թե ումն են զենքերը: Սուլեյմանը հարցրեց.

— Իսկ ինչու եք այդպիսի վտանգավոր իրեր ձեզ մոտ վերցրել:

— Ի՞նչ իմանայի, թե վտանգավոր են, կամ անվտանգ: Վաճառականն մարդ էր, ասաց. «վաճառքի իրեր են»՝ ես էլ հավատացի:

Որքան էլ հանգիստ և համոզիչ լինեին Բագրատի

պատասխանները, այնուամենայնիվ խուզարկություն կատարվեց տանը: Քանդեցին հատակի տախտակները, պահարանները, անկողինները, և թագրած 17 արվղ գենքը հայտնաբերվեց:

ՓՈՔՐԻԿ ՏԻԳՐԱՆԻ ՄԵԾ ԴՈՒՐԾԸ

Այժմ ծանոթանանք բագրատենց ընտանիքի մի ուրիշ անդամի, փոքրիկ Տիգրանիկի հետ ևս: Բագրատի եղբայրը իր կնոջ վախճանվելուց հետո, այլևս չէր ամուսնացել: Նա իր այրի և անդավակ քրոջն ու բագրատին դյուղից իր մոտ բերելով, իր ողջ սերն ու գուրգուրանքը կենտրոնացրել էր նրանց վրա: Միակ հոգսը, որ տանջում էր նրան, զավակ չունենալն էր: Սակայն չուտով այդ վիշտն էլ փարատվեց: Հուլրը մի օր տուն վերադառնալիս տեսնում է պատի տակ քնած մի կարմրաթիկ տղա, երկու-երեք տարեկան: Երեխայի ցրնցոտիները, մերկ ոտքերը, կեղտի մեջ կորած ձեռքերն ու եղունգները վկայում էին, որ նա որբ է ու բախտի խնամքին հանձնված: Կինը գրկում է երեխային, տուն բերում, լողացնում, հագուստը փոխում, և երբ եղբայրը տուն է վերադառնում, ներկայացնում է նրան, ասելով.

— Արտաշ, ինչ կլինի, որ այս երեխային որդեգրենք:

Երեխան այնքան է դուր գալիս եղբորը, որ նա մեծ սիրով տալիս է իր համաձայնությունը: Այդ օրվանից անցնում են տարիներ: Տղան մեծանում է իր նոր ծնողների ջերմ հոգատարությամբ և խնամքով: Պետք էր տեսնել, թե ինչպիսի սեր ու վայելչանք էին ցուցաբերում բագրատը, քույրն ու եղբայրը երեխայի նկատմամբ, որի անունը նրանք դրել էին բագրատի պապի՝ Տիգրանի անունով: Երեխան, կամ ինչպես արդեն անվանում էին՝ փոքրիկ Տիգրանը, այնպես էր մերվել իր չրջապատի հետ, այնպես էր կապվել ծնողների հետ, որ մի քայլ չէր հեռանում նրանցից: Բագրատի քույրը փոքրիկ Տիգրանիկին հաճախ Սաթենիկենց

տունն էր տանում: Սաֆենիկենց ևս մեծ հաճույք էր պատճառում Տիգրանիկը: Նա յոթ տարեկան էր արդեն, երբ այս դեպքը կատարվեց նրանց տանը: Ոսոխականների աղմուկից նա արթնացել ու անկողնում նստած ապշած հայացքով էր շուրջն էր դիտում, երբ նրա մայրը ակնարկով հասկացրեց դուրս գալ սենյակից: Տիգրանիկը դուրս եկավ միջանցք կիսախավարի մեջ, մայրը նրա ականջին շշնջաց.

— Հասիր Սաֆիկենց տունը, պատմիր մեր տանը կատարվածի մասին:

Տիգրանիկը ամեն ինչ գլխի ընկավ: Նա հագավ շորերը, վերարկուն, կոշիկներն ու բակ դուրս եկավ, սակայն մուտքը հսկող ոսոխականները նրան դուրս չթողեցին: Տիգրանիկը լաց եղավ.

— Ուզում եմ զուգարան գնալ:

— Էս խոխին տեսեք, տաք-տաք հագնվել, վերարկուն պինդ-պինդ կոճկել, զուգարան է գնում,— հեգնեց ոսոխականներից մեկը:

— Դուցե իրոք ուզում է գնալ,— ասաց մի ուրիշը:

— Դե որ ուզում է, թող վերարկուն հանի թողնի մեզ մոտ,— ասաց նույն ոսոխականը:

— Առեք, դոշեց Տիգրանիկը,— վերարկուն նրանց հանձնելով:

— Որ չուտ ետ գառնաս, կոշիկներդ էլ հանիր:

Տիգրանիկը առանց վարանելու հանեց նաև կոշիկները ու մնաց միայն գուլպաներով:

— Դե, գնա...

Տիգրանիկը բակից դուրս թռավ: Աչնանային ցուրտ ու խոնավ գիշեր էր: Ծովային սառը քամին ասես թրատում էր չոր ծառերի ճյուղերը: Ցուրտը իսկույն թափանցեց նրա բարակ զգեստի ծալքերից, բայց նա ետ գառնալու մասին չէր մտածում: Աստմ-աստմի տալով կտրում էր ճանապարհը ու թռչում դեպի Մալկանյան փողոցը: Ահա նա հասավ Բայբուրի խճուղուն, անցավ Դոդաչովի, Արտաշի, Թադևևի դռների մոտով: Գնալով անճրևը ուժեղանում էր, ցեխն անտանելի դառնում, սակայն Տիգրանիկը սլանում էր ա-

ռաջ: Մինչև ծնկները ցեխոտվել էր նա: Ջնայած վաթար անձրևին, ցեխին, ցուրտ քամուն Տիգրանիկը թռչում էր առաջ: Նա այնպես էր ջրտնել, որ ցուրտ չէր զգում:

Ահա վերջապես հրապարակը, Վելիկոկնյաժեսկայա փողոցը, Պարապետ հրապարակը: Տիգրանիկը մեկ ստ մեկ հիշում էր փողոցները: Այստեղ նա թեքվեց աջ, մտավ Կալյուբակինսկայան և դուրս եկավ Մալականյան փողոց:

Սաթենիկը նոր միայն սկսել էր նկրհել, երբ դուռը կամացուկ բախեցին և լսվեց մի թույլ ձայն:

— Մորաքույր Սաթո...

Սաթենիկը ձայնից ճանաչեց Տիգրանիկին, և սիրտը երկյուղից անհանգիստ տրոփեց: Նա խոուն բաց արեց դուռը ու ներս առնելով Տիգրանիկին հարցրեց.—

— Հը, ի՞նչ կա:

— Մորաքույր Սաթո, հագրատին ոստիկանները տարան,— ասաց նա շնչակտուր:

Այսքանն էլ բավական էր: Սաթենիկն խոուն արթնացրեց Կամոյին, և պատմեց հագրատի հետ կատարվածի մասին: Կամոն վայրկենաբար ոտքի ցատկեց, հագավ չոքերը, տան եզած դենքերը, թուրգիկներն ու բրոչյուրները դուրս տանելով, թաղցրեց մի ապահով տեղ: Սաթենիկը փոխեց Տիգրանիկի թրջված հագուստները, ոտքերը լվաց, տաք թեյ տվեց ու պառկեցրեց անկողնում, իսկ ինքը արհեստանոցի լուսամուտի ապակուն սպիտակ թղթի կտորներ փակցրեց, որը նշան էր իրենց ընկերների համար, թե տունը վտանգի մեջ է: Մի քանի րոպեում Կամոն տեղափոխեց Սաթենիկենց տան ետնի դասկասնելի իրերը: Բայց արեցին նաև մահճակալի տոքերը, որոնց մեջ գաղտնի արձանագրություններ և ցուցակներ կային թաղցրած: Այս թղթերը ևս պահելուց հետո՝ Կամոն հեռացավ տանից, պայմանավորվելով տուն վերադառնալ այն ժամանակ, երբ լուսամուտին այլևս սպիտակ թուղթ չլինի փակցված: Դուրս գալուց առաջ նա ջերմ համբուրեց Տիգրանիկի ճակատը և արագ հեռացավ:

Տաճկաց արվղ զենքից բացի Բագրատենց տանը ուրիշ բան չգտնելով, ոստիկանները կապեցին Բագրատի և նրա եղբոր ձեռքերը և արվղները ձերբին բարձած, նրանց էլ առաջներն արած, տարան ոստիկանատուն ու ներկայացրին ոստիկանապետ Միկրյուկովին:

Անձրևը դադարել էր արդեն: Աչնան թուլլ արևը մեկ-մեկ աչքի պռչով ցած էր նայում ամպերի միջից ու նորից ետ քաշում երեսը: Հոկտեմբերի ցուրտ քամին վայելով անցնում էր փողոցներով: Ոստիկանապետ Միկրյուկովը տեսնելով ոտքից գլուխ թրջված ու ցեխոտված Բագրատին, բարկացավ ոստիկանների վրա երեսատաղդի հետ այդպես բիրտ վարվելու համար, ապա արձակել տվեց նրա ձեռքերը, առանձնացրեց եղբորից և սիրալիր տոնով դիմեց նրան:

— Ես ուշ եմ և հայերիդ լավ բարեկամը: Ես ամեն ինչ կանեմ ձեզ օգնած լինելու համար, եթե միայն ճիշտը խոստովանես, թե ո՞ւմն են այդքան զենքերը:

Բագրատը պատասխանեց.

— Պարոն ոստիկանապետ, թագցնելու ոչինչ չունեմ, այս զենքերը հայ վաճառական Սարգիս Ալիխանյանինն են:

— Այ, չարունակեց Միկրյուկովը,— ես ուզում եմ քեզ ազատել, միայն թե դու պետք է ասես, թե ով է զենքերի իսկական տերը:

Բագրատը պատասխանեց.

— Պարոն ոստիկանապետ, այս զենքերը վաճառական Ալիխանյանինն են:

Միկրյուկովի կարգադրությամբ Բագրատին մի լավ ծեծեցին և ապա բանտարկեցին եղբոր հետ միասին:

Անցավ մի քանի օր:

Երբ վտանգն անցել էր արդեն, Սաթենիկը պոկեց լուսամուտի սպիտակ թերթիկները:

Կամաց առաջ վերադարձավ այն ժամանակ, երբ Հայաստանից վերադարձել էր Սաթենիկի ամուսինը:

— Ձեր բախտին է, որ նավթ գնելու համար

Մոսկվայից հասուկ կոմխեա է ժամանել Բաքու: Այդ կոմխեայի միջոցով թերևս հնարավոր լինի ազատել գնդերը և ձերբակալվածներին,— ասաց Սաֆենիկի ամուսինը այդ դեպքի մասին լսելուց հետո:

Կամոն, մի քիչ հանդարտացավ, սակայն այդ գիշեր ևս քնել չկարողացավ ու առավոտ վաղ Սաֆենիկի ամուսնու հետ չտապեց այն հյուրանոցը, ուր իջևանել էր Մոսկվայից եկած կոմխեան: Այս կոմխեայի և Բաքվի կոմիտեի միջոցով Կամոյին հաջողվեց ազատել տալ Բագրատին ու նրա եղբորը, ինչպես նաև ևս տասնյակ գինամթերքը: Բայց այս ամենը նրանից երկու և կես ամիս ժամանակ խլեց:

Բաքուն այդ չրջանում փոթորկահույզ օրեր էր ապրում: Մի կողմից Ռոստովը գրավող և դեպի Անդրկովկաս արշավող հերոսական կարմիր բանակը, մյուս կողմից Բաքվի կոմունիստական պարտիայի աշխույժ գործունեությունն ու բանվորների ռևոլուցիոն տրամադրությունների բարձրացումը, մշտական տագնապի մեջ էին պահում Բաքվի մուսավաթիստների կառավարությանը:

Այս օրերին պարտիայի Երկրային կոմիտեն զբաղվեց Կամոյի մարտական խմբակի հարցով: Երկրային կոմիտեին հայտնի էր, որ Կամոն հատուկ հանձնարարություն ունի իր մարտական խմբակով անցնելու հակառակորդի թիկունքը: Սակայն Կամոն ռազմական գործողությունների իր այդ պլանը կատարել էր այն ժամանակ, երբ Դենիկինն ապրում էր կարճատև հաղթանակի օրեր: Իսկ այժմ իրադրությունը միանդամայն փոխվել էր: Մուսլինի հարվածները Դոնեցի ավազանից, սոսկալ էին Դենիկինին բռնել նահանջի ուղին: Մինչև Կամոն նավթոբախյան հասներ, Դենիկինի շտաբը այլևս այնտեղ չէր լինի: Այդ իսկ պատճառով Երկրային կոմիտեն նպատակահարմար գտավ Կամոյի մարտական խմբակը իր ունեցած ռազմամթերքով օգտագործել պետական հեղաշրջման համար: Երկրային կոմիտեի անդամները քիչ չանք ու եռանդ չխնայեցին Կամոյին հա-

մոզելու, որ Նովոռոսիյսկ մեկնելը ապարդյուն ժամանակ վատնել կնշանակե: Կամոն սկզբում առարկում էր այդ առաջարկի դեմ, բայց հետո սխալված եղավ համաձայնվել և մեկնել Թիֆլիս: Սակայն մենշևիկյան կառավարությունը իր լրտեսներից տեղեկանալով այդ մասին, իսկույն ևեթ ձերբակալեց Կամոյին: Կամոն նորից ընկավ բանտ: Երբ Ջավահիրը տեսության գնաց, Կամոն պատվիրեց նրան որևէ կերպ հայտնել Ներքին գործոց մինիստր Ռամիշվիլուն, որ եթե չազատվի կերպով Կամոն չազատվի բանտից, ապա նրա ընկերները հարկադրված կլինեն միջոցների դիմել: Ջավահիրը նույնությամբ կատարեց Կամոյի պատվերը:

Ռամիշվիլին պատասխանեց.

— Կմտածենք...

Ռամիշվիլին անախորժություններից խուսափելու համար հարմար դասալ Կամոյին ազատել Մեսխեից, պայմանով, որ որ նա անմիջապես պետք է թողներ Վրաստանի սահմանները: Կամոն ազատվեց Մեսխեից և ուղևորվեց Մոսկվա:

ԿԱՄՈՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է

Կամոն Մոսկվայում ծանոթանում է Սոֆիա անունով մի ռուս բժշկուհու հետ: Առաջին իսկ հանդիպումից Սոֆիան ապշեցուցիչ ազդեցություն է գործում Կամոյի վրա: Իր զարգացմամբ, գիտելիքների պաշարով նա ամբողջովին գրավում է Կամոյին: Մինչև ամուսնացումը Կամոն տարված ընդհատակյա աշխատանքներով ոչ ժամանակ, ոչ էլ տրամադրություն է ունեցել ամուսնության մասին մտածելու: Իսկ երբ խաղաղվեց կյանքը, երբ իրականացավ այն խոհելը, որի համար մարտնչում էր Կամոն, կարծեք թե հասել էր ժամանակը սրտի հարցերով էլ զբաղվելու: Ավելի ճիշտ ինքը, այդ սիրտը հանգստացնել ուզեց, թե «ժամանակն է...»: Եվ այս բանը կատարվեց Սոֆիայի հետ ունեցած առաջին իսկ հանդիպումից: Կամոն այնքան

էր տարվել Սոֆիայով, որ անգամ Գորկու և Կրուպսկայայի մոտ չէր կարողանում իր հիացմունքը զսպել և անվերջ խոսում էր իր ապագա հարսնացուի մասին: Գորկին և Կրուպսկայան, նույնպես լավ կարծիքի էին բժշկուհու մասին և Կամոյի դիտակցության մեջ ամբացրին նրա հետ ամուսնանալու միտքը: Սոֆիան իր հերթին լավ էր տրամադրված դեպի Կամոն: Նրան դուր էր գալիս Կամոյի ոչ միայն հերոսական անցյալը, այլև նրա հոգու մաքրությունը, մանկական պարզամտությունը և վերջապես բուռն ձգտումը դեպի գիտությունը: Եվ այդ ամուսնությունը տեղի ունեցավ:

Ամուսնության առաջին իսկ օրերից Սոֆիան զարձավ Կամոյի սրտակիցը: Նա զրեց Կամոյի համառոտ կենսագրությունը, պատանեկան խանդավառ սիրով կապվեց նրա հետ: Բժշկուհին հաճախ էր Կամոյի հետ զրուցում գիտական, քաղաքական հարցերի շուրջը: Կամոյի խնդրանքով նա կարդում էր իր կոնսպեկտները, որ նա կազմել էր Լենինի երկերը ուսումնասիրելու ընթացքում: Մի անգամ էլ բժշկուհին Կամոյի համար կարդաց այն կոնսպեկտը, որի մեջ զրանցված էին Լենինի մտքերը երիտասարդության դաստիարակության մասին:

Կամոյի հիշողության մեջ ուժեղ տպավորվել էին Լենինի մտքերը սիրո ու կոմունիստական բարոյականության մասին:

Երջանիկ էր Կամոն: Նա վայելում էր կյանքը լաոիս լիակատար առումով: Դրսում հարգում, գնահատում էին նրան, ոտնք՝ հասկանում, համակրում: Սրանից էլ լավ վիճակ: Ընտանեկան երջանկությամբ տպրված Կամոն հաճախ մանկական պարզամտությամբ իր զրույցները նույնիսկ չատախոսության էր հասցնում, սակայն Սոֆիան սիրով և ուշադրությամբ էր լսում նրան: Մի անգամ էլ Կամոն ասաց.

— Կարծեմ ես ձեզ արդեն ասել եմ, որ այս իմ երկրորդ ամուսնությունն է: Ասել եմ, թե՞ ոչ:

— Այո, լսել եմ նման ինչոր մի պատմություն, բայց ոչ մանրամասնորեն,— ներող ժպիտով պատասխանեց Ժուլիան:

— Լավ, մի ուրիշ անգամ ես ձեզ կպատմեմ մանրամասնությունները:

Այնցավ բավականին ժամանակ: Տարված իր դասերով Կամոն բոլորովին մոռացել էր իր խոստումը: Մի օր էլ ուսուցչ լեզվի դասերը վերջացնելուց հետո, երբ նա պատրաստվում էր հատուկ հանձնարարությամբ Կովկաս վերադառնալ, Սոֆիան հիշեցրեց նրան.

— Այդպես էլ դուք չպատմեցիք ձեր առաջին ամուսնության մասին:

— Ախ, իսկապես ես մոռացել էի,— ասաց Կամոն և ապա լայն ճակատը չիմելով, որ թվում էր թե կարգի է բերում մաքերը, չարունակեց.

— Եթե ինձ հարցնեին, թե ինչպիսի կին կուզենայիր ունենալ, ես կպատասխանեի. «Բեբելի կնոջ նման կին»: Բայց բախտը ինձ այնպիսի կին, ինչպիսին էր Բեբելինը, չվիճակեց: Դե ես էլ չենթարկվեցի բախտի քմահաճույքին և հեռացա կնոջից: Դուք անշուշտ կուզեք իմանալ, թե ինչպիսի կին ուներ Բեբելը, կամ նրա կնոջ բնավորության որ գծերն են ինձ դուր գալիս: Ես կպատասխանեմ այդ հարցին: Բայց նախքան դրան պատասխանելը, ես կպատմեմ առաջին կնոջիցս բաժանվելու մասին: Ուրեմն այնպես պատահեց, որ ես ամուսնացա: Այդ կատարվեց փետրվարյան հեղաշրջումից անմիջապես հետո: Բավականաչափ չճանաչելով հարսնացուիս հոգին, նրա հակումները, ընդունակությունները, մի խոսքով այն բոլոր գծերը, որոնցից կազմվում է կանացի բնավորությունը, ես ամուսնացա: Կինս արտաքուստ ոչինչ, վատ չէր: Ամուսնության առաջին չրջանն էր դեռ: Հենց սկզբից ինձ ցավ պատճառեց, որ կինս անտարբեր է դեպի այն գործը, որն իմ կյանքի միակ նպատակն է կազմում: Չի այրվում այն հարցերով, որ ես եմ այրվում: Ես հաճախ էի ընկերներիս մեր տուն հավաքում ընթրիքի: Իսկ այդ ընթրիքները

որոշակի նպատակ էին հետապնդում, այն է՝ թուղթիկները ցրել, մխրճվելով նախապատրաստվել, գործադուլների դուրս գալ և այլն: Այդպիսի մի հավաքույթի ժամանակ ես նկատեցի, որ այս ամենը վնասը դուրս չի գալիս: Ավելին: Մի երեկո էլ, երբ նորս մտա ընկերներով, կինս նույնիսկ չհամեցավ պառկած տեղից վեր կենալ, և պատշաճ հարգանք ցույց տալ ընկերներիս...

Սոֆիան մի կողմից թեյի պատրաստությունն էր տեսնում, մյուս կողմից ուշադրությամբ լսում կամյին: Իսկ կամոյին չատ էր դուր գալիս, երբ նրան ուշադրությամբ էին լսում: Ու նա չարունակեց իր խոսքը:

— Այդ մի ժամանակ էր, երբ Թիֆլիսում մենշևիկները ուր ու անօրեն էին և հանդիսատ չէին տալիս մեզ: Ապահովության համար այդ օրը ընկերներս պետք է դիշերեին իմ բնակարանում: Այս բոլորը իմանալուց հետո էլ կինս իր ննջարանից դուրս չեկավ և սոխրված նրանց համար ինքս անկողիններ պատրաստեցի, կնոջս սառը վերաբերմունքը բացատրելով նրա հիվանդությամբ... Մյուս օրն և եթ քրոջս մի ընկերներիս համար մի այլ ապահով բնակարան դանելով վերադարձա տուն և կնոջից բացատրություն պահանջեցի:

— Ես պարտավոր չեմ պատասխանել մարդկանց ծառայությունն մատուցել,— ասաց նա:

— Բայց չէ՞ որ նրանք իմ ընկերներն են, իմ գաղափարակիցները: Ես նրանց հետ եղել եմ բանտերում և աքսորներում: Կիսել եմ նրանց հետ իմ վերջին պատառ հացը, նրանց հետ տխրել եմ և ուրախացել:

Սակայն նա վոխանակ ինձ հասկանալու, չարունակում էր կրկնել «Ես պարտավոր չեմ, ես պարտավոր չեմ...»: «Այդ դեպքում,—ասացի ես, մեր ճանապարհները բաժանվում են. մենք այլևս ընդհանուր ոչինչ չունենք...»:

Հաջա վերարկուս, վերցրի գրքերիս պայուսակը և դուրս եկա փողոց: Գնացի ուղիղ մորաքրոջս մոտ: Ուշ գիշեր էր արդեն: Փողոցներում անց ու դարձը դադարել

էր վազուց: Գնում եմ ու մտածում. «ճի՞շտ վարվեցի արդյոք հեռանալով կնոջիցս...» մտածում եմ ու չեմ կարողանում ոչ արդարացնել, ոչ էլ մեղադրել ինձ: Այսպես մտաբերշ չնկատեցի, թե ինչպես հասա մորաքրոջս տունը: Դուռը ծեծել, մորաքրոջս անհանգստացնել չէի ուզում: Մորաքույրս իր բնակարանում մի սենյակ էր հատկացրել ինձ, որտեղ ապրում էի: Սենյակիս լուսամուտներից մեկը նայում էր դեպի փողոց: Լուսամուտի մոտով դեպի կուրն էր ձգվում անձրևաջրի խողովակը: «Ինչո՞ւ հենց այս խողովակից բռնելով չբարձրանամ ու սենյակս չմտնեմ», մտածեցի ես: Այդ իհարկե կարելի էր, եթե մի ուրիշ արդելք չլիներ: Մի քանի օր առաջ այդ թաղամասում դողերություն էր պատահել: Ոստիկանությունն ուժեղացրել էր հսկողությունը: Եթե նկատեին ինձ լուսամուտից սենյակ մտնելիս, դողի տեղ կդնեին և կձերբակալեին: Ես այսպես մտածեցի. եթե ոստիկանները սենյակ մտնելիս նկատեն ինձ և ձերբակալեն, ասել է՝ թե ես սխալ եմ վարվել բաժանվելով կնոջիցս, իսկ եթե չնկատեն՝ ճիշտ եմ վարվել: Անձրևաջրի խողովակով բարձրանալս ու լուսամուտից սենյակ մտնելս մեկ եղավ: Նշանակում է ճիշտ էի վարվել, բայց էլի երկար ժամանակ մտատանջվում էի: Երբ մորաքույրս եկավ և ինձ սենյակում տեսավ, զարմացած բացականչեց.

— Վայ մե, այ ապա, դու որտեղի՞ց բուսար...

Ես պատմեցի նրան ինձ հետ պատահած դեպքի մասին՝ հարցնելով.

— Մորաքույր, ասա, ճի՞շտ եմ վարվել թե ոչ...

Մորաքույրս արդարացրեց ինձ, բայց ես դեռ մտատանջվում էի: Իմ այդ տանջանքները տևեցին այնքան ժամանակ, մինչև որ լսեցի Բեբելի կնոջ մասին, և կարողացա հասկանալ, թե որն է կնոջ կոչումը կյանքում ու թե ինչպիսի կնոջ հետ հաճելի կլիներ ինձ համար ապրել:

Այժմ անդրադառնում եմ Բեբելի կնոջը, որի մասին լսել էի Շահումյանից: Շահումյանը լավ գիտեր

Բեբելին և իր զրույցների ժամանակ հաճախ էր նրանից մեջբերումներ անում: Անձամբ ծանոթ լինելով Բեբելի հետ, Շահումյանը ճանաչում էր նաև նրա կնոջը: Եվ ամեն անգամ երբ խոսք էր բացվում մեծ մարդկանց կյանքում կանանց խաղացած դերի մասին, Շահումյանը կատակով դիմում էր յուր տիկնոջը.

— Դու էլ այնպիսի կին կլինե՞ս ինձ համար, ինչպիսին էր Բեբելի կինը...

Սոֆիան կլանված լսում էր կամոյի զրույցը ու ժպտում:

— Հարգելի Սոֆիա Վասիլևնա,— չարունակեց իր խոսքը Կամոն,— ես համոզված եմ, որ դուք այս հարցում ինձ այնպես կհասկանաք, ինչպես ես եմ ցանկանում: Այստեղ իմ խոսքն այն մասին է, որ կինը պետք է հասկանա իր ամուսնուն, և եթե չի կարող օգնել, գոնե չխանգարի նրան: Իմ առաջին կինը ինձ համար այդպիսին լինել չէր կարող...

Ուշադրությամբ լսելով այս պատմությունը, Սոֆիան կատակով հարցրեց.

— Կարծո՞ւմ եք, որ ես ձեր երազած կինն եմ:

— Ոչ թե կարծում, այլև համոզված եմ,— ջերմությամբ պատասխանեց Կամոն:

Սոֆիա Վասիլևնան քնքշանքով փարվեց նրա կըրծքին...

Եվ այսպես՝ Կամոն զրույցն ավարտելով հրաժեշտ տվեց Սոֆիա Վասիլևնային ու մեկնեց Կովկաս:

Թիֆլիս հասնելուն պես նա անցավ մաքսատուն, որտեղ նա աշխատանքի էր նշանակված: Այդ օրերին էր, որ Մոսկվայից Կամոյին հասավ Լենինի հիվանդության լուրը:

— Լենինը հիվանդ...

Կամոն ասես կաթվածահար եղավ:

Կամոն դուրս էր եկել փողոց: Նա չտապում էր Ա-թաբրեկյանի մոտ: Շտապում էր, իսկ սիրտը, քառասուն տարեկան այն սիրտը, որն իր օրում վախ ու երկյուղ տասը բաները ոչ հասկացել էր, ոչ զգացել, հիմա մի ներքին տագնապ էր ապրում.

Հանկարծ մի վատ լուր չհաղորդե՞ն...

Ու Կամոն մտավ Ա-թաբրեկյանի մոտ: Այնտեղ էին Օրջոնիկիձեն, Մխանիկյանը և բազմաթիվ վրացի ու հայ ընկերներ: Կամոյի ներս մանելուն պես Օրջոնիկիձեն բացականչեց.

— Ահա և Կամոն, հեռագիրը մի անգամ էլ նրա համար կարդանք:

Կամոն բարևեց ընկերներին, սեղմեց Օրջոնիկիձեի ձեռքը ու հերթով զննեց բոլորի դեմքերը: Բայց բան հասկանալ չկարողացավ: Մի քանիսի աչքերին արցունք կար: Ի՞նչ խմանաս, վշա՞ծ, թե ուրախությա՞ն արցունքներ էին:

— Դե, մի հեռագիրը տվեք տեսնեմ,— դիմեց Կամոն Սերգոյին: Բայց նա հեռագիրը ոչ տալիս էր և ոչ էլ ինքն էր կարդում:

Կամոն խնդրում, աղաչում էր, իսկ Սերգոն կուրծքը ժայռի պես դեմ էր տվել ու համառում էր:

— Մինչև չպատմես քո ընկույզով մուրաբայի պատմությունը, հեռագիրը չեմ կարդա:

— Ձեռք քաշիր, խնդրում եմ, տուր հեռագիրը...

Բրտինքը պատել էր Կամոյի ճակատը: Մխանիկյանն ու Ա-թաբրեկյանը զրաղված էին Ստալինին պատասխան հեռագիր կազմելով: Կամոն նրանց օգնությանն է դիմում:

Դե, տվեք հեռագիրը, էլ համբերություն չմնաց...

— Թե կարող ես ինքդ վերցրու,— կատակում են նրանք ու չարունակում իրենց գործը:

Կամոն նորից է խնդրում Օրջոնիկիձեին.

— Սերգո ջան, չենի ճիրիմե...

— Դե լավ, կարդում եմ, որ դու էլ քո ընկույզի մուրաբայի պատմությունն անես,— ասում է Սերգեն Ծոպից հեռագիրը հանելով.

«Թիֆլիս. Օրջոնիկիձեին. չորս ամսյա ընդհատումից հետո բժիշկները թույլ տվին Իլիչին այցելել իր բարեկամներին և զբաղվել օրական մի քանի ժամ աշխատանքով: Ես Իլիչի մոտ էլ ու այն համոզմանը եկա, որ նա կազդուրվել է վերջնականապես: Այսօր ես նրանից նամակ ստացա դիբեկախվներով՝ ընթացիկ քաղաքական հարցերի վերաբերյալ: Բժիշկները կարծում են, որ մի ամսից նա կկարողանա աշխատել հին ձևով:

Ի. ՍՏԱԼԻՆ»:

Կամոն ուրախությունից չէր իմանում ինչ անել: Նա մեկ «ուռա» մեկ «վաշա» էր բղավում, մեկ գլխարկը դեպի առաստաղն էր նետում, մեկ փաթաթվում էր Օրջոնիկիձեին ու համբուրվում:

Երբ ցնծության կանչերը հանդարտվեցին, Օրջոնիկիձեն կարդաց ընկեր Ստալինին ուղղված հեռագիրը.

«Մոսկվա. Կրեմլ. ընկեր Ստալինին. Իլիչի առողջության լուրն անսահման ուրախացրեց և ոգևորեց մեզ. այդ առթիվ Ձեզ՝ պանծալի ղեկավարիդ, և համաշխարհային պրոլետարական ապստամբության ոգեշնչողիդ, մեր հարավային ջերմ ու բուռն ողջույնները»:

Հեռագրի ընթերցումից հետո Օրջոնիկիձեն հեռագիրն իսկույն փոստ ուղարկեց և դիմեց ընկերներին.

— Դե, հիմա էլ մի փոքր ընթրենք ու լսենք Կամոյին:

Ամբրբեկյանը ընկերներին խնդրեց տեղ գրավել սեղանի չուրջը: Սեղանը աղքատ չէր: Կախեթի կարմիր գինին թարմ վարունգի և կանաչեղենի հետ զարդարում էին սեղանը: Ջվաճեղի պես համեղ պուրին հայկական ծաղիկ-լավաշի ու մոթալի պանրի հետ ախորժալի բույր էր տարածում սենյակում: Կիսաբաց լուսամուտներից ներս էր թափանցում հուլիսյան երեկոյի զով չունչը և ուրախության տրամադրում մարդուհին:

— Դե, կամո ջան, սկսիր քո պատմությունը,— դիմեց Սերգոն Կամոյին:

— Զարմանում եմ, թե որտեղից է ձեզ հասել այդ պատմությունը:

— Մեզ Իլիչն է պատմել, բայց հիմա էլ քեզանից ենք ուզում լսել:

Մերժել անհնարին էր: Կամոն սկսեց այսպես.

— Այդ այսպես պատահեց: Մի անգամ բաքվից հատուկ հանձնարարությամբ պետք է գնայի Մոսկվա՝ Լենինի մոտ: Տարբեր ժամանակ Լենինին հանդիպելով ես նկատել էի, որ Լենինը շատ էր սիրում չամիատ խաղալ և խաղալիս՝ ընկուզի մուրաբայով թեյ խմել: Այս անգամ որոշեցի ինչ գնով էլ ուզում է լինի, բաքվից ընկուզի մուրաբա ճարեմ Լենինի համար: Երեկոյան կողմ մենք ընկերներով հավաքվել էինք Մալականյան փողոցի վրա ապրող ընկերոջս արհեստանոցում և զրուցում էինք: Գնացքի մեկնելուն դեռ բավական ժամանակ կար: Զրուցելիս չարունակ այն մտքի հետ էի, թե իմ ծանոթ-ներից ո՞րի տանը ընկուզի մուրաբա կճարվի: Հիշեցի ընկերներից մեկին: Նրա մայրը օրինակելի տնտեսուհի էր, նա ամեն տարի տեսակ-տեսակ մուրաբաներ էր եփում ու մի չա նեղ օրվա համար «հոգապահուստ» ունենում: Բայց նրանք ապրում էին Բայիլովում: Մեր հավաքված տեղից, Մալականյան փողոցից մինչև Բայիլով 4—5 վերստ կլիներ: Առանց հայտնելու, թե ուր եմ գնում, ընկերներիս խնդրեցի իրերս վերցնել, կայարան գնալ:

Ընկերներս չառարկեցին, համոզված լինելով, որ կարևոր գործով տեղ եմ չտապում: Իսկ ես վճռել էի անպայման գտնել մուրաբան:

Մտելով բաժակում մնացած գինին, կամոն չարունակեց.

— Բայիլով հասնելու համար ընտրեցի ամենակարճ ճանապարհը: Դրսում մութ էր ու հորդ անձրև էր տե-

դամ: Ուշադրությունը չգրավելով անգրևին, առանց վերարկուի թռչում էի ամայի փողոցներով: Դեռ Սերդինյան փողոցը չհասած անգրևն ավելի ուժեղացավ, սաստ երկնքի փեշը պատռվել ու ցորենը խշշալով ցած էր թափվում: Այնտա Օլգինյան փողոցը, բուլվարը, ահա Նաբերեժնայան, նավահանգիստները: Քանի անգրևը սաստկանում էր այնքան ես ավելի էի արագացնում քայլերս: Սիրտս ուժեղ էր, ոտքերս ամուր, երկընքից թևկոպ հրե կարկուտ թափվեր, ինչից էի վախենում: Ահա վերջապես սարը: Հիմա էլ ցեխն է խանգարում բարձրանալ: Բայց ես բարձրացա: Ահա և ծանոթիս տունը: Լուսամուտից ներս նայեցի: Ընկերս ու իր կինը տանը չէին: Ընկերոջս մայրը թոռներին սեղանի շուրջը հավաքած թեյ էր տալիս: Ծեծեցի լուսամուտը: Տվեցի անունս: Նա դուռը բաց արեց և ներս առավ ինձ: Երեխաներն ինձ տեսնելուն պես վրա վազեցին ու չնայած թրջված հագուստներիս, որը գլուխս է նեղովում, որը ուսիս բարձրանում, իսկ ամենից փոքրը՝ Թոթովախոս Գևորգը, բղավում էր.

— Վայ... վայ... սալվարը, սալվարը...

Ու բոլոր երեխաները ծիծաղում էին: Նայում եմ չալվարիս, պատռված չէր:

— Ի՞նչ է պատահել,— հարցնում եմ առանց բարկանալու:

— Ցեխոտել ես, ցեխոտել ես, վայ, վայ, ասում է Թոթովախոտը, իսկ մյուսները թուլանում են ծիծաղից:

— Այ երեխեք, մի հանգիստ կացեք, տեսնենք ինչ է ասում,— սաստեց տատը նրանց:

Բայց թե ումն ես ասում: Երեխաները ավելի սաստկացրին իրենց ծիծաղը:

— Չէ, ձեզ միայն քնացնելը կհաղթի,— ասաց տատն ու հրավիրեց ինձ նստել, ներողություն խնդրեց մի քանի րոպեով բացակայելու համար և գնաց հարևան սենյակը երեխաների անկողինները պատրաստելու: Ես մի կողմից հագուստիս վրեներն էի անգրեվաջրից քամում, մյուս կողմից ուշադրությամբ երեխաների

աչխույժ ծիծաղին՝ մտածում էի «կունենա՞ն սրանք մուրաբա, թե՞ ոչ»... հիշելով՝ «դյուղ մտնես երեխաներից լուր առ» առածը, ես իմ դործն սկսեցի երեխաներից ու այս հարցով դիմեցի նրանց.

— Ով կասի ինձ, ձեր տատիկը ի՞նչ մրգերից է մուրաբա եփում:

— Խաղողից,— ասաց մեկը:

— Բալից էլ, հոնից էլ,— ավելացրեց մյուսը:

— Ձմերուկից, դդումից, վարդից,— թվում են երեխաները:

«Մի թե՞ սրանք ընկույզի մուրաբա չունեն,— մտածում եմ ես ու հարց տալիս:

— Իսկ... ընկույզի՞ց:

— Ընկույզից էլ, հենց այսօր էլ կերանք: Գիտե՞ս կամ ձյաձյա, էս թոթոլ թաթիկ Գևորգը խնկի չի կշտանում, ինչքան տատիկը տալիս է, էլի սա բղավում է, քից է, քից է, քից է...

Ես դիրկս առնելով հենց այդ թոթոլ Գևորգին՝ կամացուկ չշնջացի ականջին.

— Իսկ որտե՞ղ է դրված ձեր ընկույզի մուրաբան:

— Ա՛յ, էնտեղ,— ասաց երեխան փափկիկ թաթիկը դեպի պահարանը պարզելով:

Հենց այդ ժամանակ դուրս եկավ տատիկը ու թոռնիկներին ներս տարավ քնեցնելու: Մինչդեռ նա զբաղված էր մյուս սենյակում, ես դդույշ բաց արի պահարանը, հանեցի ընկույզի մուրաբայի ամանը ու դրեցի տեղանի տակ, ապա պահարանը փակելով, սուս ու փուս նստեցի իմ տեղը:

Ունկնդիրները ծիծաղելով թափահարում էին դլուխները, ընթրում ու չարունակում լսել:

— Մեկ էլ տեսնեմ տատիկը «Ձեր, դու աչխարհիս խաղաղություն, ցավին թանգություն, հացին էժանություն տաս» չշնջալով դուրս եկավ ննջարանից ու դիմեց ինձ.

— Համ թրջված ես, համ մրսած, թեյ տաքացնեմ:

— Չէ, տատի ջան, չնոր հակալ եմ, չատսում եմ, գնամ պետք,— ասում եմ ես:

— Ո՞ւր։
— Մոսկով։
— Մոսկո՞վ։
— Հա։ եկել եմ մնաս բարև ասելու։
— Կամակատար աստվածածինը քեզ օգնական, ուրդի։
— Տատի, Մոսկով եմ գնում, Լենինի մոտ եմ գընում, ուզում եմ մի նվեր տանեմ,— ասում եմ ու մոտծում, թե հետո էլ ինչ եմ ասելու, սակայն տատիկն իր պատասխանով օգնում է ինձ։
— Իսկ ի՞նչ նվեր ես ուզում տանել։
— Լենինը ընկուզով մուրաբա չատ է սիրում, ուզում եմ մի քիչ մուրաբա տանել, խո չե՞ս խնայի...
— Վայ, քոռանամ ես, բա մարդ Լենինի համար կյանք կխնայի՞, որ ես մուրաբա խնայեմ,— ասում է ու մոտենում պահարանին, սկսում է որոնել մուրաբայի ամանը, մինչ այդ ես համոզում եմ ամանը թաղցրածս սեղից ուղղում սեղանի վրա։ Տատիկը ետ է դառնում ու տեսնելով ամանը սեղանին, զարմացած հարցնում է.
— Ջա, էս որտեղի՞ց բուսավ...
Ես ծիծաղում եմ ու բացատրում թե որտեղից բուսավ մուրաբան։ Տատիկն էլ է ծիծաղում ու մուրաբայի ամանը մի մաքուր շորի մեջ կապելով տալիս է ինձ ու ասում.
— Տար, թող անուշ անի, ինձանից էլ չատ բարև արա։
Շնորհակալություն հայտնեցի, առա մուրաբան ու գնաց թռա։ Ինքս էլ չիմացա թե ինչպես սարն իջա։ Անցա նավահանգիստը, բուլվարը, Մերկուրյան փողոցը, Պետրովսկին ու կայարան հասա։ Տեղ հասա հենց այն ժամանակ, երբ գնացքը շարժվում էր։ Ընկերներս իրար էլին անցել ու ինձ էին սրոնում։ Վերցրի իրերս ու թռա առաջին իսկ պատահած վագոնը։ Մեծ դժուրությամբ Մոսկվա հասցրի մուրաբան և Իլիչին էլ պատմեցի այդ դեպքը, իսկ նա ծիծաղում է, խոսում է ուսխ ասելով. «Ախ դու, կոմկատյան հերոս...»։

Երբ Կամոն իր պատմությունն ավարտեց, Օրջոնիկիձեն առաջարկեց խմել նրա կենացը: Բոլորն ուրախությամբ խմեցին: Էլ ինչ դովլեսաններ ասես, որ չտեղացին Կամոյի գլխին: Կամոյի համար ամենից սրտառուչը Օրջոնիկիձեի խոսքերն էին.

— Կամո,— ասաց նա,— ահա ատամնաբժիշկ մարդ է, ինչ գիտեմ ես քեզ: Դու չատ ավելի բարձր գնահատականի ես արժանի, քան այսօրվա քեզ տված բոլոր գովեստները: Ահա մի նայիր մեր այս հրաշալի վրացատանը:

Այս ասելով Օրջոնիկիձեն ձեռքը Կամոյի ուսին դրեց, լուսամուտի մոտ տարավ նրան:

— Մի՞թե դու քիչ բան ես արել մեր այս չքնաղ երկրի համար: Լավ, լավ, մի կարմրիր: Այս բոլորը քեզ գովելու համար չեմ ասում: Գիտեմ, որ չես սիրում, երբ քեզ գովում են: Դու լսիր թե ինչ եմ ասում: Քո կյանքը մեծ նպատակների համար անձնուրաց հերոսի կյանք է եղել և չատ ուսանելի դծեր ունի իր մեջ գալիք սերունդների համար: Գրիր քո կյանքի պատմությունը, ահա իմ պահանջը քեզանից:

— Ինչ հրաշալի մտահղացում է, ունենալ Կամոյի կյանքի պատմությունը,—բացականչեց Ալթարբեկյանը:

— Լենինն ու Գորկին չատ են խոսել քեզ հետ այդ մասին, մենք էլ նույնն ենք պահանջում, պնդեց Օրջոնիկիձեն:

Կամոն ամբողջ ժամանակ լուռ էր. նրան այդ պահին ուրիշ հարցեր էին հուզում:

— Ինչո՞ւ ես լռել, խոսիր տեսնենք քո մտքինն ինչ է,— ասաց Օրջոնիկիձեն:

— Ընկերներ,— զգացված խոսեց Կամոն,— ես ինչ պատմություն գրող եմ: Այ, ուղարկեցեք ինձ արտասահման, թեկուզ Բեռլին, ուղարկեցեք ինձ Բեռլին:

— Քեզ այնքան անողոք տանջելու վրա՞ն ես ուզում յուծել Բեռլինից,— կատակեց Ալթարբեկյանը:

— Ամենևին էլ ոչ: Այ, տեսեք, ուսուցիչն մեզ

մոտ հաղթանակեց, իսկ ես այստեղ, սրանից հետո, ինչ պիտի անեմ...

— Սխալվում ես Կամո,— ասաց Օրջոնիկիձեն,— դու հիմա էլ մեծ անելիքներ ունես: Ես հենց վերջերս եմ վերադարձել Հայաստանից: Իմ այդ ուղևորության ընթացքում ես եկա այն եզրակացության, որ Սովետական իշխանությունը հենց Հայաստանի համար այն սրբազան մխիթարանքով, որ փրկեց հայ բազմատաբաժար ժողովրդին կործանումից: Ես եղա Հայաստանի շատ վայրերում, հրաշալի Սևանում, Երևանում, Ալեքսանդրապոլում: Կյանքը եռում է ինչպես մրջնանոցում: Ազատագրված հայ ժողովուրդը այժմ վերաշինում է իր ավերված օջախը, դպրոցները, թատրոնները, ճանապարհները և ուրիշ շատ բաներ:

Կամոն լուռ լսում էր Օրջոնիկիձեին, նրա ասածների մեջ նա մի խորին և անհերքելի ճշմարտություն էր գտնում: Օրջոնիկիձեն շարունակեց.

— Եվ մի՞թե միայն Հայաստանում: Նույնը չէ՞ արդյոք Վրաստանում, Ադրբեջանում, ասա խնդրեմ, քեզ նման դյուցազնական ուժի տեր մարդը քի՞չ բան կարող է անել հիմա մեզ մոտ: Աչխատիր՝ ինչ գծով ուզում ես. իմ պահանջը քեզանից այս է՝ հանուն այն մեծ գործի, որի համար տառապել ես դու և մենք բոլորս, նրա տիրը ու դրիր քո կյանքի պատմությունը:

— Տես, Կամո, այսօր 1922 թ. հուլիսի 14-ն է, չմոռանաս մեր հավաքույթը, չմոռանաս մեր հանձնարարությունը,— ավելացրեց Միհանիկյանը:

Հավաքույթը վերջացավ: Առանց մի խոսք ասելու, որ իր կյանքից որոշ դեպքեր արդեն դրի է առել, Կամոն հրաժեշտ տվեց ընկերներին ու դուրս եկավ փողոց:

Քուռ դեսի մրմունջը հուլիսյան դեպյուռի թևով սավառնում էր Թիֆլիսի վրա: Քնել էր քաղաքն իր խաղաղ ու երջանիկ քնով: Կամոյի զսպված հուզերը մեկնեն սրտիկային.

— Թիֆլիս, իմ ջերմ, իմ անմոռաց մանկության օրորան: Իմ խենթ, խռովահույզ պատանեկության

Ահա կանգնել եմ քո դիմաց՝ տաբինների քեռն ուսիս, անցած հազար կրակի ու արյան ծովով։ Քուռ, իմ գիժ, իմ վարազած քուռ... Հիշո՞ւմ ես, թե ինչպես կլանեցիր իմ չղթաները և տարար քեզ հետ... Ինչ լավ է, որ ապրում ու տեսնում եմ, որ իմ համեստ ուժերն էլ պետք եկան այն մեծ գործին, որի համար այնքան մեծ մարդիկ են տանջվել, որոնց մոտ ես՝ մեկ է թե մոմը արևի մոտ, մեկ է թե ջրի կաթիլը ծովի համեմատությամբ։ Ես նորից կայտառ եմ և գործելու, սովորելու ցանկությամբ լի։ Ծպտում է հողը ոտքերիս տակ և երկինքը ծիծաղում է դեմքիս։ Հենց վաղը, երբ նորից արևը կծագի մեր չքնաղ Վրաստանի ու ողջ աշխարհի վրա, ես նույն եռանդով կչարունակեմ իմ գործը...

Ինքն իրեն չէնջալով Կամոն թռավ իր հեծանիվի վրա ու սլացավ դեպի տուն։ Վերայի կամուրջով անցնելիս նա չնկատեց, որ դեմից դեպի իրեն է թռչում ավտոմեքենան... Այդ աչքի վճռական լի՞նելն էր պատճառը, թե՞ ավտոմեքենայի անաղմուկ ընթացքը... Կամոն ոչինչ զգալ չկարողացավ։ Մեքենան թափով խփեց նրա հեծանիվին։ Հեծանիվը չարդ ու փշուր եղած մի կողմ նետվեց, իսկ Կամոն ուժեղ հարվածով գլորվեց դիմացի երկաթե սյանը և ընկավ սարահատակին...

***

Դեռ չէին ցրվել տագնապը, երբ Միքայելյան հիվանդանոցից հայտնեցին Աթաբեկյանին Կամոյի հետ կատարված պատահարի մասին...

Օրջոնիկիձեն ցնցվեց ու քարացած կանգ առավ իր տեղում։ Ոչ ոք չէր հավատում իր լսածին։ Բոլորն էլ կուզեին վտիտկին Միքայելյան հիվանդանոց։ Կամոն ոչ ուշքի գալ, ոչ էլ մի բառ արտասանել կարողացավ ու նույն օրը, գիշերը ժամի երեքին առաջին վիակեց իր աչքերը...

Կամոյի մահվան բոթը կայծակի արագությամբ թռավ տարածվեց մեր ամբողջ երկրով մեկ և նրա սահ-

մաններից էլ դուրս, խորասեռ ցնցելով բոլոր նրանց, ովքեր ճանաչում կամ լսել էին նրա մասին:

***

Ջնայած հուլիսյան կիզիչ արևին, թիֆլիսցիները հոծ չարքերով ողողել էին Բանվորական Պալատի բակն ու մոտակա փողոցները: Եկել էին բոլորը, թե մանուկ, թե ծեր, իրենց վերջին հրաժեշտը տալու Կամոյին: Ժողովուրդը մեծաստարած ալիքի պես Բանվորական Պալատի մի դռնից ներս էր հոսում, մյուս դռնից դուրս գալիս՝ խոնավ աչքերով: Դահլիճի կենտրոնում դրված էր դագաղը: Դագաղի չուրջը պատվո պահակ են կանգնած Օրջոնիկիձեն, Միասնիկյանը, Մախարաձեն, Քալանթարաձեն: Դագաղը ջրպատված էր կամոյի հարազատներով ու ընկերներով: Դագաղի չուրջը դասավորված էին բազմաթիվ ծաղկեպսակներ: Ներկաների ուշադրությունը գրավում էր Լենինի կողմից ուղարկված ծաղկեպսակը՝ «Անմոռանալի Կամոյին» մակագրությամբ: Մորին վշտի ղեպքում համակված հեռագրեր էին ստացվել Ստալինից, Ֆրունզեից, Վորոշիլովից, ինչպես և բազմաթիվ ականավոր գործիչներից:

Երեկոյան կողմ Շոպենի մահվան քայլերգի մեղմագծող հնչյունների տակ դագաղը դուրս բերվեց: Մեծաքանակ հուղարկավորների երթը դանդաղ առաջ հոսեց դեպի Պուշկինյան հրապարակը: Կամոյի մորաքրոջ և քույրերի սրտառուչ հեծկլտոցը միահյուսվում էր մահվան քայլերգի թախծոտ հնչյունների հետ: Անկեղծ վշտի կնիք կար դրոշմված հուղարկավորների դեմքերին: Հասնելով Պուշկինյան հրապարակը, դագաղը իջեցրին թարմ հողաբլրի վրա: Լռեց նվագը, քարացավ չարժումը հրապարակում և չրջակա փողոցներում: Հրաժեշտի սրտառուչ խոսքեր ասացին Օրջոնիկիձեն, Միասնիկյանը, Նարիման Նարիմանովը, Մոսկվայից, Պետերբուրգից և այլ վայրերից եկած ընկերները:

— Սիրելիդ իմ կամո,— թռչում էին օդում Օրջո-

Նիկիճեի արտասվախառն խոսքերը,— ինչպիսի սիրով էիր դու խոսում Լենինի և Ստալինի մասին, ինչպիսի սիրով էին սիրում քեզ նրանք: Երբ ես հանդիպեմ Լենինին, չգիտեմ, ինչպես հայտնեմ քո մահվան մասին, ի՞նչ պատասխանեմ, երբ Լենինը հարցնի.— Ինչո՞ւ չկարողացաք պահպանել Կամոյին...

Կամոյի հարազատները հրաժեշտի վերջին համբույրները դրոշմեցին նրա ճակատին: Թնդացին կարճ համազարկեր... Սրնտվառ դրոշակները ցած խոնարհվեցին: Դագաղը դղրդյուն ու հանդարտ հանձնվեց հողին...

1940—1946
Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
1. Գորկու մոտ (Որպես առաջաբան)	5
2. Գորիից Թիֆլիս	9
3. Թե ինչպես Սիմոնը Կամո կոչվեց	17
4. Լադո Կեցխովելին մեկնում է Բաքու	24
5. Որսը հետապնդում է որսորդին	29
6. Ստալինի զեկավարած ցույցը	37
7. Փախուստ Բաքումի բանտից	50
8. Կամոն կատարում է Ստալինի հանձնարարությունը	58
9. Կամոն փնտացու	63
10. Կամոյի առաջին հանդիպումը Լենինի հետ՝ Ֆինլանդիայում	77
11. Քուրայիսից Բուլղարիա՝ Լիտվինովի մոտ	83
12. Օրջոնիկիձեի ծննդավայրում	89
13. Երևանյան հրապարակի դեպքը	97
14. Կամոն Բեռլինում	107
15. Թռչունն օգնեց Կամոյին	124
16. Կախարդական ծաղկեփունջը	131
17. Փարիզ՝ Իլիչի մոտ	138
18. Մահապատժից տաժանակիր աշխատանքի	142
19. Կամոն տաժանակրության մեջ	149
20. Կրեմլում Լենինի մոտ	155
21. Ստեփան Շահումյանի հետ	158
22. Օրձոնիկիձեի հետ Կիրովի մոտ	173
23. Կիրովը դիմավորում է Կամոյին	182
24. Փոքրիկ Տիգրանի մեծ գործը	198
25. Կամոն Մոսկվայում ամուսնանում է	203
26. Ընկուզով մուրաբան, կամ վերջին դիշերը	209

ՀԱՅԿ ԴԻՒՐՈՒԹԵԱՆ ԵՐԻ
Ա. Ե. ՄԵՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԱՍՏԱՊՈՒԼ

Խմբագիր՝ Ա. ՀԱՑՐՑԱՆ
Տեխ. խմբ.՝ Ի. ՎԱՐԴԱՆՑԱՆ

ՎՖ 02689, Պատ. 134, Տիրաժ 4000, հհդ. 9 մամ. տպագր. 14 մամ.
Հանձնված է արտադրության 25-III 47 թ.Ստորագրված է տպագրության
24/VI 1947 թ.

Հայպետհրատի տպարան, Լենինի 65 Երևան, 1947 թ.

ՎՐԻՊԱԿ

ՀՀ 265—րդ 2 տող վերևից. տպված է հներդ ժպիտով պատասխանությունները։
Պետք է լինի հներդ ժպիտով պատասխանում է Սոֆիանց։

Գրքի շապիկը, Կամոյի պատրեն և նկարները՝
Նկ. ՀՐ. ՌՈՒԽԿՑԱՆԻ

Խմբագիր Ա. ՀԱՑՐՅԱՆ
Տեխ. խմբ. Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վ/Տ 02689, Պատ. 134, Տիրաժ 4000, հհդ. 9 մամ. տպագր. 14 մամ.
Հանձնված է արտադրության 25-III 47 թ. Ստորագրված է տպագրության
24/VI 1947 թ.

Հայպետհրատի տպարան, Լենինի 65 Երևան, 1947 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028199

գինը 10 կ.

ЦЕНА
28199